

ՆԵՐՍԵՍ
ՄՈԿԱՅԻ

ԸԹՎ ԵՐԱՅԻ



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМ. М. АБЕГЯНА

НЕРСЕС МОКАЦИ

СТИХОТВОРЕНИЯ

*Научно-критический текст,
предисловие и комментарии
А. Г. ДОЛУХАНИЯ*


ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1975

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԴԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵՄԻԱ
Խ. ՊՐԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆԵՐՍԵՍ ՄՈԿԱՅԻ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխատասիրությամբ՝
Ա. Գ. ԴՈՂՈՒԽԱՆՅԱՆԻ



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԴԱՏԱՐԱԿԱԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1975

Այս աշխատությունը XVI—XVII դդ. հայ միջնադարյան գրականության աչքի ընկնող ներկայացուցիչներից մեկի՝ Ներսես Մոկացու բանաստեղծական ժառանգության առաջին գիտական հրատարակությունն է:

Հատորն ունի ներածություն և ծանոթագրություններ, որոնց մեջ մատենագրական հարուստ փաստերի օգտագործումով, ուրվագծված են Ներսես Մոկացու կյանքը, գործունեությունը, ստեղծագործությունները, և մատնանշված է հայ միջնադարյան գրականության պատմության մեջ ունեցած նրա տեղն ու դերը:

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Ներսես Մոկացիին XVI դարի վերջին և XVII դարի առաջին քառորդի նշանավոր գործիչներից մեկն է¹, եթե ոչ ամենանշանավորը: Այսպես ասելու համար հիմք են տալիս մի կողմից նրա երկարատև ու բեղմնավոր աշխատանքները՝ ուսումնա-կրթական միաբանություններ հիմնելու և մանկավարժությամբ զբաղվելու առումով². իսկ մյուս կողմից՝ նրա թողած բանաստեղծական ժառանգությունը³: Այդ է պատճառը, որ Ներսես Մոկացուն հետևողականորեն հիշել ու գնահատել են, թե՛ նրա ժամանակակիցներն ու անմիջական հաջորդները և թե՛ հետագա մասնագետները, սկսած Մ. Չամչյանից և վերջացած մեր օրերի հայագետներով:

Ներսես Մոկացու ժամանակակիցներից և անմիջական հաջորդներից իրենց տված տեղեկություններով առավել ուշագրավ են Առաքել Դավրիժեցին⁴, Գրիգոր Դարանաղցին⁵, Ստեփանոս Շատախեցին⁶, Դավիթ Բաղիշեցին⁷, Ավետիք Տիգրանակերտցին⁸ և ուրիշներ: Անտիպ փաստեր են երևում նաև ձեռագրերում, որոնցից առանձնապես ուշագրավ են Մաշտոցի անվան Մատենադարանի № № 3881, 5128 գրչագրերում պահվածները:

Ներսես Մոկացու կյանքին ու գործին նվիրված դիտողությունների, գնահատականների, ինչպես նաև ուշագրավ մեկնաբանությունների ենք հանդիպում հետևյալ մասնագետների մոտ.

1 Լեո, *Երկեր*, Գ, գիրք Ա, Երևան, 1969, էջ 362,

2 Նույն տեղում:

3 Մ. Աբեղյան, *Հայոց հին գրականության պատմություն*, Բ, Երևան, 1946, էջ 588:

4 Առաքել Դավրիժեցի, *Պատմութիւն, Վաղարշապատ, 1896*, էջ 253—254, 260, 395 և այլն:

5 Գրիգոր Դարանաղցի, *Ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1915*, էջ 391:

6 Մաշտոցի անվան Մատենադարան, *ձեռ. № 2079*, Բերք 210ա:

7 «Դիւան Հայոց պատմութեան», Ժ, Թիֆլիս, 1912, էջ 48:

8 «Բաղմավէպ», 1897, էջ 424:

Մ. Զամչյան⁹, Ղ. Ինճիճյան¹⁰, Ս. Ամալ¹¹, «Նոր բառգրքի» հեղինակներ¹², Գ. Զարբհանալյան¹³, Ա. Տևկանց¹⁴, Հ. Թոփեյան¹⁵, Ղ. Ալիշան¹⁶, Լեո¹⁷, Մ. Օրմանյան¹⁸, Վ. Փափազյան¹⁹, Վ. Բրյուսով²⁰, Մ. Մկրյան²¹, Հ. Ոսկյան²², Ն. Պողարյան²³, Մ. Արեղյան²⁴, Հ. Անառյան²⁵, Ն. Ակինյան²⁶, Մ. Ճանաշյան²⁷, Վ. Հակոբյան²⁸, Ա. Մնացականյան²⁹, Ա. Մովսիսյան³⁰, Պ. Խաչատրյան³¹, Հ. Միրզոյան³² և ուրիշներ:

Այդ հեղինակներից համեմատաբար մեծ գործ է կատարել Ն. Ակինյանը՝ ձգտելով ամբողջացնել Ներսես Մոկացու դիմանկարը:

⁹ Մ. Զամչյան, Պատմութիւն Հայոց, Գ, Վենետիկ, 1786, էջ 565:

¹⁰ Ղ. Ինճիճյան, Ստորագրութիւն հին Հայաստանից, Վենետիկ, 1822, էջ 227:

¹¹ S. Somal, Quadro della storia letteraria di Armenia, Venezia, 1829, էջ 152:

¹² «Նոր բառգրքի հայկազեան լեզուի», Ա, Վենետիկ, 1836, էջ 16:

¹³ Գ. Զարբհանալյան, Պատմութիւն հայերէն դպրութեան, Վենետիկ, 1878, էջ 267:

¹⁴ Ա. Տևկանց, Հայերգ, Թիֆլիս, 1882, էջ ԺԱ:

¹⁵ Հ. Թոփեյան, Յուցակ ձեռագրաց, Վաղարշապատ, 1898, էջ 59:

¹⁶ Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 51—53, 618:

¹⁷ Լեո, Հայկական տպագրութիւն, Թիֆլիս, 1904, էջ 161—164, Երկերի ժողովածու, Գ, էջ 362—363:

¹⁸ Մ. Օրմանյան, Ազգապատում, Բ, գիրք Բ, Բեյրութ, 1960, էջ 2443:

¹⁹ Վ. Փափազյան, Պատմութիւն հայոց գրականութեան, Թիֆլիս, 1910, էջ 264:

²⁰ «Поэзия Арменин», М., 1916, էջ 591:

²¹ Մ. Մկրյան, XIII—XVIII դդ. հայ աշխարհիկ գրականություն, Երևան 1938, էջ 186—188:

²² Հ. Ոսկյան, Վասպուրական-Վանի վանքերը, Ա, Վիեննա, 1940, էջ 19:

²³ «Էջմիածին», 1944, № 10—12, էջ 33—35:

²⁴ Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, Բ, էջ 588:

²⁵ Հ. Անառյան, Անձնանունների բառարան, Գ, Երևան, 1948, էջ 67:

²⁶ Ն. Ակինյան, Մովսէս Գ. Տաթևացի հայոց կաթողիկոսն և իր ժամանակը, Վիեննա, 1936, էջ 185, 190: Նույնի Բաղէշի դպրոցը, Վիեննա, 1952, էջ 92—115:

²⁷ Մ. Ճանաշյան, Պատմութիւն արդի հայ գրականութեան, Ա, Վենետիկ, 1956, էջ 6—7:

²⁸ Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, Բ, Երևան, 1956, էջ 356—357, 400:

²⁹ Ա. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 608—613:

³⁰ «Բանբեր Երևանի Համալսարանի», 1967, № 2, էջ 85—86:

³¹ Պ. Խաչատրյան, Հայ միջնադարյան պատմական ողբեր, Երևան, 1969, էջ 193—197, 280—293, 330—332:

³² Հ. Միրզոյան, Սիմեոն Զուղայեցի, Երևան, 1971, էջ 72:

Վերանիշյալ մասնագետները, երբեմն առանձին հատվածներով, երբեմն էլ ամբողջապես սույազել են ներսես Մոկացու որոշ բանաստեղծություններ: Այդուամենայնիվ, պետք է նկատել, որ ցարդ գոյություն չունի հատուկ մենագրություն՝ նվիրված ներսես Մոկացու կյանքի և գործի համակողմանի ընդգրկմանը և նրա բանաստեղծությունների ամբողջական ու գիտական հրատարակությանը: Ահա այս բացը լրացնելու նպատակին է ծառայում սույն աշխատանքը:

Այստեղ առաջին անգամ ի մի են բերված ներսես Մոկացուց մեզ հասած բոլոր բանաստեղծությունները՝ համալրատասխան ծանոթագրություններով և ամփոփ ուսումնասիրությամբ: Մեկից ավելի ընդօրինակություն ունեցող բնագրերը ներկայացված են գիտական հրատարակությունների համար ընդունված եղանակներով: Ըստ որում, բնագրերի տողատուրը, տնայտուրը, կետադրությունը վերանայված և նշգրտված է առանց նշումների: Նույն եղանակով միօրինակության է բերված կետադրությունը. «ա» և «օ», «վ» և «ւ» հնչյունների խայտաբղետությունը: Բնագրերը, դարձյալ առանց նշումի, ազատված են «յ», «ը» հնչյունների անհարկի օգտագործումից, իսկ ինչ-ինչ պատճառներով բաց թողնված «յ» հրնչյունը լրացված է:

Բնագրերի բաժնից դուրս են մնացել միայն ներսես Մոկացու՝ Անդրեաս Բանանային նվիրված զանձն ու տաղը, օրովհետև մեր ծեփի տակ չկան նրանց ամբողջական բնագրերը, իսկ եղածներն էլ խիստ պակասավոր են:

Այս ժողովածուն ունի «Հավելվածներ», ուր գետնդված են առանձին բնագրեր՝ կապված ներսես Մոկացու ստեղծագործությունների, ինչպես և նրա կյանքի ու գործունեության հետ:

Գիտական կարևորություն ունեցող մի քանի հարցեր առանձնացված են «Բանասիրական դիտողություններ» խորագրի տակ և գետնդված հավելվածներից անմիջապես հետո:

Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ներսես Մոկացին ծնվել է պատմական Հայաստանի Մոկք գավառի Ասկնջավս (Հասկնջավս) գյուղում³³, նա անվանվել է նաև Վանեցի³⁴, «վասն զի ապրած և վախճանված է Վանա Լիմ կղզվույն վրա»³⁵,

Ներսես Մոկացու ծննդյան տարին անհայտ է։ Ն. Ակինյանը, ճշգրտելով նրա աղավաղված տապանագիրը, ընդունում է, որ նա պետք է մեռած լինի 50 տարեկան հասակում³⁶,

Ներսես Մոկացու մահվան թվականի մասին ստույգ տեղեկություն է պահպանված նրա աշակերտ Ստեփանոս Շատախեցու կանգնեցրած հիշատակային խաչքարի արձանագրության մեջ՝ «իսնն հանգեալ ի գերեզման... Ի թվին ՌՀԴ» (=1625)³⁷։ Դա հաստատվում է նաև ուրիշ օժանդակ փաստերով (օրինակ, Մաշտոցի անվան Մատենադարանի № 5128 ձեռագրի պահպանակի վրա եղած հիշատակագրության օգնությամբ)։ Ուստի 1625-ից հանելով 50, ստանում ենք Ներսես Մոկացու ծննդյան մոտավոր տարեթիվը՝ 1575 թ.։ Այս հաշիվների կապակցությամբ օգտակար է նաև Երուսաղեմում պահվող № 1311 ձեռագրի հիշատակարանը՝ գրված 1602 թ.։ Այստեղ Ներսես Մոկացին հիշվում է որպես «Նորաբողբոջ» հոգևորական³⁸, ենթադրել տալով 25—30 տարեկան հասակ։

Մաշտոցի անվան Մատենադարանի № 3881 ձեռագրում ի հայտ եկավ Ներսես Մոկացու կենսագրության մի արժեքավոր, սակայն մասամբ աղավաղված օրինակ, որի հիմքում ընկած է ոմն Արիստակեսի շարադրանքը։ Հավանաբար, ժամանակին կորած այդ

33 Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, էջ 391։

34 Գրիգոր Դարանաղցի, Ժամանակագրութիւն, էջ 291։

35 Ն. Ակինյան, Բաղէշի դպրոցը, էջ 92։

36 Նույն տեղում, էջ 100—101։

37 «Աղագրական հանդէս», Թիֆլիս, 1912, էջ 92—93։

38 Ն. Ակինյան, Բաղէշի դպրոցը, էջ 93։

վարքից է օգտվել նաև Դավիթ Բաղդիշեցին (մանրամասն տե՛ս Ժա-
նոթարգրությունների մեջ):

Ներսես Մոկացին (Հայտնի նաև Բեղլու մականունով)³⁹ նախ-
նական կրթությունը (մինչև 1602 թ.) ստացել է իր հորեղբոր՝ Հայ-
րապետ վարդապետի մոտ, որը եղել է Ժամանակի անվանի գիտ-
նական Բարսեղ Գավառացու աշակերտներից: Վերջինիս մասին մի
գրիչ գրել է. «Յիշեցէք... լուսատուն Հայկազեան տոհմիս զտէր
Բարսեղ բազմահանճար, զանյաղթ պւետիկոսն, որ է երկրէն Գա-
ւառոյ⁴⁰»: Հետագայում այս Բարսեղին է աշակերտել նաև ինքը՝
Ներսես Մոկացին:

Ստանալով իր Ժամանակի առումով խոր և հարուստ գիտելիք-
ներ, Ներսես Մոկացին նվիրվում է վանական միաբանություննե-
րում ծավալվող կրթա-լուսավորչական բեղուն աշխատանքի: Նա
երկար Ժամանակ աշխատում է որպես մանկավարժ, ինչպես նաև
անապատական միաբանություն հիմնող-գործիչ:

Այս առումով նրա կյանքը կապված է եղել հատկապես Թա-
ղեշի Ամրդուլու վանքի, Մյունյաց Մեծ անապատի և Հիմ կղզու միա-
բանության հետ: Եթե առաջինում անցել են նրա հասունացման և
ձևավորման տարիները, ապա երկրորդում նա եղել է անապատի
խոշոր գործիչներից մեկը, իսկ երրորդում՝ հանդիսացել է հիմնա-
դիր-առաջնորդ: Այդ վերջինում էլ նա կնքել է իր մահկանացուն:

Ներսես Մոկացու որպես բանաստեղծի ստեղծագործություն-
ները չնայած վաղուց են հայտնի մասնագետներին, սակայն նրա
գրական ժառանգության պատկերը ամբողջացնելու առաջին փորձը
կատարված է 1944 թ.՝ Ն. վարդ. Մովսեկյանի կողմից⁴¹: Պետք է
նկատել սակայն, որ այստեղ նրա անվան տակ նշված 10 բանաս-
տեղծություններից միայն 4-ն է պատկանում նրան: Այս հարցի
ճշգրտումը կատարեց Ն. Ակինյանը՝ Ներսես Մոկացուն ճանաչելով
8 բանաստեղծության հեղինակ⁴²:

Մեր որոնումներից պարզվեց, որ Ն. Ակինյանի ճշգրտած և
լրացրած ցանկում առկա է մի օտար տաղ («Գերահրաշ աստուած
գոլով»): Բացի դրանից, թե՛ Ն. Ակինյանի և թե՛ մյուս բոլոր մաս-

39 Ն. Մովսեկյանը Ներսես Մոկացուն ներկայացնում է Մանուկյան ազգանու-
նով, որը սխալ է, որովհետև նա այդտեղ Ներսես Մոկացուն շփոթել է Ներսես
Բաղդիշեցու հետ (աֆշմիածին, 1944, № 10—12, էջ 32):

40 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 1480, թերթ 48ա. Ժամանակ
1617 թ.:

41 Աֆշմիածին, 1944, № 10—12, էջ 32—35:

42 Ն. Ակինյան, Բաղեշի դպրոցը, էջ 106—115:

նագետների ուշագրությունից վրիպել է ներսես Մոկացու մի տաղը («... զուարճ մանկունք եկեղեցւոյ»)։ Այսպիսով ներսես Մոկացու բանաստեղծությունների նոր ցանկն ունի հետեւյալ պատկերը.

- 1 Աստուած և տէրն ամենայնի,
- 2 Բարերար աստուած, մարգասէր,
- 3 Երկինք ու գետինք եղբարք,
- 4 ... զուարճ մանկունք եկեղեցւոյ],
- 5 Ի հոշովել ժամանակին,
- 6 Հատդ անմահական,
- 7 Մանուկ մտավարժ էի,
- 8 Օրհնեալ տէր Յիսուս փրկիչ⁴³։

XVI—XVII դարերում, երբ ապրում և դործում էր ներսես Մոկացին, հայ զրականությունը զարգանում էր հիմնականում երկու ուղղությամբ՝ մեկն աչքի էր ընկնում հին ավանդների հետևողական պահպանումով, իսկ մյուսը՝ զրական նոր թեմաների ու նոր ձևերի որոնումով։ Անշուշտ, այդ ուղղություններն ունեին նաև իրենց ընդհանուր կողմերը, սակայն դրանք չէին փոխում նրանց հիմնական բնույթն ու ոգին։ Առաջին ուղղության պատկանող հեղինակների թեման՝ հոգևոր նյութերն էին, լեզուն՝ գրաբարը (մասամբ աշխարհաբարը), զրական ձևերը՝ արդեն մշակվածներն ու ազգային սեփականություն հանդիսացողները, երկրորդ ուղղությամբ պատկանողների թեման՝ և՛ հոգևոր, և՛ աշխարհիկ նյութերն էին, լեզուն՝ ժամանակի խոսակցականը (երբեմն գրաբարը), զրական ձևերը՝ ինչպես արդեն մշակվածները, այնպես էլ նորերը՝ փոխառնված ժողովրդական բանահյուսությունից և արևելյան աշուղական արվեստից։ Անկախ իրենց տարբերություններից, այդ երկու ուղղությունները ներկայացնում էին իր ժամանակի առաջընթացին համապատասխանող այն նոր ու միասնական զրականությունը, որ

⁴³ Մաշտոցի անվան Մատենադարանում պահպանվում են մի շարք ձեռագրեր (Մ 5164, 5430, 5016), որոնց նկարիչը նույնպես կոչվում է ներսես Մոկացի և նույն ժամանակի գործիչ է։ Նույն Մատենադարանի ձեռագրերի երկհատոր ցուցակում այս վերջինը ենթադրաբար նույնացվում է բանաստեղծ ներսես Մոկացու հետ (հատոր 2-րդ, էջ 1423)։ Մեր կատարած քննությունները, սակայն, հիմք չեն տալիս նրանց նույնացման համար։ Հետագայի թյուրիմացություններից խուսափելու նպատակով, նպատակահարմար կլինեի նկարիչ ներսես Մոկացուն անվանել Բայենցցի, որովհետև նրա կյանքն ու գործը կապված է այդ գյուղի անվան հետ։

կոչված էր հատուկ տեղ դրավելու ոչ միայն հայ, այլև մարդկային
ընդհանուր մշակույթի բնագավառում:

Ներսես Մոկացին պատկանում էր առաջին ուղղությանը: Եվ
դա միանգամայն ներդաշն էր նրա կրթա-լուսավորական և կրոնա-
անասլատական կյանքին ու գործունեությանը: Ըստ էության էլ նրա
ստեղծագործությունների վրա նստած է այդ միջավայրի կնիքը՝ իր
ժամանակի համար առաջնակարգ նշանակություն ունեցող խնդիր-
ների հետևողական և խոր արտացոլումով՝ հայրենիք, եկեղեցի և
լուսավորություն:

Իրենց զաղափարական բովանդակության բնույթի համաձայն
Ներսես Մոկացու բանաստեղծությունները որոշ պայմանականու-
թյամբ կարող են բաժանվել երեք խմբի. ա) պատմական թեմայով
հսրինվածներ, բ) հոգու և մարմնի փոխհարաբերությանը նվիրված-
ներ, գ) ավանդական-առասպելական բովանդակություն ունեցող-
ներ:

Այդ երեք խմբերի ներքին ազդակը՝ պատմական նույն իրա-
կանությունն էր. հայ ժողովրդի ծանր միճակը: Ինչպես հայտնի է,
XVI դ. ամբողջ երկրորդ հիսնամյակում և XVII դ. առաջին տաս-
նամյակում Հայաստանն ավերվում էր թուրքերի և պարսիկների
միջև ծագած կործանարար պատերազմների, ինչպես նաև նրանց
մշակած պետական ու բաղադրական միջոցառումների պատճառով:
XVII դ. սկզբում, երբ Շահ-Աբասը ամայացնում է Արևելյան Հա-
յաստանը՝ մասսայական տեղահանությունների ու արտագաղթի մի-
ջոցով: Դրության անտանելիության պատկերն ավելի է ամբողջա-
նում, երբ նկատի ենք առնում վրա հասնող սովը, համաճարակնե-
րը, ինչպես նաև ջալալիների համատարած կոտորածները: Պատ-
մական հիշատակարաններն ու մատենագրական աղբյուրները
ականատեսի ճշմարտությամբ և զարհուրանքով են նկարագրում
վրա հասնող այս արհավիրքները:

Ահա այդ ժամանակներում և հատկապես XVI դ. վերջերին ու
XVII դ. սկզբներին է, որ Հայաստանի տարբեր գավառներում երե-
վան են գալիս մշակութային նոր կենտրոններ և շարունակում պահ-
պանել ու զարգացնել հայ դպրության բազմադարյան ավանդե-
րը: Այս ժամանակների և միջավայրի արդյունքն է հանդիսանում
նաև Ներսես Մոկացին՝ ինչպես իր կրթությանը, այնպես էլ հա-
սարակական ու գրական գործունեությամբ: Ուշագիշտ զննությունը
ցույց է տալիս, որ նրա բանաստեղծություններն անկախ իրենց

գրական ձևերից ու շոշափած թեմաներից, այդ իրականությունն անմիջական արտահայտություններն են:

Պատմական թեմայով ներսես Մոկացու գրած բանաստեղծությունների մի մասի նյութն առնված է առօրյա կյանքից, իսկ մյուսինը՝ անցյալից:

Պատմական բովանդակություն ունեն հետևյալ ստեղծագործությունները՝ «Օրհնեալ տէր Յիսուս փրկիչ», «Ի հոլովել ժամանակին», «Հատդ անմահական», «... ղուարճ մանկունք եկեղեցւոյ»:⁴⁴ Դրանցից իր ժամանակի հետ ամենից շատ կապված և ավելի արմատական հարցեր շոշափող ստեղծագործությունը՝ ներսես Մոկացու «Օրհնեալ տէր Յիսուս փրկիչ» տողով սկսվող ներբողն է՝ նվիրված Սյունյաց Մեծ անապատի հիմնադրմանն ու նրա հիմնադիրներին:

Պատմական սկզբնաղբյուրներից հայտնի է, որ այս կարևոր միաբանության հիմնադրման գործում բացառիկ դեր խաղացին Սարգիս Ամբերդցին և Կիրակոս Տրապիզոնցին, ինչպես նաև Պողոս Մոկացի վարդապետը, որոնք, Մելիք Հայկազնի օգնությամբ, XV II դ. սկզբին Տաթևի մոտ հիմնեցին Սյունյաց Մեծ անապատը:

Ահա այս շորս նշանավոր անձանց և հայ կյանքի համար այնքան նշանակալից երևույթի է նվիրել ներսես Մոկացին իր վերոհիշյալ ներբողը:

Պատմաբան Լեոն, որ ծանոթ է եղել ներսես Մոկացու լուրջ աշխատքին, բարձր գնահատանքով է խոսել նրա մասին. «Ինչ որ մենք ունենք նրանից (իմա՝ ներսես Մոկացուց — Ա. Դ.), մի ուսանալուր գրություն է, մի ներբողյան, նվիրված Սյունյաց Մեծ անապատի հիմնադիրներին: Գրվածքը, ինչպես վայել է այդպիսի գործչին, մաքուր գրաբար լեզվով է, վայելուչ ու ճաշակավոր շարադրություն: Հեղինակը երևան է հանում խոր ծանոթություն հայոց հին գրականության հետ և առհասարակ մի լավատեղյակ ու զարգացած մարդու տպավորություն է թողնում: Նրա համառոտ աշխատության մեջ կան պատմական արժեքավոր նյութեր ևս, որոնք զանցառություն են մատնված ուրիշ ժամանակագիրների կողմից⁴⁵»:

Այդ ներբողը արժանացել է նաև Ղ. Ալիշանի ուշադրությանը. «Զվարդապետս այս Մոկաց, որ ծանոթ է այս գրվածին լավագույն տաղաչափությամբ և արժանի է գովության, թե գրվածոց և թե վարուցն համար⁴⁵»:

44 Լեո, Երկեր, Գ, էջ 362:

45 Ղ. Ալիշան. Հայագրատոմ. էջ 618:

Ներսես Մոկացու Մեծ անապատի հիմնադիրներին նվիրված
Ներբողի մասին խոսել են նաև Ն. Ակինյանը⁴⁶, Հ. Աճառյանը⁴⁷ և ու-
րիշներ:

Ներբողը սկսվում է բացառիկ ուրախ տրամադրությամբ և հը-
պարտությամբ.

Ականջ ունողացդ ասեմ,
Ունկն դիր բանիս միաբան,
Հսեք, փափագող լերուք,
Ծարաւի բաժակիս արբման,
Զի սիրոյ սեղան կաղմեմ
Եւ կոչեմ զձեզ ի խրախարան,
Կայթելով ծափս հարէք
Ի լսել զճառս երանական:
Զի թէ մեր յետնեալ գտար
Եւ շեղար արժան գովութեան,
Սակայն մերայինքս եղեն
Պարծանաց տեղի և կայան...

Այստեղ ակնարկված պանծալի անուններից առաջինը վերո-
հիշյալ Մելիք Հայկազնն է՝ մի քաջարի զորական, որն օսմանցիների
դեմ մղած բազմաթիվ ձախատամարտերից հաղթանակով դուրս գա-
լու համար, Շահ-Աբասի սիրելի զորավարներից մեկն էր դարձել:
Վերջինս մեծ պատիվներ է տալիս Մելիք Հայկազնին և նրան հանձ-
նում հայրենի գավառի՝ Սյունիքի իշխանությունը⁴⁸: Իր այս իշխա-
նությունն էլ Մելիք Հայկազնը օգտագործել է անապատի հիմնա-
դիրներին անհրաժեշտ օգնություն ցույց տալու ժամանակ: Ներսես
Մոկացին Մելիք Հայկազնին համարում է անապատի սյուն.

Անապատի սին լինէր
Եւ գրգէր գթով հայրական.
Մինչ յիշխանութեան միջին
Ջանք դնէր անապատական...

Անապատի երկրորդ սյունը՝ Պողոս Մոկացի վարդապետն էր.
Ներսես Մոկացին վկայում է, որ նա եղել է հայ դպրությանն ու

46 Ն. Ակինյան. Բազէշի դպրոցը, էջ 111—112:

47 Հ. Աճառյան. Անձնանունների բառարան, Դ, էջ 67—68:

48 Մ. Օրմանյան. Ազգապատում, Բ, էջ 2344—2345:

եկեղեցուն նվիրված անշահախնդիր, անձնուրաց, համեստ անձնավորութիւն: Պողոս Մոկացին շարունակ տեղից-տեղ էր շրջում, երկրի տարբեր մասերում բացում դպրոցներ, հիմնում եկեղեցիներ, նորոգում հները: Պողոս վարդապետի այս բարեներոգչական գործունեութիւնը հանդիպում է դիմադրութեան: Բնշպես Ներսես Մոկացին է վկայում «բարկութեան նախանձ բրդող» մարդիկ Պողոս վարդապետին քանիցս կանգնեցնում են դատարանի առաջ: Պողոս Մոկացուն, տակալն, հաջողվում է Մեծ անապատում մտերմանալ Մովսես Տաթևացու հետ ու միասին գործել ազգի և եկեղեցու վերանորոգման համար⁴⁹:

Անապատի մյուս գործիչները՝ Սարգիս Ամբերդցին և Կիրակոս Տրապիզոնցին էին: Նրանք իրար հանդիպեցին Երուսաղեմում, ուր գնացել էին ուսումնասիրելու տեղի միաբանութիւնների կարգ ու կանոնը: Դրանից հետո իրենց գործունեութեամբ նրանք մինչև իրենց կյանքի վերջը կապված մնացին միմյանց:

Ներսես Մոկացու ներքողում դրվատված է հայրենասիրութիւնը, շինարարական ստեղծագործ աշխատանքը, լուսավորութիւնը: Հայրենասիրութիւնը դրսևորված է հատկապես Մելիք Հայկազնի կերպարի միջոցով: Մելիք Հայկազնի կերպարը ժողովրդի ազատագրման համար պայքարի ելած մարդու կերպար է՝ նման մեր միջնադարյան գրականութեան մեջ կերտված հայրենասեր իրականպատմական հերոսների կերպարներին:

Բանաստեղծը մեծ վշտով է նկարագրում անապատի հիմնադիրների մահը և միաժամանակ այսպես սփոփում ու հուսադրում ընթերցողներին.

Ահա ձեզ ձայն աւետեաց,
Սփոփանաց և յուսադրական,
Թէպէտ սերմանողըն անկան,
Սերմանեալքն յոյժ արդինացան...

Սյունյաց Մեծ անապատի հիմնադիրներին նվիրված Ներսես Մոկացու ներքողը XVII դ. կրթական կյանքի վերանորոգման առաջին արտահայտութիւններից է, իսկ նրա հեղինակը՝ այդ վերանորոգման առաջին և նշանավոր ներկայացուցիչներից մեկը:

Ներսես Մոկացու՝ ժամանակակից թեմաներով գրած և պատմական բովանդակութիւն ունեցող գործերի մեջ, ստեղծման ժամանակով առաջինը Անդրեաս քահանային նվիրված գանձն է:

49 Տե՛ս նաև Դրիգոր Դաւանազցի, Ժամանակագրութիւն, էջ 284—285:

Անդրեաս քահանան նահատակվել է 1617 թ. նոյեմբերի 18-ին, ուստի և Ներսես Մոկացին գանձը պետք է գրած լիներ դեպքի թարմ ազդեցության տակ՝ 1617—1618 թթ.⁵⁰:

Ներսես Մոկացու այդ ստեղծագործությունը պահպանվել է երկու օրինակով: Մեկը Մաշտոցի անվան Մատենադարանի № 5958 ձեռագրում (թերթ 143ա—149ա), իսկ մյուսը Երուսաղեմի սրբոց Հակոբյանց Մատենադարանի № 1397 ձեռագրում⁵¹, Վերջինիս բընագիրը մեզ անծանոթ է. նրա մասին տեղեկանում ենք Ն. Ակինյանից:

Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող վնասված օրինակի ուշադիր զննումը ցույց է տալիս, որ Ներսես Մոկացին իր գանձը գրել է մեր հին գանձապատկերի նման. կարճ տողերով, նույնահանգ տներով և յուրահատուկ վերջնատող կրկնակներով: Ինչ վերաբերում է նրա բովանդակությանը, ապա շատ բան չենք կարող ասել: Հստ երևույթին այդտեղ անպաճույճ ու պարզ տողերով ներկայացված են դեպքի որոշ մանրամասնությունները և Անդրեաս նահատակի դրվատանքը:

Ներսես Մոկացու գանձն աչն առաջին գեղարվեստական ստեղծագործությունն է, որի մեջ պատկերված է Անդրեաս քահանայի նահատակությունը: Այդ նահատակության պատմությունը մեզ է հասել նաև ուրիշ աղբյուրների միջոցով: Առաքել Դավրիժեցին Անդրեասի նահատակությանը նվիրել է իր պատմության ի՛նչ գլուխը՝ «Վասն նահատակութեան տէր Անդրէաս քահանային»⁵², որն անցել է նաև հայամովուրդների մեջ: Անդրեաս քահանայի մասին հիշատակություն կա նաև Սամվել Անեցու շարունակողի մոտ. «Շահապասն յԱգուլիս զտէր Անդրէաս քահանայն նահատակեաց վասն քրիստոնեական հաւատոյն և թաղեցին ի Խըցաձորի եկեղեցին»⁵³: Անդրեաս քահանայի վկայաբանությունը հրատարակված է

50 Ն. Ակինյան, Բաղէշի դպրոցը, էջ 114:

51 Նույն տեղում: Թե որտեղից է վերցրել Ն. Ակինյանը նշված գանձի այդ խորագիրը («Գանձ ի նոր նահատակն տէր Անդրեաս Նախիճականցի») չենք կարող ասել, որովհետեւ Երուսաղեմյան օրինակի վերնագիրն ունի այլ ձևակերպում՝ «Գանձ նոր նահատակին և սուրբ քահանային Անդրէասի Նախճաանցոյ, որ կատարեցաւ ի Շահ Աբասէն, ասացեալ շնորհալի վարդապետին Բեղլու Ներսէս կոչեցեալ Մոկացի» (Ն. Խալս. Պոզարյան, Մայր ցուրակ ձեռագրաց սրբոց Ցապրեանց, Ե, Երուսաղեմ, 1971, էջ 44):

52 Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, էջ 354—363:

53 Սամվել Անեցի, Հաւաքմունք..., էջ 177:

2. Մանանդյանի և Հ. Աճառյանի կողմից⁵⁴։ Այս վկայաբանությունն է ահա, որ ընկած է Մուրացյանի «Անդրեաս երեց» սլափական վիպակի հիմքում։

Անդրեաս քահանան, թե ներսես Մոկացու գանձի և թե Առաքել Դավրիժեցու սլափությունն մեջ, հանդես է գալիս որպես հերոսական կերպար, որը մահից փրկում է շատերի կյանքը։ Անդրեասի նախատակությունը սոսկ հավատի համար չէ. նրա հավատը սիմվոլիզացումն էր հայրենիքի և ժողովրդի նկատմամբ ունեցած սիրո գաղափարի։

Ներսես Մոկացին Անդրեաս քահանայի հերոսությունը գեղարվեստական եղանակով վերարտադրող առաջին հեղինակն է, ուստի և որոշ առումով Մուրացյանի նախորդը՝ այդ հարցում։

Մաշտոցի անվան Մատենադարանի № 5958 ձեռագրում, Անդրեաս քահանային նվիրված գանձին կից պահպանված է նաև այդ գանձի համար ներսես Մոկացու գրած տաղը։ Այն ևս խիստ վնասված է։ Վերջին տողերից մեկում պահպանված է դրվատվող նահատակի անունը՝ «Անդրէասն»։

Տաղի խորագիրը չի պահպանված։ Չկա նշում նաև հեղինակի մասին։ Սակայն հատկապես XVI—XVII դդ., երբ երբեմն գրվում էր նոր գանձ այնպիսի անձնավորության մասին, որը նոր էր մուտք գործում եկեղեցական ծիսարանների մեջ, գանձի հեղինակը հենց ինքն էլ գրում էր համապատասխան տալն ու մյուս կցորդները։ Այսպիսիք են, օրինակ, Երեմիա Քյոմուրճյանի գրած գանձերն ու կցորդները⁵⁵։

№ 5958 ձեռագրում գանձն ու տալն այնքան միաձուլվ են, որ ձեռագրացուցակ կազմողները դրանք դիտել են որպես մի ամբողջություն (գանձ)⁵⁶։ Երուսաղեմի № 1397 ձեռագրում գանձի նկարագրությունից հետո տաղի առկայությունն չի նշված⁵⁷։

Մաշտոցի անվան Մատենադարանի № 5958 ձեռագրում, թե՛ գանձը և թե՛ տալը խաղաղորդված են. տաղի համար լուսանցքում նշված է. «Ո՛վ զարմանալոյ գոյն ասայ», որն ականարկում է միջնադարյան սիրված եղանակներից մեկը։ Խաղաղորդումը խոսում է ներսես Մոկացու երաժշտական գիտելիքների մասին։ Եվ դա

54 Հ. Մանանդյան և Հ. Աճառյան, Հայոց նոր վկաները, Վաղարշապատ, 1903, էջ 423—433։

55 Հ. Սահակյան, Երեմիա Քյոմուրճյան, Երևան, 1964, էջ 148—160։

56 Օ. Եղանյան, Ա. Զեյրուկյան, Փ. Անրաբյան, Յուզակ ձեռագրաց, Բ, էջ 222։

57 Ն. Էսյս, Պողոտյան, Մայր ցուցակ սրբոց Յակոբեանց, Ե, էջ 44։

միանգամայն բնական է, մանավանդ, երբ հիշում ենք Ավետիք Տիգրանակերտցու վկայությունը՝ «Մանուկ մտավարժ էի...» ողբի վերաբերյալ՝ «Թէ կամիս դունով ալ ասա»:

Ներսես Մոկացուց պահպանված վերոհիշյալ շորս ստեղծագործությունները իր ժամանակի հայ բանաստեղծության հայրենասիրական և կրթա-լուսավորական ջերմ տրամադրությունների լավագույն դրսևորումներից են:

Ներսես Մոկացու՝ անցյալի թեմաներով գրած պատմական բնույթի ստեղծագործությունների մեջ ուրույն տեղ ունի «Ի հոլովել ժամանակին» տողով սկսվող ողբը՝ նվիրված Սալահադդինի կողմից 1187 թ. Երուսաղեմը գրավելու պատմությանը: Սալահադդինի արշավանքի պատմությունը վաղուց արգեն կար ճշարագրեալ ազգի մերում»: Բն դեպքին ժամանակակից տարեգիրներն ու ժամանակագիրները, և թե հետագայում՝ մինչև Ներսես Մոկացին ասպարեզ իջած պատմիչներն ստորագարծել են այդ իրադարձությանը՝ ոմանք իհարկե հպանցիկ, ոմանք էլ բավական մանրամասնորեն: Պատմիչներից կարող ենք հիշել՝ Վարդան վարդապետին⁵⁸, Սամվել Անեցուն⁵⁹, Միխայել Ասորուն⁶⁰, Սմբատ Սպարապետին⁶¹, Կիրակոս Գանձակեցուն⁶² և ուրիշների: Անշուշտ, Ներսես Մոկացուն այդ բոլոր աղբյուրները հիմնականում ծանոթ են եղել, ուստի շոշափելի աղբյուրներ ենք դտնում, օրինակ, Սմբատ Սպարապետի «Տարեգրքի» և Ներսես Մոկացու գործի միջև:

Երուսաղեմին նվիրված հատուկ ողբ⁶³ ունի նաև Սալահադդինի արշավանքի ժամանակակից կաթողիկոս Գրիգոր Տղան: Թեմատիկ նույնություն ունենալով հանդերձ, այս երկու գործերը տարբեր են: Գրիգոր Տղայի պոեմը հիմնականում դիմառնություն է, որ անձնավորված խոսում է Երուսաղեմը՝ իր հետ պատահած մեծ աղետի մասին, մորմորում է, հեծեծում որպես որդեկորույս մայր: Մինչդեռ Ներսես Մոկացու ողբը հեղինակային խոսք է՝ ասված երրորդ դեմքով: Եթե Գրիգոր Տղան խոսում է միայն 1187—1189 թթ. մա-

58 Վարդան վարդապետ, Հաւաքումն պատմութեան, Վենետիկ, 1862, էջ 134—137:


59 Սամվել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 142—143:

60 Միխայել Ասորի, Ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1870, էջ 497—504:

61 Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 194—206:

62 Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 150:

63 Ed. Dulaurier, Recueil des historiens des Croisades, Documents arméniens, t. I, Paris, 1800, էջ LXIX:



սին, ապա Ներսես Մոկացին ավելի մեծ ժամանակահատված է ընդգրկում:

Հարց է առաջանում, ի՞նչն է ստիպել հեղինակին հետադարձ հայացքով, շուրջ կես հազարամյակ հետո, ողբալ Երուսաղեմի անկումը: Բացատրությունը տալիս է Մաշտոցի անվան Մատենադարանի № 2079 գրչագրի Ներսես Մոկացու գործին կցված հիշատակարանը, ուր նշվում է, որ նա ողբը գրել է իր հղբայրակիցների խնդրանքով: Բացի դրանից, ինչպես երևում է ողբից, Ներսես Մոկացին իր ասելիքն ուներ ժամանակակիցներին, և այդ առաջարկը հարմար առիթ էր: Թե՛ Ներսես Մոկացին և թե՛ նրա պատվիրատու հղբայրակիցները արտահայտում էին ժամանակի պահանջը: Խաչակրաց արշավանքներից մինչև Ներսես Մոկացու ապրած ժամանակաշրջանը Հայաստանը ճնշվել էր օտար լծի տակ, երկրի ներքին ուժերը բզկտվել էին արտաքին արշավանքներից և բավական չէին սեփական միջոցներով հասնելու ազատագրման: Դրա համար էլ փրկության ելք էին որոնում, օգնության կարիք էին զգում, իսկ քրիստոնյա Եվրոպան խոստանում էր այդ օգնությունը: Ահա այն օրերի այդ ծանր իրադրություններն էին, որ Ներսես Մոկացու և նրա հղբայրակիցների մեջ նորից արթնացնում էին Եվրոպայից սպասվող ազատագրման հույսը:

«Ողբ վասն առմանն Երուսաղէմի» ստեղծագործությունը ըստ բովանդակության կարելի է բաժանել 4 մասի: Առաջին մասում՝ Սալահադդինի հարձակման և Երուսաղեմի բնակիչների նախապատրաստության նկարագրությունն է, երկրորդ մասում՝ կողոպուտի և կոտորածի տեսարաններն են, երրորդում՝ խաչակրաց արշավանքի պատկերումը, իսկ չորրորդում՝ ողբի ավարտն է՝ հեղինակի կատարած եզրահանգումով:

Պետք է ասել, որ այս ստեղծագործությունը ծայրեծայր ողբասացություն չէ, նրա մեջ կան լուսավոր տրամադրությամբ գրված և ուրախ ուրիշ ունեցող հատվածներ: Այդպիսի մասերը կապվում են երրորդ փառակրաց արշավանքի և խաչակիրների ունեցած հաջողությունների հետ.

Տօն ցնծութեան կատարէին,
Զսուգն հին փարատէին
Եւ յետ աւուրց ինչ հանգստին
Վառեալ ի մարտ ընդ քաղաքին...

Բանաստեղծն իր հայրենիքի ազատագրման գաղափարը կապում է խաչակիրների հետ, հստակ չպատկերացնելով նրանցից

սպասվող ազատութեան հնարավորութիւնը. նրա սպասելիքները շունեն այն պայծառութիւնը, ինչ տեսնում ենք Ներսես Շնորհալու «Ողբ Եղեսիոյ» պոեմում: Ներսես Մոկացու խաչակիրներից ակնկալվող փրկութեան գաղափարը ավելի շուտ ավանդական սովորութիւնն է և ոչ թե իրականացող հնարավորութիւն:

Ներսես Մոկացին միջնադարյան մեր որոշ բանաստեղծների նման մտահոգված էր ոչ միայն իր հայրենակիցների վիճակով, այլև ընդհանրապես անհանգստացած էր բոլոր այն ժողովուրդների ճակատագրի համար, որոնք տառապում էին մահմեդականների լծի տակ: Նա դժգոհում է Արևմտյան իշխողների անմիաբանութիւնից, մի բան, որը կար Սալահադդինի ժամանակ և մնում էր նաև իր ապրած ժամանակաշրջանում: Նա ընդգծում է, որ քրիստոնյաները թշնամացել են իրար՝ որպէս դահիճներ:

«Ողբ վասն առմանն Երուսաղէմի» ստեղծագործութիւնը կարելի է համարել հայ միջնադարյան բանաստեղծութեան արժեքավոր ողբերից մեկը:

Միջին դարերում, ինչպես նաև դրանից առաջ, ընդհանուր մշտածողութեան և ժողովրդական պատկերացումների մեջ իշխում էր այն ժամանակների ծնունդը հանդիսացող մի ըմբռնում՝ կապված «հոգու և մարմնի», «երկնքի և երկրի», «մարդու և բնութեան» փոխհարաբերութեան հարցի հետ: Միջնադարն այս հարցը դիտեց քրիստոնեական հիմնական գաղափարախոսութեան դիրքերից և այդ ելակետը դրեց իր աշխարհաճանաչման եղանակի հիմքում: Ուստի այդ մտածողութիւնն իր իշխող ու բազմապիսի արտացոլումները գտավ ինչպես փիլիսոփայութեան, աստվածաբանութեան և այլ ուսմունքների բնագավառներում, այնպես էլ գեղարվեստական գրականութեան:

Յ. Էնգելսն իր աշխատութիւններից մեկում ուշադրութիւն է հրավիրում այդ հարցի պատմա-փիլիսոփայական կողմի վրա⁶⁴: Նա մի ուրիշ առիթով, անում է այսպիսի դիտողութիւն. «Եվ մենք, իսկապէս, օրեցօր սովորում ենք ավելի ու ավելի ճիշտ հասկանալ բնութեան օրենքները... Իսկ որքան ավելի մեծ չափով այդ փաստ դառնա, այնքան ավելի մեծ չափով մարդիկ նորից ոչ միայն կզգան, այլև կգիտակցեն իրենց միասնութիւնը բնութեան հետ և դրանով անհնարին կդառնա ոգու և նյութի, մարդու և բնութեան, հոգու և մարմնի միջև ինչ-որ հակադրութեան վերաբերյալ այն անիմաստ ու հակաբնական պատկերացումը, որը տարածվել է Եվ-

64 Յ. Էնգելս, Լյուպիգ Յոյերբախ, Երևան, 1960, էջ 24—26:

րոպայում կլասիկ հին դարի անկման ժամանակից և ամենաբարձր զարգացմանը հասավ քրիստոնեության մեջ»⁶⁵։

Այս ընդհանուր դրույթի մեջ մեզ համար էական նշանակություն ունի հատկապես այն նրբությունը, որ վերաբերում է «ոգու և նյութի», «մարդու և բնության», «հոգու և մարմնի» գաղափարական նշանակությանը։ Բանն այն է, որ գրականության մեջ այդ նույն գաղափարը դրսևորում է գտել էլ ավելի տարբեր ձևերով։ Ուստի հարցի ճիշտ մեկնաբանման համար միևնույն է, թե դրանցից որի հետ գործ ունենք. «հոգու և մարմնի», «ոգու և նյութի», «երկնքի և երկրի», «եկեղեցու և ջրաղացի», թե նման այլ գաղափարազույգի։

Փաստերը ցույց են տալիս, որ հոգու և մարմնի փոխհարաբերության պատկերացումը գեղարվեստական վերարտադրության նյութ է դարձել համարյա բոլոր ժողովուրդների մոտ։ Այս տեսակետից հետաքրքրական ուսումնասիրություն է կատարել ռուս գիտնական Ֆ. Բատյուշկովը⁶⁶, ուր հաշվի են առնված եվրոպական մի շարք լեզուներով ստեղծված համապատասխան հին և նոր նյութերը, այդ թվում նաև երեք գործ հայկական միջնադարյան գրականությունից։ Ուսումնասիրության խորագիրն է. «Сказания о споре души с телом в средневековой литературе»։

Հոգու և մարմնի հակամարտության գաղափարին մեր գրականության մեջ հանդիպում ենք դեռևս V դարից։ Այդ ժամանակների նշանավոր փիլիսոփա Եզնիկ Կողբացու հայացքներում մանրամասնորեն խոսված է հոգու և մարմնի մասին. ըստ նրա մարդիկ «յերկուց բնութեանց են՝ ի մարմնատուրաց և յանմարմնոց... և մեռանին մարմնովք և ոչ ոգւովք»⁶⁷։ Այս հիմքի վրա նա մանրամասնորեն ցույց է տալիս, թե ինչու պետք է ճնշել մարմինը հանուն հոգու փրկության։ Այս գաղափարը մեզ մոտ ևս դարձավ քրիստոնեական աշխարհայացքի առանցքը և դարեր շարունակ միտքը պտտվեց այդ առանցքի շուրջը։

Հրապարակ եկան գեղարվեստական արձակի և մանավանդ, չափածոյի բազմաթիվ նմուշներ, որոնցից կարելի է հիշել «Տեսիլ

65 Կ. Մաբս, Ֆ. էնգելս, Ընտիր երկեր, Բ, 1950, էջ 105։

66 Տե՛ս «Журнал Министерства народного просвещения», СПб, 1890—1891 гг.

67 Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Թիֆլիզ, 1914, էջ 71։

Գրիգորի Լուսավորչի» գրույցը⁶⁸, Խաչատուր Կեչառեցու⁶⁹, Պուտաղ Օղլի Ղազի Խանի⁷⁰ և այլոց մի շարք բանաստեղծությունները։

Սխալված չենք լինի, եթե ասենք, որ մեր միջնադարյան ամբողջ գրականության միջով հետևողականորեն անցավ այդ գաղափարը՝ Մեսրոպ Մաշտոցից մինչև Սայաթ-Նովա. վերջինս, արձագանքելով իր բոլոր նախորդներին, միջնադարյան հոգեհարազատություն մերտնջում էր։

Թե վուր հոքուտ կամքն իս անում, մարմինտ բեղամաղ է ըլում...⁷¹

Զուտ վիճաբանական կարգի բանաստեղծություններից ամենաուշագրավը Ներսես Մոկացու «Վիճաբանութիւն երկնքի և երկրի» գործն է։ Դա կարծես այլաբանական ընդհանրացումն է մինչ այդ եղած բոլոր նման վիճաբանությունների։ Երկինքն ու երկիրը վիճում են, թե ով է իրենցից գերադասելի և, հակադրվելով միմյանց, պարծենում են յուրաքանչյուրն իր ունեցածով։ Երկինքը գետնին նախատում է ասելով, որ նա բոլոր գեղեցիկ կտրիճներին իր հողի տակ է քանտարկում։ Գետնին արդարանում է, թե ինքն ստիպված է մեռած մարմիններին ամփոփել իր մեջ, որպեսզի ժահահոտությունից աշխարհը չխորտակվի, հրեշտակները չփախչեն և «երկինք ու գետինք» իրարով չանցնեն։ Տաղում դրսևորված է այն համարձակ միտքը, ըստ որի աստված չի կարող երկնքի և երկրի հավերժությունը պահպանել, եթե չլինի երկիրը։ Խիստ ուշագրավ է և այն, որ հեղինակի մոտ երկիրը հանդես է դալիս որպես կյանքի աղբյուր և պաշտպան, իսկ երկինքը սաստող, երբեմն սպանող, ոչնչացնող։ Այսպես, օրինակ, երբ երկիրն իր ծաղկունքով է հպարտանում, երկինքը սպառնում է տապ ու խորշակով։

Պարզիմ, բարկ արև դիպիմ,

Քո ծաղկունքն ամէնն խըշրի...

Կայծակ ու կարկուտ անեմ,

Քո ծաղկունքն ամէնն խափանի...

68 Լուսավորչին վերագրված այս տեսիլի մասին առաջին անգամ խոսել է Ն. Մառը («Ամառնային ուղևորութիւնից դէպ ի Հայս», նրա միջոցով ծանոթացել և ուսումնասիրել է Ֆ. Բատյուշկովը («Журнал Мин. нар. прос...», 1890—1891гг.): Հետագայում այդ մասին խոսել է Բ. Սարգսյանը («Ուսումնասիրութիւնք հին կտակարանի անվանը գրոց վրա», 1898): Այս տեսիլը կա Մաշտոցի անվան Մատենադարանի մի շարք ձեռագրերում (№ № 3206, 715 և այլն):

69 Մ. Ավագյեզյան, Խաչատուր Կեչառեցի, Երևան, 1958, էջ 152:

70 Ն. Մառ, Ամառնային ուղևորութիւնից դէպ ի Հայս, Վիեննա, 1892, էջ 75:

71 Սայաթ-Նովա, Հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն խաղերի ժողովածու, աշխատասիրությամբ Մ. Հասրաբյանի, Երևան, 1963, էջ 58:

Եվ դրան հակառակ երկիրը ամեն գնով աշխատում է հակադրվել նրան՝ յուր ծաղկունքը դալար պահելու համար: Վիճաբանությունն ստանում է սուր բնույթ, երկինքը հպարտանում է ինը դաս հրեշտակներով, երկիրը նրանց հակադրում է յուր ասաքյալներին ու մարգարեներին, որոնք վերջին հաշվով եղել են մարդիկ կամ ներկայացվել են որպես այդպիսիներ: Երկինքը կարծես հավաքում է իր ամբողջ ուժը և պարծենում:

Եօթն տակ երկինքն եմ ես,

Որ արև, լուսին կու լինի...

Ստեղծող արարիչն աստուած

Աթոռով վրաս կու բազմի...

Բայց երկիրը գտնում է նաև դրան պատասխան՝ ելնելով ժամանակի հավատալիքներից: Թեկուզ դեպի երկինքն ոսնեցած իր բացասական վերաբերմունքը ցույց տալու համար հեղինակը հիմնել է հոգևոր մտքի արդյունք հանդիսացող «փաստարկումի» վրա, բայց և այնպես դա չի թուլացնում նրա հակադրվելու ուժը, որովհետև դա միայն ձևական կողմն է: Այդ եղանակով նա փաստորեն պարտված է ճանաչում երկնքին և հաղթանակած՝ երկրին: Եվ այն, ինչ նա ասել է որպես եզրափակում, բավական է, որ այդ գործը դիտվի որպես իր ժամանակի առաջավոր մտքի ամենապայծառ արտացոլումը:

Ապա ցածացաւ երկինքն

Ու գլուխ եդիր ի գետնի...

Դուք այլ ցածացէ՛ք, մանկտի՛ք,

Ու գլուխ դէք ի գետնի:

Քան զերկինքն ի՞նչ բարձր կայ,

Որ գլուխ եդիր ի գետնի,

Այսօր վրան կու քայլենք,

Վաղն մտնունք ներքև գետնի:

Այս տողերի մեջ արդեն հեղինակն անկաշկանդ է: Նա մոռացավ, որ նախորդ տունը վերջացրեց դատաստանով. այժմ նա փառաբանում է երկիրը՝ միանգամայն այլ և, եթե կուզեք, հակադիր առավելության համար, մի բան, որ հենց սկզբից էլ ցանկացել էր ասել հեղինակը, — երկիրն առավել է այն պատճառով, որ

Այսօր վրան կու քայլենք,

Վաղն մտնունք ներքև գետնի:

Այսինքն՝ նա է մեր գոյության միակ օրրանը: Ու հենց դրա համար է, որ նա երկրին երկրպագելու է կոչում ոչ միայն մարդկանց, այլև իրեն՝ երկնքին:

Ահա իր ժամանակի առաջընթացի ցայտուն արտահայտությունը՝ գեղարվեստական խոսքի և մտածողության բնագավառում աշխարհայացքային առումով:

Այս բանաստեղծությունը հոգու և մարմնի պայքարը դրսևորող լավագույն ստեղծագործությունն է, որի դիպուկ բնութագիրը տվել է Մ. Աբեղյանը. «Մեր քնարերգությունը, այսպես, երկնքից կատարելապես իջել է արդեն երկիրը, իրական աշխարհը: Եկեղեցական է երգելը, թե աշխարհական, այդ այժմ այլևս նշանակություն չունի: Աշխարհիկ ոգին իշխում է: Բայց որովհետև **XV—XVII դդ. ուսումնականը, շասենը** գրագետը, դեռ միայն եկեղեցականն էր, ուստի աշխարհիկ ոգու տեսությունը, երկրի առավելությունը երկնքից հիմնավորում է նույն հոգևորականը: Ներսես Մոկացի վարդապետը, հիմնադիր լիմ անսպառնի վանքի (1622 թ.) իր «Վիճաբանութիւն երկնքի և երկրի» գեղեցիկ քերթվածի մեջ, այդ երկուսի փառավորությունը ցույց տալուց հետո, առավելությունը տալիս է երկրին, որի առաջ խոնարհվում է նույնիսկ երկինքը... Դա արդեն վերջն էր եկեղեցական-կրոնական ոգու և հայացքի»⁷²:

Միջին դարերում իշխող հիմնական գաղափարը և հոգու ու մարմնի միջև երեակայված պայքարը հիմք հանդիսացան նաև քրեարական զանազան զղջումների, մեղայական աղերսանքների, որոնք աստիճանաբար վերաճեցին գրական մի ամբողջ ուղղության: Ներսես Մոկացու «Մանուկ մտավարժ էի» ողբը պատկանում է ահա այդ ստեղծագործությունների շարքին: Պետք է ասել, որ վերջիններիս ևս մեծ դեր էր վիճակված ինչպես սերունդների հոգևոր ապրումների նորանոր ծալքերը բացահայտելու, այնպես էլ բանաստեղծական խոսքի և մասնավորապես քնարերգության ձևավորումն ու զարգացումը կայուն ընթացքի մեջ դնելու տեսակետից:

Մեսրոպ Մաշտոցն էր մեր առաջին բանաստեղծներից մեկը, եթե ոչ առաջինը, որ տվեց նման բանաստեղծությունների մի բավականին ընդարձակ շարք, ուր փշխում է հոգու փրկության ծանր մտատանջությունից բխող ողբերգությունը:

72 Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, Բ, էջ 588:

Մով կենցաղոյս հանապազ զիս ալեկոծէ,
Մրրկեալ ալիք թշնամին ինձ հարուցանէ.
Նաւապետ բարի, լեր անձին իմոյ ապաւէն⁷³:

Այս քնարերգութիւնը Մաշտոցից հետո աստիճանաբար վերափոխվում է հոգեկան ավելի խոր ապրումներ պարունակող պոեզիայի, որն արդեն X դ., շնորհիվ Գրիգոր Նարեկացու, հասնում է բարձր աստիճանի: Նրա «Մատենան ողբերգութեան» պոեմում անձնական վիշտը վեր է ածվում համամարդկային վշտի և դրսևորվում այնպիսի լայնությամբ, խորությամբ ու արվեստով, որպիսին չի տվել ժամանակի միջազգային գրականությունը:

Մ. Աբեղյանը, Գրիգոր Նարեկացու Մատյանը քննելիս, առանձնացրել է այսպիսի խորագիր. «Հոգու և մարմնի հակառակութիւն...»: «Մարդ,— գրում է նա,— լինելով հանդերձ աստծո ստեղծագործութեան կենտրոնը, իսկապէս մի թույլ էակ է, կազմված երկու հակառակ մասերից՝ մարմնից ու հոգուց: Փրկութեան ձգտելով՝ նա շարունակ ներքին պայքարի մեջ է և չգիտի, թե որի կամքը կատարի, մարմնի՞, թե հոգու: Այս երկվութիւնն է, ահա որ դառնում է նրա համար տանջանքի պատճառ...⁷⁴»:

Նարեկացուց հետո մեր միջնադարյան համարյա բոլոր բանաստեղծների մոտ մշակվել է այդ թեման: Նկատելի է սակայն, որ Նարեկացու Մատյանի նմանությամբ հետազայում գրված մեծածավալ ողբերից բացի ուշադրութիւն են գրավում ավելի սեղմ ծավալ ունեցող ստեղծագործութիւնները: Վերջիններիս մեծ ապագա էր սպասում:

Այսպիսի բանաստեղծութիւններից մեկն է նաև Գրիգոր Տղայի մի մեծարժեք ողբը, ուր այսպես են արտահայտվում իր ժամանակի հավատացյալ մարդու հոգու խռովքն ու տվայտանքները.

Լերինք ամենայն և մայրք,
Նդկեցէք զիս, մոլորեցայ...⁷⁵

Այս մոտիվը լայն շարժերով մշակում է նաև Ֆրիկը:

Խաչատուր Կեչառեցին ևս իր մի շարք քնարական բանաստեղծութիւններով, ինչպես նաև Ալեքսանդրի պատմութեան մեջ

73 «Շարական», Կ. Պոլիս, 1853, էջ 149:

74 Մ. Աբեղյան, Երկեր, Գ, Երևան, 1968, էջ 591:

75 Նուբայր եպս. Պողարյան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, Գ, Երուսաղեմ, 1954, էջ 265—267:

մուծված կաֆաների մի մասով մասնակցել է վերոհիշյալ թեմայի մշակմանը⁷⁶։

Կան նման շատ օրինակներ ևս ուրիշ հեղինակների մոտ։

Ներսես Մոկացին, լինելով իր ժամանակի ախտավոր երեւոյթները քննադատողներից մեկը, «Մանուկ մտավարժ էի...» ստեղծագործության մեջ հմտորեն անդրադարձել է նաև այդ հարցին։ Ըիշտ է, նա ամենուր, ընդունված ձևի համաձայն, առերես նկատի ունի իրեն, սակայն, հենց դրանով նա քննադատում է առհասարակ բոլորին։ Հասարակական գլխավոր շարիքներից էին արժաթասիրությունը, կաշառակերությունն ու հարստահարությունը։ Այդ ախտերի դեմ պայքարելու նպատակով բանաստեղծը գրում է.

Արժաթասիրության ախտին

Ի յերկիր կարկամ կապեցայ...

Չար մտօք մամոնայի

Եւ զարդուց նորին ցանկացայ...

Եզանց և ագարակի

Եւ կանանց սիրով հեշտացայ...

Փառասիրության, ընչասիրության և կողոպուտի այս շարիքներից հետո, բանաստեղծը քննադատական խոսք է ասում իրավունքի և ուժի անարդար տիրապետության դեմ.

Ուրար և փիլոն արկեալ,

Թէ լծովս խոր խոնարհեցայ

Եւ ահեղաբոլ սաստիւ

Ի փոքունց վերայ բարձրացայ...

Եւ սիրամարգի նման

Սիգալով փերեկեցայ...

Այս տողերի մեջ հեղինակը քննադատել է ժամանակի սոցիալական շարիքները՝ նկատի առնելով հատկապես հոգևորականների առօրյան։ Բանաստեղծությունից երևում է, որ աշխարհիկը զորեղ ուժ էր իրենից ներկայացնում, և իբր թե աստված՝ հոգևոր ժառանգության պատրաստվողներին պատրամել է սթափ լինել և պատրաստ, որ հավատի լույսը միշտ պայծառ լինի, հակառակ դեպքում կարող է զորանալ արտաքինը, այսինքն՝ աշխարհայինը։

76 Մ. Ավգալըեզյան, Խաչատուր Կեչառեցի, էջ 141։

Հեղինակը մի կողմից նկատի ունենալով անհատական, իսկ մյուս կողմից հասարակական վարքագծի հոռի և անհաղթահարելի կողմերը, աստիճանաբար խորանում է մեղքի և մեղավորության հարցի մեջ՝ ստեղծելով իր գողտրիկ ողբը: Այստեղ մեկը մյուսին են հաջորդում տպավորիչ պատկերները, դիպուկ համեմատությունները, որոնց շնորհիվ միմյանց են հակադրվում կենցաղավարության բարոյական ու անբարոյական, խրախուսելի և մերժելի, ազնիվ ու խտտելի կողմերը՝ ամենուր առաջինների դրվատմամբ և երկրորդների պախարակումով:

Ներսես Մոկացին ունի նաև մի աղոթք՝ կրոնա-դավանաբանական բովանդակությամբ, գրված հավանաբար իմի անապատականների առօրյա պետքերի համար: Դա երևում է խորագրի «Աղօթք առանձնակի...» և «ի իմ անապատն» նշումներից:



Ներսես Մոկացու ստեղծագործությունների մեջ իր ուրույն տեղն ունի «Աստուած և տէրն ամենայնի...» տողով սկսվող ընդարձակ բանաստեղծությունը, որ կոչվում է «Ներբողեան վիպասանական ի փոխումն Աստուածածին կուսին...»:

Մասնադեմները վաղուց են նկատել, որ այն հանդիսանում է երկու հեղինակի գործ՝ Ներսես Մոկացու և նրա աշակերտ Ստեփանոս Շատախեցու: Բնական է, որ այսօր՝ քննվող ներբողին մենք չենք կարող անդրադառնալ լուկ մասամբ՝ նկատի ունենալով միայն նրա սկզբի մասը՝ կապված Ներսես Մոկացու անվան հետ, մասնավոր, որ Ստեփանոս Շատախեցու լրացման մեջ էլ իշխում է շարադրանքի նույն լեզուն, ոճը, տաղաչափությունը և ոգին: Չմոռանանք հիշել, որ այդ հավելումն էլ կատարված է հեղինակի գիտություններ:

Աստվածամոր կերպարը, նրա հետ կապված գրույցները մեր միջնադարյան բանաստեղծության հիմնական թեմաներից են. բանաստեղծները գրել են նաև Աստվածածնի վերափոխման մասին: Այդ թեմայով, օրինակ, ընդարձակ ներբող է գրել Ներսես Լամբրոնացին («Ներբողեան ի վերափոխումն Աստուածածին»): Այդտեղ նկարագրվում է, թե ինչպես Աստվածածինը մահանալիս առաքյալների խնդրանքով թողնում է իր պատկերը տախտակի վրա, օրհնելով այն՝ հրաշքներ գործելու համար: Հեղինակը, սակայն, իր ներբողը չի կապում Հայաստանի հետ⁷⁷: Երբ Ներսես Լամբրոնա-

77 Ներսես Լամբրոնացի, Ներբողեան ի վերափոխումն Աստուածածնի, Վիեննա, 1826:

ցու ներբողը համեմատում ենք ներսես Մովսեսու ճերբողեան վիպասանականի...» հետ, տեսնում ենք, որ ներսես Մովսեսու և Ստեփանոս Շատախեցու մոտ զգալի է ժողովրդական ավանդության շունչը և ազգային կյանքի որոշ կողմերի արտացոլքը:

Ներսես Մովսեսու ներբողում նախ տրվում է աստվածաշին արարչության սեղմ պատմությունը, ապա խոսվում է Աստվածամոր վերափոխման մանրամասնությունների մասին: Կենտրոնական պարագաներից մեկը Տիրամոր պատկերի պատմությունն է, որը վիճակվում է Բարդուղեմեոս առաքյալին, իսկ նա էլ բերում է Հայաստան և զետեղում կռապաշտության վայրերից մեկում կառուցված նոր սրբավայրում՝ Հոգյաց վանքում: «Այստեղ մինչև օրս էլ պահվում է Տիրամոր պատկերը», — գրում է Մ. էմինը 1874 թ.⁷⁶ Դժվար է ասել, դա նույն պատկերն է եղել, որի մասին խոսում է Մովսես խորենացին, թե ոչ, սակայն կարևորը պատկերի ավանդական գոյությունն է՝ թերևս նորոգումներով:

Թե՛ Մովսես խորենացին և թե՛ ներբողի հեղինակները հատուկ տեղ են տվել նախաքրիստոնեական շրջանի պաշտամունքի նկարագրությանն ու կռապաշտության հալածանքին: Խոսքը Անձևացյաց զավառի հռչակավոր Կանգուար և Ագռավաքար կռատների մասին է. «Դեք բազումք բնակեալ էին անդ, — ասում է Մովսես խորենացին, — և պատրէին զմարդիկ տեղւոյն, տուեալ յայնմ տեղւոջէ դեղս ախտականս առ ի կատարել զպղծութիւնս ախտից, կրճանաձայն դարբնաց ահաւոր հրաշիւք արհաւիրս գործէին, յորս մարդիկ աշխարհին սովորեալք անդ առ քրային դեգերէին, առեալ ի շաստուածոցն ծրարս թարախածորս ի պատիր ախտիցն»⁷⁹, Նըշված վայրերում պաշտվելիս է եղել հատկապես հեթանոս հայության հռչակավոր աստվածուհին՝ Անահիտը, որին և փոխարինում է քրիստոնեական Աստվածամայրը:

Անհարկի չէր լինի մի քանի տան մեջքերմամբ ցույց տալ Մովսես խորենացու վերոհիշյալ տողերի վերարտադրությունը ներբողյանի մեջ.

Առ ի համբաւ քարի միող,
Յոր էր աղուսն ամրացեալ յորշ,
Ընդ Անահտայ բնակէր տիկնոջ՝
Մարդախոշոշ, կռանագոշ:

✓ 76 Н. Эмин, Сказание о преставлении богородицы и об ее образе. М., 1874.

79 Մ. Խորենացի, Մատենադարձութիւնք. Վենետիկ, 1865, էջ 294:

Քանզի փայլական ի վայր անկեալ,
Ի դարբնաց քրայս արկեալ,
Զդեղն, որ կազմէր ախտիւ խառնեալ,
Յուռութ ուլունս մակարդացեալ...

Ազգագրական առումով ուշադրով է աղվեսի դիցարանական կապը՝ Անահիտի հետ, որը չկա համապատասխան զրույցներում և գալիս է հավանաբար տեղական բանավոր ավանդութիւններից: Հետաքրքրական են նաև կախարդական «յուռութ ուլունս»-ի կայծակից և քուրայից ստացված լինելու մասին եղած վկայութիւնները:

Ազաթանգեղոսի Հայոց պատմութիւնից երևում է, թե ինչպիսի մեծ բախում է եղել հեթանոսութեան և քրիստոնեութեան միջև, հասնելով զինված ընդհարումների: Քրմերը Ազաթանգեղոսի մոտ ներկայացվում են որպես դևեր, դիվային զարհուրանքով: Ներբողում առկա է նաև Ազաթանգեղոսի համապատասխան վկայութիւնների արձագանքը:

Առհասարակ ներբողը յուրատեսակ գովք լինելով քրիստոնեութեան երբեմնի հաղթանակի, օտար բռնակալութեան պայմաններում, յուրովի նպաստում էր հայ ժողովրդի համախմբմանը ազգային կրոնի և հայրենասիրական դադափարների շուրջը:

* * *

Ներսես Մոկացու ստեղծագործութիւններն արժանի են ուշադրութեան նաև իրենց արվեստի որոշ առանձնահատկութիւններով: Չնայած դրանք մեծ թիվ չեն կազմում (ընդամենը 8 գործ), սակայն աչքի են ընկնում գրական սեռերի ու ժանրերի բազմատեսակութեամբ: Այսպես, նրա մոտ կարելի է հանդիպել ժամանակակից ըմբռնումով հայտնի գրական բոլոր 3 սեռերին՝ էպիկական, քնարական, դրամատիկական: էպիկական են, օրինակ, Երուսաղեմի անկմանը նվիրված ողբը, Աստվածամոր պատկերին ձոնված ներբողը, քնարական են՝ «Մանուկ մտավարժ էի» ներբողը, աղոթքը, դրամատիկական՝ երկնքի և երկրի վեճը: Ըստ որում, Աստվածածնին նվիրված ներբողը կարող է դիտվել նաև որպես էպիկո-քնարական ստեղծագործութիւն:

Միջնադարում ընդունված գրական տեսակների առումով ևս Ներսես Մոկացու ստեղծագործութիւնները բազմազան են, որովհետև նրա մոտ հանդիպում ենք և՛ ներբողի, և՛ ողբի, և՛ տաղի, և՛ գանձի, և՛ աղոթքի, և՛ տրամախոսութեան:

Ուշագրավ է այն, որ նա այստեղ էլ հավատարիմ մնալով ազգային ավանդույթներին, միաժամանակ զարգացրել է դրանք՝ իր ժամանակի ոգու համաձայն: Ցայտուն է, օրինակ, հետևյալ փաստը, եթե նախորդ հեղինակների մոտ ներբողի ժանրը սովորաբար ծառայել է սրբերի, կրոնական տոնակատարությունների և այլ նշակատակների դրվատմանը, ապա Ներսես Մոկացին ներբողների բնագավառն է ներմուծել հայրենասիրության, դպրության, լուսավորության գաղափարների փառաբանությունը: Երևույթ, որը եվրոպական գրականության մեջ էլ այդ ժամանակից է նկատվում: Ներսես Մոկացին փորձել է ընդլայնել նաև գանձերի թեմատիկ սահմանները՝ նյութ դարձնելով ժողովրդից ելած հայրենասիրների գործերը: Նրա մոտ խորացված է վիճաբանական կոչվող գրական տեսակի մշակման փորձը՝ ի դեմս երկնքի և երկրի վիճաբանության: Այստեղ միաժամանակ գործ ունենք ժողովրդական նյութի լավագույն մշակման հետ, որը հատուկ տեղ է գրավում մեր միջնադարյան գրականության մեջ: Երուսաղեմին նվիրված նրա ողբն էլ, ըստ ամենայնի, գիշելով հանդերձ նախորդների (Ներսես Շնորհալի, Գրիգոր Տղա) համապատասխան պոեմներին ավելի կուռ է ու ամփոփ: Հատկանշական է նաև այն, որ Ներսես Մոկացու ստեղծագործություններից մի քանիսի մեջ (օրինակ, Սյունյաց Մեծ անապատի գովքում) ուրվագծվում են գրական կերպարներ:

Ներսես Մոկացին ունեցել է ինչպես կանոնավոր, այնպես էլ ազատ բանաստեղծությամբ գրելու շնորհք և հմտություն: Կանոնավոր հանգավորմամբ ու տաղաչափությամբ են գրված նրա բոլոր 7 ստեղծագործությունները, բացի աղոթքից, որը պատկանում է ազատ բանաստեղծության բնագավառին:

Ներսես Մոկացու նախասիրած տաղաչափական բոլոր ձևերն էլ ազգային-ավանդական ծագում ունեն: Այդպիսիներից է «Հայրենի կարգա» կոչված չափը | — — — | — — — | — — — | — — — | — — — |, որով գրված են երկնքի և երկրի վիճաբանությունը, ինչպես նաև «Մանուկ մտավարժ էի» և Սյունյաց Մեծ անապատին նվիրված ներբողները: Ըստ որում, Ներսես Մոկացին այն հեղինակներից է, որոնց մոտ իր վերջին արձագանքն է գտնում հայրենների տաղաչափությունը: Մեր բանաստեղծի սիրած ձևերից է նաև յամբական 8 վանկանի ոտանավորը («Ի հոլովել ժամանակին», Աստվածածինն նվիրված ներբող), յամբ-անապեստյան միանդամ 5 վանկանի ոտանավորը («Հատուկ անմահական»), ազատ ռիթմական պրոզան (աղոթք) և այլ ձևեր: Ինչպես տեսնում ենք,

Ներսես Մոկացու մոտ տաղաչափական ձևերի մեջ առկա է բազմազանություն:

Ներսես Մոկացու բոլոր ստեղծագործություններն էլ, բացի աղոթքից գրված են կանոնավոր հանգերով: Սակայն այս հարցում նա հավատարիմ է մնացել հին ձևերին՝ նախընտրելով հիմնականում նույնահանգությունը: Այսպես, «Մանուկ մտավարժ էի» ներբողը գրված է միայն «ա» («այ») հանգով, Սյունյաց Մեծ անապատին նվիրված ներբողը՝ «ան» հանգով, «Վիճաբանութիւն երկընքի և երկրի» բանաստեղծությունը «ի»-ով, Երուսաղեմին նվիրված ողբը՝ «ին» և «ան» հանգերով: Փոքր-ինչ բազմազանություն կա Աստվածածնին ձոնված ստեղծագործության մեջ («ի», «այ», «ան», «ար», «ալ», և այլն), որն էլ հիմնականում կապվում է Ստեփանոս Շատախեցու անվան հետ: Այսպիսի հանգավորումը, որ այնքան հատուկ էր նախորդ բանաստեղծներին (Ֆրիկ, Խաչատուր Կեչառեցի և այլն), արդյունք է հեղինակի ընտրած գրական ուղղության:

Ներսես Մոկացու ստեղծագործություններում առկա են նաև արվեստի այլ հնարաններ, ինչպիսին է, օրինակ բաղաձայնությը (ալիտերացիա) «Նո՛ւ պա՛րու պա՛րապետիս պա՛րաւո՛ւք» (պ, բ), «Գրկամբ պարփակեաց զինև, վալփայեաց. որով փափկացայ» (բ, պ, փ), «բարկութեան բոցով այրեցա...» (բ, ց):

Նկատելի է, որ Ներսես Մոկացու տարբեր բանաստեղծություններում տարբեր չափով են օգտագործված պատկեր-համեմատությունները և խոսքի ու մտքի պատկերավորման այլ եղանակները: Այս առումով համեմատաբար ավելի հարուստ ու հագեցված են Սյունյաց Մեծ անապատին նվիրված ներբողը, երկնքի և երկրի վիճաբանությունը և «Մանուկ մտավարժ էի» գործը:

Ներսես Մոկացին երբեմն բավականին մեծ հմտությամբ է վերարտադրում արտաքին աշխարհը, բնության տեսարանները, մարդկանց տեսքն ու տարազը: Ահա մի քանի տող՝ նվիրված Մեյիբ Հայկազնի զինավառությունը.

Ընդ մէջ իւր ածեալ սուսեր

Ձերկսայրին և զթուրն կտրան,

Ձվահանն պղնձապատ՝

Աջողակ ընդ աշոյ կռան,

Հարթ համակ նկարակերտ՝

Նպատակ նետից ուժգնական:

Զլախտն յաշոյ ձեռին ունէր,

Նիշ՝ գուշակ ինքնիշխանութեան,
Յահեկէն կախեալ կռան՝
Կտցաւոր ՚ւ ինքն զառնիշառ:
Հասակն զրահաւորեալ,
Սաղաւարտ պսակ քաղաքեան...

Նման դեպքերում ևս նա երբեմն օգտվում է նախորդ հեղինակներից, տալով արժեքավոր գրվագներ: Այդպիսիներից են, օրինակ, Գրիգոր Նարեկացու նկարագրած նավի խորտակման տեսարանի նմանությամբ գրված տողերը (տե՛ս «Բանասիրական դիտողություններ»):

Ներսես Մոկացիին խոսքի գեղարվեստական հնարքներից հատուկ ուշադրություն է դարձնել հին կրոնական պատկերացումների հետ առնչվող պատկեր-համեմատությունների, Բեալոր մշտրերի և առանձին դարձվածքների վրա:

Հիշենք մի օրինակ: Բանաստեղծը, կամենալով մեծարել իր ժամանակի լուսավորության զլխավոր գործիչներից Սյունյաց Մեծանապատի շորս հիմնադիրներին, նրանց այսպես է պատկերում.

Չորս գետոց նման հոսեալ,
Արբուցին զծարաւ Հայաստան...
Չորից անտարանդաց
Նմանեալ առ մեզ յայտնեցան:
Եւ շորս տարերաց նրման՝
Ի շորս յանկիւնս համբաւեցան.
Քառադէմ կառաց նման,
Որ Առիւծ և Եղն ասացան,
Մարդ և Արծու նման
Փութապէս առ տէր սլացան...

Այստեղ քրիստոնեւության համարյա բոլոր մեծագույն սրբությունները, փոխաբերական առումով, օգտագործված են բացահայտելու ներքոդի հերոսների լուսավորական ջանքերը:

Հատուկ տեղ են գրավում իրական կյանքից առնված համապատասխան պատկերները: Ուշագրավ են, օրինակ, հետևյալ տողերը՝ իրենց երկրային թարմությամբ, պատկեր-համեմատություններով, մակդիրներով և արվեստի այլ բաղադրատարրերով: Խոսքն այլաբանական է և վերաբերում է վերահիշյալ շորս անձանց ծավալած լուսավորությանը.

Այս երաշտացեալ գետինս
Արտասուաց ցողով արբուցան,
Զայս խոսպանացեալ երկիրս
Արարին բերրի անդաստան:
Հերկեալ խրատով զայգիս,
Զարահնար փուշքն խլեցան...

Շինականի աշխատանքային առօրյայից սերված նման մտա-
ժողովոյունն է իշխում նաև հետևյալ տողերում.

Ե՛կ, մերձաւոր, ձմեռն անցեալ,
Ահա այգիս մեր ծաղկեցեալ,
Ծատանելոյ ժամն մերձեալ,
Զայն տատրակի աստ հնչեցեալ:

Ներսես Մոկացու լեզուն, ինչպես արդեն նշվեց գրաբարն է,
սակայն ժամանակի շունչը մղել է նրան, որպեսզի նա խոսի հա-
մեմատաբար պարզ ու հասկանալի գրաբարով, տեղ-տեղ էլ իջ-
նելով խոսակցական լեզվի մակարդակին: Ավելին, երկնքի և երկ-
րի վիճարանության մեջ հեղինակը հավատարիմ է մնացել ոչ
միայն ժողովրդական ստեղծագործության ոգուն, այլև ժամանա-
կի աշխարհաբարին:

Զի կարելի ներսես Մոկացուն ճիշտ հասկանալ առանց հըս-
տակ պատկերացում կազմելու նրա գրական նախասիրութիւննե-
րի և սկզբունքների մասին: Առաջին հայացքից զարմանալի է թը-
վում, թե ինչու Ներսես Մոկացին հեռու է իր ժամանակին բնորոշ
սիրո, խնձույքի, ուրախության երգերից, աշխարհաբար լեզվից,
օտարաբանութիւններից, գրական նորաձեւութիւններից, տաղա-
շափական ներմուծութիւններից ու հնարանքներից, աշուղական գը-
րականության ազդեցության ոլորտից: Պարզվում է սակայն, որ նը-
ման սահմանազատումը պայմանավորված է եղել նախ գրական-
կրթական անապատային այն միջավայրով, ուր նա անցկացրեց
իր ողջ կյանքը, ապա նաև գիտակցված նախասիրութեամբ, որպես-
զի գրական օտար ազդեցութիւնները, քաղաքական բռնատիրու-
թյան պայմաններում, չափից ավելի չիսփանցեն հայ գրականու-
թյան մեջ: Այս ուղղութեան մեջ Ներսես Մոկացին ոչ առաջինն էր
առհասարակ, ոչ էլ միակը՝ իր օրերին: Մաշտոցի, Նարեկացու,
Շնորհալու և այլոց՝ դասական ավանդները նրանցից հետո շարու-
նակվել էին հաջորդ սերունդների մոտ, ընդհուպ մինչև Առաքել
Սյունեցի, Առաքել Բաղիշեցի, Մկրտիչ Նաղաշ, Սիմեոն Ապարան-

ցի և ուրիշներ: Այդ կարևոր շղթայի լուսավոր անուններից մեկն էր ահա Ներսես Մոկացին:

Այսպիսին է մոտավորապես Ներսէս Մոկացու՝ իր ժամանակի անվանի բանաստեղծի և հասարակական գործչի կյանքի ու ստեղծագործությունների մոտավոր սլատկերը:

Ֆ Ն Ա Գ Ր Ե Ր

1. ՎԻՃԱՅԱՆՈՒԹԻՒՆ ԵՐԿՆԻ ԵՒ ԵՐԿՐԻ

Երկինքն ու գետինքն հղբարք,
Աճափ ո՞ր բան զո՞րն աւելի.
Զերկնից բարձրութիւնն ասեմ,
Նա գետնին պտուղն աւելի:

5 Երկինքն գետնին ասաց.
— Բա՞ն ունիմ բան զքեզ աւելի.

Ա զ Բ Ե Դ Ե Ն Ե Ր

A = Զեռագիր № 2394, թերթ 31բ—35ա, ժամանակ՝ XVІІ դ.:
B = Զեռագիր № 2394, թերթ 52ա—55բ, ժամանակ՝ XVІІ դ.:
C = Զեռագիր № 7709, թերթ 99ա—100ա, ժամանակ՝ 1608 թ.:
D = Զեռագիր № 9271, թերթ 125ա—127ա, ժամանակ՝ XVІІ դ.:
E = Զեռագիր № 3081, թերթ 1ա, 161բ, ժամանակ՝ 1617 թ.:
F = Բազմավէպ, Վենետիկ, 1847, էջ 331—332:

Խ Ո Ր Ա Ղ Ի Ր

A Տաղ ազնիւ և զեղեցիկ երկնուց և գետնուց ասացեալ: BC Անխորագիր: D Երկնուց և գետնուց հարցում: E Զեռագրից թերթ ընկած լինելու պատճառով, խորագիրը և տերստի սկիզբը՝ չիւր:

Բ Ն Ա Ղ Ի Ր

1 A Երկինք: AD ու գետինք հղբարք: B հղբարք: C Երկինք ու գետինք հղբարք: E 1—50-րդ տողերը չիւր:

2 A Աճէփ: D Աճապ թէ ո՞րն աւելի: F Աճապ:

3 A Բարձրութիւն: B Զերկնից բարձրութիւն: C Զերկնուց:

4 D Թէ փխ նա:

5 A Երկինքն ի: D 4—5-րդ տողերի միջև ունի.

Աստղունքն երկնուց ասին,

թէ.— Զգետնին ծաղկունքն աւելի:

6 ABF քանց: CF քեզ: D բան մ':

Զպայծառագուն աստղունքն՝
Ամէնն իմ կողէն կու լինի:

- Գետինն երկնուցն ասաց.
10 — Աստուծոյ մուննաթն աւելի,
Վեցհազարագուն ծաղկունքն՝
Ամէնն իմ կողէն կու լինին:

- Երկինքն գետնին ասաց.
— Բա՛ն ունիմ քան զքեզ աւելի.
15 Իմ ցօղն ի քենէ կտրեմ,
Քո ծաղկունքն որո՞վ զարդարի:

- Գետինն երկնուցն ասաց.
— Աստուծոյ մուննաթն աւելի.
Դու ցօղն ի ծովէն կառնուս,
20 Ծովուն ակն յիսնէ՞ կու լինի.
Զիմ ակն որ ի յիս քաշեմ,
Նա քո ցօղն ուստի՞ց կու լինի:

Երկինքն գետնին ասաց.

7 AB աստղունքս: C Զպայծառագուն աստղունքն: D Զպայծառագուն
աստղունք: F աստղունքս:

8. AB Ամէն իմ կողէս: C Ամէն: DF կողէս:

9 C երկնուց:

10 AB մուննէթն: C Այս տողի փոխարեն ունի 3 տող.

Բան ունիմ քան քեզ աւելի.

Օրհնութիւնն աստուածային.

Աստուծոյ նուննաթն աւելի:

D թէ աստուծոյ:

11 AF ծաղկունքս: B ծաղկունքս: D Զհազարագոյն ծաղկունքս:

12 AB Ամէն իմ կողէս: D հողէս: F կողէս:

13 B երգինքն:

14 ABF քանց քեզ: C քեզ: D Բան մ':

15 C ցօղս: քաշեմ փխ կտրեմ: D Քեզնէ:

16 B ծաղկունք: C Որոշ տառեր՝ շնչված են: D Քու:

17 C Որոշ տառեր շնչված են (թուղթը քրթրված է):

18 AB մուննէթն: D Թէ աստուծոյ մուննէթն:

19 A՛: ի: C Տողը շնչված: D կառնես: F ծովուն կառնես:

20 C Որոշ տառեր շնչված: Իսմէ փխ յիսնէ:

21 B ի յիբ: D Զիմ ակն յիս քենէ առնեմ:

22- A ուսկի՞ց: B Նա: ուսկից: C ցօղդ: D Նա քու ցօղն յուստի՞ց տի լիբի:

23 B գետին:

- Բա՛ն ունիմ քան զքեզ աւելի.
 25 Պարզիմ, բարկ արե դիպիմ,
 Քո ծաղկունքն ամէնն խըշըրի:
- Գետինն երկնուցն ասաց.
 — Աստուծոյ մուննաթն աւելի.
 30 Զուրն ի յանդնդոց հանեմ,
 Որ ծաղկունքս ամէն զարդարի:
- Երկինքն գետնին ասաց.
 — Բա՛ն ունիմ քան զքեզ աւելի.
 Կայծակ ու կարկուտ անեմ,
 Քո ծաղկունքն ամէնն խափանի:
- 35 Գետինն երկնուցն ասաց.
 — Աստուծոյ մուննաթն աւելի.
 Անշափ ձոր 'ւ առու ունիմ,
 Քո կարկուտն ի մէջն լցուի:
- Կարկուտն հեղեղ կապի,
 40 Ի ծովերդ ի վայր վտարի,
 Դառնամ ա՛մպ կրկին կու տամ,
 Որ ծաղկունքն ամէն քամալի:
- Երկինքն գետնին ասաց.
-
- 24 A քանց քեզ: B քաց քեզ: C քան քուկն: D Բան մ':
 25 ABD Պարզեմ: D դիպեմ:
 26 C ծաղկունքդ ամէն: D Քո: Խարշեմ:
 27 C երկընուց:
 28 A մուննէթն: B մունէթն: C մունաթն: D Թէ աստուծոյ:
 29 B յանդընտոց: C անդընդոց: D ի չիք: F յանդընդոցն:
 30 D Իմ ծաղկունքն ամէնն զարդարեմ: F ծաղկունքն:
 31 C Երկինք ի զն (սղված է):
 32 ABF քանց քեզ: C Տողը չիք: D Բան մ':
 33 AB այնեմ: B կարկուտ: C Կայծակունք, կարկուտ:
 34 AB խաբանի: C ծաղկունքդ ամէն: F ամէն:
 36 A մուննէթն: B մունէթն: C Տողը չիք: D Թէ աստուծոյ մուննէթն:
 37 A 'ւ ու CF սար ու ձոր ու:
 38 B կարկուտ: D Քոս ի չիք: կու լցվի:
 39 CD հրեղէն կապի:
 40 C Մովն ի վար երթայ, վտարի: D Ի ծովերս ի վար:
 41 C լինամ: D Դառնամ նոր կրկին կու տամ:
 42 C ծաղկունքդ: քամալին: D ծաղկունքս: F քամ լինի:
 43 B Երգինքն:

- Բան ունիմ քան զքեզ աւելի.
 45 Ուր աղէկ կտրիճ մ' որ կայ,
 Գայ, ի քո ներքե զնտանի:

Գետինն երկնուցն ասաց.
 — Աստուծոյ մուննաթն աւելի.
 Աստուած իր տուած հոգին
 50 Թէ կառնէ, նա ի՞նչ տի լինի.

Թէ մարմինն ի յիս շառնեմ՝
 Նա աշխարհ հոտուն անցանի,
 Հրեշտակք ի հոտուն փախչին,
 Երկինքն ու գետինք տատանի:

- 55 Երկինքն գետինն ասաց.
 — Բան ունիմ քան զքեզ աւելի.
 Ինն դաս հրեշտակքն որ կան՝
 Ամէնն իմ կողէն կու լինի:

Գետինն երկնուցն ասաց.
 60 — Աստուծոյ մուննաթն աւելի.
 Սուրբ առաքեալք, մարգարէք՝

-
- 44 AB քանց քեզ: C Տողը չիք: D Բան մ':
 45 B գայ: C մ':իք: D Թէ ուր: մ' որ չիք:
 46 B կայ:
 48 A մուննէթն: B մունէթն: Տողը սղված է: D թէ աստուծոյ:
 49 C իւր: D զիր:
 50 C կառնու: D Թէ առնու ինչ պիտ որ լինի:
 51 CD շառնում: E Այս օրինակը սկզբից պակասավոր է. սկսվում է Եի յիս
 շառնեմ-ից:
 52 C Նա աշխարհս հոտուն տատանի: D Նա աշխարհս ի հոտուն կանցնի:
 F նա:
 53 AD Հրեշտակ: B ի չիք: C հոտուն փաղչի: E ի չիք: փաղչին: F ի չիք:
 54 C հոտուն տատանի: BDF Երկինք:
 55 A Երկինքն ու գետինն: B Երկինքն ի գետինն: C Երկինք ի գետն
 (սղված է): D 55—58-րդ տողերը չիք: E ի գետինն:
 56 ABE քանց քեզ: C Տողը սղված է:
 57 A հրեշտակն: C հրեշտակ: F դասք:
 58 AB կողէս: C լինին: EF կողէս կու լինին:
 59 B երկրուց: C Գետին էր (սղված է):
 60 A մուննէթն: B մունէթն: C Տողը սղված է: D Թէ աստուծոյ մուննէթն:
 61 C յառաքեալք և մարգարէքն: D Այս առաքեալ, մարգարէքն:

Ամէնն իմ կողէն կու լինի:

Երկինքն գետնին ասաց.

— Բա՛ն ունիմ քան զքեզ աւելի.

65 Եօթն տակ երկինքն եմ ես,

Որ արև, լուսին կու լինի.

Արև ու լուսին՝ և աստղունք՝

Ամէնն ի՛մ կողէն կու լինի.

Ստեղծող արարիչն աստուած

70 Աթոռով վրաս կու բազմի:

— Գետինն երկնուցն ասաց.

Աստուծոյ մոռնաթն աւելի.

Եօթն տակ երկինքդ ասեմ,

Ան ամէնն ի վա՛յր տի թափի.

75 Արև ու լուսին՝ և աստղունքն,

Որ երթան ի հետ խաւարի,

62 ABE կողէս: C Ամէն, կու լինին: D հողէս: F կողէս կու լինին:

63 A ի գետնին: BE ի գետնին: C երկինք (շեջված է):

64 ABE քանք քեզ: C Տողը շեջված է: D Բան մ:

65 B Եւթն: C Եւթն (շեջված է): D Երկինք:

66 AE կու ելնի: C Տողը շեջված է: D 66—68-րդ տողերի փոխարեն ունի.

Արև ու լուսին աստղունքն՝

Ամէն իմ կողէս կու լինի:

F ուր:

67 A Արև և աստղունք: B Արև և C՝ չիք: աստղունքն: E Արև և լուսին՝ և աստղունքն: F 67—68-րդ տողերը չիք:

68 ABE կողէս: C Ամէն:

69 A Ըստեղծող: CF Ստեղծողն: D Ստեղծողն արարիչ:

70 C կու նստի: D 70—71-րդ տողերի միջև ունի.

Ինն դաս հրեշտակ որ կայ,

Ամէնն իմ կողէս տի լինի:

71 C Երկնուց:

72 A մոռնեթն: B մոռնէթն: Տողը սղված է: D Քէ աստուծոյ:

73 A Երկինքս: C Երկինքն: D Եւթն, Երկինքն:

74 C Որ ամէն: D վար: Թափին: F Աչի:

75 A Արև և ՝ չիք: աստղունքն: B Արև և լուսին: ՝ չիք: C՝ չիք: աստղունք: D՝ չիք: աստղունք: EF Արև և:

76 C Որ երթայ:

Եւ քո արարիչն աստուած
Աթոռով յաշխարհս տի իջնի.
Դատաստան գետի՛ն տի լինի:

- 80 Ապա ցածացաւ երկինքն
Ու գլուխ եդիր ի գետնի.
— Բան մ՝ երկու զանգատ արի,
Ջան ի քո սիրտն մի՛ տանիր.

- Դու հիմն ես եկեղեցւոյ,
85 Գերեզման սուրբ վարդապետի.
Դու խունկ ես բուրվառ ի լի,
Օրէնք քո վերայ հաստատի:

- Մանկո՛ւնք, դուք աճափ արէք,
Այդ աճափդ է զարմանալի:
90 Դուք այլ ցածացէ՛ք, մանկտի՛ք,
Ու գլուխ դրէք ի գետնի.
Քան զերկինքն ի՞նչ բարձր կայ,

77 C եւ մեր: D Ստեղծողն արարիչ աստուած:

78 ABE աշխարհս: C Յաթոռով: տի լիք: իջանի: D Աթոռովն աշխարհ
իջանի: F ի վայր: յաշխարհ լիք:

79 Ը տի լիք: 79—80-րդ տողերի միջև C-ն ունի.

Արդարոց դասընն ժողովին

Եւ մեղաւորացն դասընն ամայնն ի յայնմ ատենի:

80 AB Ապայ: F Ահա:

81 C ի լիք: գետին: D եդիր գետընին: E եդիր գետընի: F ի լիք:

82 ABE զանգալ արի: C Բանն մ'երկուք զանգանդ արի: D Բան մի երկուք
այլ կայ կատարի: F 82—83-րդ տողերը նախորդ հրատարակողի կողմից դուրս
են թողնված:

83 D Իջանի քո սիրտըն մի աններ:

84 AE եկեղեցի: B եգեղեցի: C հիմ: եկեղեցոյ: D եկեղեցոյ, եկեղեցոյ:

86 C բուրվառնի: D ի լինի: E ի լլի:

88 ABE աճափդ: D Մանկտիք, դուք աճէպ դարձէք:

89 A Այդ աճափ դու զարմալիտնալի: BE աճափ դու: C Այս աճափ է:
D Այդ ճանփուտ ու: 90—91-րդ տողերի փոխարեն C-ն ունի.

Մեր Տէրն արարինն աստուած

Դայ, նստի ի կալն Ուղնալի:

90 D ցածացէք: Մնացածներում՝ զցածացէք:

91 B ի լիք: C 90—91 տողերը լիք: D ի լիք: գետնին: E ի լիք: գետնին:
Դ Ու լիք: ի լիք:

92 C զերկինք: D Քան զերկինքն այլ ի՞նչ կայ բարձր: F Քան զերկիր:

Որ գլուխ եդիր ի գետնի,
Այսօր վրան կու քայլենք,
95 Վաղն մտնունք ներքև գետնի:

93 B ի չիք: C գրէք ի գետնի: D ի չիք: եգիր գետընին: E ի չիք: գետընի:
F ի չիք:

94 C Այսօր վրան կու քայլենք: D քայլէք:

95 ABE ի ներքև: C մտնունք գետնին ներքևն: D մտնունք ներքև գետնին:
F Վաղն՝ տի մտնունք ներքև հողին: D-ն ունի ես երկու տող-հետաքայի հաջի-
լում.

Ով օր ուսանի՝ ասէ հայր մեղան.

Քրիստոս փրկէ ի հուր գեհենոյն:

2. ՆԵՐՔՈՂՆԱՆ ԳՈՎՆՍՏԻ ԶՈՐՆՅՈՒՆՑ ԱՐԱՆՑՆ, ՈՐՔ ՆՂՆՆ ՍԿԻԶԲՆ ԱՆԱՊԱՏԻ ԿԱՐԳԻՎ ՅԱԶԳՍ ՄԵՐ

Օրհնեալ տէր Յիսուս փրկիչ՝
 Նորոգողըն ազգի մարդկան,
 Որ միշտ զբարին կամի
 Եւ սպասէ մերոյս փրկութեան:
 5 Յայսմ յետնեալ ժամանակիս
 Յիշատակ արար նորոգման՝
 Բացեալ մեզ դուռն բարույ
 Եւ եհնդ ձիր ողորմութեան:

Ա զ ր յ ու ռ ն ե ռ

A=Ձեռ. № 45, թերթ 14ր—19ր, ժամանակ՝ 1642 թ.
 B=Ձեռ. № 642, թերթ 114ա—124բ, ժամանակ՝ 1671—1696 թթ.:
 C=Ձեռ. № 1754, թերթ 348ա—359բ, ժամանակ՝ 1644 թ.:
 D=Ձեռ. № 5128, թերթ 197բ—205բ, ժամանակ՝ 1625—1635 թթ.:
 E=Ձեռ. № 5624, թերթ 121ա—137բ, ժամանակ՝ 1683 թ.:
 F=Ձեռ. № 7104, թերթ 317ա—332բ, ժամանակ՝ 17-րդ դ.:
 G=Ձեռ. № 7703, թերթ 36ա—48բ, ժամանակ՝ 1750 թ.:
 H=Ղ. Ալիշան, Հայապատում, 1901 թ., էջ 618—623:
 J=Ձեռ. № 1721, թերթ 115ա—124ա, ժամանակ՝ 1696 թ.:

Խ ո ռ ա զ ի ռ

C Ներքողեան զովեստի շորեցունց արանցն, որ եղեն սկիզբն անապատի
 կարգիլ յազգս մեր ի Մոկսնցի Ներսէս վարդապետի արարեալ ի խնդրո ումեմն
 դպրի Փիլիպոս անուամբ, որ զկնի փոխման սորա եղն վարդապետ ընտրեալ նման
 սորա գործովք և արդեամբք: G Ներքողեան յաղագս շինման և հաստատութեան
 իմայ ժովապատ անապատին սուրբ Գէորգեայ: H յիբ՝ յազգս մեր: J Ներքողեան
 զովեստից շորեցունց արանցն, որք եղեն սկիզբն անապատի կարգիլ յազգս մեր
 ի Ներսիսէ ճգնազգեաց վարդապետի ասացեալ Մոզեցոյ ի Փիլիպպոս դպրէ խնդրեալ:

Բ Ն ա զ ի ռ

5 F Այսմ, GJ Յայս:

7 ACDEFHJ մեծ փխ մեզ: G զդուռն լուսոյ փխ դուռն բարույ: J բարույ:

- 10 Ով որ լուտանցոյց ունի
 Ճաճանչի այս մեծի ծագման,
 Կարէ զայս ի միտ առնուլ
 'Ի իմանալ պարզե տիրական,
 Ականջ ունողացդ ասեմ,
 Ունկն դիր բանիս միաբան,
 15 Լսէք, փափագող լերուք,
 Մարաւի բաժակիս արքման,
 Զի սիրոյ սեղան կազմեմ
 Եւ կոչեմ զձեզ ի խրախարան,
 Կայթելով ծափքս հարէք
 20 Ի լսել զճառս երանական:
 Զի թէ մեր յետնեալ գտաք
 Եւ չեղար արժան գովութեան,
 Սակայն մերայինքս եղեն
 Պարժանաց տեղի և կայան:
 25 Աստանօր պատմել կամիմ
 Զեղելոցս, որ մեզ դիպեցան,
 Թէպէտ վաղափոխ եղեալ
 Պատահարք իմն երևեցան:
 Զի հայրն վերին գթած
 30 Ի խնդիր ել տանս Արամեան,
 Ծղիտ զմեզ անկեալ յորսայս
 Ի ծուղակ շարին յանդիման:

9 BG որ փխ որ: BJ լոյսանցոյց:

10 J ճաճանչի:

12 BG չիք՝ 'ւ: J պարզեա:

13 C ունողացա: B զքնողացդ փխ ունողացդ: G զըրողացդ: J զնողացդ:

15 CG փափաքօզ:

16 G Մարաւիք:

19 J Կայտոնլով:

20 C ճառս: J լսելն:

23 AE մերիտեքս: B մերիեալեքս: C մերեանքս: G մերիկեանքս:

24 J կայեան:

26 BCG եղելոցս:

27 II վաղափոխք:

28 F երևեցանան:

29 B Զհայրն:

32 B ծողակ: J ծղակ:

- 2գնալ ըզդաստակ բազկին
 Զեղչերաւս մեր թշուառական,
 35 Զեռն ետուր կանգնեաց զմեզ
 Գլորմանէս, որ յերկարեցան:
 Սակաւ մի հոգի առաք
 Ի խնամոցս այս արարչական,
 Որպէս Պետրոսին եղև
 40 Ի ծովուն ալէկոծութեան:
 Շահ Աբաս Պարսից արքայն,
 Որ տիրեաց ստանս Արևելեան,
 Ընտրեաց զգունդն արեաց պարսից,
 Օսմանին եկաց յանդիման:
 45 Մինն ի յընտրելոց դասուցն
 Երևեալ քրիստոսադաւան,
 Այր հրզօր, քաջամարտիկ,
 Ծակատուն բազմաց ախոյեան:
 Ընդ որ հաւանեալ արքայն
 50 Եւ գովեաց բազմաց յանդիման,
 Ապա ակն ածէր սիրով
 Միամիտ նորայն քաջութեան:
 Կացոյց զնա իշխան երկրի՝
 Հանեալ ի պատիւ մեծութեան,
 55 Մեծարգոյ փառօք պատուեաց
 Եւ կոչեաց զնա իւր սիրական:
 Հախնազար հայրըն նորա
 Յորջորջեալ զնա սեռական,
 Հայկազն անուանէր զնա՝

33 H ձեռնն փխ բազկին:

35 J եդ և փխ ետուր: H ետ:

36 G յերկարացան:

39 G Պետրոսի:

43 BG արանց փխ արեաց:

45 E ընտրելոց:

48 G ախոյան:

53 C երկի փխ երկրի:

55 BG Սիրով և փխ Մեծարգոյ: CF պատուեաց:

57 ADEF Յաղնազար: C Հաղնազար:

58 D Յորջորջեալ: CE յորջորջեալ: G Յորջորջէր:

59 ABDEFJ Հայկազ:

- 60 նմանիլ Հայկազնին Տիգրան,
 Որ յոնաց յաղթող գտաւ
 Եւ սկիւթացոց հիախական,
 Որոյ ի դիմի հարաւ
 Քուրդըն մեծ՝ վիշապ Աժդահան:
- 65 Սակայն սնակուշտն եհար
 Զգեղարդն ընդ լերդակողմանն.
 Զլեարդն և զթոր նորա
 Գեղարդեամբն ի փորոյն եհան:
 Մովսէս Քերթողն սրատմէ
- 70 Եւ գովէ զնա յոյժ զանազան,
 Զձև և զտիպ կերպին,
 Զբախտն մեծ ընդ զօրեղութեան:
 Սոյն սա տնայական կերպիւ
 Եւ ձևովն իւր արքունական,
- 75 Յաւել քան զնա ի փառս
 Հաւատով սուրբ երրորդութեան:
 Պերճ, հսկայածե մարմնով
 Եւ տիօքն վայելչական,
 Իսկ տիպ պատկերին գեղոյ՝
- 80 Շնորհաւոր և դիւցազնական:
 Կորովի աղեղնաւոր,
 Քամանդար անսխալական,
 Ընդ մէջ իւր ածեալ սուսեր
 Զերկսայրին և զթուրն կտրան:

60 H նմանիլ J նմանի Հայկազնի:

62 B ի փխ եւ H սկիւթացոց: B հիւսական: G հիւսական:

63 J ձորմէ:

64 BDEGJ վիշապն: J քուրթըն: H Աշդահան:

65—66 H չիք:

66 J չիք ընդ:

67 J Ըզլերդ:

68 GH նիզական փխ Գեղարդեամբն: J գեղարդեամբ:

71 C Զգձև:

72 A Զբաղդըն: H Զբաղդին:

73 GHJ նոյն փխ Սոյն:

76 H Հաւատովն: C երրորդութեանն:

81—82 H չիք:

82 C անսղական:

84 ACDFJ զթիւրն:

- 85 Զվահանն սղղընծասաւտ՝
 Աջողակ ընդ ձախոյ կռանն,
 Հարթ համակ նկարակերտ՝
 Նսլատակ նետից ուժգնական:
 Զլախտն յաջոյ ձեռին ունէր,
 90 Նիշ՝ գուշակ ինքնիշխանութեան,
 Յահեկէն կախեալ կռան՝
 Կտցաւոր՝ ինքն զառնիշան:
 Հասակն զրահաւորեալ,
 Սաղաւարտ պսակ զազաթան,
 95 Սաղահճն յերկորին կողմանց
 Փքնալից ծաղկեալ զանազան:
 Ի շահատակել զինուցն
 Ահլնկէց լինէր նա մարդկան
 Եւ ի խիզախելն ուժգին
 100 Բեկանէր նա զիւր դիմակայն:
 Յարշաւելն երիվարին՝
 Կրթածու և վարժողական,
 Դափր հատանէլ դաշտին,
 Դողացուցանէր զամենայն:
 105 Դասք հրագէն հետնակաց
 Առաջի գնդակ ընթանան,
 Զգուշութեամբ մեծաւ սպասեն
 Հրամանին յոյժ խորհրդական:
 Իսկ յարիութիւն անձինն

85 CDF սղղընծասաւտ:

86 GHJ կռան:

89 B Զլախտ:

90 GH դունակ:

91 H Յահեկել:

92 BG չիք՝ իւ H և փխ՝: G կըտրոցաւոր: J փիթըն:

95 BG Մատախրն երկորին: C Սաղախրն: CF յերկորի: J երկորին:

98 CDF Ահլնկէց:

102 H Կրթանաւ: B վարժողական:

103 BE հատանէլ: BFGJ դաշտի: H հարկանել: G Դարըր հարկանէր
 դաշտի:

105 J հրագէն:

107 G Մեծաւ զգուշութեամբ սպասեն:

109 B արիութիւն: G արիութիւնն: J յարիութիւնն: BGJ անձինն:

- 110 Անքատակ թ յորդիս մարդկան
 Եւ անհամեմատ խոհեմ
 Ի շարժել շրթանցն յատկանան:
 Անթարթափ յարտաքերութեան:
- 115 Եւ բաղխոհական ոճով
 Բարբառէր յարքայից դիւան:
 Իսկ ներքին մասամբ հոգւոյն
 Երկիւղած և զգաստական,
 Խոնարհ էր և՛ հեզ բարութիւն:
- 120 Եւ սիրող աստուածաշնորհներ
 Անապատի սիւն լինէր
 Եւ գրգէր գթով հայրական.
 Մինչ յիշխանութեան միջին
 Զանք դնէր անասլատական:
- 125 Յայսմ քանակեալ աւուրց
 Յայտնեցաւ քարոզն ընտրութեան՝
 Պօղոս վարդապետն արի,
 Զատագովն ճշմարտութեան:
 Հոմանուն առաքելոյն,
- 130 Համարուեստ նոյն քալողութեան,
 Փողէլով հրատարակէր,
 Յուշ աւնէր զբանն արթնական:
 Կարծրագոյն վիմօք հաստեալ

110 H Յոյժ անքատակ փխ Անքատակ: B ի որդիս D յորիս:

112 CH շրթնանցն: H յատկական:

113 J Երազախօս:

114 BG արտաքերութեան:

115 ACE բաղխոհական: G խոհեմական փխ բաղխոհական:

116 ABE արքայից:

117 ACDEF հոգոյն: J հոգոյ:

118 G էր ըզգաստ երկիւղածական:

119 G բարութիւն:

121 G եկեղեցեաց փխ Անապատի:

122 G խնամէր փխ գրգէր:

123 BJ իշխանութեան:

124 B անասլատական: G ունէր միակնցութեան փխ դնէր անասլատական:

125 G աւուրցս: H աւուրթ:

128 C Զաղաղովն:

132 G զբան տէրունական:

- 135 Զտուն հոգւոյ հաւատոյ հիման,
 Զգուշութեամբ փորեալ ի խոր
 Ըստ բանիցն տերունական:
 Իջին անծրեաց հեղեղք,
 Փորձութիւնք ի յորդոց մարդկան,
 Ի Վասպուրական երկրին,
 140 Մոկաց տուն և ի Քուրդաստան:
 Կործանել ոչ կարացին զնա
 Ի յուսոյն իւրոյ քաջութեան.
 Ըշմարիտ ջանիւ դործեաց
 Ի յայգոջն տէրունական:
 145 Ի տարաշխարհիկ լինելն,
 Ի գաւառն, որ կոչի Գողթան.
 Դարձեալ անդ զարթեալ հին շարն
 Եւ յարոյց կրկին հալածան:
 Առաջնորդք 'ւ եպիսկոպոսք,
 150 Արեղայք 'ւ եկեղեցական,
 Հակառակ կացին նմա
 Եւ ընդդէմ նմին զինեցան:
 Վասն այն զնոսա սրեաց
 Կործանիչն ազգի մարդկան,
 155 Զի յանձնէ աւերեսցի
 Տուն մերոյս առաջնորդական:
 Միատեսակ թշնամի,

134 ACDEFJ հոգոյ:

136 GH Զոր ասէ սուր աւետարան:

137 B անձեաց:

138 CH յորդոց:

140 B Քրդաստան. H Քրդաստան:

141 ABCDEFGJ չիք զնա:

142 H չիք ի:

143 ABDEG ժիշտ: H բանիւ փխ ջանիւ:

144 ACDEJ յայգոջն:

145 G լինիլն:

148 J հալածանք:

149 BHJ չիք 'ւ:

150 BJ չիք 'ւ:

152 G եորա:

155 GJ աւերեսցէ:

156 G Զտուն հոգւոյս մերոյ փրկութեան:

157 ADE թշնամին:

- Հաւասար և համանման,
 Զի պառակտեցին մարդիկը
 160 'ի յարուսցեն հերձուած շարութեան:
 Ճգունս բազում կրեաց
 Ի հայու 'ւ ի տաճկի դիւան,
 Վկայաց բազում տեղիս
 Տեառն մերոյ մարդեղութեան:
 165 Վարժող էր նա անձանձիր,
 Թէ լինէր ոք փափագ ուսման,
 Թէ չէ՝ ինքն-ինքեան ասէր
 Եւ երգէր զերգս ատուածական:
 Զի ներքին մշակութիւն
 170 Զի մնայր պարապ ընդունայն,
 Այլ խոկմամբ աստուածայնոցն
 Վերընթաց լինէր յարածամ:
 Զյաճախ ուտելն արգելոյր
 Եւ կարկիչ էր յանդգնութեան,
 175 Մանաւանդ արեղայից՝
 Խափանիչ համարձակութեան:
 Զնախնի կարգն յառաջ ածէր,
 Կանոնօք դնէր ի յատեան,
 Վկայէր վասն աշխարհի,
 180 Զի էին գործք իւր շարութեան:
 Վասն որոյ իմ նմանիքս,
 Որ կրօնիւք յերկիր կորացան,
 Կարի ատեցին զնա՝

-
- 159 H մարդիկ:
 160 H եւ փխ 'ի: GJ չիք 'ւ:
 161 GH բազումս:
 162 C հայու: GH Հայոց: J չիք 'ւ:
 163 G ի բազում:
 164 G Քրիստոսի սուրբ փխ Տեառն մերոյ:
 166 ACDEFG փափաք:
 167 G ոչ փխ չէ:
 169 EGH մշակութիւն:
 170 H չէր մընար: J Զմնայր:
 171 BG աստուածայնոցն:
 175 G արեղայիցն:
 180 G Եթէ են փխ զի էին: C գործ: H գործքն:
 182 G որք: B երկիր:

- 185 *Բարկութեան նախանձ բրդեցան:*
 Հաղար և վաթսուն և հօթն
 Յանելեալ հայոց թուական
 Հանկարծ շարժեցան մարդիկ,
 Թինդ առին և ժողովեցան:
 Կաթուղիկոսունը երկու,
 190 Եպիսկոպոսը համանգամայն,
 Աբեղայր ու վանականը
 Եւ տէրտէրք շատ գումարեցան:
 Ուխտադիրք եղեն միմեանց,
 Խորհեցան խորհուրդ միաբան
 195 Եւ շու արարեալ գնացին
 Ի Թաւրէզ քաղաք շահաստան:
 Ղառլըղա խանին դիւան,
 Տուրեառ խօսիւք շատացան,
 Թէ այր մի օտարական
 200 Մեզ լինի պատճառ խանգարման:
 Այլ նա վերին խընամօք
 Մարդկութեամբ կոշեաց ի յատեան,
 Ասաց, թէ քահանայից
 Զէ պատեհ կալ անմիաբան:
 205 Վասն որոյ փոշիմանեալ
 Եւ ինքեանց մեղադիր եղան,

- 184 BJ Բարկութեամբ: G զբրդեցան փխ բրդեցան:
 185 B Կ փխ վաթսուն: B է փխ հօթն: G վատսուն:
 186 J Աւելեալ:
 187 B Հանկարծ: CEFH Յանկարծ: BCGJ մարդիկ:
 188 G Թունդ: J Թինթ:
 189 C Կաթուղիկոսունը: ACDEF Բ փխ երկու:
 190 C Եպիսկոպոսը: G Եւ Եպիսկոպոսը:
 191 ACDEF վանական: H և փխ ու:
 192 G քահանայր փխ տէրտէրք:
 196 A Թաւրէզ: H Դաւրեժ: Ի քաղաք:
 197 AEH Ղարլըղա: ACEFH դիւան:
 200 F պաճառ:
 201 B Զի այլ: H Ի վերին: HG խնամոցն: G Իսկ փխ Այլ: J խնամօքն:
 202 G Բաղդրութեամբ փխ Մարդկութեամբ: H Մարդկապէս:
 204 H արժան փխ պատեհ:
 205 J Յորոյ փխ Վասն որոյ:

- Եկեալ թողութիւն առին,
 Ակամայ կամօք հաշտեցան:
 Ահա յարուցմունք գետոց:²⁰⁷
- 210 Փորձութիւնք սուտ եղբայրական,
 Ուժգնակի բախեալ զտունն,
 Զհաստեալն ի վերայ հիման:
 Իսկ գթած տէրըն բարի
 Զնա պահեաց առանց սասանման
- 215 Եւ յաւել նըմա շնորհ զգալի՝
 Տուն շինել նմա տիրական:
 Տաճարաց հոգաբարձու
 Յաստուծոյ էառ հրաման,
 Թէ սովաւ յայտնի լինի
- 220 Այս խախտեալ աղգիս ի հիման:
 Թէ սա է շինող բարի
 Լքելոցն յուսահատութեան,
 Զմեղօք կործանեալս կանգնէ
 Եւ առնէ տաճար տիրական:
- 225 Կարծեմ, թէ սա էր ճրագն
 Ըստ պետին առաքելական,
 Որ ի գիշեր կենցաղոյս
 Խաւարչուտ և նսեմական
 Ճաճանչ նշուից փայլեաց
- 230 Եւ շափղ բանայր նա մարդկան,
 Մինչ տիւն լուսաւորի
 Արուսեկի մեծի ծագման:

207 J և Լկեալ:

208 D Այկամայ: G Յակամայ:

210 G եղբայրութեան:

211 ACDEF Ուշգնակի:

212 H վիման փխ հիման:

213 J հայրն փխ տէրըն:

216 ABDEFGH շիք նմա: H լինել փխ շինել:

218 B Աստուծոյ:

220 C աղգիտ:

222 Լրելոյն:

223 C կործանեալքս:

224 H 'ի, փխ Եւ G տէրունեան:

232 BCDFJH Արուսեկին: G Ի ծագելն մեծ արեգականն:

- Համբեր սա համբերելով,
 Խիղճ մտօք ի գուբ տղմական,
 235 Մինչև լուաւ աղօթից
 Արարիչ տէրըն գթական:
 Եհան ի կաւէ գբոյն,
 Ի վիմին եղ հաստատութեան
 Եւ արկ ի բերան նորա
 240 Օրհնութիւն ըստ երգոյն Դաւթեան:
 Անեղ լոյսն արարչական
 Լոյս վառեաց խաւարեալ մարդկան-
 Երկու լուսատու աստեղըն,
 Որ յարեմտից ծագեցան,
 245 Ի յծրուսաղէմ սընեալք
 Ի լուսոյն լուսով լրացան
 Եւ մեղ խոր խաւարելոցս
 Լուսատուք նոր աստրեցան:
 Սարգիս մեծ եպիսկոպոսն
 250 Եւ տէր Կիրակոսն արին այն,
 Սլացեալ հոգւոյն թեօք
 Եւ հասին սմա օգնական:
 Պետրոսին և Յոհաննու
 Օժանդակ եհաս Պօղոսն այն,
 255 Իսկ այս Պօղոսին հասին
 Ստուարաստեղն երկու գասազան:
 Նոր իմն օտարացուցիչ

234 H Խեղճ:

235 BDF լրաւ: G աղօթիցն:

237 J գրփոյն:

240 E Օրհնութիւնս:

242 G ծագեաց փխ վառեաց:

243 H աստեղբ: G աստեղք:

244 H Որք: G ի փխ Որ: J յարեմտից:

245 H Յծրուսաղէմ:

246 H լուսոյն լուսոյ:

250 H Կիրակոս փխ տէր Կիրակոսն:

251 ACDEFJ հոգոյն: G սլացեալք: GH թեօք հոգւոյն:

253 BDEFGHJ Պետրոսի: H Յովհաննու: B Յոհանու:

255 BCGHJ Պօղոսիս:

256 B Բ փխ երկու: J Ստուարաստեղբն:

257 H Նորին:

- Նշրնջին անտի յայտնեցան.
 Մերկ պարտին լինել մարդիկ՝
 260 Քրիստոսի կարգել զօրական.
 Ահա նորահրաշ հնչին՝
 Դեռաբոյս և անյայտական,
 Թէ պարտ է զմարմին թողուլ
 Եւ հոգւոյն լինել պաշտօրպան:
 265 Նոր երգ, նոր ներբողեան,
 Նոր կական ի ձայն ցնծութեան.
 Նոր պարբս խմբել այսօր
 Եւ երգել զոհաբանական:
 Նոր պարու պարապետիս
 270 Պարաւորք լինել համաձայն՝
 Երկրպագութիւն և փառք
 Տւողին ի ձայն գոհութեան:
 Որ զայս երկու ուսուցիչս
 Առաքեաց մեզ ճշմարտաբան,
 275 Գործնական իմաստութեամբ
 Կատարել միշտ զտեսական:
 Զայս եզինքս ամուլական,
 Բանաւոր և արդիւնական,
 Բանական երկրի մշակ,
 280 Խստատանջ և միշտ ժրաջան:
 Այս երաշտացեալ գետինս

258 ABDF յատնեցան:

259 G լինիւ: ACDEFG մարդիկը:

260 ABCDEFJ կարգիւ: J զօրացան:

261 G հրնչումն:

262 F դեռաբոյս:

263 G զմարմինն: J մարմին:

264 ACDEFJ հոգւոյն: ABCDEGJ պաշտապան: F պաշտպան:

265 ACDEFJ ներբողենիս: BG ներբողենիս:

267 BG խմպել:

269 J նոր պարիւ, նոր պարապետիս:

270 BG լինիւ: D համաձայն: J համաձայան:

273 ABDEF Բ փխ երկուս: HJ ուսուցիչքս:

276 GH զտեսականն:

277 B Զայս Բ ամուլ եզինքս: G Զայս երկու ամուլ եզինս:

279 BG Բանաւոր:

280 ADE Ի տատանջ: CF Խտատանջ: H Խրթատանջ:

281 H Զայս:

- Արտասուաց ցողով արբուցան,
 Զայս խոսկանացեալ երկիրս
 Արարին բերրի անդաստան:
 285 Հերկեալ խրատով զաշգիս
 Զարահնար փուշքն խլեցան,
 Եւ ապականիչ աղուեաքն
 Որք կալեալ և որք զօղեցան:
 Նոր գարնանային հողմունք
 290 Քաղցրասիւս յայգիս հնչեցան,
 Եւ ձայն տատրակաց սրբոց
 Մնչիւնիւ աստէն լսեցան:
 Զմեռն և անձրևք անցին,
 Խստութիւնք սրտից կակղեցան,
 295 Եւ ծաղիկ զարմանազան
 Ի յերկրիս մեր երևեցան:
 Իշցուք ի յայգիս եղբարք
 Եւ տեսցուք ծառք համանդամայն,
 Մաղկեալ որթ և՛ թուզ, և՛ նուշ,
 300 Նոնենիք և՛ մուրտ, և՛ շուշան:
 Երկուց նմանեալ հողմոցն,
 Որ յառակողէն աւաքան
 Արի՛ հիւսիսի փշումն,
 Ե՛կ, հարաւ ջերմին սիրական:
 305 Շնչեա՛ ի պարտէզս մեր՝
 Խնկալից և խիտ բուրաստան,

282 Ի արբուցման:

284 Ի Արարան: Ե բերի: յ բարի:

285 Ե Հերկեալ:

287 Ե աղվեսքն:

290 Ե Քաղցրասիւս: Ի Քաղցրասիւս: Բ Քաղցրայսից: ԵՅ աշգիս: Ի կո-
 չեցան:

292 Ե եղանակք փխ մընչիւնիւ: յ մնչունի:

293 Ի Զմեռք: Ե անցան:

294 ABCDEF Խստութիւն: BGHIJ կակղացան:

295 BGH ծաղիկք: Ի զարմանազանք:

296 Ե ի յերկրս: Ի երփնեցան:

298 GH դժառ:

300 Ե ու շուշան փխ և շուշան:

301 Ի հողմոց:

302 Ի Որք: Ե առաւորքն:

305 Ե Շնչեա փխ Շնչեա:

- Բուրենացին խունկը մեր անուշ
 Եւ ծաղկունքն, որ հանդիսացան:
 Փառք նորոգողին տացուր,
 310 Որ ետ դուռն ապաշխարութեան
 Եւ փոխհատուացուր սոցա
 Ներբողեան գովասանական:
 Այս երկու մեծ լուսաւորը
 Կորնթարթն երկնից կառուցան,
 315 Հուսատու լինել յերկիր
 Եւ նշան գոլ ժամանակեան:
 Երկու այս բեռն աստղունք,
 Որ քի վեր է ի վայր կայացան,
 Որով կարգը եկեղեցւոյ
 320 Կանոնիւ սահմանադրեցան:
 Երկու պատուական աղւունքս,
 Որ երկու կուռն Ահարոնեան
 Նշանքն Իսրայէլի
 Մեղանշման և արգարութեան:
 325 Երկու ձիթենի ուղէշքն,
 Որ յերկրի նոր արմատացան,
 Գնդին լուցելոյ յաջմէ
 Ի յահեկէ ոստովք բարձրացան:
 Մինչ ի հովանին սոցա

307 B C D F G J անուշ: H անուշք:

308 G որք:

309 H Փառս:

310 B D F G H ապաշխարութեան:

313 B Բ փխ երկու: A B C D E F լուսաւորցս:

314 B չիք երկնից:

315 J լինել լուսատու երկրի: B յերկիր:

316 H չիք գոլ:

317 B Այս ք փխ երկու այս: G Այս երկու բեռն աստղունքս: B աստղունքս:

318 G Որք: B J չիք Դ

319 A B C D E F կարգ: H J սրովք: B C D F J եկեղեցւոյ:

320 B Կանոնի: H J Կանոնօք:

321 G աղւունք:

322 B ք փխ երկու: D G H յերկու:

323 J նշանք:

324 A Մեղանշման: E Մեղանշման: H Մեղանշական:

329 J հովանի:

- 330 Ախտաժներ բազումը կուտեցան,
Թանահատի յանապատս
Եւ ձիթովս այս բժշկեցան:
Պարարտ ձիթենի գոլով՝
Տաթևու գաւթիս տնկեցան
- 335 Եւ առատացեալ պտղով
Քրիստոսի աստ ընծայեցան:
Երկու բարձրաբերձ լերինք՝
Ահեբմոն և Թաբօրական,
Եւ ալունք Յորդանանու,
- 340 Յոր մարդիկ նոր մկրտեցան:
Ենովքայ ու Եղիայի
Փոխանորդ յերկրի շրջեցան,
Թէպէտ անմեան կենօք,
Այլ գործովք յոյժ համանման:
- 345 Դիմօք և ձևովն իւրեանց
Հանդերձիքն խոշորական,
Ծանուցին տրդոց մարդկան
Զաշխարհի վայելս ընդունայն:
Երկու դրունք տեսանելեացս
- 350 Կենդանեացս յարարչէն հզան,
Յատուկ ի միմեանց գոլով
Մի շաւիղ տեսլեան ընթացան:
Այսպէս այս երկու ընտրեալս

330 G Ժողովեցան փխ կուտեցան:

331 AE յանապատ: J անապատս:

332 C ձիթով:

333 D ձիթենի: J Պարարտս:

334 G գաւթիս:

335 H պարարտացեալ պտղովք փխ առատացեալ պտղով:

336 G ոստ փխ աստ:

338 B Թափօրական:

340 BGJ որ մարդիկք: H որս:

341 B չիք ու: CDG 'ւ փխ ու: D Ենորայ: J Ենովք:

344 B գործով:

347 GH որդոց:

348 G վայելքս:

349 ABCDEFG տեսանելեաց:

350 CJ Կենդանեաց: B արարչէն: H Յարարչէն կենդանեացս հզան:

352 F շաւիղ: H ընթանան:

353 B Բ փխ երկու: BH ընտրեալքս:

- 355 Բացակայ տեղեւաւ մեզ ցուցան.
 Մինն Պոնտացի գոլով,
 Մինն ի տանէն Արարատեան,
 Թէպէտ առանձին դիմօք
 Կրկնակի կերպիւ յատկացան՝
 Մի կամք, մի կարգ, մի կրօն,
 360 Մի հոգի կառավարեցան:
 Յնծալ պարտի Հայաստանս
 Եւ խայտալ խնճոյս հոգեկան,
 Պարանցիկ առնել յուսով
 Եւ երգել երգ հոմերական:
 365 Նոր սրինգ և նոր տաւիղ,
 Նոր քնար և նոր երգարան,
 Նոր կաճառախումբ լինել
 Եւ քննել յոյժ խորհրդական:
 Բանալ ըզարգանդ մտաց
 370 Եւ ճաշակ տալ համբերութեան,
 Հմայել ըզհամեղութիւն
 Բաժակիս այս իմաստութեան:
 Գրեան վաղընչուց փակած
 Ընթերցան, ոճով մեկնեցան,
 375 Եւ լապտերք եկեղեցւոյ
 Գալստեամբ սոցին վառեցան:
 Բարիոք մեզ նաւաստիք
 Ի ծփման ծովուս յայտնեցան,
 Վարեցին թևօք հոգւոյն

355 ACEF Պոնդացի:

356 G տանէն էր փի ի տանէն: J Արարատեան:

359 ADE չիք մի կրօն: J Մի կարգ, մի կամք, մի կրօն:

361 G Հայաստան:

362 GH խընչոյս:

363 H Պարանցի:

365 CF սրինգ: D սրինկ:

367 G կաճառախումպ:

370 C 'ի փի Եւ B ըզհամեղութեամբ:

371 DF Հմրել:

373 G Գրեանք: J Գրեալքն:

374 G Ընթերծեալ:

375 BCDFJ եկեղեցոյ:

377 Զի բարտը փի Բարիոք: ABCDFJ նաւաստիք: E նաւաստիկ:

379 CDEF հոգոյն: J հոգոյն թևօք:

- 380 Եւ հասին յանբաւ խորութեան:
 Մինչ յայս խրախութեան կայաք,
 Աշողակ հողմով սլացման
 Եւ յաջ և յահեակ թռուցեալ
 Դիտէաք զկէտն ուղղական,
 385 Յանկարծ հողմըն ուռուցիկ
 Փոթորկեաց զնաւս առժամայն
 Եւ շրջապտոյտ առեալ,
 Տատանէր յալէկոծութեան:
 Հողմով կուտակեալ կոհակք
 390 Ի ներքուստ անդուստ խորվեցան,
 Եւ ծովքս հանդարտական
 Յամբոխեալ ալիս փոխեցան:
 Թռչարանն առադաստին
 Ի ծւլնըս սլատառեցան,
 395 Եւ կայմն ամբարձման պարզող
 Ի ծովու խորըս սուղեցան:
 Ղեկն և՛ ղեկավարն, և՛ թևքն
 Խառնեցեացն խափանեցան,
 Եւ շարքըն տախտակամած
 400 Ի միմեանց բաց անջատեցան:
 Երկու լծակաց մածմունք
 Մնօտիւքըն բաժանեցան,
 Եւ լաստըն ողնափայտին
 Առ քեղիքն խարխալեցան:
 405 Ահա արդ մեծ արհաւիրք,
 Աղաղակ և գոյժ լալական
 Տրտմութեան ալիք դիզեալ՝

380 BG անբաւ: G խորութեանն:

381 BJ այս:

382 GHJ Յաշողակ: ABE սլացան:

388 B ալէկոծութեան:

390 ADEFH անառուստ: G անտի փխ անդուստ:

392 BG Ամբոխեալ:

393—396 J չիք:

395 B կամն:

401 J երկուց:

403 ACDEFHJ ողնափայտին: G ողնափայտինն:

404 J փեղկիւքըն:

406 CDEGJ գուժ: F դւժ: H յոյժ փխ գոյժ:

- Առ թիկունս մեր կործանեցան:
 Զի այս շորս անկեան՝ հիմունքս
 410 Յորոց նաւքն մեր հաստեցան
 Ուխտեալ ի միում ամի
 Փոխեցան ի միշոյ բարձան:
 Այս շորս սիւնքս խարսխեալ,
 Որ աթոռ տեառն կազմեցան,
 415 Խոհեմ, արի և արդար,
 Ողջախոհ առաքինեացան:
 Չորս գետոց նման հոսեալ
 Արբուցին զծարաւ Հայաստան,
 Նորա ի յԱդին դառնան
 420 Եւ սորա ի յերկնից կայանն:
 Զորից աւետարանչաց
 Նմանեալ առ մեզ յայտնեցան,
 Եւ շորս տարերաց նման՝
 Չորս յանկինս համբաւեցան:
 425 Քառադէմ կառաց նման,
 Որ Առիծ և Եզն առացան,
 Մարդ և Արծու նման
 Փութապէս առ տէր տլացան:
 Զորս կարգէս քրիստոնէից
 430 Ըստ միոյ-միոյ ընտրեցան՝
 Իշխանն ընդ վարդապետին,
 Հայրապետն և առանձնականն:

409 B Դ փխ շորս: DԻ՝ անգեան:

410 BG Որոց: H նաւքս: H հաստատեցան:

411 J Ուխտ եղեալ:

412 G փոխեցեալ: H եւ մահուամբ առ տէր փոխեցան:

413 B Դ փխ շորս: H խարխալեալք:

414 H սոր:

415 G Խոհեմ և արի 'և արդար:

417 B գետոյ: ACDEF հոսել:

420 C Նորա փխ սորա: BHJ կայան: E կայանան: G խորան փխ կայանն:

421 G աւետարանչաց:

424 H Ի շորս փխ Զորս: AEGHJ տեղիւնքս: CDF յանգիւնքս:

426 B Առիծ: H շիբ Որ:

427 A Արդ փխ Մարդ: E Արդարեւ փխ Մարդ և: BGH Արծու: G Մարդոյ 'և:

429 G կարգէ:

431 ADE Իշխան: H վարդապետ:

432 ABCH առանձնական:

- Ի հազար 'ւ եօթանասնին
 Յաւելեալ հայոց թուականն
 435 Եղև կատարումն սոցա,
 Որք ի մէնջ առ տէր փոխեցան:
 Թէ դիմառնական խօսիմք,
 Ո՛վ եղբարք իմ և սիրական,
 Թէ զմեզ ի խնճոյս ածեր
 440 Եւ փողես երգ դամբանական:
 Խիստ մի՛ խռովիք, եղբարք,
 Զգիտել զիրս կենցաղական,
 Կարգ եղեալ է արարչին
 Զմնալ ոք աստ անվախճան:
 445 Մանաւանդ այս Հայաստան
 Վաղվաղուկ և փոփոխական,
 Ի հարց և պապանց ուսար,
 Յառաջին սրբոցն ասացան.
 Հիւսիսու հաւէն առնուն
 450 Մեր ծաղկունքս և խիստ զօրանան,
 Եւ տապըն խորշակահար
 Մաղկընկէց առնէ առժամայն:
 Ահա ձեզ ձայն աւետեաց,
 Սփոփանաց և յուսադրական,
 455 Թէպէտ սերմանողքն անկան,
 Սերմանեալքն յոյժ արդիւնացան:

433 BCDF Թ փխ հազար: H եօթանասուն:

434 HJ թուական:

436 J Որ:

437 ABDEGJ խօսիւք: CF խօսիք:

438 J և խիստ սիրական:

439 GH չիք՝ թէ: ACDEFGH խնջոյս:

440 B փողէ: C դամբական: J փոխես:

444 AEG Զի մընալ: H չիք՝ ոք: ADEFGH անվաղճան:

446 D փոխփոխական:

447 GH 'ւ ի փխ և: J սլապունց:

448 J Առաջին:

449 AC Հիւսսու: H Հիւսիսոյ:

450 H յոյժ փխ խիստ:

451 B խորշահար:

452 AE առժաման: G նոյնժամայն:

454 H չիք և:

455 G անցան փխ անկան:

- Մարմնով հեռացան ի մէնջ,
 Բայց հոգով ոչ որոշեցան,
 Միայն զյաղթանակն առին
 460 'ի ախտալից կենաց փոխեցան:
 Անդէն բարեխօս բարի
 Վասն մեր առ տէր կացուցան,
 Զաթոռով անմահ գառինն
 Ընդ քահանայիցն կարգեցան:
 465 Փառք և գոհութիւն տացուք
 Աստուծոյ անմահ տէրութեան,
 Զի զյետնամնաց սոցա
 Պահեսցէ ի խաղաղութեան:
 Առ ձեզ պաղատիմ, եղբարք,
 470 Ես՝ ներսէս, յոյժ թշուառական
 Հայցեցէք ընդ իմ առ հարքս՝
 Յիշել զիս առ անմահ արքայն:
 Փոքրիկ Փիլիպոս դպիր՝
 Փափագող բանիս տաղական,
 475 Զայս խնդիր արար, թէ ասա՛
 Յիշատակ, որ ողորմի տան:

458 GH հոգով: H հեռացան փխ որոշեցան:

459 AE զյաղթանակն:

460 H չիք 'ւ: H յախտալից: BG կենացս:

464 J քահանայից:

466 G տէրութեանն:

467 ABEH Ըզյետնամընաց: G Զյետնամընացս: F Զըզյետնամնաց:

469 B պաղատեմ: J եղբայրք:

471 A Հայեցէք: B հարք: G հարքն:

472 E արքայք:

473 H Փիլիպպոս:

474 CG Փափաքող:

476 H ողորմիս:

3. ՆՈՐԻՆ ՆԵՐՍԷՍԻ ՄՈՎԱՑՈՅ ԱՍԱՑԵԱԼ ՈՂՔԵՐԴԱՆԱՆ

- Մանուկ մտավարժ էի
 Եւ հոգոյ քարոյ դիպեցայ,
 Նոյն ոգով հաստատեաց զիս տէր
 Մինչ յիմատս հաստատեցայ:
- 5 Հոգովն այն ուրախ եղէ,
 Վայելուչ մտօք ծաղկեցայ:
 Զի նովաւ ծանեա զտէր
 Եւ նովաւ լուսաւորեցայ:
- Առատ անարգել եճեղ
 Զձիւր շնորհացն, որով յօրացայ,
 10 Գրկամբ ոլարփակեաց զինն,
 Փայփայեաց, որով փափկացայ:
 Ասաց. «Քէ սիրէա զնա,
 Գիրկս արկցէ զքե յարակայ»,—
- 15 Նա առանց սիրոյն իմոյ
 Խանդակաթ փարէր յիմ վերայ:
 Ասաց. «Մի՛ ծախեր զդա
 Կեփազու ոսկոյ սոփերայ,
 Տերութիւնք և փառք այժմուս
- 20 Զամբառնա ի Կշիռ դորա:

Ա զ ք յ ու ռ է ե ռ

Ա = 2 հո. N 43, թերթ 19ր—23ա, վայր՝ Լիմ, ժամանակ՝ 1642 թ.:

В = 2 հո. N 5624, թերթ 137ր—149ա, վայր՝ Կոստանդնուք, ժամանակ՝ 1683 թ.:

Խ ո ռ ա զ ի ռ

В նորին ներսկսի Մոկացո ասացեալ ողբերգական:

Ք և ա զ ի ռ

12 Ա ընայ:

- Տպաղիոն և յասպիս,
 Կարկեհան, լալ և շափիւղայ՝
 Յեռեալ ընդ համակ ոսկւոյ
 Դէմ նորա ոչ վայելչանայ:
- 25 Գանձք և մեծութիւնք երկրի
 Բաղդատեալ ոչ արժէ զնա,
 Ոչ ակն արևուն ծագմամբ
 Համեմատ նորին լրանայ:
- 30 Լուսատուք քեզ ցուցանեն
 Ի ներկայս զոր երևանայ,
 Իսկ նա ըզանցեալն քննէ,
 Զներկայս և զոր յապագայ:
- Պատուականագոյնք երկրի
 Պաղպաղունք, որ նշուլանայ
- 35 Եւ զարդք համօրէն զարդուց
 Առ նմա ոչ գեղեցկանայ:
 Տեսութիւնք աշաց մարդկան
 Եւ իմաստք, որ յառաջանայ,
- 39 Յիմարութիւն համարեալ
 Եւ խաւար է առանց նորա:
 Կազմեա քեզ քառամանեակ,
 Զպարանոցդ նովաւ զարդարեա.
- Քաղցր ի քուն լիցիս նովաւ
 Ու յարթութեան խօսակցէ քեզ նա:
- 45 Բայց զպահպանակ նորա
 Առնթեր հս ոչ ստացայ,
 Զշահ մընալոյն առ իս
 Եւ զօգուտն հս ոչ իմացայ:
- Շնորհաց աւետիք մատուց
 50 Զարարունստ յանձն իմ ոչ կալայ,
 Եւ քաղցր արարիչն իմ՝ յիս
 Նայեցաւ, ես ոչ հայեցայ:
- Զչափ քաղցրութեան ընդ տեառն,
 Որ առ իս բազում գութ նորա,
- 55 Թէ ոք ի համար ձգէ
 Անբակ է ու անչափանայ:

21 A Տպաղիոն:

49 AB մատոյն:

- Թեպէտ այս Սողոմոնի,
 Յորմէ զայս իմաստ վարժեցայ,
 Ոչ կէս, ոչ մասնէբաժին՝
- 60 Խուն շափով ևս շիմաստացայ:
 Այլ նա ի դիշեր ժամու,
 Ընդ լուսնիւ գոլ ժամանակեայ.
 Ես որդի եմ տընջեան,
 Ի հոգոյն լուսաւորեցայ:
- 65 Զոր նա իմաստուն մտօք
 Խօսեցաւ ամօք բացակայ,
 Ես յայտնի խաշին տեսայ,
 Հաւատացի և խօսեցայ:
 Խաշեալ արքային է այս
- 70 Մարդարիտ, զոր ևս ընկալայ,
 Որ ասաց. «Խոզից մի՛ տալ՝
 Զար ախտից, որ չաղտեղանայ»,
 Ծանեա զմեծութիւն գանձին
 Եւ զօգուտ արագասեաց նորա,
- 75 Ոչ միայն ի խըրատէս.
 Այլ գործողացն, որ յայտնի կայ:
 Զքանքարն ի տեսունէ առի,
 Ըստ առատ պարդեաց նորա,
 Ծրարեալ վարշամակաւ
- 80 Ծուլութեանս, որ յիս կայանայ:
 Ի գործարկութեան դանձին
 Բնաւին ոչ ձեռնարկեցայ
 Եւ հպարտութեան ախտին,
 Սնապարծ մտօք փրացայ:
- 85 Զոր տէրն շահել ետուր՝
 Ընդարոյս ինձ համարեցայ,
 Առ ողորմութեամբ առեալն
 Զարաշար կրիւք վարեցայ:
 Կարծէի ողորմութեան
- 90 Խլայիւն, զոր զգեցայ,
 Շահել զհատուցմունք վարձուն,
 Զոր ծուլիցն յոյժ անկարանայ:

- Սկիզբն իմաստութեան՝ երկիւղն
Աստուծոյ ոսաց ՚ւ ենթակայ,
95 Յանձին քո կալցես զնա,
Աւանդեաց՝ ես ոչ ստացայ:
Զառանց երկիւղի հանճարս
Գործածիւ ի շարն յօրանայ,
Ճարտար սպանող եղէ,
100 Հմուտ կենաց դիմակայ:
Զի իմաստութիւնդ, որ կայ՝
Երկիւղին վայելչանայ,
Թարց նորա՝ պատճառ շարի
Եւ պատժոց ունողին զնա:
105 Ինձ աչք ի գլուխս եղիր,
Յանբանիցն այնու յատկացայ,
Թէ միշտ ի վեր կոյս հայի,
Առ աստուած՝ ես զայն շիմացայ:
Արդ ես իմ հրկրորդ կամաւս
110 Ի բարեաց գործոց հեռացայ,
Սիրող հեշտ կենաց եղէ,
Զէրդ անբան յերկիր կորացայ,
Իբր էշ լայնացեալ յաղբիւս
Ի կատակս թաւալեցայ,
115 Խոզից նմանեալ ի տիղմըս
Մօրիցըն շաղախեցայ:
Խրատիչ այլոց արար,
Թէ յիւրմէ բանից զգաստանայ,
Զայն առիթ շարեաց առի,
120 Ես առ իս գիտուն ձեացայ:
Միտք ծննդական ետուր,
Թէ բարեաւ զմարդիկ որսայ:
Ի կամս ապաստան եղեալ,
Մտահաճ ինձ հաւանեցայ:
125 Անգործ հաւատոց յուսով
Ի գլուխն իմ հաստատեցայ:
Եւ միշտ սասանեալ մտօք
Հակակողմն խոտորեցայ:

- Ասաց. «Լոյսդ որ ի քեզ կայ,
 130 Պատրաստ կաց շխաւարանայ,
 Զի թէ այդ նսեմանայ,
 Արտաքինն որքան զօրանայ:
 Ես գիշերատես մըտօք
 Ի տըւէ խոր խաւարեցայ
 135 Եւ երկմտութեան ալեօք
 Յանկայուն հոգըս ծփեցայ:
 Տէրութիւն հառուր՝ ւ ասաց.
 «Նախատպիդ դու միշտ ծառայեա».
 Մախեցի զանդրանկութիւն,
 140 Որկորոյ հարճին գերեցայ:
 Կենարար հացին կերող
 Ի տեսունէ ես վիճակեցայ
 Եւ սեղանանենդ եղեալ
 Մարտուցեալ ոգով սովեցայ:
 145 Զայս հունդ պատրաստեալ թռչնոց
 Եւ խոզից ի բանէն լուայ,
 Անյուսութեան կոյր մտօք
 Առ փափաք սմին ծիրեցայ:
 Ի կարդ կուսութեան մտեալ
 150 Տգիտաց սուրբ և կոյս ցուցայ
 Եւ գիրապարտը մարմնով
 Հոգեկան մասամբ պղծեցայ:
 Փակեաց ի կին մարդ շհայել,
 Ի հեռուստ՝ զայն ևս յակամայ,
 155 Եւ թէ կամակար մտօք՝
 Շնացաւ անդրէն ընդ նմա:
 Արդ հայել ծիրեալ մտօք
 Յանկութեամբ՝ ես ոչ շատացայ,
 Այլ պարծանս համարելով
 160 Հեշտութիւնս խենեշացայ:
 Անկասկած ի բնականս
 Յանրնականս մտաբերացայ,
 Որով բնութեանըն տեսուն
 Եւ մեծաց պատժոց գրեցայ:
 165 Ընդդէմ գործեալ արարչին
 Եւ բնութեանս և դրութեանս սորա
 Եւ ամենայն ստեղծութեան,

- Որ պահեն զեղեալ կարգ նորա:
 Որպէս թէ զամէն թողի,
 170 Քրիստոսիւ ես ազատեցայ,
 Արծաթասիրութեան ախտիւն
 Ի յերկիր կարկամ կապեցայ:
 Աբբայի աւնուն առի,
 Յաշխարհէ ձեռով մերկացայ,
 175 Չար մտօք մամոնայի
 Եւ զարդուց նորին ցանկացայ:
 Որպէս խաշ ուսով բարձեալ
 Խաշելոյն թէ հետեցայ,
 Եզանց եւ ագարակի
 180 Եւ կանանց սիրով հեշտացայ:
 Արկայ ստորոտով հանդերձ,
 Ժուժկալի կերպիւ յայտնեցայ
 Եւ արագափութով
 Ի բարի վարձուց ձանձրացայ:
 185 Հեզութեան լծով մտեալ
 Համբերող խաշի ես ցուցայ,
 Ի լուր քաղցրութեան խրատուն
 Բարկութեան բոցով աչրեցայ:
 Կնկղովքս կորահայեաց
 190 Հեզ հարանցըն նմանացեայ,
 Յանդուփն անզգամ դարձայ,
 Վէս, գողող եւ խիստ անոպայ:
 Փորձութեանց ուրախ տանել՝
 Յակորայ արդարոյն լուայ,
 195 Անվիշտ յարտաքին կրից
 Դիւական բախմամբ տրտմեցայ:
 Ի կենցաղազբաղ ծովու
 Տատանմամբ տարակուսեցայ,
 Դիտելով զելից շաւիղն՝
 200 Օգնեա՛ ինձ ոչ բարբառեցայ:
 Մայրասուր սաղաւարտեալ,
 Թէ այսպէս միշտ ի վեր խոկայ
 Եւ զամէն պտուղ շնորհաց
 Քրիստոսի փառացն վարկայ:
 205 Ես ոչ գործեցի բարի,
 Նաեւ ոչ մտօք խորհեցայ

- Եւ սնափառիմ մտօք,
 Շատ մաքրոց կարծիմ գերակայ,
 Իբր ի յերազի մտօք
 210 Շատ բարեաց տէր երևեցայ
 Եւ սին պարծանօք պատրեալ
 Ի ծածուկ մտօք ճոխացայ,
 Ուղորդ աղուեսու ձագ եմ,
 Այլ օձի խիստ նմանեցայ,
 215 Յաղթող առիծ կամ արծիւ
 Բարձրամիտ կամօք շրջեցայ:
 Ուրար և փիլոն արկեալ,
 Թէ լծովս խոր խոնարհեցայ
 Եւ ահեղագոչ սաստիւ
 220 Ի փոքունց վերայ բարձրացայ:
 Որպէս սգաւոր գոլով
 Սեաւ համակ անձամբ գունեցայ
 Եւ սիրամարգի նման
 Սիգալով փերեքեթեցայ:
 225 Մէջ մարդկան փառաւորեաց,
 Թէ զփառաց տուօղն իմանայ,
 Առի զնա վաճառեցի,
 Յըռամկաց լեզուաւ դովեցայ:
 Վերընթաց ճանապարհէն
 230 Ինքնակամ ես սայթաքեցայ,
 Ի վիմէն հաստատութեան
 Պատրանօք շարին սահեցայ:
 Ի գերադրական գահէն
 Կամակոր ես գըլորեցայ
 235 Եւ յաստիճանացն ելից
 Մուլութեամբս իմով կասեցայ:
 Ո՛հ ինձ վայել է, որ այժմ
 Յուսմանէն մանկութեան թողայ,
 Զկրկին դաշնաւորեալ
 240 Ուխտս աստուածեղէն մոռացայ
 Քարոզ օրինաց եղայ
 Ի օրինօք անօրինեցայ՝

216 B շրջեցայ:

241 A եղեալ:

- Անուամբս եմ այլոց քանոն,
 Կանոնէն բընաւին յանցեաց:
 245 Կարծրացեալ անզեղջ մտօք
 Աներկիւղ յօրինակեցայ,
 Նման դարբընաց սալից
 Խիստ բախմամբ ես ոչ թնդեցայ:
 Երեւելի երկիւղած
 250 Եւ ցաւող յօրինաց վերայ,
 Սաստիւ խրատող այլոց
 Փենէհէս կերպիւ ձեացայ:
 Ի միտս և յոգիս անսաստ
 Ի ծածուկ խորհուրդս իմ, որ կայ
 255 Զատագով փառաց իմոց
 Կամապաշտ սրբոց դիմակայ:
 Անխրատ և ցոփ սրտիւ
 Սնոտիս մոլեալ ցնդեցայ,
 Անաղ, անհամեալ բանիւ
 260 Վայրապար միշտ աղճատեցայ:
 Կատականս եպերանաց
 Լկտաբար ծաղու թիւրեցայ,
 Ի խայտ, խնդութիւն շարժել
 Զամեն որ ձեռնարկեցայ:
 265 Ռաբի, ռաբի յորջորջմամբ
 Ինքնաշարժ փառամոլեցայ,
 Ռամիկ ծառայից գեղջկաց
 Ես անգամ ոչ նմանեցայ:
 Մարգահաճութեան ախտիւ
 270 Առերեսս առաքինեցայ
 Եւ յառանձնական պահուն
 Նաև ոչ մատամբ հպեցայ:
 Յարբանեկութիւն սրբոց
 Ի ծնողաց ես ընծայեցայ,
 275 Միշտ ի սրբութեան տեղիք
 Առնթեր սրբոց սնուցայ:
 Հիւժեալ հոգով և մարմնով
 Տղմասիգ գուրջս փակեցայ,
 Փոխան շնորհընկալութեան

- 280 Յօրհնելոց զանեծս ընկալայ:
 Սուրբ վկայարանս կալով
 Մանաւանդ յորքս շրջեցայ,
 Գործեալ զանհաճոյս սոցա,
 Վասն որոյ ես ոչ սրբեցայ:
- 285 Նստելով ի տաճարի
 Մեծամեծս բարբառեցայ,
 Դատեալ ի բանից իմոց
 Աւելի դատապարտեցայ:
 Փոքրիկ մին գայթակղելոյ
- 290 Խոր ի ծովս հրաւիրեցայ,
 Իսկ ես բիւրոց կործանիչ,
 Որ մեծ պատժոց գրեցայ:
 Անառակ և թիւր գործովք
 Ի յարկի տեառն բազմեցայ,
- 295 Այն պղծոյն անապատի
 Արդարև յոյժ նմանեցայ:
 Շինեաց զերդ միեղջերու,
 Թիւրակէս եդ զիմաստս ի սմա.
 Փոխարկմամբ յեղջիւրըն փոքր,
- 300 Առ բարձրեալն մեծ խօսեցայ:
 Հանդիպողք այսմ բանիս,
 Որ վասն իմ գործոց խօսեցայ,
 Մեղադրէք յանդընգնութեանս,
 Որ առ վատ անձն իմ մատուցայ:
- 305 Ասէք անպատեհ մարդկան,
 Մանաւանդ վարժողաց վերայ,
 Այլ ի գէթս, որ ես անկայ,
 Մի՛ լիցի որդոցս Ադամայ:
 Տէր, տէր, մեծ, սուրբ և արդար,
- 310 Զիս կարդալն խիստ հեշտացայ,
 Դեռևս ոչ յայսմ պատուոյ
 Բոլորով սրտիւ գոհացայ:
 Ի փառաւորելն զիս
 Զմարդիկ ձգել փութացայ
- 315 Եւ վեր առաքել զփառս
 Ի ժամուն ոչ ևս գոհացայ:

- Բիւրուց քանքարաց տուփից
 Շնորհողին պարտական դտայ,
 Զունիմ տալ կշիռ մ' ունկի,
 320 Ոչ ծանօթ լընտրելեաց նորա:
 Բայց ոչ լքանել պարտիմ
 Ի յողորդ յուսոյս, որ առ նա,
 Որ մինչև շէի եղեալ
 Կամեցաւ և ես գոյացայ:
 325 Ի մօր իմոյ յարգանդէ
 Ի յաւազանէն առ տէր անկայ,
 Գիտէր զիմ արդեան դիպուածս,
 Թէ վասն էր շկորոյս յանխնայ:
 Այլ քաջալերեալ պարծիմ
 330 Մեծամեծ երախտեօք նորա,
 Որ վասն իմ ի կուտէ ծնաւ,
 Տնօրինեաց ի յերկրի վերայ:
 Հանգիստն ամենայն հոգոց
 Զարշարեալ այլ ոչ յակամայ
 335 Եւ կեանքն զուարթ արար,
 Վասն մեր խաշիւ մահանայ:
 Զի ամեն խակութիւնք աշխարհի
 Եւ ծննդոց սուրբ բառնաս,
 Ընդ լծոյ խաշին ոչ զօրէ,
 340 Այլ ոչնչանայ:
 Այլ և բարեխօս բարի
 Միշտ սուրբ կոյսն, որ հանդիսանայ,
 Վասն ամէն քրիստոնէի
 Եւ վասն իմ, որ կարդամս առ նա:
 345 Արդ տէր իմ, Յիսուս Քրիստոս,
 Քեզ և որք քո ընտրեալ ծառայ
 Զայս յայտնի բացադրութիւնս
 Իմ կամաւ խոստովանեցայ:
 Առաջի քոց հրեշտակաց
 350 Եւ սրբոյ կուսին գերակայ
 Եւ ամենայն հաճոյից
 Ընտրելոց յորդոցս Ադամայ:
 Զի քո անբաւ գթութեամբդ

355 Եւ բուրձամբ աղօթից նոցա
 Թողութիւն գտայց աստէն,
 Մնալով շնորհիդ առ յապայ:
 Փա՛ռք քեզ, փրկիչ աշխարհաց
 Եւ հոգւոյդ ընդ հօր յարակայ,
 360 Պատիւ այժմ և յաւիտեան,
 Օրհնութիւն և ալէլուիայ:

4. ՈՂԲ ՎԱՍՆ ԱՌՄԱՆՆ ԵՐՈՒՄԱՂԷՄԻ

- Ի հոլովել ժամանակին,
Եւ մերձենալ աւուրց վերջին,
Յորում սպառաւ փոքր այն բարին,
Զոր առաջինքն գործեցին,
- 5 Նուազեցաւ Հոռմայեցին,
Եւ զօրացաւ Հագարացին,
Քաղղէացին և Քետացին
Եւ բուն ծառայն Քանանացին:
- 10 Գեօղք և քաղաք յոլովք առին,
Քրիստոնէից շատ տիրեցին,
Զաւերս նոցա զօրս արարին՝
Ճառել չկարէ որ երկրածին:
- 15 Ի տիրութեան Տաճկաստանին,
Յաւուրս պղծոյն Սալահաղին,
Զօր գումարեալ չու արարին,
Ի սուրբ քաղաքըն դիմեցին:
- Բտնակ առեալ զՅորդանանաւ
Եւ բազմութեամբ զդաշտըն լցին,

Ա Ղ Բ Վ Ա Ս Ն Ա Ռ Մ Ա Ն Ն

A=ՁԵՆ. № 2079, թերթ 191ա—193բ, ժամանակ՝ 1622 թ.:

B=ՁԵՆ. № 5958, թերթ 164ա—171ա, ժամանակ՝ 1680 թ.:

Բ Ե Ա Ղ Ի Ր

2 A աւուրց վերջ:

9 B բազում փխ յոլովք:

11—12 B լիք:

15 A գումարեալ:

17 B զՅորդանանաւ:

20

Թուղթ արձակեալ առ ֆրէրին՝
Յնրուսաղէմ սուրբ քաղաքին։

«Եկայք ի մեր հնազանդութիւն
Ծառայապէս ներքոյ ձեռին
Եւ կամ ելեք պատերազմաւ,
Ըստ օրինի քաջամարտին»։

25

Ֆրէրք եկեալ փոքրհուրդ առին
Ձեռն տալով յոյսըն վերին,
Հոռմայական մեծ հրամանաւ
Խստիւ հտուն զպատասխանին։

30

«Թէ մեք կուիլ ունիմք ընդ ձեզ
Եւ հալածել յանվայր վայրին
Կամ թէ և մահ հասանիցի
Ի սէր ղղուս սուրբ քաղաքին»։

35

Ամէնքն ի լաց ի յողբ մտին,
Յեկեղեցիս դիմեալ գնացին.
Ձայնք օրհնութեանց բազմանային,
Եւ պաղատանք յերկարէին։

40

Մշտամոռնչ աղօթէին
Եւ հանապազ հեծեծէին,
Պատրիարզունք և քահանայք
Պատարագան հայցէին՝

Թէ «Օգնութիւն մեզ ի տեառնէ
Եկեալ հասցէ որպէս նախկին.
Սակաւածեռն այսու արամբք
Յաղթեմք զօրաց մեծ ըռազմին»։

45

ԶՌահ բրինձն գլուխ եղին
Զօրուն փոքու ի հանդիսին,
Ութհարիւր երիվարաւ

23 A ելիբ։

45 A ն [...]ահ։

Եւ նոյն շափով հետեակին:

50 Հաղորդեցան մարմնոյ փրկչին
Եւ սուրբ խաչին երկիր պագին,
Զտէրունական խաչն՝ հանին
Եւ առաջի անկանէին:

55 Զտին և զգիշերն ի յողբ կացին,
Մինչ արտասուօք զհողն թացին:
Զեղև նշան սուրբ նախկին
' Ի ոչ պատասխան ողբոց նոցին:

60 Յորժամ ի թուրքն դիմեցին
Խաչն յաջմէ կանգնէր նոցին.
Թէպէտ և յոյժ սուգ արարին,
Ոչ շարժեցաւ քնաւ տեղին:

Պատրիարգաց յուշ առնէին
Եւ իմաստեոց հարցանէին,
Ոչ կարէին պատասխանել,
Զի հասեալ կայր վճար վերջին:

65 ԶՏրապօլսոյ կոմսին հարցին.
Այն նենգաւոր խէթ աղուեսին,
Իսկ նա մեկնեալ էր սուրբ յուխտէն
Եւ դաշնադիր էր ներհակին:

70 Որպէս Վասակ՝ հայոց ազգին
Եղև մատնիչ սուրբ իշխանին,
Սոյնպէս և սա՝ Ռահ բրնձին
Եւ միամիտ զօրաց նորին:

75 Թուղթ առաքէր Սալահադնին,
Զինքըն ծառայ գրէր նմին
Եւ նշան տայր զքղանց դրօշին՝
Զզարդըս նոցա առնել դեղին:

65 A Զքրապլուսոյ:

71 A Ռախ: B բրնձին:

73 A Սալահանդնին:

80

Ասէր. «Բաժնեմ զգօրն ֆռանգին,
Եւ զքաջքն առնում ի յիմ մասին,
Դամ, իջանեմ ի վերայ ջրին,
Զնոսա պահեմ ի յերաշտին»:

Եւ նա արար, զոր խորհեցաւ
Ընդ մտերիմ զօրականին.
«Պահէք,— ասէ,— զաջոյ դեհին,
Եւ ես պահեմ զմօտ ջրմղին»:

85

Յանկարծակի մէջ դիշերին
Այն թշնամեաց գունդն հասին,
Բանակ առին ի վերայ ջրին,
Ըստ խրատու այն պիղծ կոմսին:

90

Անդ լուսանալ առաւօտին,
Մուտս ոազմի յօրինէին.
Տեղի հտուն նենգաւորին,
Ըստ նշանի դրոշից նորին:

95

Գազանարար յարձակէին
Վերայ զօրաց քրիստոնէին,
Իսկ նոքա ոչ թուլանային,
Այլ քաջութեամբ խիզախէին:

100

Ուժդին բախմամբ հարկանէին
Զմոխրատեսակ կեդարացին,
Մինչ անկեւոցն ի հանդիսին
Դիաթաւալ խիտ խաղային:

105

Զաւուրս երիս անդ յամէին
Արիական զօրք Ֆռանգին:
Այլ էր ի տօթ ժամանակին՝
Վարդավառի շորեքշաբթին,
Յորում քարինք շողանային,
Եւ կրականայր փոշի երկրին:

89 Ե Ընդ փխ Անդ:

90 Ա Մուտս: Ե Մուտ:

Սաղաւարտիւք և զրահիւք
Պարաւանդեալ անդամք նոցին:

110 Ի սաստկանալ տօթոյ ջերմին՝
Վառեալքն յերկաթսն այրէին
Եւ յանջրդոջ տօթոյ տապին
Յոյժ ծարաւեալ պապակէին:

115 Քաջամարտիկքն թառամէին
Եւ ի ներքուստ ցամաքէին,
Մինչ թալկեալ ամէնեկին
Եւ ի յուժոյ թողել բնաւին:

120 Ապա զիշխանն և զիւր որդին
Կալեալ ածին ի յատենին.
Հարցափորձեալ նենգաւորին
'Ի յուրացութիւն որսայր զնոսին.

«Թքել,— ասաց,— ընդդէմ խաչին
Եւ հաւանիլ փղամբարին»:
Զհանդուրժեալ նահատակին՝
Քրիստոսասէր թագաւորին,

125 Թուր արձակեաց յերես պղծին
Յանպատուութիւն կունդ Մահմետին:
Ի կատաղել Սալահադին՝
Զնոսա որպէս զոխշար զենին,

130 Զպատրիարգունքն և զձրէրնին
Սրով իսպառ կոտորեցին:
Զխաշն ի յոտից արկին,
Զոր սերովբէքն սարսէին:

Եւ զմնացեալ զօրականին
Ճորտ և ծառայս գրաւէին,

122 B քեզամբար:

123 A նախատակին:

126 A Յանպատուութիւն:

127 B Ի կատաղիլ Սալահադինին]:

135 Ի ծախ արկեալ վաճառէին,
Ընդ Ասխալանս յուղարկէին:

 Ի սուրբ քաղաքն դիմեցին,
Զօրօք պատեալ պաշարէին,
140 Ի սուրբ խաշի մեծ ուրբաթին,
Ի վեց ժամու մէջօրէին:

 Խաւար կալաւ զամենեւին,
Հանց որ աստեղք երևէին,
Պայծառ արևն ի սուգ հմուտ,
Առ կորստեան քրիստոնէին:

145 Յառ և յաւար սուրբ քաղաքին,
Զոր պղծալիցքն կոխէին,
Եւ ուր սրովքէք թեաքօղին,
Յոյժ անարժանքն այպանէին:

 Զնշանք խաչացն զոր գտին,
150 Ոտից կոխան զայն առնէին.
Զկուսան կանայք հաւատւորին
Եւ զտղահասակ մանկտին՝

 Գերի առեալ ժողովէին
155 Եւ յընտրութիւն պարապէին,
Իւրաքանչիւր բաժանէին
՝ Ի ի Բաբելոն յուղարկէին:

 Եւ Յարութիւն մտեալ փրկչին
 Գերեզմանաւն շրջան առին,
160 Զսպասաւորքն սուրբ տեղեացն
Անդէն զենեալ փողոտեցին:

 Ի տաճարի տեառն մտին,
Ի սրահին Սողոմոնին,
Զատակս տանն, այլև զորմունս
Քրիստոնէից արեամբ լուացին:

149 Ա Զնշան:

152 Ա զտղահասակ:

159 Ա չիք սուրբ:

- 165 Այլև կարգեաց իւրոյ ազգին
 Չմտանել անդ քրիստոնին
 Եւ կայ մնայ կտակ պղծին
 Մինչև ցայսօր ժամանակին:
- 170 Զսուրբ Սիոնն ու զԺնուոնքն
 Եւ զամենայն ուխտատեղին
 Նախատանօք այպանէին
 Եւ զարշ ոտիւքն կոխէին:
- 175 Զօրհնեցութիւնք մարգարէից,
 Զոր սուրբ հոգին առթեր նոցին
 Եւ զկտակարանս առաքելոց
 Տնօրէնութեանցն պատմողին
- 180 Խափանեցին, լռեցուցին,
 Զի կարգեսցեն զխաբեքային,
 Զմահաւ Ղուրանն ընդ Ֆրղանին
 Զեքբար ալլահն անդ ճշէին:
- Զզարդ և զսպասք սուրբ տաճարաց
 Պեղծ մզբթացն ձօնէին
 Եւ զհանդերձանք պատմութեանին
 Կալեալ յինքեանս բաժանէին:
- 185 Ի բարձրութիւն ելեալ բեմբին՝
 Զձև մէհրապին նկարէին
 Եւ առաջի անկեալ նմին
 Յիւրեանց բախտէն գոհանային:
- 190 Զայս ձայն գութի աղաղակաւ
 Ի Հոռոմ քաղաքն հասուցին.
 Պապըն լուեալ ի խոր խոցէր
 Եւ ամենայն սեպուհք նորին:
- Իշխանք՝ ու ազատք ժողովէին՝
 Հռոմայեցոց պայազատին,

180 A ալայն:

187 B անգեալ:

194 A պայազատին:

195

Սպանիացին և Փարէզին,
Ալամանիկն և Վէնէսին:

200

Ժողով առեալ բանակէին
Եւ բոթատու միմեանց լինին,
Թէ «Պարծանաց մերոյ տեղին
Եւ ոտնակոխ կենարարին,

205

Կոխան եղև անարժանից
Մահմետական շար ժողովին»:
Վասն այն ի սուք անհնարին
Եւ յարտասուս ողորմագին,

210

Կոծով հարեալք լինէին
Յեկեղեցիս և առտնին,
Աւաղական ձայնիւ լային,
Հեծեծանօք հառաչէին:

215

Զգարդ հանդերձից իշխանական
Փութով ի սեաւ փոխարկէին,
Առ փողոցեաւս թաւալէին
Եւ ընդ ցանկիւ տապալէին:

220

Ասլա խորհուրդ ի մէջ առեալ
Ելանելոյ ընդդէմ տաճկին,
Զեռն ի գործի արկանէին
Եւ լաստափայտս որոնէին:

Նաւս բազումս կազմեցին
Եւ մարտականս յօրինեցին:
Ճոխ թագաւորն Ալամանին
Հարեալ յաղէտ կսկծագին,

Ասէ. «Գնասցուք, հալածեսցուք
Զթշնամիս սրբոյ խաչին,
Այլ թէ և մահ պատահեսցէ,
Ոսկերքս անկցին ի սուրբ երկրին»:

217 Ա Զօրս փխ Նաւս:

223 Ա պատախեսցի:

- 225 Զու արարեալ վերայ ծովին,
Ուղևորեալ կապոյտ դաշտին,
Մի դմիով արշաւէին
Եւ խրախուսեալ խիզախէին,
- 230 Թէ. «Մարտիցուք մեք տիրապէս
Ջանուն մարտիրոսին
Եւ թէ յաղթեմք զթշնամին
Վրիժառու սրբոյ խաչին,
- 235 Մեծն Պետրոս ընդ մեզ գայցէ,
Ջունկն կտրել զՄաղքոսին,
Որում յանձնեաց հօր սիրելին
Ջսուրք գառինս իւրոյ հօտին»:
- 240 Այլ բանսարկու չար թշնամին
Նախանձ հարեալ զյունականին,
Ջգայռագեղ ճանապարհին
Կալեալ ուժով բռնանային,
- Մինչև ի սուր արկեալ զնոսին
Եւ զապստամբքն ի սպառ բարձին.
Ապա յաջող նաւարկութեամբ
Ի Տրապօլիս եզերեցին:
- 245 Այն նախանձոտ աղւեսն հին
Կնճիռ լինէր գործոյն կրկին,
Մինչև երդմամբ մեծ ուխտեցին
Չառնել վնաս երբեք նմին,
- 250 Թէ օգնական լինի գործոյն
Եւ հնարէ զմուտ ուղմին,
Եւ նա ուխտեաց Բագաւորին
Մառայ լինել յաւետ նմին:
- Եւ առաջնորդ յերբ խնդրեցին,
Ջտուկն ետուր զաման չարին,

226 Բ կապուտ:

236 Ա հօտին:

238 Ա զունականին:

252 Բ նոցին փխ նմին:

- 255 Այլ պատուիրեալ էր նա նմին
Տանիլ և տալ ի սուր տաճկին:
- 3երբ որ հասան ի Տաճկաստան
Աճապարեալ եղև տուկին.
Ղօղեալ թաքուն ի յիւր տեղին,
260 Առ նենգաւոր խաբող կոմսին:
- Տարակուսեալ զօրականին
Զաւուրս քսան յանշուր դաշտին
Եւ առ սովին և ծարաւին
Վերայ տաճկին արշաւեցին:
- 265 Անցեալ հասին յերկիր Ուճին,
Անթիւ հեծեալք ընդդէմ ելին.
Շրջան առեալ յարձակէին
Որպէս զգայլ ի վերայ գառին:
- 270 Այլ թագաւորքն և զօրք նորին
Կական բարձեալ ի ձայն ուժգին,
«Աստուած, յօգնել մեզ փութացիր
Եւ յընկրկել քում ծառային»:
- Ապա ի մարտ մտեալ յուսով,
Վանեալ հարին հալածեցին.
275 Երկու մարտիկ ի մէջ գնդին
Զարմանալոյ գործ գործեցին:
- Իբրև զհուր ընդ եղեգին՝
Հատեալ զռազմն անցանէին,
Գոռային, խփղախէին,
280 Բազումք յահէ սատակէին:
- Իւրաքանչիւր հազար սպանին
Այլև զքիւրս փախուցին.
Սուլտանն երդուաւ ընդ Ֆռանգին
Հնազանդիլ Հռոմայ գահին:

259 B թագուն:

274 B հարեալ հալածեցին փխ հարին հալածեցին:

284 B Հնազանդել:

Ապա դարձան ի Մէջերկրայս
Առ Լեւոնաւ թագաւորին,
Անտի դարձան յԱնտիոքին,
Առ Զհանայ գետովն իջին:

290

Ի յողողիլ մտեալ արքայն
Եւ մեռանէր ազգմամբ շարին.
Զորդին ի տեղն կարգեցին
Եւ թագաւոր հաստատեցին:

295

ՅԱքայիու վերայ եկին,
Պատնէշ կանգնեալ պաշարեցին,
Եւ անտանօր արքայորդոյն
Օրհաս մահու հասանէին:

300

Թէպէտ և ջերմ էր սէր նոցին,
Այլ մեղքն մեր ոչ թոյլ տային
Ի զօրանալ քրիստոնէին
Եւ կորանալ այլասեռին:

305

Յետոյ այլ ոմն յազգէ նոցին
Ընկլէզ անուն երևելին,
Ազգմամբ հոգոյն գայր յօգնութիւն,
Նաւօք ելեալ Կիպրոս կղզին:

310

Տեսեալ զչար բարս նոցին,
Մատնեաց ի սուր զամենեւին.
ՅԱքայիու վերայ եկին,
Յուրախութիւն մեծ բանակին:

Տօն ցնծութեան կատարէին,
Զսուգն հին փարատէին
Եւ յետ աւուրց ինչ հանգստին
Վառեալ ի մարտ ընդ քաղաքին:

315

Զքառասուն հազար տաճիկն
Հանեալ արտաքս կոտորէին.
Յետ այսորիկ շու արարեալ,
Սալահադինն դիմեցին:

320 Տեսեալ զանթիւ զօրս տաճկին,
Սակայն յուսոյն ոչ կասեցին,
Այլ յուսացան ի սէր փրկչին
Եւ յօգնութիւն սրբոյ խաչին:

Փոյթ ի վերայ յարձակէին
Եւ ուժգնակի խիստ բախէին,
Զբանակն յերկուս բաժանէին
Եւ զաջողակքն մաշէին:

325 ԶՍալահադինն փախուցին,
Մինչ յԱսիալանն հասուցին,
Զօրս ընդ ձեռամբ՝ կոտորեցին
Եւ զոր սլրծեալ՝ կորացուցին:

330 Ուրախութեամբ դարձեալ անդրէն
Ի յԱրարաթ ամ մի կացին
Եւ վասն առման սուրբ քաղաքին
Տեառնէ հրաման շեղե նոցին:

335 Վասն այնորիկ նաւեալ անցին,
Փութով յաշխարհն իւրեանց գնացին,
Մինչև հրաման աստուածային
Տացէ զնա դարձեալ նոցին:

340 Այս խորհրդով կան և մնան
Նոքա ելից ժամանակեան,
Մինչ յաստուծոյ առցեն հրաման
Եւ երամով զան միաբան:

Այլ թէ վասն է՞ր այս գործեցան,
Որ քրիստոնէայք նուազեցան,
Այս է պատճառն յայդ յանդիման
Ի սուրբ գրոց վկայել բան:

345 Թէ ոչ կամի անմահ արքայն
Զիւր սիրելին՝ ամբարտաւան.

319 Ա յուսացան:

326 Ա յԱսիականն:

343 Ա պատճառ:

Յառակն ասաց սողմունեան.
«Ես եմ դիմակ այնպէս մարդկան»:

350 Վասն այսորիկ զըրիստոնեայն
Այլասեռիցն արար կոխան,
Զի հեզ բարուր ծառայական
Սուղ ինչ սգով աստէն ողբան,

355 Զի իրաւամբք արդարութեան
Անդէն առցեն զաստիս փոխան.
Ճոխ վայելել ուրախական,
Փայլեալ ի փառս անզուգական:

360 Եւ այլ պատճառ տեառն ցասման,
Որ հրաւիրակ պատժոց զտան,
Ծուխն մեղաց մեր բազմութեան,
Որ ի բարձունս բարդեցան:

Զի մեծ ոճիրք չաբութեան
Ի մէջ հօտիս յոյժ բազմեցան,
Զի հերձուածով բաժանեցան
Եւ իրերաց դահիճ դարձան:

365 Հայհոյութեամբ բացեալ բերան
Քրիստոնէի առ քրիստոնեայն,
Սրով միմեանց յերկիր ելան
Եւ գերէվար սրբոց յարեան:

370 Այլեւ նախճիրս զանազան
Եւ անառակ վարս ստացան,
Վասն որոյ թիւք կատարեցան,
Կշռեցան և չափեցան,

375 Եհաս լրումն վերջական
Ըստ քանակի գործոց մարդկան,
Բայց ըստ կամացն աստուածական,
Զոր նախ տեսաւ յարարչութեան,

354 B զաստի:

358 A պատժուց:

- 380 Ի մինն Ադամ զորդիս մարդկան
 Ի սկզբանէ մինչ ի վախճան,
 Դեռ անկատար, ոչ ի լրման,
 Թերի մնացեալ, նոր ի ծննդեան:
- 385 Զոր ըստ մասին ոմանց մարդկան
 Խիստ տերութեանցն արար վախճան,
 Զի շար կրիւք ծառայական
 Տատանելով հեծեծական:
- 390 Եւ զկենցաղոյս սէր նանրական
 Փոխեն ի սէրն անանցական,
 Զի երևի սիրոյն նշան,
 Այլև գործոցն բարութեան:
- 395 Իսկ աշխարհի որդիքս, որ կան,
 Հողոյ ծնունդ եղեմական,
 Ժառանգեցեն յայսմ յաւիտեան
 Եւ յապագայն խաւար մնան:
- Յամենայնի, որ գործեցան
 Փառս տացուք փրկչին մարդկան,
 Հօր և հոգոյն իւր էական
 Միասնական աստուածութեան:

378 A Յիսկրգրանէ: B վաղճան:

382 A տէրութեանցն:

390 A Էղեմական:

5. ՆԵՐՔՈՂԵԱՆ ՎԻՊԱՍԱ[ՆԱ]ԿԱՆ Ի ՓՈԽՈՒՄՆ ԱՍՏՈՒԱՄԱՄԻՆ
ԿՈՒՍԻՆ ԵՒ ՅԱՂԱԳՍ ՉԱՏԿԵՐԻՆ ՍՐՔՈՅ, ՈՐ ԲԵՐԵԱԼ ՀԱՆԳՈՒ-
ՑԱԻ [Տ]ԵՍՉՈՒԹԵԱՄԲ ՀՈԳՈՅՆ Ի ՍԱՀՄԱՆՍ ԱՆՁԵՒԱՅԵԱՑ,
Ի ՏԵՂԻՆ ԿՈՉԵՑԵԱԼ ՀՈԳՈՅ ՎԱՆՔ

Աստուած և տէրն ամենայնի
Եւ արարիչն արարածի,
Որ է՛րն և է՛ և եղիցի՛
Եւ յանբաւիցս ոչ պարագրի:

5 Ահեղանկարն աշխարհի
Եւ գաղափար բնաւ գոյի,
Գերակատար բունն բարի
Եւ համասփիւռ ճաճանչն արփի:

10 Որ մինչև չէր նկարն երկնի
Եւ անհաստատ հիմունք երկրի,
Փառարանիւր անլուելի,
Երրորդութիւն անճառելի:

15 Իսկ անկարօտն յամենայնի
Եւ կատարեալ էն առաջի,
Ի յոչ էից է երկակի
Յառաջ մատոյց զնիւթս էակի:

Զեթերն վերին կմբէթ յերկնի,
Զնոյն և հիմն յատակի,

Ա Ղ Ր Յ Ա Ր Ե Լ Ե Ր

A=ԶԵՆ. № 2079, քերթ 196ա—210ա, ժամանակ՝ 1622 թ.:

B=Ղ. Ալիշան, Հայապատում, Բ, էջ 51—53 (ունի միայն 961—1080-րդ
առողները):

20 Զմիջոց ծոցոյ այսմ անբաւի,
Որ պարառեալ են քառակի՝

Լուսապարար շարս կարգի,
Զի լուսատու լիցին յերկրի
Զդայականաց վայելչալի
Եւ տնկական բուսոց բերրի:

25 Հսկան հղօր յարաշրջի,
Յորոյ տապէ տշ որ թաքչի,
Դաստիարակ զբարթ գիծի
Շնչականաց և անշնչի:

30 Նոյն աստանօր աստ հիմնարկեաց
Զեկեղեցի իւր զոր փրկեաց,
Խառնեալ սեղան արեամբ ներկած
Աղատ յալեացն, որ մրկած:

35 Անդ պաղպաջուն լուսաւորաց,
Որով անդրէն զնա զարդարեաց,
Աստ զյիշատակ սրբոց վառեաց,
Գեր քան զնա փառաւորեաց:

40 Զորս բան զաշխարհս յառաջ ընտրեաց
Զմարդարէից և զնախահարց,
Զհայրապետաց, զմարտիրոսաց,
Մաքուր կոսից կրօնաւորաց:

Որք ընկալան զբանն կենաց՝
Մաքուր մօրէն մէր փրկանաց,
Որ ողջ խոկումն է կուսանաց,
Զափ և բանոն առաքինեաց:

45 Զի որպէս մեծն յաստեղաց
Ճոխ յասպարէզն յարատեւեաց,
Սա զերկնային լոյսն տեղեաց՝
Զմէգ մթութեան ի մէնջ երարծ:

50

Որ և թեթև ամպաւ չուեաց
 Ընդ կենցաղոյս այս ծովընթաց,
 Հողմով հոգոյն վաքեալ թեւաց,
 Վեհ երեւալ վերնականաց:

55

Նաեւ այս գեղմ ի սուրբ դառանց,
 Վայր հայրաբուղիս կրկին վտակաց,
 Զովացուցիչ պասքեալ ազանց
 Եւ լուացումն մաքուր մանկանց:

60

Այս ծաղկաղարդ սուրբ գաւազան
 Ի յարմատոյն բղխեալ Դաւթեան
 Եւ գահ երկուցն սլետութեան
 Յանգեալ ի պետն տէրութեան:

65

Զի մինչ ի բոյսն արդարութեան
 Երեք կղեալ ի խառընման,
 Նախ Ահարոնն Ղևտական
 Կալաւ զդուստր Ամինադարայն:

70

Եւ Յովիդէ մեծ քահանայն,
 Զդիւցազինըն Յովրամայն,
 Իսկ Յովակիմ զարմըն Դաւթեան
 ԶԱննա էառ զդուստր Մատթայն:

75

Զքայր Սովիւէ և զՄարեմայն,
 Ուստի բուսաւ ոստն աննման,
 Յորմէ զխայրին կթեաց Ադամ,
 Զամբեալ եկաց ի յսուխտեան:

Որ ի լնուլ երից ամեան
 Զայնեալ եղև տէրն յանդիման,
 Բարձեալ թողաւ զերդ նի՛ Նսայն
 Տէրն կալաւ հօրըն փոխան:

Իսկ ի յամին չորեքտասան
 Մերն պարկեշտ եղև պաշտպան,

80

Կնքեալ նամակ անպարզակտն,
Տաւ առ առն դիտնակաւն:

Որ յետ երից ամսոց լրման,
Մինչ հարսանեացն կայր խոկման,
Առ զաւետիսըն կուսակտն,
Սիրով հարեալ հարսն առ փեսայն:

85

Զոր ի յաւուրն փեսայութեան
«Ելէք,— աւէր,— դատերք համայն,
Ընդ Սողոմոն հայել արքայն
Պսակազարդ ի Գողգոթայն»:

90

Այլ որ ահեղ անդ որոտայր,
Թողուլ նոցա առ հայր կարդայր,
Զկոյսն կուսին յորդէգիր տայր,
Կտակագիրն, որ ընդդէմ կայր:

95

Եսայիւս հողով խայտար
Զայս նախագրէր այլանկար,
Յայր մի տըւաւ ծալեալ տումար,
Որ դպրութեան ոչ հմտանայր:

100

Եւ որ վանեաց զչարին հնար
Զոսոխն մեր դատեալ արդար.
Կարմրազգեստ, հնձանահար,
Փառօք առ հայր վեր համաբառնայր:

105

Յայնժամ մատեաւ մայրն և ողբայր
Ժտեալ յորդոյն ամենակար.
«Դու համբառնաս ի փառս անճառ
Եւ զիս թողուս պանդխտաբար»:

Նա խոստացաւ յոյժ կեմակար,
Թէ ոչ թողից յերկիր օտար,
Այլ ես ածից զքեզ առ հայր
Եւ զնիւթականըդ շաղաշար:

- 110 Ապա զյետոյսրն մ[ո]լոսանայր,
Յառաջադէմքն սլանայր,
Յանցաւորէն քակիլ ջանայր,
Զի ընդ անանցն միանայր:
- 115 Ամաց վաթսուն յերկրի մնայր
Ընդ մկրտեալսն ուրախանայր,
Փոխանորդաւ որդոյն ցնծայր,
Բայց անդրանկան սիրոյն ըղձայր:
- 120 Երկուտասան ամբք լցեալ,
Յօրէ յորմէ տէրն ամբարձեալ,
Ապա վերնոց պետին իջեալ,
Զբարբիոնն ոստ մատուցեալ:
- «Ե՛կ, մերձաւոր, ձմեռն անցեալ,
Ահա այգիս մեր ծաղկեցեալ,
Յատանելոյ ժամն մերձեալ,
Զայն տատրակի աստ հնչեցեալ»:
- 125 Յայնժամ և կոյսն ուրախացեալ
Զմաքուր կուսանս անդ կոչեցեալ,
Զանուշ բերանն իսկոյն բացեալ,
Ի սուրբ սլատուէրս առատացեալ:
- 130 «Որք սուրբ հոգոյն էք հարսնացեալ
Եւ սրբութեան ուխտի կացեալ,
Արի ի նոյն լիջիք դարձեալ,
Առագաստին լապտերք լուցեալ»:
- 135 Սուրբն Յոհաննէս յառաջ մատեալ,
Ընդ մօր գթոյն խանդաղատեալ,
Նա զյայտնութիւն իրին պատմեալ
Եւ վասն եղբարցն՝ թէ կարօտեալ:
- Այլև ընդ այսմ ամենայնի
Պարտիմք գիտել զսոյն յայտնի,

- 140 Զեղեալ գրեալ սքանչելի,
Որ ի ննշումն Աստուածածնի:
- Զի է գրեալ Յովհաննիսի
Եղբօր սրբոյն Յակոբոսի,
Աւետարանիչ տէրն Յիսուսի
Որդի եղեալ ԶԵՐԵԿՈՍԻ:
- 145 Յորժամ փոխիլ մօտեալ աստի
Մարիամու մօր կենսատի,
Երսուն աւուրբք յառաջ լինի
Գալ հրեշտակին Գաբրիէլի:
- 150 Եւ խոնարհեալ Լրկրպագի
Տէրն ծնողի Մարիամի
Եւ աւետեաց ուրախալի.
«Բերկրեալդ ի յազգըս Եւայի,
- Զի կոչէ զքեզ տէրն ամենի
Յիսուս որդին քո սիրալի»:
155 Եւ Էտ նմա զպսակն յայտնի՝
Զբրաբիոնն հրաշալի,
- Որ ի յոստոց արմաւենի
Հիւսեալ ընտիր զարմանալի,
Զոր Լր բերեալ դրախտէն մեծի
160 Եւ եդ ի զլուխ սրբոյն կուսի:
- Զի առաքեալք տեսցեն յայտնի
Եւ օրհնութիւն տան առաջի,
Հօր և սրգոյ և սուրբ հոգոյն,
Ստեղծչին գոյից ամենայնի:
- 165 Եւ զի նշանք լիցին հրաշի
Ի պսակէն բրաբիոնի
Եւ զօրութիւնք բժշկութեան
Առ ի տեսիլ սքանչելի:
- Իսկ սուրբ կուսին Մարիամի
170 Իբրեւ էառ աւետալի

Զփոխիլն աստէն առ տէրն Էրկնի
Յուրախութիւն անճառելի:

175
Եւ զբրարիոնն սլանձալի
Վասն իբ բերեալ բիւր բարելի,
Ետ օրհնութիւն տէրն Յիսուսի
Ելս ի մտի նդեալ աստի:

180
Ելեալ ի լեառն Զիթենեաց,
Զի անդ կացցէ ի յաղօթի
Եւ անդ եղև հրաշս յայտնի
Ի յաղօթելն Աստուածածնի:

Զի ամենայն բոյսք դալարի
Եւ տունկք ծառոց անդ խոնարհի,
Առ ի յողջոյն սրբոյն կուսի
Երկրպագեն մօրն Հիսուսի:

185
Եւ յաղօթելն Աստուածածնին
Այսպէս ասէր յիւրում սրտին.
«Դու, տէր, իմ տէր, Յիսուս որդի
Եւ աստուծոյ հօր հղօրի,

190
Դու խոստացար զալ ի յերկրի
Եւ զիս հանել յերկինս երկնի
Եւ քո խոստումն է բաղձալի
Անտարակոյս « անստելի»:

195
Յայնժամ Յիսուս յերկնից ձայնեալ
Առ սուրբ կուսին խանդաղատեալ.
«Մի՛ երկնչիւր, մայր սրբասնեալ,
Ես գամ առ բեզ կառօք բազմեալ:

200
Եւ ոչ թողից զծնողդ օրհնեալ
Ի կատարել զիմ խոստացեալ,
Այլ աւանդեմ զհոգիդ մարբեալ
Ամբողջ մարմնովդ վեր ամբարձեալ»:

Եւ յետ բանիցըս աւետեալ
Մարիամու նոյն յարուցեալ,

Զերիս ատուրս շրջադայեալ,
Զտնօրինականս փրկչին եղեալ:

205 Եւ յամենայն տեղ աղօթեալ,
Փափագանօք ողջագորեալ,
Դարձաւ ի տուն իւրոյ եկեալ
Եւ ի գահոյսն եղև բազմեալ:

210 Ասլա Յոհան որդին եղեալ,
Որ քարոզէր զՔրիստոս օծեալ,
Ի մերձակայս Պաղեստինոյ
Գեօղօրէից շրջագայեալ:

215 Անտէն դարձեալ առ կոյսն եկեալ,
Զոր էր յաւանդ նմին տեալ,
Որ և կուսին յայտ արարեալ,
Վասն փոխման իւր հանդերձեալ:

220 Այլև զտեղի իւրոյ թաղման
Ի հայրենիսն իւր ասացեալ՝
Գեթսամանի ձորըն կոչեցեալ,
Որ էր շիրիմ ծնողացն եղեալ:

225 Եւ ասացեալ Յովհաննիսին
Մատչել յաղերս սուրբ խորհրդին,
Պատարագել զսոսկալին,
Զի հաղորդիմ մարմնոյ փրկչին:

230 Յայնժամ ելեալ սուրբ Յոհանին
Ի վերնաշունն խորհրդին,
Յիշատակել ըստ տեառն բանին
Վասն իւր ծնողի Աստուածածնին:

230 Յայնժամ հոգին մատակարար
Գնդին սրբոյ ազդ արարեալ,
Որք փոյթ քնդ փոյթ անդ գումարեալ
Եւ ձայնակից նմին եղեալ:

Որք ի հոգոյն վերաբերեալ
 Յանկարծակի եղեն եկեալ,
 Դասք երջանիկ պետից ընտրեալ,
 Որք յամենայն յաշխարհ գնացեալ:

ԶՔրիստոս աստուած քարոզէին
 Եւ զյարութիւն պատմէին,
 Ի նոյն ժամայն անդ գումարին,
 Որք ընդհանիւր սփռեալ էին:

Պետրոս ի Հռոմայ,
 Այլ և Պօղոս էր ընդ նմին,
 Թովմաս ի Հնդկային
 Եւ Թադէոս Հայոց Մեծին:

Փիլիպպոս ի Հաբաշին
 Եւ Մատթէոս Ասիւրային,
 Անդրէաս ի Սպարտայոյ
 Եւ Շմաւոն Մովրիտային:

Յուդայ յորմոյ եկաւորի,
 Մատաթիաս Փռիւգային,
 Մարկոսն սուրբ Թեբաիդոյ,
 Ղուկաս եկեալ Դաղամատային:

Եւ այսպիսի սքանչելի,
 Որ չէ եղեալ յազդ մարդկային,
 Զի տասունք 'ւ եօթանասունքն
 Յական քթթելն եկեալ հասին:

Եւ յարձակման պատարագին
 Ի կատարման սուրբ խորհրդին,
 Երկիր պագին աստուծոյ մօրն,
 ԶՅիսուս աւանդն ողջոյն տուին:

Ապա զմիմեանս համրուրեցին
 Յողջոյն սիրոյ կենարարին
 Եւ գոհութեամբ աստուածային
 Հիանալով զարմանային:

265 Եւ օրհնեցին զաստուածն. մին
ի հաւարումն ի հանգիսին,
Զի ի վարկեան ժամանակին
ի կոշմանէ հոգոյն հասին:

270 Իսկ սրբուհի Աստուածածին
ի ծագ արևու առաւօտին,
Համբարձ զձեռս իւր հրաշալին
Առ տէր աստուած պաղատագին:

275 Դարձեալ անտի ի յանկողին
ի պատգարակս իւրոյ զսպին,
Պետրոս նստէր ի սնարին
Եւ Յովհաննէս պատուանդին:

280 Ամենեքին շուրջ պարառեալ
Զմահճօք կուսին զասակարդեալ,
Սիրով զոտիւք սրբոյն փարեալ
Զայնիւ երգով օրհնաբանեալ:

Զի հարսնուհին կայր հրափրեալ
Առ բաղձալին իւր ըղձացեալ,
Ի յառագաստն աստուածարեալ,
Զոր խոստացեալ էր նմա տալ:

285 Էին անդ եպիսկոպոսք
Գերաստիճանք, տիրասնունդք,
Յակոբոս՝ եղբայր տեառն,
Գոլ խաշարարձ կենսաստեղունք:

290 Ի սուրբ խաշէ կենաց փայտէն
Առեալ ի ձեռն իւրոյ անդէն
Դիոնէսիոս յԱրիսպագէն,
Որ վարդապետն էր յառաջմէն:

Յոէթէոս գերհրաշալին
Որ աշակերտն էր Պօղոսին,

293 A Յեղէթէս: «Գերհրաշալին» բառը մասամբ ջնջված է:
286 A տիրանունդք:

Որ ի գովեստ Աստուածածին
Զարհուրեցոյց զհրեղէնս վերին:

Յայնժամ սրբոյ Աստուածածին
Կամէր վճարել զկեանս երկրային
Եւ փոխադրիլ առ իւր որդին,
300 Որ հրաւիրեալն էր նա նմին:

Իսկ Յոհաննու աւետարանչին
Յայտնէ զփայտ սուրբ պատկերին,
Որ էր մասն սրբոյ խաչին,
Զոր կենսատուն մեր կազմեցին:

305 Յայնժամ ի միտս եկեալ նոցին
Վասն անջատման յինքեանց նորին,
Նկարակերտ նման նմին
Կազմեն զշերտն կիպարին:

Եւ Յոհաննու կուսի որդին,
310 Որ Յիսուսէ փոխանորդի,
Ինք կոփեալ զձե պատկերին,
Զոր առ Պետրոս հանդերձ գնդիւն:

Առաքելովք ամենայնին
Աղաչեցին զԱստուածածին.
315 «Ա՛ռ զտախտակս զայս և օրհնեա՛,
Որ քո փոխան երկրպագին:

Զի յետ ելման յաստէացս յերկին
Յուսով այնմիկ մխիթարին,
Այլև յաղագս բորոտ ախտին,
320 Որ յոյժ եռայր ի Պաղեստին:

Իսկ ի բացման սուրբ խորհրդին
Մերկ առաջի մաքուր սրտին,
Թէ ընդ զրկիլս ի քոյդ կերպին
Զայս շնորհեսցես ընդ քո կրկին:

325 Զի որք յուսան կուսիդ յորդին
Մասամբս այսու քե յուսադրին,

Այլև վանիշ խստամարտին
Անկերպ ախտին և բորոտին:

330 Նա զի և յոյժ է տրտմութիւն
Մեզ քո փոխումն ամենեկին
Զի քեւ էաք յուրախութիւն,
Յնա համբարձման մերոյ փրկչին:

335 Արդ տուր զտիպ պատկերի քո
Մեզ մխիթար յետ փոխման քո,
Շնորհեա զսա բժիշկ ցաւոյ
Լինել նշխար հօտիցս քո:

340 Զի որ փափաքն է քեզ սիրով,
Զսա տեսանեն մեծաւ յուսով,
Լիցցի խնդիրք նոցա փութով
Հայցմամբըդ լի հաւատով:

Իսկ որ զբժիշկն աղամային
Կրեալ պահէր սուրբ յարգանդին,
Անկար գոլով ասէր յանձին
Դարձուցանէր առ սուրբ զնդին:

345 «Զիա՞րդ հարկէք զտէրն աղախին,
Ով ժառանգորդք դատող գահին,
Դուք հրաւիրակք էք անմահին
Եւ հօտապետք սուրբ փարախին:

350 Զեզ ետ բուժել զվէրս մոլարին
Եւ դիւրութիւն այսահարին,
Լսել խլին, հայել կուրին
Եւ թողութիւն պարտաւորին:

355 Դուք աշակերտք գոլ արարչին
Եւ ձեզ շնորհեաց իշխանութիւն,
Զդէս հալածել յանուն նորին,
Բառնալ յերկրէ զկռապաշտութիւն:

Դուք հայցեցէք վասն այդմ իրին,
Զի զոր խնդրէք ձեզ լինիցին,

Զի թէ փակել հտ ձեզ զեբկին,
Այլև բանալ զնա կրկին:

Այլև իշխան արար յերկրի
Եւ բարեկամս իւր անուանի,
Փրկիչն Յիսուս տէրն ամենի:
Զձեզ կոչեաց իւր սիրելի:

365

Եւ զի նշանքն հրաշալի
Ի ձեռս ձեր ասաց լինին,
Զի ոտք ձեր ուր հասանին
Ոչինչ անհնար ձեզ եղիցին:

370

Այլ միաբան աղօթեցէք,
Անխոռով սիրով յուղարկեցէք,
Խաղաղութեամբ զիս հասուցէք
Նաւահանգիստն զիս մուծէք:

375

Մատեաւ խօսել ընդ սուրբ կուսին
Պօղոս հնչող փողն Յիսուսին,
Եւ օրիորդ առաքաստին
Կայթէր ընդ սէր մաքուր հարսին:

380

Ձմիւ տիրամայր, սուրբ միաժնին,
Մեք անարժան ծառայք նմին,
Արարիչն ընդհանուր գոյին
Ի քէն հաճեցաւ առնել մարմին:

Արժանացեալքս այսմ մասին
Առաքելոյ ընտրեալ շնորհին,
Որդոյդ սիրով եկեալ ի սմին
Եւ մասնաւոր հոգոյն շնորհին:

385

Իսկ դու ծնող հօր միաժնին,
Մեք հրովարտակք գոլով նմին.
Դու հարսն անբիծ երրորդութեան,
Մեք փողք հնչողք զժնունդ բոցին:

388 Մինչև այս տողը ըստ Ն. Ակինյանի, գրել է ներսես Մոկացին, իսկ սրանից հետո՝ Ստեփանոս Շատախեցին:

390

Որպէս տէրն Լաւ զմահուն իւր փայտ
 Առ յինքենէ առտէն պատանդ,
 Յուսով ի նա յենուլ անխախտ,
 Որք ի մեղաց ընկղմեալ յաղաւ:

395

Տալցես և դու զփայտիս տախտակ
 Ընդ ելս քո մահու կտակ,
 Մեծ տրամաութեանս մեր ներհակ,
 Եւ դու սովաւ՝ ընդ մեզ անբակ»:

400

Յայնժամ առեալ կուսին սրբոյ
 Զպնակիտ շնչին նիւթոյ,
 Ի հայրախնամ խնդրեաց զթոյ
 Յառաքողէն յայնժամ սրդոյ:

405

«Որ առաքեցեր զքո միածին
 Վասն աշխարհի առնուլ մարմին,
 Յանարժանէս քո աղախին,
 Որ կատարեաց զգրեալս օրինին:

410

Եւ համբարձաւ առ բեզ կրկին
 Ի փառս անճառ սեփականին,
 Որ էր ընդ հօրդ և ընդ հոգին
 Անբակ, անբաժ զոյ ի մարմին:

415

Արդ աղաչեմ զհայրդ վերին,
 Բարձ զթութեամբ զախտ բորոտին,
 Ի մարդկանէ, որ տաղնապին
 Ի ձեռն այսու նկարեալ փայտին:

420

Տուր զգօրութիւն երրորդութիւնդ
 Տպսուորելով ի տիպ [ն]որին.
 Ի ձեռն իմոյ աղաչանացս
 Ի կատարել զխնդրելին:

Որ բարձեր զյանցանս նախաստեղծին
 Ի ձեռն որդոյ քո միածնին՝
 Յիսուս Քրիստոս մարդկան փրկչին,
 Որ կատարեաց զտնօրէնութիւն կամաւ քոյին:

Արդ կատարեալ զխնդիր սոցին
Զրնտրեալ արանցս փոքրո՛ հօտին,
Որք բանիւ քո հրաման առին,
Ընդ ոլորտս երկրի քալողեցին:

425

Որք առ ի բէն առաքեցան,
Անհուր լերանց գետք ընթացան,
Տուր զայս սոցա՝ որպէս ըղձան
Ընդ իւր իմում կալ մահարձան,

430

Զի բեզ լիցին յար պաշտօպան
Փառարանիչ երրորդութեանդ,
Հօր և Որդոյ, Հոգոյդ բնական
Օրհնէրգութիւն միշտ յաւիտեան»:

435

Յայնժամ կամար լուսոյ եկաց,
Զանձամբ կուսին պարափակեաց,
Եւ խաշածե լոյս ծառալեաց
Զսուրբ պատկերն անդ պսակեաց:

440

Եւ ընդ լուսոյն ձայն երկնային
Հնչեաց առ կոյսրն տիրածին:
Ասէ. «Հայցուածք քո եղիցին,
Զոր և կամիս փոյլ կատարին»:

Եւ նույնժամայն որոտագին
Հոտ անուշից բուրեաց ուժգին
Եւ ի հոտոյն աստուածային
Թմբրեալ գմալեաց զքիմս ամենին:

445

Բայց առաքեալքն, որ նոսէին,
Ի շարժմանէն ոչ սոսկային,
Զի տեսութեամբ աստուածային
Վարժեալ և կիրթ զոլով էին:

450

Եւ յերրորդում ժամօրէին
էջ տէրն յերկնից զօրօք վերին,

Եւ Գաբրիէլ և Միքայէլ
Զօրօք կային սպասու նորին:

455 Եւ մինչ ուներ մայր կենսատուն
Զտիպ կիպարին չիւրում ձեռին,
Կալեալ հանգէպ աստուածորդոյն
Տէրն Յիսուսի իւր միածնին:

460 Եւ տէրն մեր աջ հզօրին,
Իւրով ձեռօքն աստուածային,
Տեառնագրեաց զձե պատկերին,
Օրհնեաց բանիւ հոգոյ շնորհին:

Տարեալ զպատկերըն նկարած
Եղ ընդդիմին սուրբ երեսաց
Եւ արտասուօք յորդ համբուրեաց
Զբժիշկն ախտից վիրաւորեաց:

465 Եւ մայր կենաց տէրն Յիսուսին
Ետ յառաքեալսն զտիպ պատկերին,
Զկենդանագիր իւրոյ ձեռն,
Լցեալ շնորհիւ աստուածային:

470 Մատեաւ Պետրոս երկրպագեաց,
Եւ Պօղոսի ընդ նոյն համբուրեաց,
Ընդ որս և այլ սուրբ ընկերաց
Երկրպագին հետ իրերաց:

475 Եւ զոհացեալ զտեառնէ շնորհաց
Ի բաց առին ի սուրբ զրկաց
Եւ անդ տեսին նկարագրած
Զաչքն և զբերանն զգոյն երեսաց,

480 Զարտեանունք սրբոյ կուսին,
Զքիմքն և զայլ գեղ պատկերին,
Ամենկին զամենեսին
Նկարագրեալ ի կենդանագրին:

Յետ այսորիկ սուրբն կանգնէր
Բանիւ առ տէրն անագանէր,

Ի տես որդոյն մխիթարէր
Եւ գոհութեամբ փառաւորէր:

485 Օրհնեցութիւնս մատուցանէր,
Զի կատարեաց զխոստումն իւր տէր,
Վասն աշխարհի միշտ երկայնէր
Զբազուկն իւր սուրբ աղօթանէր:

490 Ապա զհանդերձն մերկանէր,
Հանեալ յանձնէն ի բաց դնէր,
Զնորագոյնսն ազանէր
Եւ յանդողինս տարածանէր:

495 Իսկ առաքեալքն նստէին,
Շուրջ զնովաւ պար առնէին,
Ներքողինիւ նուագէին,
Գերապատիւ մօրն երգէին:

500 Իսկ տիրուհին պայծառ դիմով
Զշրթունս իւր սուրբ շարժէր մեղմով,
Տեառնէ հայցէր աղօթելով
Ընդ աշխարհի գոլ՝ փրկելով:

Իսկ որ կամէր զկեանս վճարել
Զհոգին յորդին իւր աւանդել,
Տէրն, որ եկեալ էր ի խնդրել
Յերկինս առ հայր դասակարգել:

505 Ցայնժամ սրբոցն սքանչացեալ
Եւ տրտմութեամբ եղեն լցեալ,
Ի յարտասուս եղեն փոխեալ
Եւ դողութեամբ յողջոյն մտեալ:

510 Գունդն ամենայն ի միասին
Երկիր պագին Աստուածածնին,
ԶՅոռթէոս յառաջ ածին
Զաշակերտ ճեմարանին:

Եւ նա հոգովն աստուածային.
Սկսաւ խօսել ի հանդիսին,

515

Զպատշաճաւոր պատիւ կուսին
Ի լոր բամիցն ամենին:

520

Ի մէջ կացեալ աստուծազգեացն
Արտաքս ելեալ բնութեանս ազգաց,
Խօսեալ զպատճառ անճառելեաց
Զխորհրդոյն տեառն անանց:

525

Բանին մարմին մեր եղելոյ
Ի սուրբ կուսէն մեզ յայտնելոյ,
Ընդ որ հիացեալ առաքելոցն,
Ծտուն զփառս տեառն աստուծոյ:

530

Ջահս լուցեալ սուրբ կուսանացն
Եւ զբուրմունքս կնդրկաց,
Ի սպաս կուսին փոխան փառաց
Յեկեղեցիսն անդրանկաց:

535

Ո՛վ սքանչելի մեծ հանդիսին
Աստուածազարդ պարուց խմբին,
Որ սխրալին է և պայծառ
Երկնանման պարակցութիւն:

540

Սփռեալ յերկրի տիեզերին
Բաժանք միմեանց ակեալ խառնին,
Այլև վերին պարք հրեղինին
Յերկիր հեղեալ ընդ մեզ խառնին:

Ոմանց սուրբ հարսն վեր ընդունել,
Ոմանց յուզի զնոյն առաքել,
Երկնային զօրք կառս են ածել,
Զաստուածամայրն յերկինս տանել:

545

Սոքա յղելըն տրամէին
՝ Ի ի սուգ մտեալ թախանձէին,
Զնովաւ ակումբ առեալ լային,
Վասն անջատման սուրբ տիրածնին:

Նոքա յընդունելն պատրաստին,
Զբազուկս իւրեանց տարածէին,

Խնճոյս առեալ և կայթէին,
Զի զտիրուհին ընդունիցին:

550 Պետրոս երգէր յոյժ Թախծագին.
«Ելս ի մտի եղ սրբուհին,
Աստուածամայրս հովտէս ստորին
Տեղին ուստի ուխտեաց նախկին:

555 Եկայք հանցութ յելսն վերին,
Զսա ի հանդիստ յաւիտենին»:
Եւ Գարբիէլ հնչէր ուժգին՝
Յնծալ եկեալ լիբանանին,

560 Եկեսցես, անցցես ի վեր
Սկիզբն հաւատոյ ուրախաբեր,
Ի Սանիրայ գլխոյն վեհ էր
Եւ Հերմովնի տարաւի ցօղեր:

565 Ի մէջ մորեաց բոյն առիւծուց
Եւ ի ընրանց դերբկաց ընձուց,
Ելցես յերկինս տեղիք սրբոց
ՅԾրուաղէմ ջոկ արդարոց»:
570 Յովհաննէս հեղ ձայն բարբառէր,
Արտասուագոչ ողբ յօրինէր.
«Նուաղեաց սիրտ իմ ի քո սէր,
Որ բաժանիս յինէն», — ասէր:

570 Ով դու սուրբ կոյս Աստուածածին,
Մայրդ կենաց ծնող բանին,
Ինձ մայր տւար ի ժամ խաչին,
Թէ յաւիտեան ընդ քեզ լինիմ:

575 Այժմ գնաս դու վեր յերկին
Եւ զիս թողուս աստ ի ստորին,
Աւաղ է մեզ որդոցս քոյին
Ի տարագրիւս վերստին»:

Եւ Միքայէլ պար յօրինէր,
«Արտացուցեր զմեզ ի քո սէր,

580 Հարսն երկնաւոր քոյր մեր,— ասէր,—
Քառամանեայ զորդու ունէր:

Զի գեղեցիկ են ստինըք քո,
Հոտ հանդերձի քո ի խնկոյ,
Գինով արբեալ լի ի լիոյ
Յարկեալ ծածկոյթ ի խնձորոյս:

585 Պօղոս խօսէր առ սրբուհին.
«Ո՛ւմ սպասաւոր,— ասէ լինիմ,
Զբերս ընծայից հեթանոսին
Ո՛յր նուիրիլ պատրաստ իցիմ:

590 Զպաշտպան լինելս ի մէնջ բարձեր
Զտունն աստուծոյ ընտրել գնացէր,
Զհարկս եղոմայ լքեալ թողեր,
Բնակ յերկինս քեզ գտեր»:

595 Իսկ պարբ սրբոց քերովքէին
Եւ գունդ հրեղէն սերովքէին,
Տեսեալ զկոյսն օրհներգէին
Եւ զհամբառնալն երանին:

600 «Ո՛վ է սա, որ ելեալ է
Իբրեւ զարե յառաւօտէ,
Որպէս լուսին, որ լրացեալ է,
Իբր զհիացումըն կարգեալ է»:

599 Յակոր եղբայրն տեառն Յիսուսին,
Իբր նախընդել սպասէ նմին,
Շուրջ զնովաւ ի պաշտօնին
Մունչելով հեծեծագին,

605 Ասէ. «Գութեաց ձայն ահագին
Միջի մերում ողբումն ուժգին,
Աշխար և լաց ողորմագին
Եւ զորոշիլս անհնարին»:

610 Իշխանութիւնք և պետութիւնք
Վերինք ահեղ հիանային.
«Ո՛վ է սա, որ ելանէ
Սպիտակացեալ յեցեալ յորդին»

- 3ռեթէոս մեծ իմաստին
 615 Կրկին կացեալ մէջ հանդիսին,
 Խօսէր հրաշխւք զտնտեսութիւն
 Աստուծոյ ի կոյսն խորհրդին:
- Աստուածաբան եղեալ նմին
 Ներբողինիւ հիանալին,
 620 Սքանչացեալ ի խորհրդին
 Պատմաբանէր ի հանդիսին:
- Տարածէր նա զխորս իմաստին
 Մինչև երկրորդ միտս նոցին,
 Եղև խորհուրդ փոխման կուսին
 Տեառն աստուծոյ նւիրելին:
- 625 Առ տնտեսութեան հիացմանին,
 Զոր և մատուց մեծ սրբուհին,
 Աստուածութեան տնօրէնութիւն
 Յիրմէ տեալ տեառն զմարմին:
- Քանզի պատմեաց նոցա կարգաւ,
 630 Որպէս աստուած այսր հանգեաւ,
 Տաճար բանին հօր կոչեցաւ,
 Հուրն աստուծոյ ընդ հողն խառնաւ:
- Որպէս անեղ նկարագրին
 635 Աստուծոյ հօր ծոցոյ որդին,
 Առ ի սմանէ զիւրն մարմին
 Եւ ձևացոյց զաստուած ի նմին:
- Զիարդ փառաց լոյսն անեղին՝
 Մարդ ի սմանէ յայտնեալ ծնանի,
 640 Որպէս ջամբողն տիեզերին՝
 Ի ստեանց սորա ճաշակ լինին:
- Զիարդ կրողն արարածին
 Խնամող տածող եղականին,
 Բազկաւ բարձեալ լինի սորին,
 Գգուիլ հաճի զերդ երկրածին:

- 645 Որպէս տիրողն հրաբուն սեռին,
Այլեւ ստորնոց բանականին,
Հնազանդ որդեակ լինի սմին,
Որ յամենայն ազգ ծանիցին:
- 650 Եւ թէ զհարդ հօր իմաստին
Առնու հրաման բանիւ սորին,
Համարձակիլ ի գործ հրաշին՝
Առ ի փոխել զջուրն ի գինին:
- 655 Ապա կարող խնամող էին
Ի շարշարանս մօր վշտակցի,
Յաւանդ տւեալ աշակերտին,
Մինչև ի մահ սպասել սմին:
- 660 Ոյր աղագաւ բանն անեղին
Հրաւէր այսօր ի կոշ ծնողին,
Դասուք վերնոց հրեղէն սեռին
Վեր համբառնալ զկոյս տիրածին:
- Ջայսքան հրաշից սքանչելին
Յայտնաբանեալ զխորհուրդ իրին,
Ի փառս անճառ սրբոյ կուսին
Յոռթէոս սրբոյ գնդին:
- 665 Մինչդեռ խմբեալ սրբազանին
Առաքելոց դաս երամին,
Քահանայապետքըն առաջին
Շուրջ զմարմնով աստուածակրին:
- 670 Քանզի համայն անդ ժողովին
Միահամուռ հոյլք երջանկին,
Որպէս ասաք նախ և կրկին
Զհաւաքումն ընտրեալ հօտին:
- 675 Անդ էր եղբայր տեառն բանին
Յակրբ արդարն և հրաշալին,
Պետրոս յաղթող վէմ հաւատին
՝ Ի աստուածաբան Յովհաննիսին:

680

Եւ ետ խօսից իւրաքանչիւն
Վայելչական հզօր բանին,
Փիլիսոփայից, ճարտասանին,
Ներգործութեամբ հոգոյն շնորհին:

685

Իմաստութեամբ տեառն Յիսուսին
Եւ դիտութեամբ հօր հզօրին,
Որք և զծորանս հոգոյն արբին
Յաւուր մեծի Պենդակոստին:

Աստուածաբան Յռեթէին
Կացեալ ի մէջ սուրբ հանդիսին,
Զխորհուրդս յայտնեալ զսքանչելին
Ի լուր բամից համայն խմբին:

690

Որք և լուանն սքանչանային,
Աստուածընկալ զնա անուանին,
Օրհնաբանող աստուածային
Յայնմ ժամու զնա կոչէին:

695

Որք և ապա հաստատէին
Ի պատիւ մօրն տեառն Յիսուսին.
Յաստուած բանող գերիմարտին,
Որ ներբողեաց զԱստուածածինն:

700

Մտեալ առաջի սրբոյ կուսին
Առհաւատչեա թողոյ մաղթին,
Զկենդանագիր սուրբ պատկերին,
Սուրբ և մաքուր իւրոյ տպին:

705

Որ և ընկալեալ զմաղթանս նոցին
Առաքելոց ընտրեալ զնդին,
Ետ ի նոսա փոխան փւրին
Սուրբ պատկերան մխիթարին:

Եւ յոյժ եղև նոցա խնդովին
Առաքելոցն ամենեւին,
Վասն սրբոյ կենդանագրին
Եւ պատկերի Աստուածածին:

- 710 Իսկ ընդ կատար տուր և առին
Շնորհաց վերին և ներքնային,
Պատմաբանից ներբողինին,
Զոր ընծայեաց աստուած հոգին:
- 715 Եւ ընդ տալոյ երկրիս երկնին
Զերախայրիս զծնող բանին,
Առնուլ անտուստ փոխան նորին
Զնկարակերտ ձև կիպարին:
- 720 Ընդ այս և ձիրս անըննելին,
Զոր ի տեառնէ մեզ ընծային,
Այլ թէ չէաք արժան սմին,
Բայց ի տեառնէ պարգև լինին:
- Որ ի վաղուց դարուց նախնին
Պահէր մարդկան յուսով ի լին,
Զտնօրէնութիւն ծննդեան փրկչին
Առիթ պատճառ Աստուածածինն:
- 725 Եւ ընդ յանկել այսմ շնորհին
Սուրբն առանդեաց զմաքուր հոգին,
Անտարակոյս յորդոյ ձեռին՝
Քրիստոս աստուած Յիսուս փրկչին:
- 730 Ոչ ըստ բնութեան մեր ցաւագին,
Զի մասն չէր ինչ ախտային,
Այլ գերագոյն մեր մարդկային
Շնորհս պարգևեալ աստուած նմին:
- 735 Որպէս ծննդեանն անդրանկին
Յաւք և երկունք ոչ տիրեցին
Նոյն և ի ժամ հոգէվարին
Կիրք բնութեանն ոչ տանջեցին:
- 740 Ետ զհոգին յորդոյ ձեռին,
Միայն մնաց տուփըն խնդին,
Եկեալ մաքուր դասք կուսանին
Բարձեալ եդին դատիկունին:

Ապա դասուց սրբոց կուսին
Յաշակերտաց դասն խառնին,
Ջաստուածաբարձ տաճարն բարձին,
Օրհնհրգութեամբ սաղմոսէին:

745 Յոէթէոս մեծաւ ձայնին
Ընկերացաւ սրբազանին,
Եղանակաւ հրգարանն՝
Ներբողենիւ և նուագին:

750 Եւ ձայնակցեալ դասք երկնային
Ընդ երջանիկ սուրբ գումարին,
Սխրահամբաւ պարք անմարմին
Եղանակեն զերգս կուսին:

755 Յորմէ քաղաքն դղրդին,
Հրէականացն սրտմտին,
Յանդգնութեամբ անդ գումարին
Շլաշութեամբ անդրէն հարին:

760 Եւ մերձեցեալ մաքուր կուսին
Կոյսն Յովհաննէս մօր անեղին,
Պատեաց մարուր կտաւօք ինքնին
Ջաստուածաբնակ մարմին կուսին:

Այլև հղեալ ի դազաղին
Ջպսակն ոստոց բրաբիոնին,
Ձգեալ ժածկոց Յովհաննիսին
Ջպատանս տեառն կենարարին:

765 Իբր պատիւ այն Յովհանին
Ընդ առաքելոցն այլ աւելին,
Քանզի կոչեալ էր նա որդի
Աստուածամօր Մարիամին:

770 Պետրոս ոմէր չիւրում ձեռին
Ջպատկեր սրբոյ Աստուածածնին,
Եւ Յակոբոս եղբայր փրկչին՝
Ըզտէրունեան նշան խաչին:

Թովմաս ունէր զբուրվառ խնկին
775 'ի այլ առաքեալքն երգս երգէին.
Բարձին ի յուս ամենեքին
Սուրբ առաքեալքն՝ զկուսին մարմին:

Առեալ տանին զմայր միածնին
Ի հանգստեան դիր տապանին
780 Եւ լսէին զձայնս հրեշտակաց,
Որք պար առեալ օրհնեբոցէին:

Պետրոս զելիցըն սաղմոսին
Սկսաւ ասել ըստ խորհրդին,
Յեղանելն Իսրայելի յԾգիպտոսին
Եղանակէ զալէլուին:

785 Միաձայնեալ սրբոյ գնդին
Առաքելոց դասք երամին
Եւ կուսանաց մաքրագունին
Ընդ երկնացնոց խըմբից վերին:

790 Լսել ողբով զերգս սաղմոսին,
Քաղցր և անուշ եղանակին,
Յորմէ քաղաքն դրղրդին,
Հրէականքն սրտմտին:

Յանդգնութեամբ անդ գումարին,
795 Շլաշութեամբ հարեալ լինին,
Զի գիշահանձք էին բնաւին
Եւ տիրասպանք ամենեկին:

Մինն, որ անունն Սոփոնիայ
Մինչ ի դադաղն լրբենայ,
Սուր հրեշտակին անդ մերկեմայ,
800 Զեռքն յարմընկացն մնայ:

Զայնէր Պետրոս. «Ո՛վ չար ոգիք,
Ազգ անհաւատք և խստասիրտք,

783 A «Իսրայելի» բառն այստեղ թվում է ավելորդ:

Ժանդախորհուրդը և թերամիտք,
Մինչև ցո՞ր վայր յայտ յամառիք:

805

Զիարդ ոչ բուրբովին
Զղշայք յանգեղջ ձերոց սրտին,
Այլ կայք հետեալք հետ սատանին,
Որ հայր է ձեզ գործովք շարին»:

810

Ասէ Պետրոս հրէից ազգին.
«Դարձիք առ տէր սրտիւ ի լին,
Խոստովանել զմեզս ձեր անձին,
Հաւատացէք յԱստուածածին:

815

Սուրբ կոյս բաղցր է ի բարին,
Գթայ ի ձեզ տիրով սրտին,
Զի բարեխօս է մարդկային
Առ միածին խաչեալ որդին»:

820

Յայնժամ գոչեն մեծաւ ձայնին
Զխաչեալն աստուած խոստովանին,
Առ տիրամայրըն հառաչեն,
Ի յօգնութիւն ինքեանց կոչեն:

825

Պետրոս բանիւ սաստէ ցաւին,
Փոյթ ի յաշացըն փարատին,
Զհատեալ կախեալ ձեռ դագադին՝
Յարէ դարձեալ ի նոյն մարմին:

830

Աստ սքանչելիք բազում լինին,
Զի որք խրոխտ փքով եկին,
Յափշտակել զկուսին մարմին,
Զի մի փառօք մեծաբեցին:

Նոյն և ինքեանք զոր խորհէին,
Առին պատիժ կրկին կրկին,
Որպէս յառաջ քան զմահ կուսին՝
Ի սուրբ կուսէն պատուհասին:

Զոր և ցուցից զփոքրն ի բազմին
Եւ զսակաւն ի յուլովին,

835 Զի շարշարանս բազումս ցուցին
Մնօղ ի սրբոյ տեառն Յիսուսին:

 Կայիափայ 'ւ ազգն հրէին
Վիշտս և վտանգս նմա տալին,
840 Զի ոչ թողուլ յոյժ ջանային
Գնալ ի սուրբ գերեզմանին:

 Եւ այլ տեղիս տնօրինին
Տեառն Յիսուսի մերոյ փրկչին,
Զի միշտ կանխէր բաղձամբ սրտին,
Աղօթս առնել ի սուրբ տեղին:

845 Զի ի սպանանելն Յակոբոսին՝
Եղբօր տեառն Յիսուս փրկչին,
Երթեալք ի տունն հուր հարին,
Յորում բնակէր մայր կենսատուին:

 Շրջապատեալ հուրն զհրէին
850 Կիզեաց եօթն այր ի նոսին
Եւ զԱննայ, զԿայիափայ,
Զբահանայապետ անուն Ղևին:

 Եւ տան սրբոյ Մարիամին
Վնաս չեղև ամենևին,
855 Որք երկուցեալք ոչ իշխէին
Համարձակել յանձն կուսին:

 Եւ ի յաւուր մկրտութեան
Խուժադուժաց ազգ հրէին
Գնացեալ հրոսակք Յորդանանին՝
860 Ըմբռնել զկոյսն ընդ Յոհանին:

 Իսկ հրեշտակին, առեալ զնոսին,
Եդ ի յայնկոյս Յորդանանին,
Եւ հրէիցն անցել կամին՝
Այրս քսան կորեալ բնաւին:

865 Եւ ի յաւուրս համբարձման
Տեառն ի լերինն Զիթենին,

Յախուռն քարամբք յարձակէին
Հրէից՝ հասնալ առ սրբուհին:

870 Որք և զմիմեանս հարեալ քարամբք,
Արս հիսուն անդ սատակին.
Այսքան հրաշից և այլ աւելին
Յառաջ եղեալ ննջման կուսին:

875 Եւ զի շէր յանկ ի սոյն կարգին
Պատմարանեալ վասն այս սքանչելին,
Այլ զի դէպ շեղե նախկին
Կամս աւկամայ աստ պատահին:

880 Դարձեալ սկսայց ի նոյն հրաշին
Զոր ի նրնջմանն կատարին,
Յետ կուրութեան հրէից ազգին
Եւ հատման ձեռին Սոփոնիային:

Բազումք անդէն հաւատային
Քարոզութեամբ Պետրոս վիմին,
Զորիստոս աստուած խոստովանին,
Մկրտութեամբ լուսաւորին:

885 Ազգ հեթանոսք և հրէին
Զկոյսն սուրբ դաւանէին,
Այլ և բորոտք և ախտաժեսք
Սուրբ պատկերուն տեառնազրէին:

890 Այլև ի իւղով օծանէին
Մարութ ձեռք առաքելին,
Որք առժամայն բժշկէին
Յախտից քաղմաց ազատէին:

895 Մինչև համբաւ մեծի հրաշին
Ծագմամբ լուսոյն ընթանային
Ի յամենայն Հրէաստանին,
Նշանքն եղեալ ձեռք կուսին:

Իսկ զմեռեալդ ի կենդանին
Տարեալ ի կէտըն պայմանին,

900

Զոր վաղագոյն տեառնէ յայտնին՝
Զորն անուանեալ Գեթսամանին:

Ընդ համբառնալ զօրոց վերին
Ի խորափիտն ամփոփէին,
Ըստ տիրական պատուիրանին՝
Ըզգուշացեալ պինդ պահէին:

905

Յաւուրս երիս անդրէն գալով
Ուստի երգոց ձայն լսելով,
Ապա լռեալ զտեղի կալով
Հնչիւնքն ձայնին դադարելով:

910

Այն ինչ հոգւոյն տնօրինեալ
Բարդուղիմեոս յետոյ հասեալ՝
Այն որ ի Հայս շրջագայեալ
Եւ ընդ Թովմայի Հնդիկն գնացեալ:

915

Առեալ ի սուր մեծի նստէր
Եւ հղկելով զանձն կոծէր,
Յողջոյն սուրբ մօրքն փափաքէր,
Ընդ օրհնութիւնսն տոշորէր

920

Եւ զառաքեալսն բռնագրօսէր,
Ջաստուածային զանձն հայցէր,
Զմարմինն օրհնեալ կուսին ժտէր,
Զի յոյժ փափաք առ նա ունէր:

Ընդ որ առաքեալքն տրամէին
Խորհեալ գնդից մետասանին.
«Բացցուք զգանձն աստուածային,
Առ ի լնուլ զիղձս սրտին»:

925

Փոքու հօտին համայգումար
Սուրբ կուսանօքն խումբ առեալ,
Բացին զտապանն ամէնօրհնեալ
Եւ զկտաւիսն անդր գտեալ:

930

Ո՛վ հրաշալին ելանելոյն
Յառագաստէ ստեղն ծխոյն,

Հմուտ, կնդրուկ, փոշեաց յիւղոյն
Յիւղեփեցեաց մաքուր խնկոյն:

935 Վաթսուն գոլով վահանաւորք
Ընդ արքային մեծի գահոյք,
Հմուտ մարտի պատերազմողք
Օղականացն արհաւրաւորք:

940 Եւ ի սենեակ մօրն վերին՝
Գեր ի վերոյ վեհ եթերին,
Ի պատրաստեալն հայրենին՝
Յանտես յանլուր յանբերելին:

Կրկին ի սուր նա մտանէր,
Որ և մարմնոյն ոչ ժամանէր,
Խղճիւ մտացն աւաղէր
Եւ անձամբ զանձն ըստգտանէր:

945 Վասն այս է՛ր տուք Բարդուղէմին,
Զի լուաւ զօրհնեղութիւն,
Զոր հնչէին դասք սրովբէին
Եւ ոչ զդին ի տապանին:

950 Մինչ ի հոգոյն բան ազդեցաւ՝
Գնդին սրբոյ յայնժամ ցուցաւ,
Նշխար փայտին, որ շնորհեցաւ
Բարդուղիմայ վիճակեցաւ:

955 Ետուն նմա մխիթարիչ,
Առ ընկալաւ իբր սփոփիչ,
Երկրպագեաց սուրբ համբուրիւ
Զտրտմութեանցն ապաքինիչ:

960 Անդրէն յօքունց ախտաժեւաց
Հրէաստանէն և որք յեկաց,
Անդորրութիւն զտան վշտաց
Սուրբ պատկերէն և յօժանաց:

943 A աղաւաղէր:

948 A Այս տողին կցված է ևս մի տող՝ «Ըստ ըազմութեան առաքելին»:

Ապա զեղբարսն ողջունեալ,
 Ընդ արեւելս կրկին դիմեալ,
 Ի վիճակն պարտ էր գնալ,
 Յոր Սանատրուկ զԹադէ սպանեալ:

965 Զանդրժելի գանձն բարձեալ
 Ընդ միջերկրայս տարակացեալ,
 Զվիճական այնու զանցեալ
 Ընդ մոգաստանս գնայր դարձեալ:

970 Մինչ ի բաղաքն Խորասան
 Աթոռ նոցա արքայութեան,
 Ուր և շիջոյց զկրակարանն
 Եւ լոյս կանդեւեաց հրոյն փոխան:

975 Եւ զլուսատուն մարդկան հոգւոց
 Արեգականն ընդդէմ կացոյց՝
 Զակն լուսոյ այս փորտածոյս
 Երեք ժամաւ խաւարեցոյց:

980 Բայց ասլառածն անպտղական
 Ոչ անեցոյց ըստ սուրբ սերման,
 Միայն յութից որք ընտրեցան
 Եւ ի նմանէ մկրտեցան:

Նոքօք դառնայ ի նոցանէ,
 Կրկին ի Հայս դարձեալ դիմէ,
 Ի Գողթ գաւառն մտանէ,
 Զբազումս ի տէր դարձուցանէ:

985 Զանրիծ հաւատն անդ հաստատեաց,
 Զարսն նոցա զլուխ կարգեաց,

965 A Զանդժրելի:

973 A հոգոյ:

975 A փորտածոյս:

976 B ժամու:

982 B դարձից: Զ. Ալիշանը ծանոթագրել է, թէ պիտի «դարձեալ» լինի:

985 B Զամրիծ:

986 A Զօրսն:

Առեալ զոմանս, որք ի կանանց,
եկեալ յերկիրն Անձևացեաց:

- 990 Առ ի համբաւ քարի միող,
Յոր էր աղուեսն ամրացեալ յորջ,
Ընդ Անահտայ բնակէր տիկնոջ՝
Մարդախոշոշ կռանագոշ:

- 995 Քանզի փայլակն ի վայր անկեալ,
Ի Դարբնաց քրայս արկեալ,
Զդեղն, որ կազմէր ախտիւ խառնեալ,
Յուռութ ռւտնս մակարդացեալ:

- 1000 Որպէս և ճառն պատմական
Ուսուցանէ մեզ միաբան
Եւ զվիշապին հին մեքենայն
Կիպրիանոս այր սրբազան:

- Զի հին վիշապն անդ բունէր
Եւ կռանին համաձայնէր.
Բախմամբ թնդմանն ահ արկանէր,
Զնոսա յուշոյ միշտ խափանէր:

- 1005 Իսկ արք տեղւոյն զերդ խելագար
Անդ խոնէին դեգերաբար,
Թարախածոր առեալ ծրար
Եւ կոչէին Դարբընաբար:

- 1010 Յայս վայր հասեալ առաքելոյն
Փութով խափան առնէր գործոյն,
Դարբնական բախման թընդոյն,
Որ զործօնեալք էին նիւթոյն:

Եւ զդիցամայրն խորտակեաց,

991 A Անախտա:

992 A կռանագոջ:

993 A ի շիր:

1001 A Զհին: զբունէր: B անդր:

1005 A տեղոյն:

1006 A խառնէին:

1015 Զրոնութիւն բակեալ դիւաց,
Քարանձաւէն յայն հալածեաց
Եւ սրբութեան տեղիք գործեաց:

1020 Իսկ շար զինորքն գունդ առնէին
Ընդ հիւսիսի բարձրու լերինն,
Վիրգս ի վիմացն յայն հոսէին,
Ընդ այն և ճիշա արծակէին:

Բարդուղիմեայ զայն տեսանէ,
Բարձրաւանդակ լեառն նլանէ,
Խաչ փոքրիկ անդ օծանէ,
Քարիւ մի զքաջքն արտահանէ:

1025 Զոր և յետոյ սուրբն Գրիգոր
Զարձանն առեալ պահէր ընդ իւր,
Մինչ Տրդատայ մահուանն յաւուր
Երեսին եղ պսակաւոր:

1030 Կանգնէ և անդ կրկին նշան
Յատորոտով լերինն յայն,
Կարկառակոյտ մի սուզական
Զեռնադրեալ ի մեծ արձան:

1035 Եւ ի տեղին յոյժ լեռնափակ,
Պատեալ վիմօք երկնադիտակ,
Իսկ մէջ ծոցոյն հարթայատակ,
Հոսանահերձ վհաքատակ:

Զի Տիգրիսին մեծի կայլակ,
Որ յԱդենայ քառորդ վտակ,

1017 B զինուորք:

1018 A հիւսիսոյ բարձրաւ:

1021 B Բարդուղիմոս:

1029 A Կանգն:

1033—1048-րդ տողերը հրատարակված են Ղ. Ալիշանի «Այրարատս-ում»
(1890, էջ 393):

1037 A կալակ:

- 1040 Յասմամբ խաղայ միշտ համարձակ
Ընդ գոգ հովտին արագ-արագ:
- Մերձ Կանգուար մեծ ամրոցին,
Որ Ազոուուց բար կոչէին,
Ուստի լերանցն ջուրք հոսէին
Եւ գետանան ընդ գարնան մասին:
- 1045 Գայ զառիվայր առապարին,
Անցեալ ընդ հիմն տաճարին,
Ընդ արքային շիրմով պարին,
Ապա ի մի խառնեալ յարին:
- 1050 Հիմն արկանէ անդ հաւատոյ
Ընդ խորանին կառուցելոյ,
Շինեալ յանուն կուսին հոգւոյ
Եւ պատկերին, որ անդ սրբոյ:
- 1055 Արդ առաքեալ Բարդուղիմին
Կառուցանէ իւրով ձեռին,
Փոքր ձևով զեկեղեցին
Եւ անուանէ Աստուածածին:
- 1060 Զտեղին Հոգւոց վանք անուանէ
Եւ ի քրեքս կանայս յանձնէ,
Խրճիթ փոքրիկ նոցա շինէ
Եւ ի դերբուկս բաժանէ:
- Կացուցանէ զքոյրն Յուհատայ՝
Մայրպետ կրօնից՝ գլուխ նոցա,
Զքոյրն Օրմզդայ և Մաքովտրայ
Եւ զայլ կանայսն յետ նոցա:
- 1065 Եւ ինքն ի Հայս դարձեալ երթայ
Ի յՈւրբանիս բաղաք Բարմայ,

1041 A Կանգաւոր: B Կանգնաւոր: Ուղղում ենք ըստ Մովսէս Խորենացու:

1043 B հոսին:

1044 B 'ստ:

1048 A յայրին:

1051 A հոգայ:

1057 A Հոգոց:

1060 A դերբուկ:

Որ այժմ Աղբակ կոչի նորա
Յովրիանոս անուանի նա:

1070 Վասն սրբոյ առաքելոյն,
Որ շարշարեալ եղև ի նոյն,
Քրով հարեալ յերկարագոյն,
Ըստ այսմ կոչի անուն տեղւոյն:

1075 Զի զկսկիծրս դառնագոյն,
Զոր ոչ կրեաց մարդ որ զնոյն,
Զի անդ հանաւ մորթ ի մարմնոյն
'Ի ինքն շրջէր կենդանագոյն:

1080 Եւ անդ հաւատս ընծայեցաւ
Եւ նորահրաշ ինչ յայտնեցաւ,
Զի ապամորթ մարդն կեցաւ,
Ապա սրբով կատարեցաւ:

Իսկ Մարիամ առանձնացեալ
Քոյր Յոյսհատա՝ Յուսկանն կոչեցեալ,
Յայն կոյս դետինն մեծի անցեալ,
Առ ոտս փոքու վիմի կացեալ:

1085 Որ և անդէն յուսով մեծաւ
Անմարմնաբար ճգանց տարաւ
Եւ ինքն ի նոյն մարմնով մեռաւ
Եւ անտանօր իսկ թաղեցաւ:

1090 Եւ նա զԱննա քոյրն իւր կացոյց
Յետ իւր տեղոյն խրատող նոցունց,
Որ և նորին զվարս անմարմնոց
Տըւեալ յետնոցըն ապացոյց:

1067 Ա. Ախրակ:

1072 Ա տեղոյն:

1074 Ա որ մարդ:

1076 Բ 'Ի չիք:

1078—1081-րդ տողերը Ա-ում այսպես.

Ապա սրով կատարեցաւ

Եւ նորահրաշ ինչ յայտնեցաւ,

Զի ապամորթ մարդն կեցաւ:

- 1095 Ինքն հետեւեալ սրբոց հետոց,
Շինեալ խրճիթ աղօթանոց,
Գազաթ վիմին ամրակառոց,
Որ և կոչի բար Դաբբնոց:
- 1100 Եւ է հանդէպ մենաստանին,
Դիմաց դռով արեւելին,
Անդ աղօթէր թիկանց վիմին
Բաղձամբ սիրոյ տեառն արարչին:
- Փոքու աւուրբր անդ ճգնեցաւ:
Եւ ի նոյնում կատարեցաւ,
Օրմզդադա՝ քոյր Մարթայ,
Փոխան նորա գլուխ կացաւ:
- 1105 Նոյնպէս միմեանց յաշորդ գոլով
Հարստակրօն յաւուրս յոլով,
Մինչ ի վերուստ երեւելով
Այցելութիւն տեառն հոգոյ:
- 1110 Զբազումս ի տէր մկրտէին,
Զախտս ի մարմնոց փարատէին
Եւ երթալով տեառն երթալին,
Օրբստօրէ յաւելուին:
- 1115 Մինչ ի յաւուրբս Գրիգորի,
Սրբոյն մերոյ իռնաւորչի,
Վանք մեծափառ ըստ արժանոյն
'ի արհիական աթոռ կարգի:
- 1120 Շինէ զտաճարն սուրբ Սիոն
Զեղբայրանոցս ի բնակութիւն,
Բայց զհաստեալն յառաքելոյն
Ոչ նոր փոխեաց, այլ կաւ ի նոյն:
- Այլև զդասս սլաշտօնէին
Կարգեաց ի փառս աստուածային,

1115 A արժանոյն: Բառի վերջին մասի վրա ուղղված է ի:

Օրհնել զհայր և զորդին
Զամենասուրբ աստուած զհոգին:

1125 Քահանայից սարկաւազին,
Դպրաց ընդ նոյն գղերիկոսին,
Զանլոնի փառս հընչէին
Նրորորդութեան ի միասին:

1130 Առ ի գտանել զողորմութիւն,
Ոյք ըղձային բաղձամբ սրտին,
Ի ձեռն սուրբ Աստուածածնին,
Յորոյն անուն ուխտն կանգնին:

1135 Որ բարեխօս է բոլորին
Ազգի համայն քրիստոնէին,
Առ միածին Յիսուս որդին՝
Փրկել զծնունդ աւազանին:

1140 Ընդ նմին և սուրբ Բարդուղիմին
Տեառն Յիսուսի առաքելին
Եւ սուրբ Գրիգոր Լուսաւորչին
Զմեզ խառնէ առ Քրիստոսին:

Նոցին կցորդ Թադէոսին,
Որ առաքեալն է Հակազնին,
Որով առաք զհատ մարգարտին՝
Զհաւատն ուղիղ՝ շնորհիւ սորին:

1145 Այս շորեքումբք վիմօք հաստին
Շինուածք մերոյ սուրբ հաւատին,
Ծննդեամբ սրբոյ Աստուածածնին,
Որ է միջնորդ մեղ առ որդին:

1150 Այլե արքամամբ հոգոյ շնորհին
Քարոզութեամբ Թադէոսին,
Զոր վիճակեալ առաքելոց
Հայք մասն եղեալ Թադէոսին:

1146 Ա հօտին:

1155 Այլև երկունք մեր լուսատուին
Չարշարանօր մասն երկոքին,
Երիւք հնգօք ամօք ելին
Կրեաց ընդ տեառն զպակաս նորին:

1160 Որով վշտօք իւրոյ անձին
Զմեզ ի խորոց եհան ներքին,
Ընդ տեառն լծեաց պատուիրանին,
Արար հաղորդ անմահ բանին:

Նոյն և սրբոյ Բարդուղիմին,
Որոյ պատճառ եղեալ սորին
Կենդանագիր սուրբ պատկերին
Եւ շինութեան սուրբ տաճարին:

1165 Այլև Ներսէս, որ վիճակեաց
Ըզսուրբ աթոռն իւր հայրենեաց,
Եղեալ տեղիք հոգոյն շնորհաց,
Սիւն և կանգնիշ Հայաստանեաց:

1170 Զի զաւանդեալ հարցն առաջին
Զուխտ կտակի պատուիրանին,
Սա նորոգէ դարձեալ կրկին
Կարգ և կանոնս մեզ՝ հոգով լին:

1175 Շինեալ տաճար անթւելին
Ընծայարան զենման գառին,
Փռտկայս, պանդոկս և հիւրանոց
Լինիլ հանդիստ վտանգաւորին:

1180 Արդ ընդ սոցա թրոց բազմաց,
Որ և սովաւ եղէն շինած,
Մինն ի բազմանց սա է կազմած,
Որ Հոգեաց վանս է նախճայնած:

Սա զախտակրեալսն անդ ժողովեաց
Եւ ախտաբակս հաստատեաց,
Որք անդ կացցեն սիրով կամաց,
Առցեն շնորհս օանանս:

1185

Որք անհոին քստ Նաւատոյ
Զտոռղջութիւն ախտից մարմնոյ,
Մինչև ցայսօր տայ քստ յուսոյ
Զնիւթական քստ աննիւթոյ:

1190

Եւ կայ, մնայ յամեալ ի նմին
Հրաշագործ նոյն զօրութիւն,
Որով բազում բժշկութիւն
Լինի ախտից ու ուրախութիւն:

1195

Անուամբ սրբոյ Աստուածածին
Կենդանագիր իւր պատկերին,
Ոչ սակաւուր մարմնով բուժին,
Այլև հոգով լուսաւորին:

1200

Որք դան յուսով հաւատալին
Ունել միջնորդ զԱստուածածինն,
Զամէնօրհնեալ ծնօղ բանին,
Զմայրն աստուծոյ զկոյս տիրուհին:

1205

Փառաւորէլ զհայր և զորդին
Զանմեկնելի աստուած հոգին,
Այժմ և յանկէտ յաւիտենին,
Որ միշտ օրհնի յէականին:

1210

Եւ զի զիտել մեր զայս պարտին
Յետ սուրբ ծննդեանն Աստուածածին,
Ի ծնօղաց իւր պանծալի
Երեք ամաց եղև բերին:

1215

Ընծալիւր պատարագին
Եւ մատաղօր ի տաճարին,
Անդէն դարձեալ ի տուն տանին
Նի յամէն տարի տաճարն բերին:

1208 A յականին ամէն:

Մինչ ի ընուլ Լօթեանց ամին,
Այլ ոչ տարան յիւրեանց տնին,
Այլ սնանի ի տաճարին
1220 Սուրբ և մաքուր առաքինին:

Սղատաւորեալ հրեշտակք նմին,
Իջեալ յերկնից հոյլք անմարմին,
Մանանայիւ կերակրէին,
Որ բերէին զայն իսկ նոքին:

1225 Եօթն ամաւ ի տաճարին
Բնակեցաւ սուրբ աղանին,
Եւ ի ընուլ Լօթնից կրկին
Չորեքտասան ամաց նմին:

Ետուն Յովսէփի սլահայանութիւն
1230 Ըստ օրինաց Իսրայէլին,
Ամիսս երիս առ նա լինի
Կնքեալ ամբողջ սուրբ տօմարին:

Ապա հրեշտակ Գարբիէլին
1235 Հրաման առնու աստուածալին
Եւ աւետիս տայ սուրբ կուսին՝
Մնանի ի քէն աստուածորդին:

Եւ ի լսել զձայն աւետին՝
Իջեալ առ նա աստուած հոգին,
Կաղմեաց զահոյս թաղաւորին
1240 Հօր անեղի որդոյն մեծին:

Եւ յինն ամսեաւ լրման նորին,
Հնդից աւուրբք յաւել որդին,
Բնակէ յարգանդ սրբոյ կուսին,
Հնդէտասան ծնանի յամին:

1245 Եւ համբարձման տեսուն ի յերկին
Քառիւր տասամբք ութ աւելին,
Ամօք լցեալ աշտան էին
Մնօղի բանին կենարարին:

1250 Եւ ի ննշման մօր աննդին
Վաթնուն ամօք բովանդակին,
Յորում աւուր ծնեալ նմին.
Քսանեհինդ աւի ամսին:

1255 Ի նոյն աւուրն վախճանի
Գերապայծառ մայր միածինն.
Եւ էր հասակ սրբոյ կոսին
Երկայն, սպիտակ, շնորհիւ ի լին:

1260 Աստուածային օթարանին
Երկայն մատունք գոլ հրաշալին,
Այսպէս զարման դեղ գովելին,
Որ չէ եղեալ ազդ մարդկային:

Ո՛վ անբաղդադ հրափայլ դիմին
Գերամաքուր տիպ պատկերին,
Զկրօղ էիցս ամենայնին,
Տարեալ պահէր յիւր սինեկին:

1265 Որք ընդ աղօտ ակնարկէին
Հոյլք սրովբէից գոնեայ մասին,
Նկատել ի լոյս աստուածային,
Զոր կոյսն սուրբ կրեաց յանձին:

1270 Սա զբովանդակ լուսոյն արփին
Տարեալ եղև յիւր յարգանդին
Եւ զփրկութիւն մեզ շնորհողին
Մնաւ որդի զբանն անմարմին:

1275 Որով մեզ յոյս տուաւ կրկին
Դառնալ անդրէն առ հայրենին
Եւ ժառանգել զանճառ բարին
Ի հանդերձեալ դատաստանին:

1280 Արդ ամենայն եղեալ բարին
Որով տուաւ մարդկան ազին,
Դուով պատճառ կոյսն հրաշալի
Առիթ կենաց մեր ամենին:

Որպէս ծնունդ հրաշիւք կուսին
Նոյնպէս անունդն բարեօք ի լին,
Այսպէս փոխումն յերկրէս յերկին,
Դասիւք զուարթնոցն վեր ամփոփին:

1285

Այսու պարծիմ ես նշանաւ,
Որ ի կայիս մեր հանգուցաւ
Իւ արքայիս գերեզմանաւ,
Որ հանգուցեալ ընդ հովանեաւ:

1290

Եւ կայ առցէ բանս աստանօր,
Որ ի պատիւ աստուածոյն մօր,
Ի փառս հոգոյն որդոյ և հօր,
Երբորդութեանն համազօր:

1295

Ով սրբուհի կոյս Մարիամ,
Վիմածին լեառն և սուրբ խորան,
Ի զալստեան կրկին անգամ
Քոյոյ որդոյդ ի դատաստան,

1300

Հանդիսանալ ընդ քոյ յայնժամ
Բարեխօսել վասն մարդկան,
Կրկնեա՛ և ծունր մի անգամ
Վասըն հիքոյս մեծ կործանման:

Մի ընդ անյուսիցն խարխափման
Խաւար մտօք մոլորական,
Դարձայց դիմօք պատկառական,
Զի հաւատով ի քեզ յուսամ:

1300

Այլ ընդ նոսա, որք զղջացան
Եւ գթութիւն դարձեալ զտան,
Գիտ զհոգիս վըտարական
Եւ միածնիդ կալ յանդիման:

1310

Բախմամբս զգուռն արքայական
Հայցեա բանալ զողորմութիւն,
Եւ բարձրացի փառք տէրութեան
Ոնդ փոքրոգոյս մեծ փրկութեան:

Առ որ գոչեմ հառաչական
Ի խոր սրտէ աւաղական,
1315 Զխոցեալ հոգիս բիւր ցանկութեամբ
Առաղջացո՛ւ անապական:

Զանկեալ գերիս հոգով յանցման
Կանգնեա՛, սուրբ կոյս, քոյին անուամբ,
1320 Էեր և միջնորդ ինձ գթական
Առ միածինդ անմահ արքայն:

Զի զհոգիս թշուառական
Ազատեսցէ իւրով արեամբ
Եւ զկործանեալս շարեօք յանցման
Կանգնէ յուսով ողորմութեան:

Սաստիկ կեղով բորոտութեան
Սպառեաց զմարմինս անեզրական:
1325 Զար թշնամին կորըստական,
Որ ի յանդունս ունի դարան:

Տպաւորեաց հոգիս զբնականն
Գէջ ախտութեամբ անյագական,
1330 Այլ աղաչեմ զկոյսդ մաքրական՝
Տա՛լ սպեղանիս հոգոյս դարման:

Եւ զանուղղագործ զազրական,
Որ զՍողոմ արար կործան,
1335 Տնկեաց ի յիս գոլ բնական,
Տանջել նովիմբ անեզրական:

Փարեալ զոտիցդ անապական,
Խնդրեմ զդեղ հոգոյս խոցման՝
Կաթիլ միայն քո կուտութեան
1340 Ինձ փրկութեան է բաւական:

Ախտից մեղաց զիս օթարան
Արար տեղի և կայարան,

Եօթնից շարեաց հոգոյ մահուան
Մպանեալ զանձինքս կրկնական:

1345

Նոր փառութեամբ հպարտական
Եւ նախանձու հոգոյս այրման
Եւ բարկութեամբ զայրացան՝
Եղէ ես շար քան զդազան:

1350

Ո՛վ տիրամայր անապական,
Առիթ կենաց ինձ փրկութեան,
Զերիս շարիս հոգոյս յանցման
Քաւեա քո սուրբ որդոյդ արեամբ:

1355

Սոյնպէս զմարմնոյս մասունս մահուան
Զորից կերպիցն եղէ դարան,
Ծոյլ ի բարիսն յամառութեամբ
Ազահորկոր սրտընկական:

1360

Մատիր յաղերս կոյս Մարիամ,
Առ ծնեալդ ի քէն աստուածըն բան,
Տալ սպեղանիս խօթեանց յանցման
Հոգոյս մարմնոյս որ գործեցան:

Երես ի վայր կամ ի յանկման,
Թըլով լցեալ է Յորեան,
Ըստ այսմ ճառիս որ զբրացան
Հոլով յաւարտ կատարեցան:

1365

Ղօղեալ մեղօքս գոլ ի սուղման
Գնամ յատակս կորրստեան,
Զմայրդ կենաց իմ յարուցման.
Հայցեմ լինել ինձ օգնական:

1370

Առնել հնար ինձ վերածման
Ի խոր մեղացս, որ կամ թաղման՝
Տալով հիքոյս ուժիւտ փրկան,
Զյոյս միածնիդ ազատութեան:

1375

՚ի իւեալ բանիս հառաչական
Զկոյսդ աղաչեմ սրտիս բաղձամբ,
Վասն ճառիս նախնոյ շարման
Տամբք հարիւրից գոլ ի լրման:

1380

Որոյ յարուն ներսէս անուն
Առիթ գոլով յառաջագոյն,
Յերուսաղէմ խնդրեալ նորուն
Տունըս հարիւր յարեաց ընդ նոյն:

1385

Րոտմամբ սիրոյ սրբոյ կուսիդ
Յաղթեալ անգա ի խոյզ բանիս,
Կազմել թոշակ հոգոյս վիրիս
Լոկ ի յանունս գոլ պսակիս:

1390

Այժմ դարձեալ ընդ նոյն շաղին
Նրգս երգեցից մօրդ անեղին,
Քեզ պատմաբանս ըստ այբուբենին
Ինձ ողբ և ձայնս լալագին:

1395

Աստուած հանուրց դոյականին,
Հայր անսկիզբն և անքնին:
Խորհեալ ընդ անեղ իւր ծոցածինն
՚ի ընդ փառակից աստուած հոգին՝

1400

Բան նորասբանչ զարմանալի,
Որ չէր եղեալ բնաւ յերկրի,
Զի արարիչն ամենայնի
Զգենու մարմին հողեղիմի:

1389—1392 A Այս տանը իբրև խորագիր ձեռագրում գրված է կարմիր թա-
նաքով:

«Գրնա,— ասէ,— Գարրիէլին,
Տուր զաւետիս սրբոյ կուսին,
Թէ գալ աստուած քանն անմարմին,
Մնանի ի քէն անճառելին»:

1405

Դասուք վերնոց հրեղէն զնդին
Հոգին աստուած անզննելին,
Շաշմամբ ահեղ և մեղմագին
Եկաւորի առ սրբուհին:

1410

Եւ ընդ ասել Գարրիէլին.
«Քեզ հովանի է սուրբ հոգին»,
Նոյնժամ մտեալ աստուած հոգին,
Տեղ պատրաստեաց իւր էակցին:

1415

Զայնմ պահու Յիսուս որդին
Բնաւորեցաւ յարգանդ կուսին
Եւ ձևացոյց իւրն մարմին
Միտք և հոգի բանականին:

1420

էր ի յերկինս բոլորովին
Ընդ հօր հոգով ի յաթոռին,
Նոյն և բոլորն առ սրբուհին
Բովանդակեալ յորովայնին:

Ընտրեալն յառաջ իւրն տեղի
Քան զլինելն արարածի,
Ի մարդկային ազգէ սեռի
Զկոյսն հաճեալ օթագայի:

1425

Թագ պարծանաց հողեղինի,
Բարձր աշտանակ եօթնաւորի,
Զխաւար հոգիս իմ զազրալի
Լուսաւորեա կոյս սրբուհի:

1430

Ժառանդ կենաց մօրն Եւայի,
Որք և գտաւ զնախնի տեղի,

Լեր յոյս և ինձ ապաւինի,
Զանկեալս կանգնել անդրդուելի:

1435 Ի սուրբ յարգանդ քո և մաքուր
Մրարեալ կրեցեր զանտանելին,
Հայցեա՛ յորդոյդ քո անքնին՝
Տալ յթեան ինձ յադենին:

1440 Լրութեամբ ամսոց շորս և հնգին,
Այլ աւուրբք շորեակ և մին,
Զհուրն աստուծոյ բարձեր յանձին
Եւ ոչ կիզար բոցով նորին:

Խանդաղատեալ այրմամբ սրտիս
Յայտնեմ զիղձս աղէտիս,
Որ թաւալեալս եմ ի տղմիս
Անբաւ շարեօքս, որ կայ ի յիս:

1445 Մունր կրկնեա առ տէր վասն իմ
Մառդ անթառամ կենաց պտղին,
Տալով փնձ կեանս առ ի բարին
Ազատ լինել յանհուն պարտին:

1450 Կառք տէրութեան անմահ բանին
Եւ զերագոյն քերովբէին,
Բարձ ի հոգոյս զանտանելին
Զախտս մեղաց զազրագունին:

1455 Հոյլք հրեղինաց ոչ իշխէին
Հսկիլ գոնեա աղօտագին,
Կրեցեր յարգանդ քո կուսածին,
Զայն որ սարսեն դասք սրովբէին:

1460 Զայնրն աւետեաց աստուածային
Հնչեալ ազգմամբ առ քո հոգին,
Հայցեա՛ և ինձ լսել ձայնին
Զեկայք օրհնել յօրն վերջին:

1441 Ա արմամբ:

1449 Ա Փառք փխ Կառք:

Ղամբար վառեալ ջահ արփենին
Գգունալ բարձեր զըոյսն անքնին,
Կառո և զիս յոտրս խաշին
Յահեղ աւուր դատաստանին:

1465 Ճար և հնար մարդկան սեռին
Եղեր, սուրբ կոյս Աստուածածին,
Լեր և գերոյս հոգով ախտին
Փրկել յանշէջ հրոյ գահենին:

1470 Մաքրեա՛ զյանցանքս բազմագին
Ջանտես աշաց անթրւելին,
Ջզորութիւն հոգոյս տասին
Ջմտացս խորհուրդս գոլ ի շարին:

1475 Յարփոյն վառեալ անշիջելի,
Կայծ, կարկեհան, գեղ հրաշալի,
Ջդիմեալն ի մայրդ սուրբ միածնի
Խնդրեա՛ ազատ լինել յոգի:

1480 Սոր նորոգող մարդկան ազգի,
Կոյս Տալիթայ, խորան լուսի,
Հա՛ն ի հոգոյս զազոտ զազրալի,
Ջփտեալս մեղօք դառնագունի:

Շնորհաց հոգոյն ընդունարան,
Տուն Քրիստոսի գոլ օթեան,
Բարձեր ի գիրկ զանմահ արքայն,
Որ է մեզ կեանս և օգնական:

1485 Ուստի գերեալս թշուառական,
Նշդեհացեալս թափառական,
Ջքեզ ունիմ յոյս և վահան՝
Առ ծնեալ որդիդ քո տիրական:

1490 Զքնաղ, ահեղ, զարմանալի,
Մայր անարատ Մանուէլի,
Ջստածողն էիցս ամենայնի
Կաթն արբուցեալ քում ստենի:

1495 Պարպատելոյս շարակրութեամբ,
Որկտրամոլ ազահութեամբ,
Սուրբ և անաղտ քո մաքրութեամբ
Զիս ազատեա՛ արիութեամբ:

1500 Զուր կենդանի անապական
Լուացեր զհոտեալ շարաւ մարդկան,
Զգարշ աղտեղիս շռայլութեամբ
Մաքրեա քո սուրբ որդոյդ արեամբ:

Ռահ լուսոյ եղեմական,
Որոջ մարդիկք յերկինս ելան,
Որով և ես կամ և յուսամ
Քե այց լինել ի դատաստան:

1505 Սասանելոյս յարկէ շնորհին
Մօր իմ հոգոյ աւազանին,
Ի զանազան մեղս երկրային
Լքի զշնորհս մեծ խորհրդին:

1510 Վերաբերեա դարձեալ կրկին:
Զանկեալ հոգիս յանել բանտին,
Քո հայցուածովդ քացրադին,
Զի համարձակ ես քո յորդին:

1515 Տերըն փառաց աստուածորդին
Սնանի առ քեզ ամս երեսնին,
Յետ այնորիկ ի Յորդանան
Գայ, մկրտի՛ առ ամլորդին:

1520 Րամեալ ընդ նոյն երից ամին
Կատարելով զտնօրէնութին,
Գայ կամաւ հօր ի մահ խաշին՝
Առ ի բառեալ զմեղս մարդկային:

Յուցեալ զգութ սիրոյ քոին
Իմ կյանքն և յոյսն առ ի խաշին,
Յանձնէ՛ զքեզ առ Յովհաննիս
Կոյսդ չի կուտէն պահպանիցին:

1525

Ի իսեալ քնդ նոյն հրաշս կքէին
 Ի յարութեան աւուր մեծին,
 Զօրս քառասուն միշտ երևի
 Օրհնէ, սլանայ յերկինս երկնի:

1530

Փառօք բազմօք եկաւորի
 Յերկուտասան լրտմն ամի,
 Յետ համբարձմանի իւրոյ մեծի
 Առեալ զքեզ վեր նա յերկնի:

1535

Քանոն կատար եղև ճառիս
 Շնորհիւ սրբոյ Աստուածածնիդ,
 Փառք և պատիւ երբեակ անձին
 Հօր և որդոյ, հոգոյ շնորհին:

1540

Ո՛վ գերահրաշ արարիացեալ,
 Որ յանմարմնոց ես ներբողեալ:
 Գերամաքուր շահաւորեալ
 Կոյս տիրածին, ամէնօրհնեալ:

1545

Ղեկօք դրուատ պատշաճաւոր
 Ով ոք զովէ զքեզ յանկաւոր,
 Որ երկնայնոց ես ըղձաւոր
 Եւ դերագոյն բաղդատաւոր:

1550

Րոտեալ սրտիւ ես թախծագին
 Անգա ի յիղձքս փափագին,
 Ոչ դիտելով ըստ պատշաճին
 Յարել ի մի ոտն առ ոտին:

1555

Մաղթեմ ի քէն, խորան քանին,
 Զի ոչ զարժանն ըստ քո անձին
 Թողուլ զպարտիս իմ բազմագին,
 Երգեալ ետու զներբողինին:

1560

Եւ փանաքի գոլով անձին
Չեմ արժանի այսր մասին,
Թէպէտ անունս բոլոր կոչին
Պաակ և տեար Ստեփանոսին,

1565

Այլ այս թրիս որ յառաջեալ
Եւ բան, դբան գոլով ծնեալ,
Նախ մին հարիւր ներսէս ոգեալ,
Որ պըսէտ Մոկեաց մակձայնացեալ:

1565

Յետ այսմ և մեր վստահացեալ՝
Բան ի բանից գոլ կըցկցեալ,
Երից հարեաց մակագրեցեալ,
Համայնն շորիւք բովանդակեալ:

1570

Փառս տացուք հօր անեղին
Եւ միածին բանի նորին,
Հոգոյն սրբոյ զարդարողին,
Որ ազատեաց զմեզ վերըստին:

**6. ԱՂՕԹՔ ԱՌԱՆՁՆԱԿԻ ՍՐՏԱՀԱՌԱԶ ԶԱՅՆԻԻ ՊԱՂԱՏՏԱՆՕՔ
ԱՐԱՐԵԱԼ ՆԵՐՍԷՍ ՎԱՐԳԱՊԵՏԻ Ի ԼԻՄ ԱՆԱՊԱՏՆ**

*Բարերար աստուած, մարդասէր,
Ողորմեա՛ ինձ, բազմամեղիս,
Ներող, գթած, օրհնեալ և երկայնամիտ,
Գթա՛ ի տառապեալ գերիս*

5 *Եւ արձակեա՛ ի կապանաց վտանգիս:
Բարեխօսութեամբ ամենայն սրբոց քոց երկնաւորաց և
երկրաւորաց,*

*Բարեխօսութեամբ հրեշտակաց և հրեշտակապետացն,
Աթոռոցն դասուց, սերովբէից, քերովբէից,
Տերութեանց, զօրութեանց, իշխանութեանց, պետութեանց,*

10 *Հրեշտակապետացն և հրեշտակացն:
Բարեխօսութեամբ նախահարցն
Ադամայ, Աբելի, Սեթայ, Ենովսայ, Ենովքայ,*

*Նոյի, Մելքիսեղեկի,
Աբրահամու, Սահակայ, Յակոբայ, Յովսեփայ,*

15 *Յորայ նահապետին, Մովսէսի մարգարէին, Ահարոնի
քահանային,*

Յեսուայ, Եղիազարու քահանային,

Ա Ղ Ր Յ Ա Ն Ե Ր

A = Զեռ. № 3470, Թերթ 122ա—123բ, ժամանակ՝ Ժէ դ.:

B = Զեռ. № 5624, Թերթ 307ա—309ա, ժամանակ՝ 1683 թ.:

C = Զեռ. № 11, Թերթ 96բ—97բ, ժամանակ՝ 1736 թ.:

Խ Ն Բ Ա Ղ Ի Բ

BC պաղատանք:

Ք Ն Ա Ղ Ի Բ

1 B մարդասէս:

3 BC չիք օրհնեալ:

11 C հրեշտակաց փխ նախահարցն:

14 C Յակովբայ: AB Յովսեփու:

15 C մարգարին:

- Փհնհհհհհհ և Սամուելի:
 Յիշատակաւ և աղօթիւք Դավթի մարգարէին,
 Եղիայի, Եղիսէի, Եզեկիելի և Ովսեայ բարեպաշտիցն,
 20 Եսայիա, Երեմիայի, Եզեկիելի և Դանիելի.
 Բարեխօսութեամբ երկոտասան մարգարէիցն՝
 Ովսէի, Ամովսայ, Միքիայ, Յովելեայ,
 Աբդիու, Յօնանու, Նաուամայ, Ամբակումայ,
 Սոփոնիայ, Անգեայ, Զաքարիայ և Մաղաքիայ:
 25 Բարեխօսութեամբ եզրասայ դպրին,
 Եղիազարու քահանային,
 Շամունէի և Խօթ որդոցն իւրոց:
 Յիշատակաւ և աղօթիւք երկոտասան առաքելոցն և
 Խօթանասուներկու ընտրելոց աշակերտացն,
 Արեամբ ներկեալ մարտիրոսացն
 30 Եւ ճգնաւորացն, կուսանացն, միանձանցն
 Եւ ամենայն հայրապետացն սրբոց
 Եւ վարդապետացն առաջնոց:
 Բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին
 Եւ Յովհաննու Կարապետին,
 35 Ստեփանոսի նախապկային
 Եւ սրբոյն Գրիգորի մեր Լուսաւորչին.
 Յիշատակաւ և աղօթիւք սրբոցս այս անուն:
 Նայեա ի պատկեր վշտացս դառնութեան,
 Բազմավտանգ կրիցս կարեացս կցորդակիցս լեր բժշկապէս
 40 Եւ փարատեա զցաւս հոգեկան խիթմանս,
 Աստուած իմ և տէր իմ,
 Լոյս, կեանք,
 Նորոգող, փրկօղ, և կեցուցիչ
 Եւ քեզ փառք յաւիտեանս, ամէն:

20 AB չիք և երից մանկանցն:

21 A ԲԺ-ան:

22 A չիք Միքիայ:

24 A չիք Սոփոնիայ:

27 AC է փխ ԵԺ:

28 A ԲԺ-ան: AB Հ փխ ՀԲ:

30 A միանձանաց:

33 AB սրբուհոյ:

34 A Յովհաննաւ:

39 A բազմավտանկ: C կցորդակից:

41 A տէր ի:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ԲԱՆԱՍՏԵՎ ԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՏԱՂ ԵՒ ՊԱՐԾԱՆՔ ԵՐԿՆԻՅ ԵՒ ԳԵՏՆԻՅ

Երկինք և գետինք եղբարք,
Տեսնունք, թէ ո՞րն է աւելի.
Յերկնից աստղերն շատ է,
Եւ գետնի պտուղն աւելի:

5 Երկինքն ընդ գետինն ասաց.
— Ես քեզի համալ մի արի.
Որտեղ կտրիճ մարդ մեռնի,
Գայ ի քո ներքեղ արգիլի:

10 Գետինն ընդ երկինքն ասաց.
— Այդ բանիդ միննէթ մի շունիմ,
Հոգին ակլի դու կառնուս,
Մարմինն ես շառնում՝ կու հօտի:

15 Երկինքն ընդ գետինն ասաց.
— Ես քեզի համալ մի արի.
Տարի մի անձրեւ չի տամ՝
Քո կանանչն ամէն շորանայ:

20 Գետինն ընդ երկինքն ասաց.
— Այդ բանիդ մուննէթ մի շունիմ.
Ծովն այլ սրտէս կու բխայ,
Գետ, զաղբիւր՝ ի մէջ լեռներու:

Երկինքն ընդ գետինն ասաց.
— Ես աթոռ եմ աստուածութեան,

Ա Ղ Բ Յ Ո Ւ Ր

Զեռագիր № 7682, ընթիւ 7բ—8ա, ժամանակ՝ 1784 թ.:

20 Ձեռագրում՝ «լերներու»:

Հրեշտակք և հրեշտակապետք,
Սէրօբէք և ընդ քերօբէք:

25 Գետինն ընդ երկինքն ասաց.
— Իմ տէրն ինձ խոնարհեցաւ,
Ես նորա կարօտ էի,
Եկաւ իմ սիրտս թաղեցաւ:

30 Գետինն ընդ երկինքն ասաց.
— Մեղա՛յ քեզ, եղբա՛յր իմ, մեղա՛յ,
Ես քեզ խօրաթայ արի,
Դու ես մեծ քան զիս գովելի:

27 Ձեռագրում՝ «էյի»:

Բանաստեղծությունը վերջից ունի ևս մի տուն, որը սակայն այս հրդիս չի
ադատկանում:

Երկինքն ի գետին եղբարք,
 Թապամ որ զօրն կու տանի.
 Երկնից ցօղն շատ կասեն,
 Բայց գետնին պտուղն աւելի:

3
 Երկինքն ի գետին ասաց,
 Թէ ինչով ես ինձ նմանի.
 Ես զիմ ցօղս յիս քաշեմ,
 Ի՛նչ հազար ծաղկունք թոռումի:

10
 Գետին ի երկինքն ասաց,
 Թէ զատոր խամն իսկի շունիմ.
 Ատ ցօղն, որ ի քէն կիշնու,
 Նայ իմնէ ի քեզ կու փոխի:

15
 Երկինք ի գետին ասաց,
 Թէ ինչով ես ինձ նմանի.
 Ես քեզ հանց դձուն դնեմ,
 Որ արեն ի քեզ չի դիպի:

Ա զ Բ Յ Ո Ւ Ր

Բարդեն Կյուլսերլան, Յուցակ ձեռագրաց Անկիրիոյ Կարմիր վանոց և շրո-
 ւակաւոց, Անթիլիաս, 1957, էջ 457:

Բ Ե Ս Ո Ւ Ր

1 Հրատարակողն ավելացրել է «ասաց» (Երկինքն ի գետին ասաց), որն
 ավելորդ է:

3 Զեռագրում՝ «երկից»։ Հրատարակիչը ճիշտ է ուղղել «երկինից»:

4 Զեռագրում՝ «օկիւ»:

8 Զեռագրում՝ Ռ փխ հազար:

15 Զեռագրում՝ «նց»:

Գետին ի երկինք ասաց,
Թէ զատոր խամն իսկի շունիմ.
Անդրնդոց բանդ եմ,
20 Որ գարնան գոլն զքեզ տանի:

Երկինքն ի գետին ասաց,
Թէ ինչով ես ինձ նմանի.
Ես քեզ ամբ ու շող անեմ,
Որտեղ ծառ կանաչ՝ շոր լինի:

Գետին ի երկինք ասաց,
Թէ զատոր խամն իսկի շունիմ.
Ես ակնեբրուն հրամանք տամ,
Գետ էլէ ու աղբիւրն աւելի:

Երկինքն ի գետին ասաց,
Թէ ինչով ես ինձ նմանի.
Որտեղ շանայժան մարդ կա՝
30 Վերայ քեզ կոխէ ու անցնի:

Գետին ի երկինք ասաց,
Թէ զատոր խամն իսկի շունիմ.
Որտեղ սիրօ տէր մեռնի՝
35 Յիս շառնում, էգուց կու հօտի:

Երկինքն ի գետին ասաց,
Զէնէհար, չեմ քեզ նմանի.
Շատ հաց սեղանի ես դու,
40 Գերեզման շատ վարդապետի:

Գետին ի երկինք ասաց,
Զէնէհար, չեմ քեզ նմանի.
Երկնից ու գետնից ըստեղծօղն
Վերայ քեզ բազիլ կու նայի:

- Փառքս տացուք ըստեղծողին,
 Որ խնամող է ամենայնի,
 Զի տայ ծառայից իւրոց,
 Զոր խնդրեն և միշտ ըզբարի:
- 5 Բէսլէտ ծուլացեալ կենամք
 Եւ աստեմք ըզգործըս բարի,
 Գըթած, ողորմած ես, տէ՛ր,
 Մի՛ մատնեիր զմեզ ի շարի:
- 10 Կամիմ, որ գովանք մասեմ
 Հրաշալի սուրբ յանապատիս,
 Որ է բնակարան սրբոց՝
 Հրեշտակաց յոյժ փափաքելի:
- Քաւիչ է մեղաւորաց
 Եւ փրկիչ է շար վտանգի,
 15 Ով ոք հանդիպի սմա՝

Ա Ղ Ր Յ Ո Ւ Ը Ե Ր

Λ = Զեռ. № 642, թերթ 126ա—127բ, ժամանակ՝ 1671—1696 թթ.:

Β = Զեռ. № 7703, թերթ 49ա—50բ, ժամանակ՝ 1750 թ.:

Ք Ե Մ Ա Դ Ի Ր

1 Բ Փառք տամք արարչին երկնի:

3 Ա Որ փխ Զի:

4 Ա որ փխ գոր: Բ բուրբուլ սրտի փխ և միշտ ըզբարի:

5 Ա ձուլացեալ: Բ մընամք:

7—9 Բ Գըթած 'ւ ողորմած է նա,

Կատարէ զխընդիրան անթերի

Ապա ըզգովանըն ասեմ:

10 Բ առապատին:

11—12 Ա Որ ' սրբազան վարուք՝ բնակարան է հրեշտակաց:

15 Բ Զի ոք:

- Երանէ աստ բընակողի:
 Աղաչեմ և խնդրեմ ի քէն,
 Հայր որբոց 'ւ այրեաց տըկարի,
 Տո՛ւր ինձ զօրութիւն այժմուս,
 20 Որ մարտիմ ընդ շար խորհրդի:
 Զի եմ շաղախեալ նովաւ,
 Ախտացեալ եմ շար հընարի:
 Օգնութիւն ի քէն խնդրեմ,
 Սուրբ Գէորգ, զինուոր Քրիստոսի:
 25 Լմայ անասպատ ասեն
 Յայս կղզիս, որ է գովելի:
 Զի որք բնակին ի սմայ
 Քրիստոսի լինին սիրելի:
 Բազում եղբարք կան բնակեալ,
 30 Քառասուն և այլ աւելի:
 Ոմանք բաժանեալ ընչից
 Եւ խնդրեն ըզկեանս յաւիտենի:
 Փա՛ռք քեզ, բարերար աստուած,
 Քո ամէն բանդ է սքանչելի:
 35 Որ ես պարզեալ մեզի
 Սուրբ տաճարս ի մէջ ի ծովի:
 Որ է հեռացեալ մեզաց
 Եւ փրկիչ ի մարմնոյ շարի:
 Ոչ գող կարէ մերձենար,
 40 Ոչ այլազգեաց ոտից հանդիպի:
 Բերդ է հոգևոր հարանց,

16 B Երանի տան աստ բընակողի:

17 B Աղերսի հայցեմ ի քէն:

18 A դատաւոր այրի փիւ 'ւ այրեաց տըկարի:

19 B արի փիւ այժմուս:

20 B Մարտընչել փիւ Որ մարտիմ:

21 B մեղօք փիւ նովաւ:

25 B Լիմայ:

26 B այս կըղղոյս:

27 A Ով որ որ բնակին ի սմայ այս կղզիս:

29—32 B չիք:

33 B Ո՛վ անճառելի փիւ Փա՛ռք քեզ. բարեռար:

35 B գու մեզ փիւ մեղի:

36 B դսուր տաճարս ի ծովամիջի:

37—40 B չիք:

- Զրիզէն պարիսպ ինքն ունի.
 Ով որ հաւատով խնդրէ՝
 Սատանի ձեռաց զերծանի:
 45 Օգնութիւն ի քէն լիցի,
 Քարերար աստուած ամենի,
 Տուր մեզ զօրութիւն աշխուհ,
 Որ օրհնեմք զօր հանապազ
 Սուրբ զանունդ ի մէջ գիշերի:
 50 Որչափ որ գովեն զդա՝
 Գովելոյ ունի սա տեղի.
 Խիստ անդէտ, յիմար եմ ես
 Եւ չունիմ շքնորհք ի մտի:
 Սակաւ մի կարճ ի կարճոյ
 55 Ասացի ես բան մի քանի,
 Աստուած ողորմի հղբարց
 Եւ պահէ անփորձ ի մարմնի:
 Վա՛յ ինձ մեղաւոր անձինս,
 Որ անթիւ շարեօք է ի լի.
 60 Կարող չեմ պատմել լեզուովս,
 Ինչ ասեմ, որ չէ յիշելի:
 Է՛ր ընօղ դադտնեաց աստուած,
 Դու գիտես զամենն յայտնի.
 Աղաչեմ, խնդրեմ ի քէն՝
 65 Իմ մեղաց գիրըն ջնջեսցի:
 Աղջիկ մ՝ է սորա շինողն
 Ի յազգէն սուրբ հայրապետի,
 Որ է բռնութեամբ առեալ
 Կնութիւն զնա տաճիկ ազգի:

43 Ե գայ աստ փխ խնդրէ:

44 Ե նա անփորձ մընայ ի մարմնի փխ Սատանի ձեռաց զերծանի:

45—53 Ե չիք:

50 Ա զտա:

56—57 Ե Որչափ որ գովեն զսայ՝ գովելոյ է սա արժանի:

59 Ե ես եմ լի փխ է ի լի:

60 Ե լեզուաւ պատմել:

61 Ե եւ ասել փխ Ինչ ասեմ:

62 Ե Ո՛վ գաղտնեաց ընօղ աստուած:

64 Ե Աղերսիւ հայցեմ ի յէն փխ Աղաչեմ, խնդրեմ ի քէն:

67 Ե լազգի: մեծ փխ սուրբ:

- 70 Պարտ է աղօթիւր յիշել,
Որ նորա աստուած ողորմի.
Այս է պատուիրան փրկչին՝
Միմեանց խնդրել զբարի:
- 75 Զի ոչ գոյ նման սմայ
Ի վերայ արարած երկրի.
Նման է յԱդին դրախին
Ագամայ մեր հօրըն նախնի:
Լի է գոյնդգոյն ծաղկով,
Սուրբ հարանց խրատն ի միջի,
- 80 Ով ոք ունկնդիր լինի՝
Զօրանայ հոգւովն ի մարմնի:
Սորա զարդարողքն ասեմ՝
Են երկու լուսաւոր հոգի,
Որ մինն ներսէս կոչեն
85 Եւ միւսոյն Ստեփաննոսի:
Բազում աշխատանք ունին
Յիշատակ ըզխաչն փրկչի,
Նոցին բարեխօսութեամբ
Տէր աստուած մեզ ողորմեսցի:
- 90 Ի սմայ բնակեալ եղբարքս
Ժողովեալ են շորից կողմի,
Ոմանք ի յարեւելոց
Եւ ոմանք ի հարաւայի.
Ոմանք հիսթոց եկեալ

70 Ա Պարտ է, որ աղօթքն յիշեմք:

72 Ա պատիւն:

73 Բ ըզբարին:

75 Բ Ոչ ի Սաղիմ և ոչ ի Լատին փիլսոս Ի վերայ արարած երկրի:

76 Բ Ադինայ:

77 Բ նախնի:

81 Ա հոգովն:

82 Ա ասեն:

83 Ա է փիլսոս Լն:

84 Ա Զի փիլսոս Որ: Բ կոչին:

85 Բ Ստեփանոս ասին:

87 Բ փրկչին:

88 Բ բարեխօսութեամբն:

90 Ա եղբարք:

91 Բ Ժողովեալ ի շորս կողմ աշխարհէ:

92—94 Բ շիք:

Եւ ես ի յարեմտից.

Մեղաւոր Սարգիս Քլիսցի.

Տէր աստուած, տաս համբերութիւն,
Մեր մահուն օրն աստ կատարի.

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ, ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՔԱՂՎԱԾՔՆԵՐ

4

Ես ներսէս վարդապետ Մոկացի Թուին ՌՀ (1621) եկի ի կմայ սուրբ ուխտս և տեսի զայս երկնանման սուրբ տաճարս, որ յանուն սրբոյն Գէորգայ զօրավարին, զի խրրթնացեալ էր ի բարեզարդութենէ փեսային և փեսայւէրին և թափուր արդեանց և յամենայն զրոյց և փակեալ եկեղեցին: Եւ ես, ծառայ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եկի ի Տաթևու անապատէն աստ: Տեառն զործակցութեամբ սկսայ ժողովել աստ եղբայրս վաթսուն խարաղնազդեաւ կրօնաւորս և սկսայ զիրք և արդիւնք ժողովել ի վայելումն սոցա: Եւ տեսի զայս աստուածախօս տառս Մաշթոց կոչեցեալ ի գեօղն Մարմետ, որ կմայ Ս. Գէորգայ էր յիշատակ և վաճառեալ էին զսա: Եւ ես աղաչեցի բաղում թախանձմամբ զգնող սորա զընէս Աստուծոյ առնել ղերադարձ և տալ միւսանգամ ի յեկեղեցին կմայ կոչեցեալ անապատ:

Ձեռ. № 6332, քերթ 198բ:

5

Այս զիրքս Բեխլու ներսէսի ձեռագիրն է և շատ բանք, որ աստ կան, նորին ներսէսի են: Այս զիրքս ժ տարի իմ խուցս եկաց, զոր տէր լուսաւորէ նորին հոգին, ընդ նմին և իմս Գրիգորի վանեցոյ վարդապետի:

Ձեռ. № 5128 (պահպանակի վրայ):

6

Ածաղաւր սր խաշս կառուցեալ է ի բարեխաւս առ Ած հոգոյ... ներս... վրդ հոգոյ... պրտ... որ ժ ամի... և ներսէսա է թվկին գնացի Տաթևի յանապատն Դ ժամ կացլ... և եկի... ատից աստ և... Դ ին տես ամաց... և այս Ե ամ... որք երկրպագէք տուր զողորմին:

«Ազգագրական հանդէս», Թիֆլիս, 1912, էջ 92:

Ով քառանիշ գէն յաղթութեան,
 Ներկեալ արեամբ տէրունական,
 Յորում հանդէի ի քեզ ընական,
 Պատճառ եղեր մեր փրկութեան,
 Ի յանեծիցն հինն աղամեան,
 Յորժամ ծագիս փայլանման,
 Լնուս լուսով զերկիր լրման,
 Փառօք կանգնիս ի Գողգոթայն,
 Նրկրպագիս յազգէ մարդկան,
 Պայծառ ծագիս լոյս բո փայլման,
 Յողիս մեղօք մեռեալ ընական
 Ստեփանոսիս թշուառական,
 Էողով թախծեալ և անախտան,
 Որ սպասաւոր ևմ յայս մենաստան
 Լիմ կոշեցեալ անապատեան.
 Վաթսուն անձինք ձգնողական
 Փառաքանողաց աստուածութեան,
 Յետ Ներսէսի հօր սրբազան,
 Որ մեզ ջանձնեաց զայս միաբան,
 Ինքն հանգիստ ի գերեզման,
 Մեզ սուգ եթող անանցական
 Ի թվին ՌՀԴ (=1625)*
 Ընդ նմին հղև վախճան,
 Եւ մեք մնացաք ի տատանման
 Ի ներհակացն ընական,
 Զոր և հայեցեմք երկրպագուացդ
 Խաչիս Տեառն իւր յանդիման
 Սիրով խնդրել մեզ թողութիւն
 Քրիստոսէ միշտ յաւիտեան,
 Թվին ՌՀԸ (=1629)* գրեցաւ:

«Ազգագրական հանդէս», Թիֆլիս, 1912, էջ 92—93:

* Տպագրութեան մեջ «1725», որը սխալ է:

* Տպագրութեան մեջ «1729», որը սխալ է:

Ի վաղ ժամանակաց անտի բազում բնութեամբ հետաքրքիր էի, թե ո՞ւր էին, որք զանապատս ծովային կղզեաց Վաստուրականի սկզբնաւորեալ խտտակրօն ձգնազգեաց միաբանութեամբ զարդարելով, հաստատեցին՝ կարեմ ասել զկիմ, զկտուց: Գտեալ զձեռագիր ուրումն Ներսէսի վարդապետի ծաղկաբաղ արարեալ ի պատմագրութենէ յԱրիստակէս վարդապետէ ուրումն, բայց թուականութիւնն վեր ի վաչր շփոթեալ, զմեծն յառաջ դասելով և զփոքր թուական ի յետ անդրադարձելով, զմեծն յետոյ դասեալ և զփոքրն յառաջ նոյնպէս զառաջ եղեալ պատմութիւնսն զօրէն արբեցելոց աստոր անդր զեզեէ: Վասնորոյ թէ և պատահեաց իմ կարօտեալ պատմագրութեանն, սակաչն փոխանակ ուրախութեան անբուժելի իմն չիս տրամութիւն թախծակին յոյժ բեղմնաւորեալ, բայց անձարացեալ, ձեռն ի գործ արկեալ թերեւ կարիցեմ նորաստեղծ գոյացութեամբ ի լոյս բնծայել ի խաւարաւի[ն] իմն խորշից հրապարակաց ուշխարհիս:

Նախ պատմիչն աշտպէս գրէ, թէ ի թուականիս ԹՇ-ին եկն մահ անգերծանելի տարածեալ բնդ ամենաչն երկիր յարեւելից մինչև յարեւմտս որ և իսկ չկարէ որ ի պատմութիւն անցուցանել: Զեղեալ իրան աչնրան սա[խ]տկացաւ, բազումք թողեալ զտունս և զբնակութիւնս՝ նորապսակ հարսունք զառագաստս թողեալ, փախեան ի յամուրս և փապարս փմաց. նաև օրիորդք նշանադրեալ և մանկունք մատաղերամ, պատանիք ծաղկահասակ, երիտասարդք զուբադասաղարդ, ծերունիք ալեկարդ, օրհասական զառամեալք, պառասունք երկիւղածք յԱստուծոյ, թողում ասել զպարս հոգեւորականաց բահանայից, որք թողեալ զեկեղեցիս և հատեալ զձաչն զանդապահարութեան և զսրբազան արարողութիւնս: Ոմանք ի հրապարակս բաղաբաց և ի խորշս նոցա, ի փողոցս անկեալք և կիսամեռ մերձ են շնչասպառ լինել, ոմանք մերձեալք առ միմեանս թերեւ կարիցեն միաբան փախչել, զի անկեալքն կարիցեն թաղել:

ի լերինս, ի ծերպս վիմաց, ի դաշտս և ի յալգեստանս, ի դիզերայս և ի յազարակս: Իրբն զրերդուկս քարանց կուտակեալք զիժ մեռելոց արդարեւ. որք ծանօթք և բարեկամք կամ բնտանիք և ծնողք կամ ծնունդք էին զերկայնագոյն փոքեալ զհոգն զերեզմանաձև և զդիս մեռելոց հաւարեալ զչխուն, զբառասուն, զերեսուն, քան զքսանն ոչ պակաս պատմութեանօք և արտախրակօք ածէին ի նա առանց բահանայի: Եւ որք անտեարր և անտերունչք էին դիակունք նոցա յանցս ճանապարհաց և չարտարոյ բնակութեան անկեալք և նխեալք, թռչնոց և գազանաց կուր եղեն և որք կենդանւոյն մնացեալք՝ դունատեալ, ծիրկեալ և մաշեալք ի քայլափոխելն դանդաղէին զօրէն արբեցելոց չգտանելով զելս և զբնակութիւնս: Ոմանք ի թիւս խելազարաց զասէին տակաւին զարկնացեալ ի բնոյ տխրութեան և ի սգոյ ողորդութեան սիրելեացն կորնշելով և ի բեկեալ սրտից արտաստաթոր աշացն ողորմելիրն զաշս խրեանց բացեալ տեսին զգեղեցկազարդ մանկունս և ոմանց զծնողս և զծնունդս, համայնք սփռեալք և տարածեալք առաջի աշաց խրեանց, ուստի մնացեալքն շուարեալ և անբուժելի ցաւոց պատահեալք:

Եւ ապա այսպ[է]ս պատմէ, թէ ի սոցն ՌՇ թուականիս հայոց Ներսէս վարդապետն՝ զերիմաստ և անյաղթ փիլիսոփայ, որ Բեղլու կոչեցեալ վասն ահարկութեան գիմաց և բանից նորա: Սա ասին՝ ժողովեալ առ ինքն զբազում եղբայրս կրօնաւորեալս զրնական առաքինի և համբերող անձինս աւելի քան զեօթնասուն հոգիս կատարեալս և այնորումքք մտեալ ի յանտապտոն Տաթևու, որ մալր էր ամենայն անապատականաց և մնացեալ անդ ամս հինգ եղբարրք հանգերձ, ուսեալ վարս միայնակեցութեան ի հրեշտակական կարգի, զի աւելի քան զերեք հարիւր եղբարք էին անդ բնակեալք, որպէս թէ և իսկ մի հոգի կառավարէին անմարմինք զարմացեալ ի մարմնաւորաց՝ անդ էր արդարեւ տեսանել:

Եւ հրաման առեալ Ներսէս վարդապետն՝ Բեղլու կոչեցեալն, առեալ զեօթնեսին զեղբայրս, ելեալ անտի գնաց ուղղակի ի ծովային կղզին, որ կոչի իմ ի հին պատմագրութենէ հայոց: Օգնականութեամբ՝ շրջակայ բնակչաց և խրեանց բազմաշխատ վաստակօք կառուցանի եկեղեցի ինչ բնդ հովանեալ Գէորգայ Զօրաւորին զկնի կատարման և օծման կոչեցին զսուրբ Գէորգայ եկեղեցի և բնդ նմին աշխատեալ զկապարանս միարանաց բազմացոյցին: Բաց ի նոցունց յամենայն կողմանց խաղացեալ եկին ի թիւս նախկին միաբանաց մտեալ բազմանալով բազմացան քան զառա-

շինան: Թէպէտ զպաշտօն կրօնականութեան շարունակ ցանկային միաբան տանել, սակայն տակաւին խոշ ընդ ոտն առնէր մարմնաւոր կառավարութիւնն ներքին և արտաքին պակասութիւնն դեռ չէր լրացուցեալ:

Արքայհայրն վանաց ի միջի այնքան բազմութեան միաբանաց ի չափ իւր հասեալ ունէր ուսմամբ և խստապահութեամբ և ամենայն կերպ ինչ կատարելութեամբ զՄելիքսէթեկ վարդապետն և զՍտեփաննոսն: Բազում աշխատասիրութեամբ վաստակեալ արքայհայրն ներսէս վարդապետ յընթաց չորից ամաց հոգևով և մարմնով հասեալ արդարեւ ի ծայր առաքինութեան նաև ետես ահա ի լրումն և ի կատար եկեալ վանացն թերութիւն արտաքին և ներքին կառավարութեամբ, ցնծայր ի հոգի և ի մարմին ընդ կաթողին և ըղձակաթ սէր իւրոց միաբանացն, մանաւանդ ընդ երկուս կատարելամիտ վարդապետս բարեօրինակս եղբայրցն: Գիտէր իսկութեամբ, որ զկնի մահուան իւրոյ իւրեանց յարարթուն հսկողութեամբ շտան բնաւին զհօտս իւրեանց գայլոց և աւաղակաց և շարզազանաց: Արքայհայրն վանաց երկասիրութեամբ վաստակեալ և զարդիւնս բարեաց ամբարեալ յերկինս և ինքն բարութեամբ հասեալ ի չափ նախահարցն միանձանց կոչէ առ ինքն զգլխաւոր երկուսին վարդապետս վերջնական ողջունիւ և օրհնութեամբ. տայ զհրաժարական շնորհակալութիւնն և յանձնարարական կտակաւ աւանդէ զբոլոր եղբայրս կրօնակից յիշեալ երկուց վարդապետացն, ընդ նմին կնքէ զլուսապայծառ կեանս իւր և հանգչի ի բազմապտոյտ ալեացն ծփանաց կենցաղոյս:

Թէպէտ և գրեալ էր զայս մասնաւոր ճառս բովանդակեալ էր յերկուս նախադասութիւնս. բայց նորա մտաց նպատակն ճառացն յայտնելոյ այլոց բերեր զիմաստ բանին այսու կարգաւ շարագրել կարծեմ, թէ և սա չէ բոլորովին զվարս նոցա գրեալ միայն զանցարարութեամբ որպէս ինքն իսկ խոստանայ:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

ԲՆԱԳՐԵՐ

1. ԵՐԿԻՆՔՆ ՈՒ ԳԵՏԻՆՔՆ ԵՂՐԱՐՔ

Առաջին անգամ տաղի մի օրինակ տպագրել է Ղ. Ալիշանը (Երազմավէպս 1847, էջ 331—332), որը վերահրատարակել են Վրթ. Փափազյանը (Գառնու-թիւն հայոց գրականութեան, 1910, էջ 140—142), Մ. Մկրտչանը (ԵՃԻԻ—ՅՄԻԻ դարերի հայ աշխարհիկ գրականութիւն, 1938, էջ 186—188) և ուրիշներ: Տաղի այլ տարբերակներ հրատարակել կամ հիշատակել են Գ. Հովսեփյանը (Մկրա-րատ, 1898, էջ 546), Ն. Ակիւնյանը (ԵՀանդէս ամսօրեայ, 1951, էջ 233), Բ. Կյուլեսերյանը (ԵՅուցակ... Անկիւրիտ, 1957, էջ 457), Գ. Լևոնյանը (ԵՔա-րոնը հին Հայաստանում, 1941, էջ 129) և ուրիշներ:

Տաղի գիտական բնագիրը, Մաշտոցի անվան Մատենադարանի 5 ձեռագրերի և Երազմավէպս-ում Ղ. Ալիշանի տպագրած օրինակի հիման վրա, հրատարակել է Ա. Մնացականյանը (ԵՀայկական միջնադարյան ժողովրդական երգեր, 1956, էջ 381—387): Նույն տեղում նա տպագրել է նաև տաղի երկու տարբերակ (էջ 388—389, 390—393), որոնցից վերջինը աշուղ Տալիպի մշակումն է՝ ընդարձակ հավելումով (նույն տեղում, էջ 614—616):

Օգտվում ենք վերահիշյալ հրատարակութիւնից, ըստ որում, տարբերակները (րացի աշուղ Տալիպի մշակումից) զետեղում ենք հավելումներում:

Այս տաղը ծանոթ է ուսւ ընթերցողին Ն. Գրեքենի թարգմանությամբ (ՀԱР-мянская средневековая лирика», 1972, էջ 327—329):

Մեզ հայտնի վերահիշյալ աղբյուրներից և ոչ մեկում որոշակի տեղեկութիւն չկա տաղի հեղինակի մասին: Առաջին հրատարակողը, հիմք ունենալով Վենե-տիկի Միխիթրայանների միաբանութեան ձեռագրերից մեկը, նշել է, որ ԵՀեղինակն է Ներսէս անվամբ վարդապետ մը, որուն ժամանակը կերևա թե ասկէ երկու դար մը առաջ եղած պիտի ըլլա:

1898 թ. Գ. Հովսեփյանը հիշում է այս երգի այլ տարբերակ՝ տարածված Մոկսի ժողովրդի մէջ և դրանից էլ ենթադրում է, թե այն ունի ժողովրդական ծագում. ԵԱյս տաղն ևս,— ասում է նա,— երգում են մոկացիք, ինչպէս հայտ-նել է մեզ Ասյան Աղի, Նարեկացու և մյուս ժողովրդական երգերի թելադրող Մո-կացի Հեռվանը: Տարաբախտաբար ինքն անգիր չգիտեր, թեև հաճախ լսել էր այդ երգն իր հայրենիքում: Մյուս կողմից Գ. Հովսեփյանը չի մոռնում նկա-տել, որ շնայած տաղը ժողովրդական ոգով է գրված, բայց նրա կազմութիւնն ավելի գրեկան է: Նա ընդհանրապէս այն կարծիքին է, որ մեր միջնադարւան շատ հեղինակների, ինչպէս, օրինակ, Գրիգոր Նարեկացու, Գրիգոր Մազիստրո-սի, Միխիթար Գոշի, Ներսէս Շնորհալու, Վարդան Այգեկցու և ուրիշների մոտ աս-կա են ժողովրդական րանահիւստութեան առանձին կտորներ:

Կոնկրետացնելով իր այս մխոթը «Վիճաբանութիւն երկնքի և երկրի» տաղի առթիւ, Գ. Հովսեփյանը գրում է. «Բնշու շնեթադրել, որ երգիչն իր նյութը ժողովրդից է առել և մշակել, ինչպէս Թլկուրանցին արել է Նարեկացու երգի վերաբերութեամբ» (սկարաւառ, 1898, էջ 546):

Այսպիսով, մի կողմից ունենը վկայութիւն, թէ տաղի հեղինակն է ոմն Ներսէս վարդապետ, իսկ մյուս կողմից՝ փաստ այն մասին, որ այն տարածված է եղել Մոկսի կողմերում: Դա թելադրում է, թէ նշված Ներսէս վարդապետը կարող էր լինել Մոկացի, Ժամանակի մասին Ալիշանի արած ենթադրութիւնն էլ խոսում է այդ Ներսէս Մոկացու XVII դ. ստեղծագործած լինելու մասին, մի բան, որը համապատասխանում է վիճաբանութեան հին քննադատականութեանն երկրի և երկրի» տաղը հրապարակում է Ներսէս Մոկացու անունով (սկարաւառ, 1898, էջ 546): Դրանից հետո տաղը տարածվում է որպէս Ներսէս Մոկացու գրչի արտադրանք: Այսպէս, օրինակ, 1916 թ. «Поэзия Армении» ժողովածուի մեջ Ներսէս Մոկացու անունով է հիշվում այս տաղը. «Гимн Небу и Земле» (էջ 501): Այն Ներսէս Մոկացուն է համարում նաև Հ. Աճառյանը (սկարաւառ, 1916, էջ 67): Մ. Արեւիկյանը (սկարաւառ, 1916, էջ 588), Մ. Մկրտչյանը (սկարաւառ, 1916, էջ 186—188) և ուրիշներ:

Ն. Արեւիկյանը, զբաղվելով այդ տաղի հեղինակային պատկանելութեան հարցով, այն համարել է անանուն և ոչ թէ Ներսէս Մոկացու ստեղծագործութիւն (սկարաւառ, 1916, էջ 233): Նույն կարծիքն ամփոփելով հիմնավոր փաստարկներ ու զարգացրել է Ա. Մնացականյանը՝ «Վիճաբանութիւն երկնքի և երկրի» տաղը համարելով ժողովրդական (սկարաւառ, 1916, էջ 54): Ուշագրավ են հատկապէս համապատասխան տարբերակներն ու ժողովրդական ակունքները՝ կապված հոգու և մարմնի քննադատից առնված փաստերի հետ:

Պետք է նշել սակայն, որ Ա. Մնացականյանին տվյալ դեպքում ամփոփելով շուտ հետաքրքրել է հարցի ժողովրդական կողմը, ուստի նա այդ տաղն իր տարբերակներով ներկայացրել է ժողովրդական երգերի հետ: Բայց նա միաժամանակ ընդունել է այդ ստեղծագործութեան մշակված լինելու պարագան. «Երկիրն ու գետինը եղբարք» տաղով սկսվող վիճաբանութիւնը... — գրում է նա, — կապված է ժողովրդական մի հին մոտիվի հետ, որի մշակումները և վարիանտները տարածվել են թէ՛ միջնադարում և թէ՛ հետագայում» (նույն տեղում, էջ 35): Մենք ևս համաձայն ենք, որ այստեղ կա և՛ ժողովրդական հիմք, և՛ անհատական մշակում: Կարծում ենք սակայն, որ այդ տաղն առաջին անգամ մշակված է Ներսէս Մոկացու կողմից: Այս առումով ուշագրավ է հետևյալ պարագան. Ներսէս Մոկացու ստեղծագործութիւնը որոշ թելադրով կապված է ժողովրդական բանահյուսութեան հետ: Այդ մասին վկայում է նրա աշակերտ Ստեփանոս Շատախեցին՝ «Ոգը վասն առմանն Երուսաղէմի» ստեղծագործութեան կապակցութեամբ գրելով, թէ այս գործը Ներսէս Մոկացին մշակել է ժողովրդական բառի և եղանակի հետ. «Այս ողբոց բանն Երուսաղէմի վաղուց հետէ շինեալ էր, բայց զեղծուի բառի էր. ապա աստուած լուսաւորէ զՆերսէս վարդապետի ծնողաց հոգին, որ... նոր շարադրեաց, համեղացոյց դրանս...» (Ձեռ. № 2079, էջ 194բ):

Այս փաստը հիմք է տալիս ասելու, որ Ներսես Մոկացիին սիրել է ժողովրդի մեջ տարածված ստեղծագործությունները մշակել. իր ժամանակի գրական լեզվով ու մտածողությամբ։ Ուստի քնական կլինե՞ր կարծել, թե հենց Ներսես Մոկացիին է մշակել Վիճարանութիւն երկնցի և Երկրիս ստեղծագործությունը, մանավանդ, որ նրա անունը (Ներսես վարդապետ) պահպանված է մի ձեռագրում, իսկ տաղի տարբերակներն էլ տարածված են եղել Մոկսի կողմերում։

Մեր կարծիքով, այժմ նման մոտեցումն ավելի ճիշտ է, որովհետև մի կողմից անժխտելի է վիճարանության նյութի և նրա ձևավորման ժողովրդական ծագումը, իսկ մյուս կողմից՝ այդ հիման վրա կատարված մշակման անհատական բնույթը։

Քննվող հարցի կապակցությամբ օգտակար կլինե՞ր ուշագրավուն դարձնել նաև հետևյալ փաստի վրա։ Վիճարանության գիտական բնագրին կից հրատարակված են նաև ուրիշ տարբերակներ։ Եթե դրանցից առաջինը խոսում է ժողովրդական ծագման մասին, ապա երկրորդը նորից կապվում է անհատական մշակման հետ։ Այստեղ արդեն մշակողն ուրիշ անձնավորություն է՝ աշուղ Տալիպը։ Զիշտ է, վերջինս զգալիորեն կրկնել է Ներսես Մոկացուն, բայց երբեմն էլ ստեղծել է նոր հատվածներ՝ դարձյալ օգտվելով ժողովրդական բանահյուսությունից։ Այդպիսիներեց է, օրինակ, հետևյալ հատվածը.

Բուսնի առաջ ծանծաղիկն,
Նախաստեղծ Աղամ նյմանի.
Բուսնի պալասան ծաղիկն,
Որ միւռոն յիւրմէն կելանի.
Բուսնի նունուֆար ծաղիկն,
Կուսածին Յիսուս նմանի.
Բուսնի համասփիւռ ծաղիկն,
Եսթն տակ Երկինք նմանի.
Բուսնի բրաբիռն ծաղիկն,
Զորս կերպան աթոռ նմանի.
Բուսնի էնքինար ծաղիկն,
Գարբիէլ հլշտակ նմանի.
Բուսնի ուհան ծաղիկն,
Որ ի խաշափայտն նմանի.
Հաղար ու մեկ գոյն ծաղկունք՝
Ամէն ի հողէ՛ս կու լինի։

Այս հատվածում փաստորեն մեզ հետաքրքրող տաղից պահպանված է միայն վերջին երկու տողը՝ այն էլ մշակված, իսկ մնացածն ամբողջապես նորություն է և այնքան ինքնուրույն, որ առանձին տաղի տպավորություն է թողնում։ Իսկ որ այդ մշակումը պատկանում է ժողովրդական երգիչ աշուղ Տալիպին, դա վկայում է այդ երգը հաղորդող երգչի հավելումը.

Աստուած ողորմի ասեն
Քո փրօրին՝ աշուղ Տալիբին,
Երկինք ու գետին գովաց
Շաքաթ օր ի յոյս կիրակին...

Արդ, եթե այդ ելույթը մշակված է մեկի կողմից, ապա կարող էր մշակված լինել նաև մեկ ուրիշի կողմից: Այս իրողության օգտին խոսող ուրիշ փաստեր էլ կան նույն հրատարակության մեջ, որոնցից ուշագրավ են, օրինակ, Հարթուն Ղլու, Ղուլ Հովհաննեսի, Սալամաստցի Հարությունի մշակումները (Ա. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, էջ 611): Միայն թե վերջիններս այլ բնույթ ունեն և անհամեմատ ինքնուրույն մշակումներ են:

Հիշենք մի օժանդակ փաստ հաս Սատվածամոր վերափոխմանը նվիրված ներբողում ներսես Մոկացիին, ըստ Աստվածաշնչի տալով արարչագործության ամփոփ պատկերը, երբեմն այնպես է նկարագրում դեպքերը, ինչպես «Վիճարանութին Երկնի և Երկրի» գործում: Առանձնապես ուշագրավ են հետևյալ տողերը, ուր երկնային («Անդ...») դարդերին համադրվում են երկրայինները («Աստ...»).

Անդ՝ պաղպաղուն լուսաւորեաց,
Որով անդրէն զնա դարդաբնաց,
Աստ՝ յիշատակ սրբոց վառեաց,
Գեր քան զնա փառաւորեաց...

Վիճարանական տաղում դրանց համապատասխանում են հետևյալ տողերը: Երկինքն ասում է («Անդ»).

Զպայծառագուն աստղունքն
Ամէնն իմ կողէն կու լինի...

Երկիրը պատասխանում է («Աստ»).

Սուրբ առաքեալր, մարգարէր՝
Ամէնն իմ կողէն կու լինի...

Իսկ որ ներքողի մեջ էլ զգլիշատակ սրբոց» ասելով հեղինակը հասկացել է առարկայներին, մարգարեներին և այլ սրբերի, դա վկայվում է ներքողի հաջորդ տան մեջ.

Զմարգարէից և զնախահարց,
Զհարապետաց, զմարտիրոսաց...

Հետաքրքրական է նաև հեղինակի պատկերացումը երկնային և երկրային ուժերի հարաբերական գերազանցության հարցի մասին: Ինչպես գիտենք, վիճարանության մեջ գերադասությունը արված է երկրին: Այդպես է նաև ներքողի վերոհիշյալ տողերում, ուր երկրի մասին ասվում է. «Գեր քան զնա (իմա՝ երկիրը— Ա. Գ.) փառաւորեաց...»: Կարծում ենք, ո՛ր այստեղ գործ ունենք համանման մտածողության հետ, ուստի թե ներքողը և թե տաղը նույն հեղինակի գրչի արդյունքն են:

Այսպիսով եզրակացնում ենք, որ երկնքի և երկրի վեճը, ունենալով ժողովրդական քնդհանուր հիմք ու ակունքներ, շատ սիրված լինելու պատճառով, հաճախ արժանացել է բանաստեղծների և աշուղների ուշադրությանը, ենթարկվելով համապատասխան մշակումներին: Ահա արդարեոք չափածո մշակումներից մեկ հայտնի ամենահինն ու ամենաընտիրն է. որ կապվում է ներսես Մոկացու անվան հետ, այսինքն՝ այն միակ հեղինակի, լուի որի օգտին են խոսում հղած փաստերը:

Առաջին անգամ որոշ հատվածներ տպագրել է Ղ. Ալիշանը «Մխական» (1893, էջ 248—249)։ Ամբողջական հրատարակությունը նույնպես պատկանում է Ղ. Ալիշանին («Հայապատում», 1901, էջ 618)։ Նա հավանաբար օգտագործել է Վենետիկի Մխիթարյանների մխարանության Մատենադարանի մխնույն և ուղղորդ։ Մի այլ ընդօրինակություն հիշում է Ն. Պողարյանը՝ նրոսաղեմի սրբոց Հակոբյանց Մատենադարանի № 1895 ձեռագրից («Էջմիածին», 1944, էջ 32)։ Որի բնագիրը մեզ անծանոթ է։ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերում պահպանված է 8 ընդօրինակություն՝ բոլորն էլ անտիպ։

Ներկա հրատարակության մեջ առաջին անգամ տպվում է գիտական բնագիրը մեկ հասու բոլոր աղբյուրների հիման վրա։ Այդ օրինակներից Շ-ի (№ 7703) խորագիրը թյուրիմացության արդյունք է, որովհետև ներքոջը նվիրված է Ծ. ԹԵՒԻԻՄ անապատի հիմնադրմանը, այլ Սյունյաց Մեծ անապատի Թյուրիմացություն կա նաև Բ ձեռագրի (№ 7104) օրինակում, ուր ներքոջի վերջին ութ տողերն աստատված են խորագրից առաջ։ Ներկայացվող գիտական բնագիրը, Ղ. Ալիշանի հրատարակածի համեմատությամբ, առանձին ձգքություններից բացի, որպես նորություն ունի հետևյալ տողերը.

Ուսկայն անապատն Եհար

Ջգեղարդն ընդ լերակողմանն...

Կորովի աղեղնաւոր,

Քամանդար անսխալական...

(Տե՛ս բնագրի 65—66 և 81—82-րդ տողերը)։

Վիեննայի Մխիթարյան Մատենադարանի ձեռագրերից մեկում ներքոյն ունի հետևյալ խորագիրը. «Ներքողան գովեստից չորեքունց արանցն, որը եղեն սկիզբս անապատի կարգել յաղգս մեր, ի ներոխս ճգնադգեաց վարդապետէ ասացեալ Մովսէսոյ, ի Փիլիպոսոս դպրէ խնդրեալ» (Ն. Ակիւնյան. Բաղէշի զարոյցը, 1952, էջ 111)։ Այստեղ հիշված Փիլիպոսը, որի անունը կա նաև Շ օրինակի (ձեռ. № 1754) խորագրում, սույն ներքոյի պատվիրատուն է։ Բանաստեղծը նրան ապաւն է ներկայացնում վերջին տողերով.

Փորթիկ Փիլիպոս դպիր՝

Փափաղող բանին տաղական,

Ջայս խնդիր արար, թէ ասա՝

Յիշատակ. որ ողորմի սան։

Խոսքը Փիլիպոս Աղբակեցու մասին է, որը հետագայում ձեռնագրվեց ամենայն շառից կաթողիկոս (1633—1655 թթ.). տե՛ս Լեո, Նրկերի ժողովածու, Գ, էջ 291)։ Նրա սան Առաքել Դավրիժեցին բացատրում է, թե նա փոքրիկ է կոչվել ավասն տղայական հասակին և անմօրուք գոյոյն («Պատմութիւն», էջ 314—315)։

Ներքոյը գրելիս Փիլիպոսը եղել է Սյունյաց Մեծ անապատի սաներից մեկը, ուր գտնվում էր նաև ներսես Մովսէսը։ Նվճարն ուր ներքոյի մեջ հեղինակը սղում է այդ անապատի հիմնադիրների մահը՝ տեղի ունեցած ի միում ամբ. նշանակում է, որ այն գրվել է հենց նույն ժամանակներում։ Իսկ այդ մահերը

տնդի ևն ունեցել ՌԿԹ (1620) և ՌՀ (1621) թվականներին (Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, էջ 260, 283 և այլն), ուստի ներքոջը պիտի գրված լինի 1621 թ.՝ Սյունյաց Մեծ անապատում: Դրանից հետո այն չէր կարող գրված լինել, որովհետև նույն 1621 թ. հետո ներսև Մոկացին արդեն տեղափոխվել էր Հիմ, իսկ Փիլիպոս դպիրը մնացել էր Սյունյաց Մեծ անապատում և չէր կարող ներքոյի պատվիրատուն լինել:

Ներքոջը նվիրված է Սյունյաց Մեծ անապատի հիմնադրման, ինչպես նաև նրա հիմնադիրների գրվատաճրիին: Այդ անապատը հիմնվել է ըստ Մ. Զամչյանի 1610 թ. («Պատմութիւն Հայոց», Դ., էջ 563):

Նրա հիմնադիրներից էին՝ Սարգիս Ամերկեցին, Կիրակոս Տրապիզոնցին, ապա՝ Պողոս Մոկացին, Մովսես Տաթևացին, որոնց նյութապիս և պաշտոնապիս մեծ օգնություն ցույց տվեց Մելիք Հայկազնը, որ այն ժամանակ Շահ-Աբասի սիրելի զորավարներից էր (Մ. Օրմանյան, Աղղապատում, Բ, էջ 2344—2345): Այս անապատը մեծ դեր խաղաց ինչպես պարսիկներ պատրաստելու, այնպես էլ հյուսիս-կրթական նորանոր օջախներ հիմնելու առումով:

Ներսես Մոկացու ներքոյի հետևյալ տողերը արժանացել են ակադեմիկոս Աշ. Հովհաննիսյանի ուշադրությանը.

Ի հարց և պապանց ուսար,
Յառաջին սրբոցն ասացան.
Հիսիսու հաւեն առնուն
Մեր ծաղկունքս և խիստ զօրանան,
Եւ տապըն խորշակահար
Սաղկընկէջ առնէ առժաման:
Ահա ձեզ ձայն տւտեաց.
Սփոփանաց և յուսադրական...

Մեծարգո զիտնականն այս տողերը զիտել է որպես հայերի ազատագրման հյուսիսից սպասվող հույսի արտահայտություն («Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության», Բ, էջ 510): Պետք է ասել, սակայն, որ հյուսիսային քամուն վերաբերող արտահայտությունը զալիս է «Ենթ կրգոցից»։ «Արի՞ հիսիսի, և ե՛կ հարաւ, շնչեա՛ ի պարտէզ իմ, և բուրեցին խունկը իմ» (Ենթ կրգոց, գլ. Դ): Այդ նույն միտքը արտահայտված է նաև Դրիգոր Նարեկացու «Վարդավառին» տաղի մեջ.

Այն հիսիսային հաւեն
Հով հարեալ գոհար շուշանին.
Յայն հարաւային լեռնէն
Քաղցր օդով ցօղէր շուշանին...

(Դրիգոր Նարեկացի, Մատենադրութիւնք, 1840, էջ 482):

3. ԽԱՆՈՒԿ ՄՏԱՎԱՐԺ ԷԻ

Տպագրվում է առաջին անգամ: Տաղի մասին նախ խոսվել է մի անանուն հոդվածաշարում («Բազմավիպ», 1897, էջ 317—321, 379—380, 423—425, 459—463), որի հեղինակը, հավանաբար, Ղ. Ալիշանն է: Հոդվածաշարի համար հիմք են ծառայել XVII—XVIII դդ. հեղինակ Ավետիք Պաղտասարյանի (Տիգրա-

նակերտցի) ձեռագիրն աշխատությունները. որոնցից մեկում պահպանված է եղել այս ստեղծագործությունը: Ղ. Ալիշանը մեջ է բերել այդ օրինակի խորագիրը՝ կից անգղերություններով և տվել որոշ բացատրություններ. Նեբսէս վարդապետի ասացնալ զողրս վասն անձին և յտոց վերայ յարմարի: Այս այն նեբսէսն է, զՄոկացի է և զնաց ի Տաթևոյ յսնապատն. եկեաց չորս տարի և անտի եկա: զվմայ անասլասն հաստատնաց ի բուին ՌՀ, աստուած լուսաւորէ զիւր հոգին Ամին: Թէ կամիս զունով ալ տտա,— այսինքն երգելով: Ներսէս ճարտար բերդու է, ոտանաւորն այլ երկար տողերով, ինչպէս սկիզբն Սողոմոնի խոսքովն (նույն անդում, էջ 424): Այստեղ մեր կողմից ընդգծված տողերը, հավանաբար պատկանում են Ավետիք Պաղտատարյանին, իսկ մյուսները՝ Ղ. Ալիշանին: Նույն հոգվածաշարում մեջ է բերված ողբի սկզբի մի հատվածը:

Հետագայում այս բանաստեղծությունը նշել են Ն. Պողարյանը («Էջմիածին», 1944, № 10—12, էջ 32), Հ. Աճառյանը («Անձնանունների բառարան», Գ, էջ 67), Ն. Ակինյանը («Բաղէշի զպոսքը», էջ 112) և ուրիշներ: Նրանք նկատի են ունեցել Երուսաղեմի (ձեռ. № 1895) և Վենետիկի Մխիթարյան Մատենադարանի Ոսկեփորիկ Աւետիք Պաղտատարյանի ձեռագրերը: Այս տաղի երկու ընդօրինակություն էլ պահպանվում է Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերում: Բնագիրը կաղմել ենք միայն վերջիններիս հիման վրա, որովհետև մյուսները ձեռքի տակ չենք ունեցել:

Հորինման ժամանակի և վայրի մասին որոշակի տեղեկություններ չկան: Թանաստեղծության մեջ կան ինքնակենսագրական բնույթի ընդհանուր տեղեկություններ, որոնք օգնում են այդ հարցերի պարզարանմանը: Օրինակ, այդտեղ հեղինակն իրեն համարում է առաջնորդ, ուսուցիչ, ուրիշ. քաղաք օրինաց՝ ենթադրել տալով հասուն տարիք և համապատասխան դիրք.

Աբրայի անուն առի,
Յաշխարհէ ձեռով մերկացայ...
Կնկղովըս կորահայնաց
Հեղ հարանցըն նմանեցայ...
Ո՛հ ինձ վայել է, որ այժմ
Յուսմանէն մանկութեան թողայ...
Քարոզ օրինաց եղայ
'Ի օրինօք անօրինեցայ՝
Անուամբս եմ այլոց քանոն,
Կանոնէն բրնաւին յանցեցայ...
Ռարի, ուրի յորջորջմամբ
Ինրնաշարժ փառամոլեցայ...

Ուստի պետք է ենթադրել, որ նա այդ ժամանակ գտնվում էր կիմ անապատում, որտեղ, իրոք, վարում էր առաջնորդի պաշտոնը: Ըստ այդմ, բանաստեղծությունն էլ պիտի գրված լինի 1622—1625 թթ.:

4. Ի ՀՈՒՈՎԵՆ ԺԱՄԱՆԱԿԻՆ

Մասնագետներին ծանոթ է վաղուց. նրա մասին նշումներ են կատարել Մ. Չամչյանը («Պատմութիւն Հայոց», Գ, էջ 154), Ս. Սոմալը (S. Somal, Quadro della..., էջ 152), Հայկազյան բառգրքի հեղինակները («Նոր բառգիրք հայ-

կազմեցող լիզուիս, Ա, էջ 16), Զ. Անատոլյանը («Հայոց անձնանունների բառարան», Կ, էջ 67—68), Ն. Ակիւնյանը («Բաղէշի դպրոցը», էջ 106) և ուրիշներ:

Ողբի երկու ընդօրինակութիւն էլ պահպանված է Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերում, որոնցից մեկին (ձեռ. N° 2079) հիման վրա նրա առաջին հրատարակութիւնը կատարեց Պ. Խաչատրյանը («Հայ միջնադարյան պատմական ողբեր», էջ 280—293), իսկ երկուսի (ձեռ. N° N° 2079 և 5958) հիման վրա մենք ներկայացրինք նրա համեմատված և մասամբ հշգրտված բնագիրը (Երևանի Խ. Արովյանի անվան մանկավարժական ինստիտուտի «Ասպիրանտական դիտական աշխատութիւնների ժողովածու», N° 4, սրահ. 2, Երևան, 1970, էջ 127—139): Պետք է նկատել, որ N° 5958 ձեռագրի օրինակը, ձեռագրի վնասվածութիւնն պատճառով, պակասավոր է: Ն. Ակիւնյանի նշումի և Պ. Խաչատրյանի հրատարակութեան համաձայն ողբի վերջում կա մի բառատող եւ, որը սակայն, ըստ N° 5958 ձեռագրի, հետագայի հավելում է: Ահա այդ խորթ տունը.

Յարմարողի բանիս ողբման

Ողորմի աուր ի լի բերան

Ներսէս բարունեան

Հաստատողի կողմ անպատեան:

Ողբի նյութը 1187—1189 թթ. հետ է կապված. հեղինակն այդ խնդրին անդրադարձել է դարեր հետո Այս առումով հետաքրքրական տեղեկութիւն է պահպանված N° 2079 ձեռագրում (թերթ 210 ա). «Այս ողբոց բանս երուսաղէմի վաղուց հետէ շինեալ էր. բայց զեղչուկ բառի էր. ապա, աստուած լուսաւորէ զՆերսէս վարդապետի ծնողաց հոգին, որ մեր աղաչանացն լսեց և նոր շարագրեաց, համեղացոյց զբանս և յինքնէն ալ սասց ի վերայ Այլն առաջիկայ Ստուածածնի սլաութութիւնս ալ նա է արարեր (տե՛ս Ժան. 6-րդ), ի յերուսաղէմ շինել ոտանաւոր: Նաև զիտելի է. զի ինքն ի Մովսէս է և զնաց յանապատն Տաթևոյ, Դ տարի եկաց և եկաւ անտի աստ. ի լըմայ կղզիս՝ հաստատեաց անապատ, որով բաղում մարդիկը աստուծոյ հաճոյացան նորա պատճառան, ի թվ. ԹՀԱ (1622): Գա՛ր Զրիստոսի աստուծոյ: Թերևս այս հիշատակագրութիւնից է օգտվել Ավետիք Տիգրանակերտցին (տե՛ս Ժանոթ. 3-րդ): Այս հիշատակարանը հուշում է, թէ ողբը գրված է լիմ անապատում, ուր նրան խնդրել էին տեղի միաբանները: Հետևապէս գրութեան ժամանակը կարող է լինել 1622 կամ 1623 թվականը:

Թե ի՞նչ է իրենից ներկայացրել «գեղջուկ բառի» շարադրված նախօրինակը, չգիտենք: Հայտնի է միայն, որ երուսաղէմի անկման մասին ընդարձակ ողբ է գրել զեղբի ժամանակակից բանաստեղծ և հայոց կաթողիկոս Գրիգոր Տգան (Ed. Dulaurier. Recueil..., էջ LXIX):

5. ԱՍՏՈՒԱԾ ԵՒ ՏԷՐՆ ԱՄՆՆԱՅՆԻ

Տպագրվում է առաջին անգամ: Մասնագետներին ծանոթ է վաղուց ձեռագիր ընդօրինակութիւններով: Նրան անդրադարձել են Մ. Զամչյանը («Պատմութիւն Հայոց», Ա, էջ 297—298), Մ. Ավետիսյանը («Եկեղեցական վարք և վկայարանութիւնը սրբոց», Դ. Վենետիկ, 1813), Մ. Էմինը («Сказание о представлении Богомородице и об ее образе», М., 1874), Ա. Դարաղաշյանը («Քննական պատ-

մութին», Գ. Թիֆլիս, 1895), Ա. Սեդրակյանը (Իշխապետանեայց եկեղեցու պատկերազրուօթիւնը, ՍՊԲ, 1904, էջ 184) և ուրիշներ:

Նկատված է, որ այդ ընդարձակ ստեղծագործութիւնը ամբողջագին չէ, որ պատկանում է Ներսես Մոկացուն: Այդ մասին պահպանված են հավաստի վկայութիւններ, թե՛ ներքողի մեջ և թե՛ նրան կցված հետեւյալ հիշատակարանում, որ թողել է Ներսես Մոկացու աշակերտ Ստեփանոս Շատախեցին. «Ձայն պատմութիւնս նա (իմա՝ Ներսես Մոկացին— Ա. Գ.) ոտանաւոր յնրուաղէմ շինէր ճ (=100) տուն ի սուրբ Աստուածածնի գերեզմանէն խնդրեալ, որ և մեք այլ ի վերայ հիման շինածին սակաւ յաւելեցաք՝ տունս երեք հարիւր, ոչ ի մերոց մտաց գիտութեանց, այլ նիւթ զպատմութիւնս առեալ: Թէպէտ որ ժրպէրհութիւն էր մերս, այլ ոչ թէ ինքնայօժար կամօք, զի շատ աղաչեցի զվարդապետն, թէ պատմութեանս ամբողջ բաներս այլ ոտանաւոր շինէ՝ զինչ որ շահեղեցեալ դէպատէն շինելոյ: Վասն որոյ մեր յօժարեալ խնդրեցի ի սուրբ Աստուածածնէն և առեալ շարագրեցի...» (Ձեռ. № 2079, Թիբթ 210ա—բ):

Այստեղից երևում է, որ ներքողի սկզբի մասը (100 տուն) պատկանում է Ներսես Մոկացուն, իսկ մնացածը (300 տուն)՝ Ստեփանոս Շատախեցուն: Պարզվում է նաև, որ ամբողջ ներքողը պետք է բաղկացած լինի 400 տնից, նույնպիսի հիմք կա նաև ներքողի վերջին մասերում: Այստեղ Ստեփանոս Շատախեցին նախ հայտնում է, որ Ներսես Մոկացին Նրուաղեմում գտնված ժամանակ խնդրել է Աստվածամոր գերեզմանից՝ թույլ տալ իրեն գրել այդ ներքողը և գրել է այնտեղ, հղած ժամանակ այդ 100 տունը:

Որոյ րաբուն Ներսէս անուն
Առիթ գոլով յառաջագոյն,
Յնրուաղէմ խնդրեալ նորուն
Տունըս հարիւր յարեաց ընդ նոյն...

Իր գրածի մասին Ստեփանոս Շատախեցին տալիս է երկու թիվ. նախ նշում է, թե ինքն ավելացրել է 250 տուն, ապա խոսում՝ 300 տան մասին: Այստեղ հակասութիւն չկա. մնում է ճիշտ հասկանալ հեղինակին: Բանն այն է, որ Ստեփանոս Շատախեցին քննվող ներքողյանին 250 տուն կցելով չի բաժարարկել և վերջից ավելացրել է մի ամբողջ տաղ՝ դարձյալ նվիրված Աստվածածնին: Նախորդ 250 տնից հետո գրված այս տաղն էլ հետը հաշվելով է նա ստացել ընդամենը 300 տուն: Ահա համապատասխան տողերը. ներքողի շարակցութեան մեջ, այդ մասի վերջում, Ստեփանոս Շատախեցին ասում է.

Շարեալ եղի ընդ նախնի ճառին,
Տունս հինգ յիսուն ամբողջին...

Այսինքն, շարակցեցի 250 տուն: Իսկ դրանից հետո ավելացված տաղի վերջում, նկատի ունենալով ամբողջ նյութը՝ ծալրից-ծալր, գրում է.

Նախ մին հարիւր Ներսէս ոգեալ,
Որ պըւէտ Մոկեաց մակձայնացեալ:
Յետ այսմ և մեր վստահացեալ,
Բան ի բանից զոլ կըցկցեալ...

Ինձ բանի որ վերոհիշյալ հիշատակարանն այդ բուրբից հետո է գրված, ռուսի այնտեղ հիշվել է 300 տուն:

Ն. Ակինյանը փորձել է անջատել այս ներբողի վերոհիշեալ երկու մասերը և որոշել հեղինակային պատկանելության սահմանը՝ ելնելով Ստեփանոս Շատախեցու նշված հաղորդումներէջ: Ըստ այդ բաժանման նա Ներսես Մոկացու գրածի առաջին տունն է համարում ներբողի սկզբի տունը՝

Աստուած և տէրն ամենայնի
Եւ արարիչն արարածի,
Որ է՛րն և է՛ և եղիցի՝
Եւ յանբաւիցս ոչ պարագրի...

Իսկ որպէս Ներսես Մոկացու գրած մասի ավարտ Ն. Ակինյանը մատնա-
նշում է հետևյալ տունը.

Իսկ դու ծնող հօր միածնին,
Մեք հրովարտակք գոլով նմին.
Դու հարսն անրիժ երրորդութեան,
Մեք փոշք հնչողք զծնունդ քոյին...

Ինչպէս երևում է, Ն. Ակինյանի օգտագործած ձեռագրում այս հաշիվները առանձին հակասութիւններ չեն առաջացրել, Բայց ահա Մաշտոցի անվան Մատենադարանի № 2079 ձեռագրում պահված ընդօրինակութիւնը ցուցաբերում է որոշ անհամապատասխանութիւններ: Այսպէս, օրինակ, այս ձեռագրի տվյալնե-
րի և Ակինյանի կատարած սահմանադատման համաձայն Ներսես Մոկացու գրած մասը հավասար է ոչ թե 100, այլ 97 տան, իսկ Ստեփանոս Շատախեցուն՝ ոչ թե 300, այլ՝ 296: Ամբողջ ստեղծագործութիւնն տների քանակն էլ ոչ թե 400 է, այլ 393: Պարզ է, որ Ն. Ակինյանի օգտագործած ձեռագիրը, եթե իրոք նրա տեղ-
յալները ներդաշն են Ստեփանոս Շատախեցու վկայութիւններին, պետք է հա-
մարել ավելի հարազատ, քան մեր ձեռքի տակ եղածը:

Չունենալով Ն. Ակինյանի օգտագործած ձեռագիրը, զժվարանում ենք խոսել
№ 2079 ձեռագրից պակասող յոթ տների մասին (3-ը՝ Ներսես Մոկացու, իսկ
4-ը՝ Ստեփանոս Շատախեցու գրած բաժնից):

Նկատելի է մի ուրիշ պարագա ևս. խոսքը Ներսես Մոկացու գրած համաձայն
վերջին սահմանագծին է վերաբերում: Այնտեղ, ուր Ն. Ակինյանն է ցույց տալիս
որպէս Ներսես Մոկացու գրածի ավարտ, խոսում է Պողոս առաքյալը, բայց նրա
խոսքը սլակասավոր է մնում: Այն ավարտվում է հաջորդ երկու տան մեջ.

Որպէս տէրն ետ զմահուն իւր փայտ
Առ յինքննէ շատէն պատահդ,
Յուսով ի նա յենուլ անխախտ,
Որք ի մեղաց ընկղմեալ յաղտ,

Տայցես և դու զփայտիս տախտակ
Ընդ եւս քո մահու կտակ,
Մեծ տրտմութեանս մեր ներհակ,
Եւ դու սովաւ՝ ընդ մեզ անջակ:

Այսպիսով, շնայած Պողոս առաքյալի պահանջն ամբողջանում է, քայք ներսեռ Մոկացու գրած մասն ավարտուն տեսք չի ընդունում ոչ միայն քննվող հարցի տրամաբանական ավարտի առումով, այլև ստեղծագործության ձևական կողմի: Նախ, Պողոս առաքյալի հարցին ու պահանջին Աստվածածինը պետք է գրեական պատասխան տար, որը և կտաներ դեպի սյուծի մավարտը: Այս, ձևական առումով ներսեռ Մոկացու խոսքը, որն է եղանակով, պետք է փառաբանական տեսք ստանար:

Այսպես մոտենալով խնդրին, տեսնում ենք, որ ներսեռ Մոկացու գրածի համար լիարժեք ավարտ կարող էր համարվել Ք 2079 ձևագրի ոչ թե 97-րդ տունը կամ 99-րդը՝ ինչպես նշեցինք Պողոս առաքյալի կապակցությամբ, այլ 108-րդը:

Ձի քեզ լիցին յար պաշտպան
Փառաբանիլ երրորդութեանդ,
Հօր և Որդոյ, Հոգոյդ բնական
Օրհնեբգութիւն միշտ յաւիտեան:

Այս դեպքում էլ տների քանակն է ավելանում՝ հակասելով վկայված «100»-ին: Այդ և այլ հարցերը, սակայն, լրիվ պատասխան կտանան հետագայում, երբ քննվող ներքողի բնագիրը կձգգրտվի նորանոր ընդօրինակությունների բաղադատմամբ:

Այս կապակցությամբ ուշագրավ է հետևյալ պարագան: Ստեփանոս Շատախեցու ավելացրած մասի վերջին հատվածներում առկա են ծայրակապով գրված տեղիք. «Ստեփանոս մեղաւորս» (1325—1388-րդ տողերի տնագրութիւն թառերը), հայոց այբուբեն՝ Ա—Փ (1393—1536-րդ տողերի տնագրութիւն տառերը) և ապա «Ողորմեայ» (1537—1568-րդ տողերի տնագրութիւն տառերը): Ըստ որում առաջին և երկրորդ ծայրակապերի միջև ազատ է մնում մեկ տուն (1389—1392-րդ տողերը), որը խորագրի բնույթ ունի: Վերջում ևս ազատ է մնում մեկ տուն (1569—1572-րդ տողեր), որն սկսվում է «Փառս տաքցուք» բառերով: Այս վերջինն իր նախորդի հետ տրամաբանական անմիջական կապ չունի, արդյո՞ք, հենց այդ տեղից չէ, որ պակասում են Ստեփանոս Շատախեցու կողմից չորս տները: Կամ՝ արդյոք «ողորմեայ»-ն չի՞ կազմել «Ստեփանոս մեղաւորս» ծայրակապի շարունակությունը և հատվածների տեղափոխություններ չե՞ն կատարվել, մնում է ստուգման կարոտ:

Այստեղից միաժամանակ այն միտքն է ծագում, թե ներսեռ Մոկացին էլ իր գրած մասի վերջում պիտի ունենար գեթ իր առումը, ներքողի գրության ժամանակը, վայրը, պայմանները (Աստվածածնի գերեզմանից խնդրել և այլն) հիշատակող տողեր, որոնք էլ կարող էին կազմել 3 տուն: Բնականաբար, Ստեփանոս Շատախեցին էլ, շարունակելով պոեմը, չէր կարող այդ տները պահել, այլ պետք է դուրս թողներ՝ օրգանական ամբողջություն ստեղծելու նպատակով: Թերևս հենց այդ տների միտքն է, որ նա վերարտադրել է իր վերոհիշյալ հիշատակարաններում: Այս դեպքում էլ ներսեռ Մոկացու գրած մասը կկազմեր ԵՂ թե 100 կամ 108 տուն, այլ 111: Նկատելի է, սակայն, որ Ն. Ալիկյանի նշած սահմանը (97 տուն) այս դեպքում իրեն կարդարացներ, որովհետև 97+3 հաշվվել համապատասխան վկայված 100 տանը: Այստեղ էլ նորից բարձրանում է Պողոս առաքյալի մտքի պակասության պարագան՝ մտածել տալով այլ հակասությունների մասին:

Բոլոր դեպքերում հարցի ճշգրտումը մնում է հետազային, երբ երևան կգան նոր ձեռագրեր ու փաստեր:

Ինչպես վկայում է վերևում մեջ բերված հիշատակարանը, Ներսես Մոկացին ներքողը գրել է Երուսաղեմում: Եվ քանի որ Ներսես Մոկացին այնտեղ է գտնվել 1608—1609 թթ. ուստի ներքողի նշված սկզբի մասն էլ գրվել է այդ ժամանակ: Ինչ վերաբերվում է Ստեփանոս Շատախեցու գրած 300 տներին, ապա գրանք ստեղծվել են կիմ անապատում: Երևում է, նաև, որ Ստեփանոս Շատախեցին շատ է խնդրել, որպեսզի իր ուսուցիչն ամբողջացնի ներքողը, սակայն նա ժամանակ չի գտել դրա համար՝ գործը թողնելով կամ հանձնարարելով իր աշակերտին:

Արդ, ինչո՞վ է պայմանավորված եղել վերոհիշյալ պատմությունը: Արդյոք Ներսես Մոկացին թերի՞ ներքող է գրած եղել, թե մի ուրիշ պատճառով է Ստեփանոս Շատախեցին շարունակել այն: Այս հարցի պատասխանը պետք է որոնել մշակված նյութի մեջ: Իսկ մշակված նյութը, ինչպես նկատված է մասնագետների կողմից, Աստվածածնի փոխման և Հոգյաց վանքում պահվող նրա պատկերի հետ կապված գրույցներն են: Անմիջական հիմքը Մովսես Խորենացու հաղորդած գրույցն է, որ նա շարադրել է Սահակ Արծրունի իշխանի հանձնարարությամբ (Մովսես Խորենացի, Մատենագրությունը, Վենետիկ, 1865, էջ 281—296): Դրա հիմքում ընկած են համարվում Դիոնիսիոս Արիսպագացու (Մ. Ավգերյան, Լիակատար վարք և վկայաբանությունը սրբոց, Դ, Վենետիկ, 1813, էջ 434—485), ինչպես և ուրիշների անուններով հայտնի նկարագրությունները: Առանձնապես ուշագրավ է Վերաննելոյն Նիկողոսիմոսի ասացեալը գրույցը ի ժնշումն ս. Աստուածածնի» («Թանգարան հին և նոր դպրութեանց», Բ, Վենետիկ, 1898, էջ 451—478): Ինչպես երևում է, Մովսես Խորենացու հաղորդածի հիմքում ընկած է եղել նաև տեղական լրացուցիչ գրույց՝ կապված հայ իրականության հետ:

Առհասարակ այդ գրույցը պարականոն համարված այն ստեղծագործություններից է, որի մեջ արտացոլված են ժողովրդական պատկերացումները և սովորությունները՝ արժանանալով միջազգային տարածման ու հետաքրքրության: Բայց քանի որ գրույցի նյութը կապվում է Բարդուղիմեոս առաքյալի պատմության հետ, իսկ վերջինս էլ՝ Հայաստանում քրիստոնեություն տարածելու, ուստի և գրույցը մի գծով հայկական է: Եվ հենց այդ գիծն է, որ հարստացված է Մովսես Խորենացու մոտ:

Մասնագետներն առհասարակ բարձր են գնահատել այդ պատմա-ավանդական և դիցաբանական գրույցը: Նրան անդրադարձել են Մ. Զամչյանը (Մ. Զամչյան, Պատմութիւն Հայոց, Ա. 297—293), Մ. Ավգերյանը (Մ. Ավգերյան, նշված աշխատությունը), Ղ. Ալիշանը (Ղ. Ալիշան, Հայապատմություն, էջ 51—53), Մ. Էմինը (Н. Эмин, Сказание о представлении богородицы и об ее образе, М., 1874), Ա. Գարագաշյանը (Ա. Գարագաշյան, Քննական պատմություն, Դ, Թիֆլիս, 1895), Ա. Սեդրակյանը (Ա. Սեդրակյան, Հայաստանից եկեղեցու պատկերագրությունը, ՍՊԲ, 1904, էջ 184) և շատ ուրիշներ:

Ներսես Մոկացին ներքողը գրել է՝ հիմք ունենալով վերոհիշյալ գրույցները և մասնավորապես «Յայսմատուրք»-ը (նավասարդ Ե): Բայց նա նպատակ չի ունեցել մտնել գրույցի բոլոր մանրամասնությունների մեջ, ուստի հենց այդ վիճակով էլ ավարտված է համարել իր անելիքը:

6. ԲԱՐԵՐԱՐ ԱՍՏՈՒԱԾ ՄԱՐԴԱՍԷՐ

Տպագրվում է առաջին անգամ: Պահպանվում է նաև Երոտադէմի սրբոց Հակոբյանց Մատենադարանի № 1449 ձեռագրում, որի մասին նշում է կատարել Ն. Ակինյանը («Բաղդէշի դպրոցը», էջ 113): Ետագրի մեջ հղած նշումը վկայում է, որ այն ստեղծվել է Օի Լիմ անապատին, ուստի և 1621—1625 թթ.: Աղոթքի 37-րդ տողում առկա ռայս անունն դարձվածքը միջնադարում ընթանալու սովորություն էր, երբ տեղ էր թողնվում ուրիշ անուններ թվարկելու համար: Այդպիսի օրինակներ շատ կան հատկապես հմայիլներում: Աղոթքի մի քանի տողեր, փոփոխումով առնված են Գրիգոր Նարեկացու:

Մոկացու մօտ այսպես է.

Նայեա ի սլառներ վշտացս դառնութեան,
Բազմավտանգ կրիցս կարեացս կցորդակից լեր բժշկապէս
Եւ փարատեա զցաւս հոգեկան խիթմանս,
Աստուած իմ և տէր իմ...

Նարեկացու մօտ՝

Հայեաց, տէ՛ր, ողորմութեամբ ի պատկեր վշտաց դառնութեան՝
Բազմավտանգ կրիցս կարեաց, զոր հանդէպ քո տարածանեմ,
Կցորդակից լեր բժշկապէս, և մի խոյզ ընտրութեան կոչեր

դատատրարար... (Բան Ի, Բ)՝:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

1. ԵՐԿԻՆՔ ԵՒ ԳԵՏԻՆՔ ԵՂՐԱՐՔ

Առաջին անգամ տպագրել է Ա. Մնացականյանը («Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր», էջ 388—389, տե՛ս նաև էջ 613): Իրենից ներկայացնում է 1-ին բանաստեղծության տարբերակներից մեկը (տե՛ս Ժանոթ. 1-ին):

2. ԵՐԿԻՆՔ ԵՒ ԳԵՏԻՆՔ ԵՂՐԱՐՔ

Առաջին անգամ տպագրել է Բ. Կյուլենբյանը («Ցուցակ ձեռագրաց Ան-Վիրիոյ Կարմիր վանուց և շրջակայից», էջ 457): Անձանոթ է մնացել տաղով հետաքրքրվող մասնագետներին: Այդ հրատարակության մեջ տողատումը տեղ-տեղ սխալ է. ճշգրտումը մերն է: Վերանայել ենք նաև կետագրությունը:

3. ՓԱՌԸՍ ՏԱՅՈՒՔ ՍՏԵՂՏՈՂԻՆ

Տպագրվում է առաջին անգամ: Հեղինակն է Սարգիս Քլիոնցին, որն ունի մի ուրիշ ոտանավոր ևս («Եղրայր, Էս քեզ զրեմ զայս բան», ձեռ. № 642, թերթ 125ր): Այս տաղը նվիրված է Լիմ անապատի գովքին, որը վերահիմենց ներօծեց Մոկացին 1621 թ.: Այդ կապակցությամբ առանձնապես ուշադրով են հետևյալ տողերը.

*) Այս փաստի վրա մեր ուշադրությունը հրավիրեց Ա. Ղազինյանը, որին հայտնում ենք շնորհակալություն:

Աղշիկ մ' է ոտրա շինողն
Ի յազգէն սուրբ հայրապետի,
Որ է բռնութեամբ առնալ
Կնութիւն զնա տաճիկ ազգի:
Պարտ է աղօթիւք յիշել,
Որ նոքա աստուած ողորմի.
Այս է պատուիրան փրկչին՝
Միմեանց խնդրել զրարի...

Պէտք է եղրակացնել, որ այստեղ նկատի է առնված իմ անապատի հիմնադրման բարերարը: Նա հեղել է հայոց «մեծ հայրապետի» ազգակիցներին՝ բռնութեամբ ամուսնացած ունեւոր մահմեդականի հետ: Ինչպես Սյունեաց Մեծ անապատի հիմնադրման զօրծին նյութական մեծ օգնութիւն է ցուցաբերել Հայկազն զորավարը, այնպես էլ իմ անապատի հիմնադրման ժամանակ ներսեւ Մոկացուն նյութական օգնութեամբ աշակցել է վերահիշյալ հայուհին, որի անունը զբօրախտարար չի հայտնված:

Ուշագրավ են նաև այն տողերը, որտեղ ներսեւ Մոկացու հետ միասին որպես իմ անապատը բարեկարգող, հիշվում է ոմն Ստեփանոս:

Սորա զարդարողքն ասեմ՝
Են երկու լուսաւոր հոգի,
Որ միին ներսէս կաշն
Եւ միւսոյն՝ Ստեփաննոսի:

Խոսքն, անշուշտ, Ստեփանոս Շատախեցու մասին է, որը լրացրել է Աստվածածնի փոխմանը նվիրված ներբողը (տե՛ս 5-րդ բնագրի ծանոթագրութիւնը):

4. ԵՍ ՆԵՐՍԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՄՈՎԱՅԻ

Ներսեւ Մոկացու ձեռքով գրված այս հիշատակարանը իմ անապատի հիմնադրման թվականը հաստատող մի ծանրակշիռ փաստ է, որը չի արժանացել բանասերների ուշադրութեանը: Այն հավաստում է, որ իմ անապատը հիմնադրվել է 1621 թ.: Ցարդ անտիպ է և պահպանվում է Մաշտոցի անվան Մատենադարանի № 6332 ձեռագրում (Ղ. Փերդալեմյան, Նշխարք պատմութեան Հայոց, № 702, էջ 198ր):¹

5. ԱՅՍ ԳԻՐԲՍ ԲԵԽԼՈՒ ՆԵՐՍԷՍԻ ՁԵՌԱԳԻՐՆ Է

Գրիգոր Վանեցի վարդապետի հիշատակարանը. պահպանված է Մաշտոցյան Մատենադարանի № 5128 ձեռագրի պահպանակի վրա: Առաջին անգամ տպագրվել է մեր կողմից («Լրաբեր» ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտութիւնների բաժ., Երևան, 1970, № 7, էջ 92):

6. ԱՍՏՈՒԱԾԱԶՈՐ ՍՈՒՐԲ ԽԱՉՍ

Ներսեւ Մոկացու աղճատված տապանագիրը. առաջին անգամ տպագրել է Ե. Լալայանը («Ազգագրական հանդէս», Թիֆլիս, 1912, էջ 92):

¹ Այս տեղեկութիւնը մեզ հայտնել է Վ. Հակոբյանը, որին հայտնում ենք մեր շնորհակալութիւնը:

Ն. Ակինյանը, մասամբ ստեղծելով, մոտավոր ձևով լրացնում է Ե. Հալա-
յանի տված քերականության ընթերցածը, ստանալով այս պատկերը.

Աստուածազօր սուրբ խաչա կառուցեալ է
ի բարեխաւա առ Աստուած հոգւոյ (հաւրն)
Ներս(էս) վարդապետ(ի) (հանգուցելոյ ի Քրիստոս)
ի Ս ամի (կենաց իւրաց):
Եւ Ներսէս(ի) Ռկէ
Թվականին գնաց ի Տաթևի յանապատն
Դ ամ կացեալ անդ եւ եկեալ հաստատեաց
Աստ (զանապատս): Եւ յետ Գ եւ կէս ամաց
(Հանգեալ ի Տէր ի ՌՀԴ): Եւ այս Ե ամ է
Որք երկրպագէք, տուք զողորմին:
(«Քաղէշի գպրոցը», էջ 100—101):

7. Ո՛Վ ՔԱՌԱՆԻՇ ԶԷՆ ՅԱՂԹՈՒԹԵԱՆ

Տպագրված է Ե. Հալայանի կողմից («Ազգագրական հանդէս», 1912, էջ
92—93): Վերջինս բերում է Ստեփանոս Շատախեցու այս արձանագրությունը՝
Հիմ կղզում գտնվող մի խաչքարի վրայից, որը գրված է 1629 թ.: Խաչքարի
առաջին երեսին գրված է. «Կանգնեցի ղխաչս բարեխոս առ Աստուած հոգւոյ իմոյ
ես մեղաւոր Ստեփանոս րանի սպասաւոր ի Հիմայ անապատս ընդ հովանեա
սուրբ Դէորգայ զաւրավարին ի Թվականին ՌՀԴ (1629), որք երկրպագէք յիշեցէք
զիս և ղմիաբան անապատիս ի Քրիստոս»:

8. Ի ՎԱՂ ԺԱՄԱՆԱԿԱՅ ԱՆՏԻ

Առաջին անգամ տպագրված է մեր կողմից (Խ. Աբովյանի անվան հայկա-
կան պետական մանկավարժական ինստիտուտ, «Ասպիրանտական գիտական աշ-
խատությունների ժողովածու, № 5, պրակ Բ, 1971, էջ 54—56): Մշտուցի ան-
վան Մատենադարանի № 3881 ձեռագիրը, որի մեջ պահպանված է բնագիրը,
ժողովածու է, գրված Դսիւղ վահրում 1886—1888 թթ.:

Ձեռագրի գրիչը՝ Առաքել վարդապետ Կոստանյանը, նշված գործի սկզբում
գրում է, որ վաղ ժամանակներից իրեն հետաքրքրել է, թե ովքեր են սկզբնավո-
րել Վասպուրականի ժողովին Հիմ և Կոտուց անապատները: Նա նշում է, որ գտել
է ոմն Ներսես վարդապետի ձեռագիրը՝ քաղված Արիստակես վարդապետի պատ-
մությունից: Առաքել վարդապետ Կոստանյանը զոգոհում է, որ Ներսես վարդա-
պետի այդ ձեռագրում Թվականների շփոթված են, ուստի որոշում է ճշորաստեղծ
գոյակցութեամբ (այսինքն՝ հնարավոր շտկումներով— Ա. Դ.) ի լույս ընծայել
իր ձեռքի տակ եղած նյութը:

Թի ովքեր են ձեռագրի հետ առնչվող Արիստակես և Ներսես վարդապետ-
ները, հայտնի չէ: Լոկ ենթադրաբար կարելի է Արիստակես վարդապետին նույ-
նացնել Սյունյաց Մեծ անապատի գործիչներից մեկի՝ Տեր Արիստակեսի հետ, որը
հետազայում հիմնադրեց Տանձափարախ անապատը (Առ. Դավրիժեցի, Պատ-
մութիւն, էջ 93—102), և որի անվան հետ կապվող մի քանի ձեռագրեր մեզ
հայտնի են: Թերես Նա, որպես Ներսես Մոկացու ժամանակակից, նրա կյանքին
ու գործին տեղյակ մարդ, գրեր Ներսես Մոկացու վարձը:

№ 3881 ձեռագրում պահպանված վերահիշյալ ակնարկը բաղկացած է երկու

մասից: Առաջին մասում պատմվում է ՌՆ (1621) թվականին բռնկած մի հեռամաճարակի մասին, իսկ երկրորդ մասում ներկայացվում է Ներսես Մոկացու կենսագրությունը:

Այս ակնարկը նախ հետաքրքրական է նրանով, որ տեղեկացնում է, թե Արքիստակես վարդապետը գրել է Ներսես Մոկացու վարքը, մի գործ, որի մասին իմանում ենք առաջին անգամ: Այդ վարքն անշուշտ ընդաբձակ է եղել, բայց մեզ հասել է համառոտված և աղավաղումներով:

Ն 3881 ձեռագրի գրիչը մեզ հետաքրքրող ակնարկի երկրորդ մասում պատմում է, որ նույն ՌՆ (1621) թվականին Ներսես Բեղլուն յոթնասուն կրոնավորների հետ գնացել է Տաթևի Մհո անապատը, այնտեղ մնացել 5 տարի, ապա Տաթևից եկել է Լիմ և այնտեղ հիմնել միաբանություն:

Ինչպես հայտնի է, բանասիրության մեջ Լիմ անապատի հիմնադրման թվականը համարվում է 1622-ը: Ժի սոցան է ներսէս Մոկացի, որ մականուամբ Բեղլու կոչիւր,— գրում է Մ. Զամչյանը,— զնաց ի գաւառն Վասպուրական յամի 1622 ՌՆԱ և մտեալ ի կղզին Լիմ կողեցեալ, շինեաց վանս...» (Մ. Զամչյան, Պատմութիւն Հայոց, Գ, էջ 565): Այս նույն թվականն է վկայված նաև ուրիշ լուրջուրների (սեղմիածին, 1944, № 10—12, էջ 32): Լ. Ոսկյան, Վասպուրական—Վանի վանքերը, Ա, Վիեննա, 1940, էջ 19):

Դրանց հակառակ՝ այժմ Ներսես Մոկացու նորահայտ վարքից տեղեկանում ենք, որ Լիմ անապատը հիմնադրվել է 1626-ին: Պետք է նշել, որ գոյություն ունի Լիմ անապատի հիմնադրման թվականը հաստատող մի ծանրակշիռ փաստ, որը չի արժանացել բանասերների ուշադրության: Այդ հենց իր՝ Ներսես Մոկացու գրած մի հիշատակարանն է. «... Ես ներսէս վարդապետ Մոկացի թուփն ՌՆ (1621) եկի ի Լմայ սուրբ ուխտս և տեսի զայս երկնաման սուրբ տաճարս, որ յանուն Գէորգայ Զօրավարին, զի խրթնացեալ էր ի բարեզարգութենէ փեսային և փեսայւելին և թափուր արդեանց և յամենայն գրոց և փակեալ եկեղեցին: Եւ ես ծառայ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եկի Տաթևու անապատէն աստ: Տեառն զործակցութեամբ սկսայ ժողովել աստ եղբարս վաթսուն խաբազնազգեստ կրօնաւորս և սկսայ գիրք և արդիւնք ժողովել ի վայելումն սոցա» (Ղ. Փիրղալեմյան, Նշխարք, Ա, № 702):

Այս փաստը հիմք է տալիս ասելու, որ Լիմ անապատի միաբանությունը Ներսես Մոկացու կողմից հիմնադրվել է 1621 թ.:

Այսպիսով, մեզ է հասել Լիմ անապատի հիմնադրման երեք թվական՝ 1621, 1622, 1626, որոնցից ճիշտը առաջինն է, որովհետև դա վկայված է հենց իր՝ Ներսես Մոկացու կողմից:

Ն 3881 ձեռագրում ճիշտ չի նշված նաև բանաստեղծի մահվան տարեթիվը:

Այստեղ գրված է, որ Ներսես Մոկացին, Լիմում շորս տարի մնալուց հետո, կրեց իր մահկանացուն, այսինքն՝ Լիմ եկավ 1626-ին և մեռավ 1630-ին: Մինչդեռ նրա մահվան թվականի (1625) մասին ունենք ստույգ տեղեկություն:

Ի՞նչն է այս աղավաղումների պատճառը:

Մեր կարծիքով թվերի աղավաղումները առաջացել են նրանից, որ ՌՆ (1621) թվականը Ն 3881 ձեռագրում թյուրիմացաբար համարվել է ոչ թե Լիմի միաբանության հիմնադրման, այլ Ներսես Մոկացու Տաթև գնալու թվական: Բուն վարքի մեջ (Արքիստակես վարդապետի գրած) նախ նշված կլինեք Ներսես Մոկացու Տաթև գնալը, հինգ տարի այնտեղ մնալը, ապա ՌՆ (1621) թվականին Լիմ տեղափոխվելը:

Հետագայում Բվերի խառնաշփոթության հետևանքով, որի մասին խոսում է նաև գրիչը, 1621 թ. վերագրվել է Ներսես Մոկացու կիմ մեկնելուն նախորդող շրջանին: Զեռագիրը մեղ կովան է տալիս վերադանդնելու նախկին վիճակը: Առաջիկ վարդապետ Կոստանյանին հետաքրքրում են կիմ և Կոուց անապատները և ոչ թե Տաթևը, և նրա բերած 1621 թ. համանարակը համընկնում է անապատի միաբանության հիմնադրմանը, և այդ առթիվ էլ զուգահեռաբար այն հիշվում է Ներսես Մոկացու գործունեության համար կարևոր՝ կիմ անապատի միաբանության հիմնադրման հետ միասին:

Այս շտկումից հետո ճշգրտվում է նաև Ներսես Մոկացու մահվան թվականը, եթե բանաստեղծը կիմ է եկել 1621-ին, ապա շորս տարի հետո նրա մահը կլինեի 1625-ին, ինչպես վկայում է նրա տապանաքարը:

Ներսես Մոկացու մահվան թվականը բանասերները, բացառությամբ Ն. Ակիկյանի, համարում են 1627-ը, հիմք ընդունելով Առ. Դավրիժեցու վկայությունը. «... Ներսէս վարդապետն... վախճանեցաւ և անդէն թաղեցաւ և վախճանն նորա եղև ի Թուին մերում ՌՉԶ (1627) ամիս (Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, էջ 254):

Ն. Ակիկյանը, ելնելով Ստեփանոս Շատախեցու թողած տապանադիր—արձանագրությունից, Ներսես Մոկացու մահվան թվականը դնում է 1625-ին (Ն. Ակիկյան, Բաղէշի դպրոցը, էջ 99):

Եփոթված թվականների այս վերադասավորումից ակնարկի ժամանակագրությունը կատանա իր ճշգրիտ տեսքը, այսինքն՝ կստացվի, որ Ներսես Մոկացին կիմ է եկել 1621-ին և մահացել՝ 1625-ին:

Ճ 3881 ձեռագրում պահպանված նորահայտ քնագիրը հետաքրքիր տեղեկություններ է տալիս Սյունյաց Մեծ անապատի և կիմի միաբանության մասին:

Բարձրացնելով Սյունյաց Մեծ անապատի դերը, հեղինակն այստեղ նշում է, որ նրա միաբանների թիվը հասնում էր 300-ի: Այսպիսի որոշակի թվի չենք հանդիպում ուրիշ աղբյուրներում: Անապատի՝ նման բազմամարդության և բազմատարրության մասին վկայում է նաև Առաքել Դավրիժեցին (Առաքել Դավրիժեցի Պատմութիւն, էջ 253):

Նորահայտ ակնարկում ուշագրավ տեղեկություններ կան նաև Ներսես Մոկացու մահվան որոշ մանրամասնությունների մասին: Առաջին անգամ այստեղից իմանում ենք, որ նա մահվանից առաջ իր ստեղծած միաբանությունը կտանկել է անապատի երկու վարդապետների:

Այդ վարդապետները, ինչպես նշված է քննվող վարձում, Մեղքիսեթ Վժնիկյին և Ստեփանոս Շատախեցին էին, որոնք Ներսես Մոկացուց հետո կիմ անապատի ամենանշանավոր գործիչներն էին: Ստեփանոս Շատախեցին մինչև 1647 թ. հանդիսանում էր կիմ անապատի առաջնորդը:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՆԵՐՍԵՍ ՄՈՎԱՅՈՒ ԱՆԴՐԵԱՍ ԵՐԵՅԻՆ ՆՎԻՐԱԾ ԳԱՆՁԻ ՈՒ ՏԱՂԻ ՄԱՍԻՆ

Մաշտոցի անվան Մատենադարանի № 5958 ձեռագրում (թերթ 143ա—149ա) ներսեւ Մոկացու Անդրեաս երեցի մասին զրած գանձի և տաղի բնագրերը, ինչպես նշվեց, խիստ վնասված են: Գանձի խորագրից կարդացվում են հետևյալ բառերն ու տառերը. «Գանձ ասացեալ ներ... մականուն Բեղլ... յԱնդրեաս քահանայ... կեցաւ ի պարսիս Շա... Դողթան գաւառ...»:

Սկզբի տողերն են.

Հատդ անմահա[կան],
[Հացդ] իջեալ մարդկան...

Տեղ-տեղ կարդացվում են առանձին տողեր, որոնք օգնում են մասնակի զտղափար կազմելու այդ գանձի շարադրության ձևի, բովանդակության, հանդավորման և այլ հարցերի վերաբերյալ: Ահա մի քանի տող.

... Ծով կազբից հասեալ,
... շառաւիղեալ,
Միջագետս լըցեալ,
ԶԱսորիս կալեալ...
Գառինք ողորկեալ,
Արեամբ պարարեալ,
Գառինս ընծայեալ,
Բաղումբ յայս վարժեալ...

Գանձի վերջին տները, հավանաբար, շարադրված են «[ն]երս[ի]սի» ծայրակապով:

Քանի որ այդ դանձին կցված տաղն էլ է անտիպ և ցարդ բանասիրությանն անծանոթ, հետևաբար նրա մասին մասնակի պատկերացում տված լինելու նպատակով, ընդօրինակում ենք որոշ հատվածներ.

...զուարճ մանկունք եկեղե[ցւոյ],
...առէք զժողովուրդս աստուծոյ,
սըրտիւ ի յերախան սիրոյ,
...սուրբ վըկայիս նորոյ:
...երգ մըտօք պայծառ,
եօր ... արեամբըն վառ ի վառ,
...[մա]րդկան կենաց պատճառ,
...որ նմա ի մի բարբառ...
Ոստովք բարձրա... [թ]ըռնոց կազմեաց
Եւ երկիր... բազմաբեր արդեանց,
Ժամն այն... սնոյ ի ամառնն էանց,
Եւ եկաւ... աւուրց աստեն աճեաց:
Սաստկութիւն սառնամանեաց պատեաց,
[Աւ]ուրցս այս վերջնոյ ըզմեղ խիստ պաշարեաց...

Անդրեաս քահանայի նահատակութեան համառոտ պատմությունը հետեւյալն է: 1617 թ. Պարսից Շահ-Աբասը այցելում է Ազովիս: Ընդառաջ են տանում նաև դպրոցականներին: Շահը նկատում է, որ աշակերտների մազերը խուլած են՝ նրանց տղեղ տեսք տալու նպատակով: Հայտնի է դառնում, որ դա արված է, որպեսզի Շահի համար գեղեցիկ պատանիներ ընտրելու գործը խափանվի: Համապատասխան քննությունների ժամանակ դպրոցի ուսուցիչ Տեր-Անդրեաս քահանան «հանցանքն» իր վրա է վերցնում: Նրան տանջում են և ստիպում հավատափոխվել, բայց նա հրաժարվում է՝ նախընտրելով տանջամահությունը: Հայրենակիցները նրա դիակը թաղում են, իսկ հիշատակը սրբացնում՝ եկեղեցական տոների մեջ տեղ տալով նաև նրան: Ներսես Մոկացին էլ ահա եկեղեցական այդ արարողությունների համար գրում է՝ որ գանձը և տաղը:

2. ՆԵՐՍԵՍ ՄՈԿԱՅՈՒՆ ՎԵՐԱԳՐՎԱԾ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մովսէս վարդապետը սխալմամբ Ներսես Մոկացուն է վերագրել հետեւյալ բանաստեղծութիւնները.

1. Ղարիպն յորժամ արար խորհուրդ գնալոյ...
2. Անսկիզբն անճառ Աստուած, արարեալ էիցս ամենայն...
3. Անկղն անճառ անճառական...
4. Աստուած անհաս, անկզր, անպար...
5. Այսօր ցընծայ լեառն Թափօր...
6. Գերահրաշ Աստուած զոլով...

Ն. Ակինյանը ցույց է տվել, որ այդ վեց բանաստեղծություններից չորսը (1—4-րդ) պատկանում է Ներսես Բաղիշեցուն, իսկ մեկը (5-րդ)՝ մի ուրիշ Ներսես Մոկացուն՝ ապրած մեր հնդիկներից մեկ դար առաջ։ 6-րդ տաղի հարցում Ն. Ակինյանն էլ է շփոթվել, այն վերագրելով Ներսես Մոկացուն։ Ն. Մովսիկանն իր ձեռքի տակ ունեցել է այս տաղի միայն մի օրինակը՝ պահպանված Նրուսահեմի սրբոց Հակոբյանց Մատենադարանի № 1249 ձեռագրում։ Այդ օրինակին մենք ծանոթ չենք, բայց ունենք այդ օրինակի սկիզբը և վերջը, որը բերել է Ն. Ակինյանը (Ն. Ակինյան, Բաղէշի դպրոցը, էջ 113)։

Մաշտոցի անվան Մատենադարանում այս տաղը պահպանված է չորս ձեռագրում (№ № 7039, 554, 1153, 423)։ Այդ օրինակները միմյանցից զգալիորեն տարբերվում են, սակայն բոլորն էլ ունեն նույն սկզբնատունը, ինչ որ հաղորդում է Ն. Ակինյանը.

Գերահրաշ Աստուած զոլով
 Մածկեալ անճառ խորհրդով,
 Երևեցար յերկրի մարմնով
 Զմեղս Ադամայ լուանալով։

Վերոհիշյալ ընդօրինակություններից երկուսը՝ պահպանված № 1159 և № 423 ձեռագրերում վերջանում են այն քառատողով, որ կա Ն. Ակինյանի մոտ.

Զորդի կուսին տէր միական
 Դաւանելով հօր էական,
 Որում և մեր աստ միաբան
 Տացուք ըզփառս միշտ յաւիտեան։

Սակայն № № 7039, 554 ձեռագրերում տաղի վերջն այլ է.

Նկեալ եղեալ որդի մարդկան
 Անեղածին Աստուածըն բան,

Հընուլ քղտառսն օրինական՝
Ազատութիւն որդոց մարդկան:

№ № 7039, 554 ձեռագրերում պահպանված օրինակը տարբերվում է վերոհիշյալ երկու օրինակից նաև նրանով, որ ունի ծալրակապ՝ «Գրիգորի հ»:

Ուշագիր քննելով եղած տարբերությունները, հանգում ենք հետևյալ եզրակացությանը. «Գերահրաշ Աստուած գովով...» տաղը մեզ է հասել երկու տարբեր խմբերով. առաջին խմբին են պատկանում Երուսաղեմում գտնվող № 1249 ձեռագրի, ապա Մաշտոցի անվան Մատենադարանի № № 1153 և 423 ձեռագրերի պահպանած օրինակները, իսկ երկրորդ խմբին՝ Մաշտոցի անվան Մատենադարանի № № 7039, 554 ձեռագրերում գտնվող օրինակները:

Հարց է առաջանում արդյոք ճիշտ է վկայում Երուսաղեմի № 1249 ձեռագրի խորագիրը, թե տվյալ տաղը Մոկացունն է («Այլ տաղ Մոկացուն»), թե ճշմարիտը «Գրիգորի հ» ծալրակապի մեջ պետք է որոնել:

Այդ հարցին պատասխան տալու համար պետք է համեմատել տաղի վերոհիշյալ երկու խմբերը: Այս աշխատանքից պարզվում է, որ տաղի նախնական օրինակին հարազատ պիտի համարվեն երկրորդ խմբի բնագրերը, իսկ առաջինները՝ զգալիորեն աղավաղված: Այս հարցում միակ որոշիչը ծալրակապն է՝ «Գրիգորի հ», որ առկա է № № 7039 և 554 ձեռագրերում: Վերջինումս տների և տողերի դասավորության աղավաղումներ չեն նկատվում: Մյուս երկու օրինակները այս ընդօրինակությունների համեմատությամբ մի կողմից ունեն տողերի բացթողումներ, իսկ մյուս կողմից՝ նոր տների հավելումներ: Այսպես, օրինակ, եթե ծալրակապով բնագրերն ունեն 32-ական տող, ապա № 1153 ձեռագրի օրինակն ունի 28, իսկ № 423 ձեռագրինը՝ 29 տող: № 1153 ձեռագրի օրինակից պակասում են ծալրակապով օրինակի 9—10, 15—16, 21—26 29—30-րդ տողերը, իսկ № 423 ձեռագրի օրինակից՝ 7—10, 15—16, 25—26. 29—30 և 32-րդ տողերը: Ինչպես տեսնում ենք, աղավաղված օրինակները ոչ միայն նման չեն բնագրին հարազատ օրինակներին, այլև՝ միմյանց: Այնուհետև, № № 1153 և 423 ձեռագրերի օրինակները վերջից ունեն 2-ական նոր տներ, որոնք ոչ մի կապ չունեն բուն բնագրի հետ: Ահա դրանք № 1153 ձեռագրից:

Կայր անդ և ձայնըն հայրական
Յերկնից իջեալ հաճոյական
Եւ սուրբ հոգին կենդանական
Յամպ լուսաւոր անճառական:

Արդ ի կուսին տէր միական
Դաւանելով հօր էական,
Որում և մեք աստ միաբան
Փառքս տաքուք միշտ յաւիտեան:

Թի որտեղից են դալիս այս տները՝ դժվար է ասել: Մեղ հա-
ջողվեց պարզել լոկ այն, որ առաջին տան սկզբի խրկու տողը ոչ
այլ ինչ է, բան Հովհաննէս Երզնկացու մի տաղի սկզբի հետեւյալ
երկու տողը՝ մասնակի փոփոխմամբ (ընդգծում ենք նույնական
տեղերը).

Այսօր ձայնըն հայրական
Յերկնից իջեալ հաճոյական...

(Ա. Սրապյան, Հովհաննէս Երզնկացի, Երևան, 1958, էջ 219):

Այս հարցի լրիւ պարզաբանման համար պետք է դանել ու-
րիշ փաստեր, որպիսիք առայժմ մեղ պակասում են: Հետաքրքրա-
կան է, սակայն Մաշտոցի անվան Մատենադարանի № 5244 ձե-
ռագիրը, որի մեջ (թերթ 439) այդ տաղն («Այսօր ձայնըն հայրա-
կան...») տնի այսպիսի խորագիր. «Տաղ անուշ ի վերայ ջրին ի
Գրիգորէ»: Արդյոք այս Գրիգորն էլ նույն Գրիգորն է, որ գրել է
«Գերահրաշ աստուած զոռով...» տաղը, դժվար է ասել:

Նույն տաղը № 8029 ձեռագրում (թերթ 223բ) ունի «Տաղ
մկրտութեանն Քրիստոսի աստուծոյ մերոյ ի խաչատրէ» (տե՛ս Ա.
Սրապյան, Հովհաննէս Երզնկացի, էջ 276): Այս խաչածեղ հաւա-
սությունները կարոտ են լուսաբանման:

Մնում է պատասխան տալ այն հարցին, թե ինչպես է պա-
տահել, որ «Գրիգորի և» քննվող տաղը վերագրվել է Ներսէս Մո-
կացուն: Մովսէսի վարդապետն այդ մասին ոչինչ չի ասում. բեր-
ված տողերից էլ չի երևում հեղինակի ով լինելը: Բայց, ինչպես
նշում է Ն. Ակինյանը, ինքը 1945 թ. հուլիսին Մովսէսից ստացել
է նույն տաղի սկզբի և վերջի տները՝ հետեւյալ խորագրով. «Այլ
տաղ Մովսէսին» («Բաղէշի գպրոցը», էջ 113):

Դժվար է ասել, թե այստեղ ո՞ր Մովսէսին է նկատի առնված.
գուցե եղել է Գրիգոր Մովսէսի կոչված բանաստեղծ: Մի բան, սա-

կայն, մեզ համար վերջնականապես պարզ է. դա այն է, որ քնն-
վող տաղը ոչ մի կապ չունի ներսես Մոկացու հետ:

2. Ոսկյանի ձեռագրացուցակում ներսես Մոկացուն վերա-
գրված է «Ողբ մայրաքաղաքին Քաֆայու» ստեղծագործությու-
նը (2. Ոսկյան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, Վիեննա, 1963,
էջ 1067), որը նույնպես ներսես Մոկացունը չէ, այլ ներսես Բա-
ղիշեցունը (Ն. Ակիսյան, Բաղէշի դպրոցը, էջ 174):

3. ԱԿՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԱԶԻՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ներսես Մոկացու ստեղծագործությունների համար հոգեոր
սնունդի աղբյուր են հանդիսացել. Ժողովրդական բանահյուսու-
թյունը և իր ժամանակի պատմական իրականությունը, Աստվա-
ծաշունչն ու պարականոն գրականությունը, հայ գաղության դա-
սակաւններ՝ Մովսես Խորենացին, Գրիգոր Նարեկացին, Գրիգոր
Տղան և ուրիշներ:

Ժողովրդական բանահյուսութայնից են առնված երկերի և
երկրի վիճարանությունը, ինչպես նաև երուսաղեմի անկմանը
նվիրված ողբը: Ժողովրդական ստեղծագործության որոշ առանձ-
նահատկություններ օգտագործված են նաև նրա տարբեր բանաս-
տեղծություններում: Առօրյա իրականությունից են առնված հատ-
կապես Անդրեաս բահանայի մասին գրված պոեմի ու տաղի, Սյուն-
յաց Մեծ անապատին նվիրված ներբողի և «Մանուկ մտավարժ
էի» ողբ-ներբողի նյութերը:

Ներսես Մոկացու համար ստեղծագործական ազդեցիկ է եղել
Աստվածաշունչը: «Ներբողեան գովեստի շորեցունց արանց...
ստեղծագործության մեջ առանձին արձագանքներ կան Նրգ-երգո-
ցից (գլուխ Ա, Գ) և Նղեկիելի մարգարէությունից (գլուխ Ա, տե՛ս
նաև ծանոթագր. № 2): Այս առումով ավելի ուշագրավ է «Մանուկ
մտավարժ էի...» ներբողը: Ինքը՝ հեղինակը նշում է, որ այստեղ
նկատի ունի Սողոմոն իմաստունի Առականը և նրա Իմաստութեան
գիրքը: Կարելի է բերել կոնկրետ փաստեր այդ իրողությունը հույց
տալու համար: Դրանցից է, օրինակ, «Ընկալարուք զխրատ և մի
զարծաթ և զփառութիւն բան զոսկի ընտիր: Հաւ է իմաստութիւն,
բան զականս պատուականս և ամենայն ինչ պատուական չարժէ
զնա» (Առակք Սողոմոնի, Բ, 10):

Այս խրատի ոգով են շարադրված նշված բանաստեղծության
սկզբի մի շարք տները:

Ասաց. «Մի՛ ծախեր զդա
Կեփաղու ոսկոյ սոփերալ...
Յեռեալ ընդ համակ ոսկոյ
Դէմ նորա ոչ վայելչանայ:
Գանձք և մեծութիւնք երկրի
Բաղդատեալ ոչ արժէ զնա...

Ավելի պերճախոս է բանաստեղծութեան սկիզբը, ուր ներսևս Մոկացին ասում է.

Մանուկ մտավարժ էի
Եւ հոգոյ բարոյ զիպեցայ...

Դա ասնված է Սողոմոնի Իմաստութեան զրրից, որտեղ ուղղակի ասված է. «Մանուկ էի մտավարժ և հոգոյ բարոյ զիպեցայ...» (Իմաստութիւն Սողոմոնի, Ը, 19):

Ներսևս Մոկացու «Աստուած և տէրն ամենայնի» ներբողում առկա է Ազաթանգեղոսի համապատասխան վկայութեաննրի արձագանքը: Այսպէս, Ազաթանգեղոսը գրում է. «Եւ ամենայն դերն ի փախուստ դարձեալ՝ առաջի մարդկանն Լրեկցսն, զօձիս զգլխով տրկեալ և զճակատ հարեալ և զճիշ բարձեալ՝ մեծագոչ լալեօք ասէին, թէ. «Վա՛յ մեզ, վա՛յ մեզ, վա՛յ մեզ, զի լամենայն Երկրէ փախստական արար զմեզ Յիսուս որդին Մարեմու, զտերն մարդկան և աստի ես ի ձեռն կապելոյս և մեռելոյս և հաս մեզ փախստական լինել» (Ազաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1909, էջ 405): Ներբողում կարգում ենք.

Եւ զգիցամայրն խորտակեաց,
Զբռնութիւն բակեալ զիւաց,
Քարանձաւէն լայն հալածեաց
Եւ սրբութեան տեղիք դործեաց:

Իսկ չար զինորբն զունդ առնէին
Ընդ հիւսիսի բարձրու լեռինն,
Վիրգս ի վիմաց լայն հոսէին,
Ընդ այն և ճիշս արձակէին...

Դրվատելով իր ժամանակի մեծագործ դորավար Մելիք Հայկազնին, բանաստեղծը դիմում է Տիգրան Երվանդյանի դիմապատկերը զծող պատմահոր օգնութեանը՝ ստեղծելով այսպիսի տողեր.

Յաղնազար հայրըն նորա
 Յորջորջեալ զնա սեռական,
 Հալկազն անուանէր զնա՝
 Նմանիլ Հայկազնին Տիգրան,
 Որ յունաց յաղթող գտաւ
 Եւ սկիւթացոց հիւսիսական,
 Որոյ ի դիմի հարաւ
 Քուրդն մեծ՝ վիշապ Աժդահան:
 Սակաւն սնակաւշտն եհար
 Ըղդեղարդն ընդ լերգակողմանն.
 Ըզլեարդն և զթոք ներա
 Գեղարդեամբն ի փորոյն եհան...

Առաջին անգամ չափածոյի վերածելով հերոսապատումի ալս բեկորը, Ներսես Մոկացիին հպարտությամբ է հիշեցնում, թե գովերգ-վող Տիգրանի մասին.

Մովսէս բերթեղն պատմէ,
 Եւ գովէ զնա յոյժ զանազան,
 Զձե և գտիպ կերպին.
 Զբաղդրն մեծ ընդ գորեղութեան...

Այսպես ասելով, ինչպիս նկատել է Ղ. Ալիշանը, նա նկատի ունի աւատմանոր հետեւյալ տողերը. «Բայց գովեմ զբաջ նահա-տակն իմ և զնիզակաւորն և զամենեկին բոլոր անդամովք համե-մատն և ի գեղեցկութիւն հասակի տարտեալ. քանզի առոյգ, ամե-նայնի ըստ իրնարս պատշաճեալ, և աժով ոչ գոք ունելով իւր դուռ Եւ զի՝ երկայնեմ զբանս, բանդի ի լինել մարտին նիզակաւ օրի նակ իմն որպէս զչոր հերձեալ գերկաթի ամուր հանգերձն՝ շամփրէ զժեղաճակ յրնդարձակ աէգ նիսակին և յամփոփել միտ անգամ զձեռն՝ արտարս զիէս մասն թոքոցն հանդերձ զինուն ի դուրս բերէ (Մովսէս խորենացի, Պատմութիւն Հայոց, Տիգրիս, 1913, էջ 32):

Մովսէս խորենացուն հիշելով և նրա տողերի չափաբերումով Ներսես Մոկացիին արտահայտում է ալն ներքին ապրումներն ու մտորումները, որոնց շնորհիվ 1620-ական թվականների ազդալին հերոսի՝ Մելիք Հայկազնի մեջ նա և իր ժամանակակիցները, ներքի ու հասկանալի չափազանցումներով, տեսնում էին Տիգրան Եր-վանդանի հերոսական կերպարը և լուրջաւն երազում հայրենի երկրի ազատ ու հոյս անցյալը:

Ներսես Մոկացու գրական ժառանգությունը Մովսես Խորենացու հետ է կապված նաև այլ թեմաներով, որոնցից հատուկ ուշադրություն է արժանի Աստվածամոր վերափոխմանը նվիրված ներբողը։ Ստեփանոս Շատախեցու նախաձեռնությամբ կատարված լրացումը եկավ անգլալեզու աշխարհը և սերտորեն առնչելու հայ ժողովրդի պատմական անցյալին ու ներկային։ Մովսես Խորենացու հռչակավոր ողբի լեզվացությունն ենթադրում էիմի միաբանության հիմնադրմանը նվիրված Ներսես Մոկացու մի հիշատակարանում։ Ներսես Մոկացու մոտ գրված է. «... եկի ի Հայստոբ ուխտս և տեսի զայս երկնանման սուրբ տաճարս, որ յանուն Գեորգայ Զօրավարին, զի խրքնացեալ էր ի բաբելոնացիքն և փնտրեալ ի փնտրեալսն և թափուր արդեանց և յամենայն գոց և փակեալ եկեղեցին»։

Խորենացու մոտ կարդում ենք. «Ողորմիմ րեզ, եկեղեցի Հայաստանեայց, խրքնացեալ ի բաբելոնացիքն և փնտրեալ ի փնտրեալսն և թափուր արդեանց և յամենայն գոց և փակեալ եկեղեցին»։

Նրանի առաջնույ և երկրորդի փոփոխմանն, զի էր ինչ ժամանակ հեռանալու փնտրեալսն և փնտրեալսն, և հարսնոց համբերեցեր ողջախոհությամբ զամուսնությունն պահելով, որպէս ըստ նախ քան զմեզ իմաստասիրեաց» (Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Տիգրիս, 1913 թ., էջ 358—259)։

Ներսես Մոկացու համար խոշոր ուսուցիչ է եղել Գրիգոր Նարեկացին։

Գրիգոր Նարեկացու բարերար շունչն ամենից շատ զգացվում է Ներսես Մոկացու «Մանուկ մտավարժ էի...» պոեմի բերվածությամբ։ Դա մի յուրատեսակ խոսք է «ընդ աստուծոյ», հանուն մարդու մեղքերի թողություն, մաքրություն, անմեղության և փրկություն։ Մի-երկու տեղ կարծես բանաստեղծն ուղղակի փոխ է առել նարեկացիական տողեր, մտերի, օրինակ, Գրիգոր Նարեկացու մոտ կարդում ենք. «Քաբբի, բաբբի անուանեցայ» (Գրիգոր Նարեկացի, Մատենագրություն, Վենետիկ, 1840, էջ 186), իսկ Ներսես Մոկացու մոտ՝ «Քաբբի, բաբբի յորջորջմամբ ինքնաշարժ փառամոլեցայ»։

Ներսես Մոկացին Այստեղ ամենայնուհետև օրինակի Մեծ անապատի հիմնադիրների նվիրված իր ներբողի մեջ ևս երբեմն դիմել է Գրիգոր Նարեկացու օղնությունը։ Այստեղ ամենայնուհետև օրինակի Մեծ անապատի հիմնադիրների միաբանական մասնական նկարագրությունն ու ողբն է՝ շարադրված «Մատենան ողբերգությունն» եկրի ամենաբարձր հատվածներից մեկի հիմնությամբ։ Գրիգոր Նարեկացու մոտ կարդում ենք.

Այն զի ծով է ինձ ծփանաց կենցաղոյս բերմունք յոյժ նմանագոյն,
Յորում կոհակօր բազմօր անթիւ դիմեցմանց տառանեալ հոգիս
Ի յայսմ աշխարհի մարմնոյ շինուածով իբր ի նաւակի...

Քանզի մինչդեռ շուէի ես յանհոգութեան...

Զմեռն յամբարանի բրաբեր հոգմով ժամանեալ,

Երեքալեանն դիմացկութեամբ ամբոխեաց զհանդարտութիւնն:

Ուստի նաւն ի րախմանէ վայրենի ալեացն խորտակեցաւ,

Թեւոցն ձեւնարկութիւն քայքայեցաւ,

Կայմն ամբարձման ի կայից իւրոց խլեցաւ,

Առագաստին թռչարան յանկարկատելի ծուէնս պատառեցաւ,

Շինուածոյն շուր անզարդեցաւ,

Առասանք ձգողականացն խզեցաւ,

Տեսարան զլիւնն դիտակի խոնարհեցաւ,

Ապականդակին պարան կտրեցաւ,

Ապալինութիւն խարսխին լուծաւ,

Լուծի ստուարբ ամուլիցն կցորդութեան բաժանեցան,

Սամիր ուղղացն հետոց պալարեցան,

Լաստ հիմանն հաստարանի բնկղմեցաւ,

Ղեկացն կառուցմունք անդրէն սուղան.

Զուոցն յարմարութիւնք պակասեցան,

Ողնափայտին պատսպարան իսկոյն բեկաւ.

Կապարանք զրստին հաստուածոյ լօշուտեցաւ,

Գողբ ամփոփման ծոցոյն կազմածոյ անարգեցան,

Խելք շրթանցն հզերաց խախտեալ սստեաւ,

Պաղպաջոնք բազմականացն առկեալ բարձաւ,

Վանդակապատին վայելչութիւն յատակեցաւ,

Գահաւորակին հանգստարանն շփոթեցաւ,

Մածմունք տախտակաշարք ի միարտնութեանց միմեանց

անհասեցան,

Հեղուք պնդման բեռնացն քարշեցան.

Արգասիք իրին յիշատակարան ողբոց ինձ նմանեցաւ:

Նաւուղիդն հանդէպ նաւին դեգերեալ ողբալ,

Զեռն ի ծնօտի եգեալ արտասուաց զետս իջուցանէ...

(Գրիգոր Նարեկացի, Մատենադրութիւնք, րան ԻԵ):

Ներսէս Մոկացիին, աչդ հատվածի նմանությամբ ստեղծել է հե
տեկյալ տողերը, որտեղ Գրիգոր Նարեկացուն հետեկյով հանդերձ,
կերտել է նրանից տարբերվող և իր ներբողին ներդաշն ու գողտրի
նկարագրություն.

Յանկարծ հողմին ուռուցիկ
 Փոթխորկեաց զնաւս առժամայն
 եւ շրջապտոյտ առեալ,
 Տատանէր չալէկոծովեան:
 Հողմով կուտակեալ կոհակր
 Ի ներքուստ անդուստ խոտվեցան.
 եւ ծովրս հանդարտական
 Յամբոխեալ ալիս փոխեցան:
 Քուշարանն առադաստին
 Ի ծէնս պատառեցան,
 եւ կայմն ամբարձման պարզող
 Ի ծովու խորրս սուղեցան:
 Ղեկն ե՛ր ղեկավարն, ե՛ր թերն
 Խառնելեացն խափանեցան,
 եւ շարքըն տախտակամած
 Ի միմեանց բաց անջատեցան:
 Երկու լծակաց մածմունք
 Մնօտիւրն բաժանեցան,
 եւ լաստըն ողնափայտին
 Առ քնդիքն խաբխալեցան:
 Ահա արդ մեծ արհաւիրք,
 Աղաղակ ե զոյժ լալական,
 Տրտմութեան ալիք ղիեղալ՝
 Առ թիկունս մեր կերծանեցան...

Մեզ ալնպէս է թիւում, որ ներսես Մոկացին Սլունյաց Սեփանապատի հիմնադիրներին և Աստվածածնի վերափոխման պատմությանը նվիրված ներբողներն ստեղծելիս էլ ընդհանրապէս հետեւել է Գրիգոր Նարեկացուն՝ նկատի առնելով նրա պատմագրական և ներբողական աշխատքները, որոնք ձոնված են Մոկաց աշխարհի Ապարանից վանքի հիմնադրմանը, ինչպէս նաև Ս. Խաչի և Աստվածամոր զրվատանքին՝ կազմելով մի յուրատեսակ ամբողջություն (Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնը, էջ 371—374):

Եթէ այդ զրվածքում Գրիգոր Նարեկացին նկարագրում է սուրբ մասունքների տեղափոխությունը՝ Բյուզանդիայից Մոկաց աշխարհ, ապա ներսես Մոկացու մոտ նկարագրվում է Աստվածամոր պատկերի տեղափոխությունը՝ զարձալ ղեպի նույն կողմերը: Երկու դեպքում էլ սրբությունների տեղափոխության նկարագրությանը հաջորդում են պատշաճ կառուցումների պատկերումն ու գովերգ:

Ներսես Մոկացու ազոթքի մի քանի տողեր ևս աննշան փոփոխումով առնված Գրիգոր Նարեկացուց (տես ս 6-րդ բանաստեղծության ծանոթագրությունը):

Ներսես Մոկացու ստեղծագործությունների մեջ առկա է նաև Գրիգոր Տղայի բարերար ազդեցությունը: Երուսաղեմի անկման մասին նրանց գրած պոեմների զրափան որոշ առնչությունները պայմանավորված դուրս ե միջնորդարար՝ «զեղչուկ բառի» եղաց նախօրինակի օգտագործմամբ, բացահայտում են Գրիգոր Տղայի պոեմի որոշ ազդեցությունը Ներսես Մոկացու Ողբի վրա: Դեռ ինչն տաղաչափությունն ու նույն հանդը, որ կա երկուսի մեջ, պետք առնված լինի Գրիգոր Տղայից:

Ըստ երևույթին, Ներսես Մոկացին ծանոթ է եղել նաև Գրիգոր Տղայի քնարական րերվածներին, մանավանդ, «Յարժամ զիս ինձէն գտայ...» տաղին: Այդ ստեղծագործության ինչ է առնչվում Ներսես Մոկացու «Մանուկ մտավարժ էի...» ներբողը: Առկա են՝ նույն հանգը («ա», «այ»), նույն տաղաչափությունը, նույն ոտքն ու երբեմն էլ համանման պատկերներ: Օրինակ, Գրիգոր Տղայի մոտ կարդում ենք.

Զսերմն բարույն որ յիս,

Զայն թռչուն օդոյն գողացաւ...

Ներսես Մոկացու մոտ թերևս նույն «սերմն»-ն ու «թռչունն» որ նույն իմաստով Երեան են գալիս այսպիսի ձևակերպմամբ.

Զայս հունդ պատրաստեալ թռչնող...

Երկու դեպքում էլ խոսքը հոգևոր առաքինության կորուստի մասին է:

Գիրքը շարված և էջերը կապված էին, երբ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց Մատենադարանից շնորհակալությամբ ստացանք մեր խնդրած ներսևս Մոկացու գանձի և տաղի բնագրերը։ Ուստի դրանք ղետեղում ենք զրքի վերջում։ Այդ ստեղծագործությունների մասին ամփոփ խոսք ասված է համապատասխան տեղերում։

ԳԱՆՁ ՆՈՐ ՆԱՀԱՏԱԿԻՆ ԵՒ ՍՈՒՐԲ ՔԱՀԱՆԱՅԻՆ ԱՆԴՐԷԱՍԻ ՆԱԽՃԱԽԱՆՑԻՈՅ, ՈՐ ԿԱՏԱՐԵՑԱԼ Ի ՇԱՀ-ԱՐԱՍԷՆ. ԱՍԱՑԵԱԼ ՇՆՈՐՀԱԼԻ ՎԱՐԳԱՊԵՏԻՆ ԲԵՂԼՈՒ ՆԵՐՍԷՍ ԿՈՉԵՑԵԱԼ ՄՈԿԱՅԻ

Հատդ անմահական,
Հացդ իջեալ մարդկան՝
Ընդ հին մանանայն
Ծնունդ հայրական,
5 Որդիդ կուսական,
Միակդ անբաժան.
Հօր սահման և բան,
Կնիբդ էութեան,
նոյն և կերպարան.
10 Անձրեքն նըշան,
Անհասին նման,
Նկարդ իսկութեան.
Ի մեր կերպարան
Եղեր տեսարան

Աղբյուրներ

Ա = Զեռ. Երուսաղեմ. Ս. Հակոբյանց Մատենադարան. N° 1397, էջ 119—129,

17-րդ դ.:

Բ = Զեռ. Մաշտոցի անվան Մատենադարան. N° 5958, թերթ 143ա—149ա:
Խորագիր

Բ Գանձ ասացեալ ներ... մականբուն Բեղլ... յԱնդրէաս քահանայ... կեցաւ
ի պարսիս... Շա.... Գողթան գաւառ....

Բնագիր

15

Մեզ համանման.

Շրջեալ ընդ մարդիւն
Ըստ մեր բնութեան
Այս թափառական.

20

Իջեր գերեզման
Շիրմին քնարան
Վիմափոր տապան.
Բուսմամբ յարութեան
Արարեր ցորեան
Յոյժ արգիւնական.

25

Զոր մարդիկ լցան,
Դաշտը սլարարտացան,
Լերինք ծաղկեցան.
Օրհնեալ բան բո արարչական.
Որ արարեր զէակրս ամենայն.

30

Աղաչեմք:

Ճիւղք յոգնաստեղեան
Երփնեալ գունեցան
Տարազս աննման.

35

Օրինօք կեցան
Եւ ի վեր անցան,
Որ կոյս մնացան.
Ոմանք ձոնեցան,
Ի տանց հեռացան,
Պէս-պէս լլկեցան.

40

Ի ալք արիացան,
Նահատակեցան,
Արեամբ կարմրեցան:
Բարեխօսութեամբ խրմբից սրբազան,
Արժանացո ըզմեզ քաւութեան.

45

Աղաչեմք:]

Որքից անմարտեալ,
Ուր բազում ձգեալ
Եւ գերկիր լցեալ.

- 50 Առաքեալքն ընտրեալ
 Ի բեղ հաստատեալ
 Եւ յաշխարհ սփռեալ.
 Յորոց ոտեղնեալ,
 Գլխոք ուղէշ լեալ,
 Զմեղ լուսաւորեալ.
 55 Յատեան վկայեալ,
 Չարաշար տանջեալ
 Եւ նահատակեալ.
 Վիրապին տքնեալ,
 Ամօք լերկարեալ,
 60 Տասնուհինգ եղեալ.
 Յուսով ոռոգեալ,
 Հաւատով հաստեալ,
 Արմատ անուանեալ.
 Եւ անդէն ելեալ,
 65 Բուսեալ, բարձրացեալ
 Եւ զմայրս ծաղկեալ.
 Եւ զորոյ իւր ձգեալ
 Հիւսիս հովանեալ,
 Մով Կաղբից հասեալ:
 70 Եւ շառաւիղեալ,
 Միջագետս լցեալ.
 ԶԱսորիս կալեալ,
 Յորմէ հալք ուտեալ,
 Վիբբ աշակերտեալ,
 75 Աղուանք մըկըրտեալ.
 Սա հոգով տեսեալ,
 Յորոց մկրտեալ
 Ոմանք դալլ դարձեալ.
 Իսկ որք մնացեալ
 80 Հուսակիզն եղեալ
 Ի արեամբ շիկնեալ:
 Բա[րեխօսութեամբ խըմբից սրբազան,

56 A Չարչարեալ:

60 A Տասնուհինգ:

66 B Մածկեալ.

82—84 լրացնում ենք ըստ նախորդ տան կրկնակի:

Արժանացո ըղմեղ քաւութեան.
Աղաչեմք]:

- 85 Արմատն աչն թաղեալ,
Ի յերկրի ծածկեալ,
Որ բանականս լեալ.
Անտի յառաջեալ,
Առ Վարդան ծաղկեալ,
90 Սիրովըն վառեալ.
Անոնդեանքն ընտրեալ
Գունդրն յառաջեալ,
Պըսակաւորեալ:
Տեսիլն աստ լըցեալ,
95 Գալլքն եղնն կորեալ,
Ի փարսըն խառնեալ.
Գառինքն ողորկեալ,
Արեամբ սլարարեալ,
Գառինն ընծայեալ.
100 Բազումք յայս վարժեալ,
Ոգով զօրացեալ,
Ըղչարքն վանեալ.
Ժամանակք անցեալ,
Եւ ամբ յերկարեալ
105 Եւ առ մեզ հասեալ:
Յամբս վերջացեալ,
Յաւուրքս յետնեալ
Հաւատ հնացեալ,
Սէրքն սառուցեալ,
110 Գութրն ցամաքեալ,
Բարին սողառեալ.
Յանկարծ արծարծեալ,
Հուրն աչն ցոլացեալ,
Նշուիւք փայլեալ.
115 Մանուկ մի ընտրեալ,
Անդրէաս կոչեալ,
Քահանայ կարդեալ.
Անդր ի վեր անցեալ

120 Անդրանկաց նմանեալ,
 Անդրանիկ եղեալ.
 Նորոզ վկայեալ,
 Զհինրն նորոգեալ,
 Ընդ սուրբքս դասեալ:
 Բարեխօսութեամբ նոր վկայիս քո,
 125 Ողորմութեան զմեզ արժանացո.
 Աղաչեմք:

Սուրբս այս՝ նազելի,
 Գեղով դովելի,
 Յոյժ վայելչալի.
 130 Անձամբ հաճելի,
 Տիօք պանծալի,
 Դիմօք շնորհալի.
 Տիպրն հրաշալի՝
 Մաղաքիայի

135 Սուրբ մարդարէի.
 Եւ հոգով ի լի
 Ըստ Դանիելի,
 Պատժող շար ծերի.
 Զի չարքն նախկի,
 140 Որ քնդ մեզ մարտի,
 Սա դատեաց յողի.
 Նախատեաց յայտնի՝
 Ընդ իւր զործակցի
 Շահ-Ապաս պարսկի.

145 Սա Եղիայի
 Հոգոյն նմանի՝
 Կալով յատենի.
 Ասէր արքայի
 Երդմամբ հաւաստի՝
 150 Վասն իւր հաւատի.
 Թէ՛ տէր կենդանի,
 Որոյ առաջի
 Ես այսօր կացի,
 Ո՛չ փոխանակի

- 155 Ընդ էի մասի
 Սէրըն Քրիստոսի.
 Սա նոր նէեմի,
 Ի խնդիր լինի
 Հրոյն բուրվառի.
 160 Մածկեալ ի խորի,
 Թաղեալ ի տղմի,
 Մխոցաւ հանուի.
 Դէմ արեգակնի
 Տապացեալ շողի,
 165 Յորմէ արծաբծի.
 Սովաւ բորբոքի,
 Ծիրանածաղկի
 Եւ արտափաշլի.
 Որով և մատչի
 170 Եւ պատարագի
 Տեառներն Քրիստոսի:
 էր քաղաքացի
 Սա մեծ քաղաքի
 Նախիջևանցի,
 175 Որդի՝ բրիստոնէի
 Ծնողաց բարի
 Եւ երկիւղածի.
 Սնուցեալ վարժի
 Յուսումըն գրի,
 180 Հրահանգիւ կրթի.
 Յարբունս հասակի
 Հասեալ կատարի՝
 Քահանայաւցի.
 Յընթերցումն արի,
 185 Վարորն բարի
 Եւ առաքինի.
 Զոր դպրոց կարգի,
 Վարժարան դնի,
 Մանկունք ժողովի.

155 B էից՝

175 A բրիստոնէի:

- 190 Իսկ առ հայր կանգնի՝
Վարժող ցանկալի,
Խրատ ուղղեկի.
Հստ փնէհեզի՝
Վրիժախնդրի
- 195 Տեառնակոյս կողմի,
Զլար սովորութիւն
Անօրէն պարսկի,
Ամբարիշտ ազգի
Մածուկ հնարի,
- 200 Խափանեւել կամի
Ըզշարըն յայտնի.
Զհերբս տղայի
Յապաւէ նախկի,
Զի տգեղասցի,
- 205 'ի ինքն պատրաստի
Դէմ կալ վտանգի
Փորձութեանց շարի:
Յիշեալ զհոգիս ննջեցելոց...]:
- 210 Իսկ ի գալ շարին
Ընդ որ երեւիին
Զեխ Շահ-Ապասին,
Բնակիչք երկրին՝
Փոքունք ընդ մեծին
Ընդ առաջ ելին.
- 215 Նախանձեալ տաճկին,
Որ ծանօթ էին
Սուրբ քահանային,
Չարախօսէին
Առաջի մեծին
- 220 Իւրանց շեխազդին:

208 В Յիշեալ զհոգիս փխ Յիշեալ զ: Լրացնում ենք ըստ Ներսէս Շնորհալու (Բանք չափաւ, Վենետիկ, 1928, էջ 534): Որպես կանոն, այդտեղ դրվում է այսպիսի կրկնակ. «Ահա յիշեսցես և տղորմեսցիս ննջեցելոցն յուսով յարութեան, խնդրեմք» (Դրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնք, Վենետիկ, 1840, էջ 457, 460, 462: Հմմ. Ներսէս Շնորհալի, Բանք չափաւ, էջ 526, 534): Թե ինչպիսի՞ն է եղել Ներսէս Մոկացու գանձի մէջ չափաբերված այդ կրկնակը, չգիտենք, գրիչը թերի է թողել:

- 225 Զաղագող՝ ասին
 նա իւր հաւատին
 Եւ սրբոյ խաչին.
 Քամահող եղին.
 Կամաց արքային
 Իւրեանց դաստ քուշին.
 Տարեալ յատէնին
 Եւ հարցանէին,
 Սաստիւ փորձէին.
 230 Հաստատուն տեսին
 Զհաւատ նորին՝
 Միրովն ի սրտին.
 Անվեհեր գտին
 Ի պատասխանին
 235 Զիմաստութեամբ լին,
 Անդ վճիռ հատին
 Ըսպանման նմին,
 Զոր ցանկայր ինքնին.
 Զպճղունս ծակեցին
 240 Եւ յերկար թողին
 Ի կախաղանին.
 Սակաւ խոցեցին,
 Զի յամէ նմին՝
 Յերկիւղ ռամկին.
 245 Իսկ նա միշտ կնքէր
 Զնշան սուրբ խաչին
 Ի շուք ճակատին.
 Ի յառաւօտին
 Մինչ յերեկոյնին
 250 Շունչըն քաղէին.
 Ապա աւանդեաց
 Զմաքուր հոգին
 Առ իւր բաղձալին:
 Եւ ևս ա[ռաւել...]:

- 255 ներանձնականաց,
 ներբանականց,
 ներգոյիւ պճնած,
 Մարդկային ազանց,
 Երկնային զօրաց
- 260 'ի Երկոցունց պետաց:
 Նզկր դերազանց
 Կոյսդ գերապանծ,
 Տեղի պարծանաց,
 Մինչ լոյսըն բարձանց
- 265 Ի քեզ բնականաց
 'ի ի քէն մեզ ծագեաց:
 Ռախացիր, մաքրած,
 'Ի ու տեղի շնորհաց
 Հոգոյն զօրութեանց.
- 270 Մածիր ի ծնկաց
 Եւ կաց ի յոտաց
 Միշտ բաղկատարած:
 Սուրբ որդոյդ փառաց
 Տուր ձայն մաղթանաց՝
- 275 Ընդ մեղաւորացս.
 Զնորին նախընթացն,
 Որ վաղ գուշակեաց
 Յարգանդն փակած:
 Երջանիկն ընտրած
- 280 Պսակն փառաց,
 Որ նախ վկայեաց,
 Զլուսատուն ազանց
 Հայոց և բազմաց
 Զայնակից քեզ աստուած:

254 Ընդօրինակողը մերի է մոդել: Նման դեպքերում հանդիպում է հետևյալ կրկնակը. «Եւ ևս առանկ զգորգորումն սիրոյ և զգործս բարեաց պարգեել մեզ խնդրեմք» (տե՛ս Գրիգոր Նարեկացի, Մատենադրութիւնք, Վննտիկ, 1840, էջ 457, 460, 462: Տե՛ս նաև Ներսէս Շնորհալի, Բանք շափաւ, Վննտիկ, 1928, էջ 526, 534): Ներսէս Մոկացիին, հաւանաբար, այստեղ այդ կրկնակն էլ չափածոյի է վերածել, ինչպէս նախորդ տները կրկնակները:

266 В зѣлѣ' ѿ:

Սորօք առ աստուած
 Մատիբ խնդրուած,
 Զի հեղցէ շնորհաց
 Զիրբն պարգևաց
 Յազգս տառապած՝
 290 Ի բիւր բարութեանց,
 Յառատ գթութեանց
 Եւ ողութեանց,
 Տացէ ի մասանց
 Սրբոյս տօնողաց
 295 Ի ի բէն խնդրողաց:

Եկալք նորաղուարձ մանկունք եկեղեցու,
 Համաձայն առէք զժողովուրդս աստուածոյ:
 Խանդակաթ սրտիւ ի յերախան սիրոյ
 Յիշատակութեամբ սուրբ վկայիս նորոյ:
 5 Վերահընչեսցուք նոր երգ մտօք պայծառ,
 Նոր վարդիս բացման արեամբն վառիվառ:
 Յիսուս, որ հղև մարդկան կենաց պատճառ,
 Օրհնութիւն տացուք նմա ի մի բարբառ:
 Խառնեաց զմարդիկ ի հրեշտակաց կաճառ,
 10 Երկրպագութիւն նմա և փառս անճառ:
 Բարգուղիմէիւ հալցեել Հալաստանեաց,
 Զհատրն մանանխոյ նախ ի Գողթան թաղեաց:
 Ոստովք բարձրացեալ տեղի թռչնոց կազմեաց,
 Եւ երկիր լցաւ ի բաղմաբեր արդեանց:
 15 Ժամն այն զարնանոյ և ամառան՝ էանց,
 Եւ երկարութիւն աւուրց աստէն աճեաց:
 Սաստիկ ցրտութիւն սառնամանեաց պատեաց,
 Յաւուրցս այս վերջնոյ ըզմեզ խիստ պաշարեաց:
 Ի նոյն պարտիզէ հոտ վարդենոյ բուրեաց,

295 Որպէս կանոն, դանձերն ավարտվում են այսպիսի նախադասությամբ.
 «Եւ այժմ ողորմեալ մեզ, տէր աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան բռն
 (տես Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնք, էջ 457, 460, 463; ՏԵՍ նաեւ Ներսէս
 Շնորհալի, Բանբախալ, էջ 527, 535): Ըստ հրեայքին. 291—294-րդ տողերը
 հենց այդ կրկնակի չափարկումն են:

11 B Բարգուղիմէի: AB յալցել:

- 20 Զքիմըս քրիստոնէից անուշ հոտով զմայլեաց:
Կրկնակի պատիւ, մեծ առաքեալն ասաց,
Արժանի լիցին ի ձէնշ դասք երիցանց:
Զձայն այն վաղնջուց տէր Անդրէասն առթեաց,
Քահանայ օծեալ՝ եղև արեամբ ներկած:
25 Եւ մեք կրկնակի տացուք գովութեանց,
Բարեխօս առնուլ զնա մեզ առ տէր աստուած:

ՕԿՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂՅՈՒՐՆԵՐ

Ա. ԶԵՌԱԳԻՐ

Ա. Մաշտոցի անվան Մատենադարան

11, 45, 423, 424, 554, 627, 642, 715, 993, 1153, 1397, 1480, 1501, 1524, 1661, 1754, 1989, 1990, 2079, 2339, 2394, 2396, 2672, 3081, 3206, 3470, 3498, 3540, 3881, 5016, 5120, 5164, 5244, 5306, 5430, 5623, 5624, 5668, 5958, 6333, 6985, 7039, 7104, 7109, 7701, 7703, 7709, 7725, 7682, 8029, 8219, 8299, 9674, 9144, 9271:

Բ. Նուսադեմի ս. Հակոբյանց Մատենադարան

1249, 1449, 1895:

Գ. Վենետիկի Մխիթարյանների Մատենադարան

171:

Դ. Զմմառի վանքի Մատենադարան

328:

Արտասահմանում գտնվող մի շարք ձեռագրերի պարունակած տվյալներ էլ օգտագործված են համապատասխան ձեռագրացուցակներից (տե՛ս ստորև «տպագիր» մասում):

Բ. ՏՊԱԳԻՐ

Արեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, Բ, Երևան, 1916

Արեղյան Մ., Երկեր, Գ, Երևան, 1968

Ազարանգեղոս. Պատմություն Հայոց, Թիֆլիս, 1909

«Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1912

Այիշան Ղ., Հայաստանում, Վենետիկ, 1901

Այիշան Ղ., Սիսական, Վենետիկ, 1893

Ալիևյան Ն., Բաղլչի զպրոցը, Վիեննա, 1952

Ալիևյան Ն., Մովսես Դ Տաթևացի հայոց կաթողիկոսն և իր ժամանակը, Վիեննա, 1936

Անադյան Հ., Հայոց անձնանունների բառարան, Գ, Երևան, 1948

Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Վաղարշապատ, 1896

«Ասպիրանտական զիտական աշխատությունների ժողովածու» (Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտ), № 4, տրակ 2, 1970

Ասպիրանտական զիտական աշխատությունների ժողովածու (Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտ), № 5, տրակ 2, 1971

«Աստուածաշունչ», Կ. Պոլիս, 1895

1813 Ավգերյան Մ., Լիակատար վարր և վկայարանութիւնը սրբոց, Գ. Վենետիկ,

Ավդարեղյան Մ., Խաչատուր Կեչաւեցի, Երևան, 1958

«Աբարատ», Վաղարշապատ, 1898, 1899

«Քաղմովկա», Վենետիկ, 1847, 1897

«Քաներե Երևանի համալսարանի», Երևան, 1967, № 2

Ботюшков Ф. Д., Сказания о споре души с телом в средневековой литературе («Журнал министерства народного просвещения», СПб, 1890—1891)

Գարագաշյան Ա. Մ., Քննական պատմութիւն Հայոց..., Գ. Թիֆլիս, 1895

Գրիգոր Գաբանաղի, Ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1915

Գրիգոր Նաւեկացի, Մատենագրութիւնը, Վենետիկ, 1840

Гребнев Н., Армянская средневековая лирика, 1972

«Դիւան Հայոց պատմութեան», Ժ. Թիֆլիս, 1912

Dulaurier Ed., Recueil des historiens... t. I, Paris, 1800

Եղանյան Օ., Զեյրունյան Ա., Անրալստի փ., Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, Ա. Երևան, 1965

Եղանյան Օ., Զեյրունյան Ա., Անրալստի փ., Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, Բ. Երևան, 1970

Եղեկի Կողբացի, Էղծ ազանդոց, Թիֆլիզ, 1914

Զարեանցիական Գ., Պատմութիւն հայերէն գրչութեան, Վենետիկ, 1878

Эман Н., Сказание о преставлении Богородицы..., М., 1874

Էնգելս Ֆ., Լյուդվիգ Ֆոյերբախ, Երևան, 1960

«Էջմիածին», 1944, № 10—12

Թովմեյան Հ., Յուցակ ձեռագրաց, Վաղարշապատ, 1898

Ինգիւնյան Ղ., Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822

Լեո. Երկեր, Բ. Երևան, 1967

Լեո. Երկեր, Գ. Երևան, 1969

Լեո. Հայկական տպագրութիւն, Թիֆլիս, 1904

Լեոնյան Գ., Թատրոնը հին Հայաստանում, Երևան, 1941

«Լուսեր», ՀՍՍՀ ԳԱ Հասարակական գիտութիւնների բաժանմունք, Երևան, 1970, № 7

Խաչատուրյան Պ., Հայ միջնադարյան պատմական ողբեր, Երևան, 1969

Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961

Կլովեսերյան Բ., Յուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանոց և շրջակայից, Անկիւրիս, 1957

Հակոբյան Վ., Մանր ժամանակագրութիւններ, Բ. Երևան, 1956

«Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1951

Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմութեան, Բ. Երևան, 1959

Հանաչյան Մ., Պատմութիւն արդի հայ գրականութեան, Ա. Վենետիկ, 1956

Մանանդյան Հ. և Անադան Հ., Հայոց նոր վկաները, Վաղարշապատ, 1903

Մառ Ն., Ամսնային ուղեորութիւնից ղէպ ի Հայս, Վիեննա, 1892

Մարգարիտ, Էնգելս Ֆ., Ընտիր Երկեր, Բ. Երևան, 1950

Միխայիլ Ստոյի. Ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1870

Խիրզոյան Հ., Սիմեոն Զուղայեցի, Երևան, 1971

Մկրչյան Մ., XIII—XVIII դարերի Հայ աշխարհիկ գրականություն, Երևան, 1938

Մնացականյան Աս., Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956

Մովսես Խոռենացի, Մատենադարձիւնք, Վննետիկ, 1865

Ներսես Լամբրոնացի, Ներբողեան ի վերափոխումն Աստուածածնի Վիեննա, 1826

Նորայր վարդ. Մովսկան, Միջնադարյան տաղասացներ (Ներսես վարդ. Մոկացի, «Էջմիածին», 1944, № 10—12, էջ 32—35): Տե՛ս նաև Պողարյան Ն.

«Նոր բաղիրք Հայկադեան լեզուի», Ա. Վննետիկ, 1836

«Շարական», Կ. Պոլիս, 1853

Ոսկյան Հ., Մայր ցուցակ Հայերէն ձեռագրաց, Վիեննա, 1963

Ոսկյան Հ., Վասպուրական-Վանի վանքերը, Ա. Վիեննա, 1940

Չամչյան Մ., Պատմութիւն Հայոց, Ա. Վննետիկ, 1784

Չամչյան Մ., Պատմութիւն Հայոց, Դ, Վննետիկ, 1786

Պողարյան Ն., Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Ֆակոբեանց, Ա. Երուսաղեմ, 1968: Տե՛ս նաև Նորայր վարդապետ Մովսկան

Պողարյան Ն., Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Ֆակոբեանց, Դ, Երուսաղեմ, 1954: Տե՛ս նաև Նորայր վարդապետ Մովսկան

Պողարյան Ն., Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Ֆակոբեանց, Ե, Երուսաղեմ, 1971: Տե՛ս նաև Նորայր վարդապետ Մովսկան

«Глоэзия Армении», Москва, 1916

Սահակյան Հ., Երեմիա Քյոմուրճյան, Երևան, 1964

Սամվել Անեցի, Հաւարմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893

Սայաթ-Նովա, Հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն խաղերի ժողովածու, աշխատասիրությամբ Մ. Հասարձյանի, Երևան, 1963

Սեդրակյան Ա., Հայաստանեայց Եկեղեցու պատկերագրութիւնը, ՍՊԲ, 1904

Սմբատ Սպարապետ, Տարեցիր, Վննետիկ, 1956

Սրապյան Ա., Հովհաննես Երզնկացի, Երևան, 1958

Somai S., Quadro della storia letteraria di Armenia. Venezia, 1829

Վարդան վարդապետ, Հաւարումն պատմութեան, Վննետիկ, 1862

Տեկաւնց Ա., Հայերդ, Թիֆլիս, 1882

Փոփազյան Վ., Պատմութիւն Հայոց գրականութեան, Թիֆլիս, 1910

Օրմանյոն Մ., Ազգասպասում Ի. գիրք Բ, Թեյրուի, 1968

ՅԱՆԿ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻՒ

- Արդիա* — 142
 Արել* — 141
 Արեղյան Մ. — 5—6, 23—24, 141, 162
 Ազարանդեղոս — 28, 184
 Ազուվաբար — 27, 123
 Ազուլիս — 15, 179
 Ադամ* — 72—73, 88, 91, 141, 152, 163, 180
 Աժդահակ — 47, 185: Տե՛ս Քուրդն մեծ:
 Ալամանիկ (Ալմանի րագավոր) — 32
 Ալեխանդր Մակեդոնացի — 24
 Ալլիան Ղ. — 6, 12, 44, 89, 161—162, 165, 166—167, 172
 Ակիմյան Ն. — 6, 8—9, 13, 15, 101, 161—162, 167—168, 170, 173, 175, 177, 180, 182—183
 Անարոն* — 57, 91, 141
 Ալբակ — 124
 Ալվանի — 192
 Անադյան Հ. — 6, 13, 16, 167—168
 Ամբակում* — 142
 Ամինադար* — 91
 Ամուլս* — 142
 Ամրդուլու վանք — 9
 Անանիա աստվածուհի — 27—28, 121
 Անգեա (Անգե*) — 142
 Անդրեաս* — 97
 Անդրեաս ֆանան (Նախնավանցի, Ագուլեցի) — 7, 14—16, 178—179, 183, 190, 193, 195, 200
 Անրարյան Փ. — 16
 Մնձևացյաց զավառ — 27, 89, 121
 Աննա* — 91, 116, 124
 Անտիոք — 85
 Ապարանից վանք — 188
 Առաքել Բաղիշեցի — 33
 Առաքել Դավրիժեցի — 5, 8, 15—16, 165—166, 175, 177
 Առաքել Կոստանյան — 175, 177
 Առաքել Սյունեցի — 33
 Առյուծ (Մարկոս ալևտարանչի խորհրդանշանը)* — 31, 61
 Ասլան Աղա — 161
 Ասխալան — 80, 86
 Ասկնջավու (Հասկնջավու) — 8
 Ասորիք — 178, 192
 Աստվածածին (Աստվածամայր, ՝ Տիրամայր)* — 26—28, 30, 94—96, 98—99, 105, 107, 111—112, 115, 123, 126, 128, 137, 139, 142, 164, 168—169, 171—172, 188
 Ասուրիա — 97
 Ավգերյան Մ. — 168, 172
 Ավդարեզյան Մ. — 21, 25
 Ավետարանիչներ* — 61
 Ավետիք Տիգրանակերտցի (Պաղտատարյան) — 5, 17, 166—168
 Առոմ ռես — 154
 Արամյան տուն — 45: Տե՛ս Հայաստան
 Արարատյան տուն — 59: Տե՛ս Հայաստան
 Արևելյան Հայաստան (Արևելյան տուն) — 11, 46: Տե՛ս Հայաստան

1 Յանկում Աստվածաշնչից հիշված անունները ցույց են տրված աստղանիշերով: Ներսես Մոկացու անունը ցանկում չի ընդգրկված: Յանկը կազմված է արդի ուղղագրությունից:

Արևմտյան իշխողներ — 19
 Արիստակես վրդ. — 8, 175
 Արծիվ (Հովհաննես ավետարանչի խորհրդահանք) — 31, 61
 Արիս — 85
 Բարեկոն — 80
 Բաղնշ — 9
 Բապտիզմով Ֆ. — 20—21
 Բարդուղիմեոս — 27, 118—119, 121—123, 126—127, 172, 199
 Բարմա — 123
 Բարսեղ Գավառացի — 9
 Բյուզանդիա — 188
 Բյուռսով Վ. — 6
 Գաբրիել հրեշտակապետ — 94, 104, 107, 129, 135, 163
 Գավառու Էրկիր — 9
 Գարագաշյան Ա. — 168, 172
 Գերսամանի ձոր — 96, 118
 Գեորգ զորավար (ս. Գեորգ Եկեղեցի) — 44, 150, 154, 157, 175, 186
 Գողգոթա — 92, 155
 Գոլթան գավառ — 50, 120, 178, 190, 199
 Գոշո վանք — 175
 Գրեբեն Ն. — 161
 Գրիգոր (Երանասեղծ) — 181—182
 Գրիգոր Դարանաղցի — 5, 8, 14
 Գրիգոր Լուսավորիչ — 21, 122, 125—126, 142
 Գրիգոր Մաղիստոս — 161
 Գրիգոր Մոկացի — 182
 Գրիգոր Նարեկացի — 24, 31, 33, 161—162, 166, 173, 183, 186—189, 196, 198—199
 Գրիգոր Վանեցի — 154, 174
 Գրիգոր Տղա — 17, 24, 29, 183, 189
 Դադամատիա — 97
 Դանիել — 142, 194
 Դավիթ Բաղիշեցի — 5, 9
 Դավիթ (Դավրյան Էրզ. Դավրյան արմատ) — 54, 91, 142
 Դարբնաբար (Դարբնաց Բուրա) — 121, 125

Կիոնիսիոս Արիսպագացի — 98, 172
 Dulaurier Ed. — 17

Եզանյան Օ. — 16
 Եգիպտոս — 114
 Եզեկիել — 142, 183
 Եզն (Ղուկաս ավետարանչի խորհրդահանք) — 31, 61
 Եզնիկ Կողբացի — 20
 Եզրաս — 142
 Եղիա — 58, 142, 194
 Եղիագար — 141—142
 Եղիս — 142
 Ենովս — 141
 Ենովք — 58
 Եսայի — 92, 142
 Եվա — 94, 135
 Եվրոպա — 18, 19—20
 Երեմիա — 142
 Երեմիա Քյոմուրեճյան — 16
 Երուսաղեմ — 8, 16—18, 28—29, 30, 54, 75—76, 134, 162, 168—169, 172, 181
 Երուսաղեմի սրբոց Հակոբյանց Մատենադարան — 15, 165, 173, 180, 190
 Զարբնանայան Գ. — 6
 Զաբարիա — 142
 Զեբեդոս — 94
 Զևրույան Ա. — 16
 Էմին Մ. — 27, 168
 Էնգելս Ֆ. — 19
 Ընկելգ — 85
 Իաբուր (Իափուր) — 58, 180
 Իաղեոս — 97, 120, 126
 Իանանաոյի անապատ — 58
 Իսովրեկ — 52
 Իերախ — 97
 Իովմա — 97, 114, 118
 Իովնյան Հ. — 6
 Իննինյան Ղ. — 6
 Իսահակ (Սահակ) — 141
 Իսրայել — 57, 114, 129
 Լալաան Ն. — 174—175

Լատին — 152

Լեռ — 5—6, 12

Լեռն քաղախոր — 35

Լեռնյան Գ. — 161

Լիբանան — 107

Լիւ կղզի (անասատ) — 8—9, 23, 26,
44, 64, 141, 150, 154—157, 165,
167—168, 172—177, 186

Խաչակրաց արշավանքներ — 18

Խաչատուրյան Պ. — 6, 168

Խաչատուր (բանաստեղծ) — 182

Խաչատուր Կեչառեցի — 21, 24

Խորասան — 120

Խցածորի եկեղեցի — 15

Մովսէկան — ՏԷ՝ս Պոպարյան Ն.

Կազրից (Կասպից) ծով — 178, 192

Կալիփա՞ — 116

Կանգոուս — 27, 123

Կեղարացի՞ — 78

Կիպրիանոս — 121

Կիպրոս — 85

Կիրակոս Գանձակեցի — 17

Կիրակոս Տրապիզոնցի — 12, 14, 54, 59,
166

Կյոլեսերյան Ռ. — 147, 161, 173

Կոռոց կղզի (անասատ) — 64, 156, 175,
177

Հարեշտան — 97

Հագարացի — 75

Հախնագար — 46, 185

Հակոբ (Հակոբոս)՞ — 69, 94, 98, 108,
110, 113, 116, 141

Հակոբյան Վ. — 6, 174

Հայաստան — 8, 11, 18, 26—27, 31, 59,
61—62, 97, 118, 120, 123, 126—127,
172, 186, 192, 199, ՏԷ՝ս Արամյան
տուն, Արարատյան տուն, Արեւելյան
Հայաստան

Հայրապետ վրդ. — 9

Հասրաքյան Մ. — 21

Հաւարաք — 86

Հաբրուն Օղլի — 164

Հաբոյրյուն Սալմաստցի — 164

Հեովան Մոկացի — 161

Հեսու՞ — 141

Հերմոն (Հերմովն)՞ — 58, 107

Հեղկաստան — 97, 118

Հոր՞ — 133, 141

Հոգյաց վանք — 27, 89, 123, 172

Հոհան՞ — 54, 96, 113, 116

Հոմերական երգ — 59

Հոհան՞ — 142

Հովակիմ՞ — 91

Հովրիանոս՞ — 124

Հովելյա՞ — 142

Հովիպե՞ — 91

Հովհաննէս՞ — 93—94, 96, 98, 107,
110, 113, 142

Հովհաննէս Երզնկացի — 182

Հովհաննէս Թլկուրանցի — 162

Հովհաննիսյան Աշ. — 166

Հովսէփ՞ — 129, 141

Հովսէփյան Գ. — 161—162

Հովրամ՞ — 91

Հորդանան՞ — 58, 75, 116, 138

Հսերէոս՞ — 98, 105, 109—111, 113

Հոռոմ (Հոռոմացի, Հոռոմալական, Հոռոմալացիներ Կալազատներ) — 75—76,
81, 84, 97

Հրեաստան — 117, 119

Հոտա՞ — 97

Հոսիկ — 124

Հոսմատ — 123—124

Զիրենյաց լեռ — 95, 110

Ղազինյան Ա. — 173

Ղառչղա խան — 52

Ղէկի՞ — 116

Ղևոնդյանք — 193

Ղուլ Հովհաննէս — 164

Ղուկաս՞ — 97

Ղուրան — 81

Նահալյան Մ. — 6

Նահմետ — 79

Նաղափա՞ — 142, 194

Նաղոս՞ — 83

Նանանդյան Հ. — 16

Նանուել՞ — 137

Մանուկյան — 9

Մառ Ն. — 21

Մստարիա* — 91, 97

Մատթեոս* — 97

Մարդ (*Մատթեոս ավետարանչի խորհրդանշանը*)* — 31, 61

Մարթա* — 123

Մարիամ* — 91, 94—95, 113, 116, 124, 131, 133; Տե՛ս Աստվածածին

Մարիամ (*կույս*) — 124

Մաւկոս* — 97

Մարմնա զուղ — 154

Մարիս Կ. — 20

Մաֆուլաա (նաֆվր)* — 123

Մելիք Հայկազն — 12—14, 30, 46, 166, 174, 184—185

Մելիֆսեղեկ* — 141

Մելիֆսեք Վժանեցի — 158, 177

ՄԼԺ անապատ — 183; Տե՛ս Սյունյաց

ՄԼԺ անապատ. Տաթևի անապատ

ՄԵԽՐՈՍ Մաշտոց — 21, 23—24, 33

ՄԵԽՐՈՍ Մաշտոցի անվան Մատենադարան — 5, 8—10, 15, 18, 21, 161, 165, 167—168, 170, 174—175, 178, 180—181, 190

Միխայել Ասորի — 17

Միջագետք — 178, 192

Միշերկրայք — 85

Միրզոյան Հ. — 6

Միֆայել* — 104, 107

Միֆիա* — 142

Մխիթար Գոշ — 161

Մկրչան Մ. — 6, 161—162

Մկրտիչ Նաղաշ — 33

Մնացականյան Ա. — 6, 162, 164, 173

Մոկիք (*Մոկի, Մոկագ տուն*) — 8, 50, 161, 163, 188

Մովսես — 141

Մովսես Խորենացի — 27, 47, 123, 172, 183, 185—186

Մովսես Տաթևացի — 14, 166

Մովսիսյան Ա. — 6

Մովրիտանիա (*Մավրիտանիա*) — 97

Նավում* — 142

Նեեմ* — 195

Ներսես Բաղիշեցի — 9, 180, 183

Ներսես Բոլենցցի — 10

Ներսես Լամբրոնացի — 26—27

Ներսես Մեծ — 127

Ներսես Շնորհալի — 19, 29, 33, 161, 196, 198

Ներսես վրդ. — 175

Նիկողիմոս (*Նիկողեմոս*)* — 172

Նոյ* — 141

Շան-Աբաս — 11, 13, 15, 46, 166, 179, 190, 194, 196

Շամունի — 142

Շմավոն* — 97

Ոսկյան Հ. — 6, 176, 183

Ովսեկ* — 142

Ջամշյան Մ. — 5—6, 160—168, 172, 176

Պաղեսափն — 96, 99

Պետրոս* — 46, 54, 83, 97—98, 104, 107, 110, 113—115, 117

Պողարյան Ն. — 6, 9, 15—16, 24, 165, 167, 179, 180, 182; Տե՛ս Սողական

Պողոս* — 97—98, 101, 104, 108, 170—171

Պողոս Մոկացի — 12—14, 49, 54, 166

Պուտալ Սղի Ղազի Խան — 21

Ջհան զես — 85

Ռահ Բրինձ — 76—77

Ուալահալլյին — 18—19, 75, 77, 79, 85—86, 117

Սահակ Արծրունի — 172

Սահակյան Հ. — 16

Սալիմ — 152

Սամվել* — 142

Սամվել Աճեցի — 15, 17

Սանատրուկ — 120

Սանիր* — 107

Սարաբ-Նովա — 21

Սարգիս Ամբերդցի — 12, 14, 54, 166

Սարգիս Քիսեցի — 153, 173

Սարգիսյան Բ. — 21

Սեդրակյան Ա. — 169, 172

Սեբ* — 141

Սիմեոն Ապարանցի — 33

Սիոն* — 81, 125

Սմբատ Սպարապետ — 17

Սյունյաց Մեծ առապատ — 9, 12—14, 29, 30—31, 165—166, 174—175, 177, 186, 188: Տե՛ս Մեծ առապատ, Տաթևի առապատ

Սուրմ* — 132

Սուրմոն* — 66, 80, 92, 167, 183—184

Սոմալ Ս. — 6, 167

Սովիվե* — 91

Սովոնիա* — 114, 117, 142

Սպանիացի — 82

Սպարապետ — 97

Ստեփանոս Շատախեցի — 5, 8, 26—27, 30, 101, 140, 152, 155, 158, 162, 169, 170—172, 174—175, 177, 186

Ստեփանոս Նախավկա* — 142

Սրապյան Ա. — 182

Վասակ Սյունեցի — 77

Վասպուրական — 50, 156, 175

Վարդան Այգեկցի — 161

Վարդան Արևելցի — 17

Վարդան Մամիկոնյան — 193

Վենետիկ («Վենես») — 82

Վենետիկի Մխիթարյան միաբանության Մատենադարան — 161, 165, 167

Վիրբ — 192

Տաթև — 12, 58, 154, 157, 168, 175

Տաթևի առապատ — 167, 176—177: Տե՛ս Սյունյաց Մեծ առապատ, Մեծ առապատ

Տալիբա* — 137

Տալիս աշուղ — 161, 163

Տանկաստան — 75, 84

Տանճափարախի առապատ — 170

Տեկանց Ա. — 6

Տիգրան Երվանդյան — 47, 184—185

Տիգրիս — 122

Տրապոլիս — 83

Տրապոլսի կոմս — 77

Տրդատ րազավոր — 122

Ունի երկիր — 84

Ուտեյի կալ («Ուդեյի») — 42

Ուրբանիս քաղաք — 123

Փարեզ (Փարիզ) — 82

Փափազյան Վրբ. — 6, 161—162

Փենենեզ (Փենենես) — 142, 196

Փիլիպոս Աղրակեցի — 44, 63, 97, 165—166

Փիրդալեմյան Ղ. — 174, 176

Փոյուզիս — 97

Քաղղեացի — 75

Քանանացի* — 75

Քաֆա (Կաֆա) — 183

Քեռացի* — 75

Քրիստոս — 43—44, 55, 58, 69, 73, 94—97, 99, 101—102, 104, 108, 111—112, 116, 126, 128, 135, 137, 154, 156, 163, 175—176, 182, 195, 199

Քուրդն մեծ — 47, 185: Տե՛ս Աժդահակ Քուրդստան — 50

Օրմանյան Մ. — 6, 13, 166

Օրմզդա (Որմիզդ) — 123, 125

Ֆոռեզ — 78, 84

Ֆրեբ — 79


Ֆրիկ — 24

ԲՈՎԱՆԴԱՌԻԹՅՈՒՆ

Առաջարան	5
Ներածություն	8
Բնագրեր	
Երկինքն ու գետինքն հղբարը	37
Օրհնհա՛լ տէր Յիսուս փրկիչ	64
Մանուկ մտավարժ էի	64
Ի հոլովէլ ժամանակին	75
Աստուած և տէրն ամենայնի	89
Բարերար աստուած, մարդասէր	141
Հավելվածներ	143
Բանաստեղծություններ	145
Երկինք և գետինք հղբարը	145
Երկինքն ի գետին հղբարը	147
Փառքս տացուր ըստեղծողին	149
Հիշատակարաններ, արձանագրություններ, Բազմաժամեր	154
Ես ներսէս վարդապետ Մոկացի	154
Այս գիրքս Բեխլու Ներսէսի ձեռագիրն է	154
Աստուածազար սուրբ խաչս	154
Ո՛վ քառանիշ զէն յաղթութեան	155
Ի վաղ ժամանակաց անտի	156
Մանրագրություններ և բանասիրական դիտողություններ	160
Մանրագրություններ	161
Բնագրեր	161
Հավելվածներ	173
Բանասիրական դիտողություններ	178
Ներսէս Մոկացու՝ Անդրեաս Երեցին նվիրած զանձի ու տաղի մասին	178
Ներսէս Մոկացուն վերագրված բանաստեղծությունների մասին	179
Ակունքներ և ազդեցություններ	183
Լրացում	190
Հատդ անմահական	190
Եկայք նորագուարճ մանկունք	190
Օգտագործված աղբյուրներ	201
Ցանկ հառուկ անունների	204

ԱՅՍ ՄԱՏԵՆԱՇԱՐՈՎ ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ՝

1. Խաչատուր Կեչառեցի, Ուսումնասիրություն և բնագրեր, աշխատասիրությամբ Մ. Ավդալրեզյանի, 1958:
2. Հովհաննես Երզնկացի, Ուսումնասիրություն և բնագրեր, աշխատասիրությամբ Ա. Սրապյանի, 1958:
3. Մարտիրոս Ղրիմեցի, Ուսումնասիրություն և բնագրեր, աշխատասիրությամբ Ա. Մարտիրոսյանի, 1958:
4. Հովհաննես Թվաւրանցի, Տաղեր, աշխատասիրությամբ էմ. Պիվադյանի, 1960:
5. Կոստանդին Երզնկացի, Տաղեր, աշխատասիրությամբ Ա. Սրապյանի, 1962:
6. Գրիգորիս Աղքամաբցի, Ուսումնասիրություն և բնագրեր, աշխատասիրությամբ Մ. Ավդալրեզյանի, 1963:
7. Մկրտիչ Նաղաչ, Ուսումնասիրություն և բնագրեր, աշխատասիրությամբ էդ. Խոնդկարյանի, 1965:
8. Առաֆել Բաղիշեցի, Ուսումնասիրություն, քննական բնագրեր և ծանոթագրություններ, աշխատասիրությամբ Ա. Ղազիսյանի, 1971:



ՆԵՐՍԵՍ ՄՈԿԱՅԻ

ՐԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր Ա. Ծ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ
Հրատարակչական խմբագիր Է. Ս. ԱՎԵՏՅԱՆ
Նկարիչ Կ. Կ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆ
Տեխնիկական խմբագիր Ս. Կ. ԶԱԶԱՐՅԱՆ
Սրբագրիչ Ա. Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՎՖ 05081 Հրատ. 4074 Պատվեր 700 Տպաքանակ 3000
Հանձնված է շտրվածքի 3/IX 1974 թ., ստորագրված է տպագրության 29/1 1975 թ.
տպագր. 13,25 մամուլ, մրատ. 10,51 մամուլ, թուղթ Պ 1, 60 X 90¹/₁₆ : Գինը՝ 1 ռ. 30 կ.
ՀՍՍՀ ԳԱ միատարակչություն, Երևան—18, Բարեկամության 24:
ՀՍՍՀ ԳԱ միատարակչության տպարան, Երևան, Բարեկամության 24:

A^{II}
54410

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



2200544 10